



ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

2023 № 2 (10)

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆՐԵՍ

ИСКУССТВОВЕДЧЕСКИЙ
ЖУРНАЛ

JOURNAL OF ART STUDIES

2

2023

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA



ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ

ИСКУССТВОВЕДЧЕСКИЙ
ЖУРНАЛ

JOURNAL OF ART STUDIES

2 (10)

2023

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF NAS RA

ՎԵՑԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՑ

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորի – գլխավոր խմբագիր

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՔԱՄԱԼՅԱՆ Մարգարիտա Արսենի – պատասխանատու քարտուղար

արվեստագիտության թեկնածու

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՂԱՍՅԱՆ Արարատ Վլադիմիրի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԻՎԱՆՈՎ Անդրեյ Վիտալիի (ՌԴ, Սանկտ Պետերբուրգ)

արվեստագիտության թեկնածու

ԽԱՐԱՋԱՆՅԱՆ Րաֆֆի Իսայիրի (Լատվիա, Ռիգա)

Լատվիայի վաստակավոր արտիստ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ Մարգարի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ,
ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

ՀԵՐԿԵԼԵԱՆ Մովսես Սեդրակի (Լիբանան, Բեյրութ)

արվեստագիտության թեկնածու

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ Վահանի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՂԱԶԱՐՅԱՆ Արմեն Յուրիի (Ռուսաստան, Մոսկվա)

Ռուսաստանի ճարտարապետության և շինարարական գիտությունների ակադեմիայի
ակադեմիկոս, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ,

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, արվեստագիտության դոկտոր

ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՇՈՒՄԻԼԻՆ Դմիտրի Անատոլիի (ՌԴ, Սանկտ Պետերբուրգ)

արվեստագիտության թեկնածու

ՉԵՊԱԼՈՎ Ալեքսանդր Իվանի (Ուկրաինա, Կիև)

Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՏՕՆԱՊԵՏԵԱՆ Պատրիկ Զարեհի (Ֆրանսիա, Էքս-ան-Պրովանս)

արվեստի պատմության դոկտոր, պրոֆեսոր

ЖУРНАЛ ВЫХОДИТ 2 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С ИЮНЯ 2019 ГОДА

ИЗДАЕТСЯ РЕШЕНИЕМ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА

АСАТРЯН Анна Григорьевна – главный редактор

заслуженный деятель искусств Республики Армения,

доктор искусствоведения, профессор

КАМАЛЯН Маргарита Арсеновна – ответственный секретарь

кандидат искусствоведения

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

АГАСЯН Арарат Владимирович (Армения)

член-корреспондент Национальной академии наук РА,

заслуженный деятель искусств РА, доктор искусствоведения, профессор

АСРАТЯН Мурад Маргарович (Армения)

член-корреспондент Национальной академии наук РА,

заслуженный архитектор РА, доктор архитектуры, профессор

ДОНАБЕДЯН Патрик Заревич (Франция, Экс-ан-Прованс)

доктор истории искусства, профессор

ИВАНОВ Андрей Витальевич (РФ, Санкт-Петербург)

кандидат искусствоведения

КАЗАРЯН Армен Юрьевич (Россия, Москва)

академик Российской академии архитектуры и строительных наук,

почетный член Российской академии художеств,

иностраннный член Национальной академии наук РА, доктор искусствоведения

КАЗАРЯН Виген Оганесович (Армения)

член-корреспондент Национальной академии наук РА, заслуженный деятель культуры

РА, доктор искусствоведения, профессор

ОГАНЕСЯН Генрик Ваганович (Армения)

член-корреспондент Национальной академии наук РА,

заслуженный деятель науки РА, доктор искусствоведения, профессор

ХАРАДЖАНИЯН Раффи Испирович (Латвия, Рига)

заслуженный артист Латвии, доктор искусствоведения, профессор

ЧЕПАЛОВ Александр Иванович (Украина, Киев)

заслуженный деятель искусств Украины, доктор искусствоведения, профессор

ШУМИЛИН Дмитрий Анатольевич (РФ, Санкт-Петербург)

кандидат искусствоведения

ЭРКЕЛЯН Мовсес Седракович (Ливан, Бейрут)

кандидат искусствоведения

JOURNAL IS PUBLISHED 2 TIMES IN A YEAR, SINCE JUNE 2019

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL OF
NAS RA INSTITUTE OF ARTS

ASATRYAN Anna – Editor-in-chief

Honored Worker of Arts of the RA, Doctor of Sciences (Arts), Professor

KAMALYAN Margarita – Responsible secretary

Doctor of Arts

EDITORIAL BOARD

AGHASYAN Ararat (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,
Honored Worker of Arts of the RA, Doctor of Sciences (Arts), Professor

CHEPALOV Oleksandr (Ukraine, Kiev)

Honored Worker of Arts of the Ukraine, Doctor of Sciences (Arts), Professor

DONABEDIAN Patrick (France, Aix-en-Provence)

Doctor of Art History, Professor

GHAZARYAN Vigen (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,
Honored Worker of Culture of the RA, Doctor of Sciences (Arts), Professor

HASRATYAN Murad (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,
Honored Architect of the RA, Doctor of Sciences (Architecture), Professor

HERKELIAN Mosses (Lebanon, Beirut)

Doctor of Arts

HOVHANNISYAN Henrik (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,
Honored Worker of Science of the RA, Doctor of Sciences (Arts), Professor

IVANOV Andrey (RF, St. Petersburg)

Doctor of Arts

KAZARYAN Armen (Russia, Moscow)

Academician of the Russian Academy of Architecture and Construction Sciences,
Honorary Member of the Russian Academy of Arts,
Foreign Member of National Academy of Sciences of RA, Doctor of Sciences (Arts)

KHARAJANYAN Raffi (Latvia, Riga)

Honored Artist of Latvia, Doctor of Sciences (Arts), Professor

SHUMILIN Dmitriy (RF, St. Petersburg)

Doctor of Arts

ՀՀ ԳԱԱ – 80. ՀԱՅ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

2023-ին լրացավ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյա հոբելյանը:

Հոբելյանի շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը նախաձեռնել է «ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները» գիտական կոնֆերանսների շարքը, որի նպատակն է բացահայտել ՀՀ ԳԱԱ ծանրակշիռ դերը հայ արվեստագիտության զարգացման գործում: Շարքի՝ երաժշտագետներին նվիրված կոնֆերանսները, կազմակերպվեցին Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ, քանի որ նրանց գործունեությունը սերտորեն կապված է եղել Հայաստանի կոմպոզիտորների միության հետ:



Շարքի 1-ին միջոցառումը «ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները. Քրիստափոր Քուշնարյան» երկօրյա գիտական կոնֆերանսն էր¹, որի երեք նիստերը տեղի ունեցան 2023 թ. հունիսի 27-ին և 28-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում:

Հայ ականավոր երաժշտագետ, կոմպոզիտոր և մանկավարժ, Հայկական ՍՍՀ և Ուզբեկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ք. Քուշնարյանը (1890-1960) կանգնած էր հայկական ակադեմիական արվեստագիտության ակունքներում և 1944-1948 թթ. ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ Երաժշտության պատմությամբ

¹ Սա Քրիստափոր Քուշնարյանի գործունեության ուսումնասիրությանը նվիրված առաջին գիտական նստաշրջանը չէր: 1981-ի ապրիլի 15-ին ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան կազմակերպել էին միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված Ք.Ս. Քուշնարյանի ծննդյան 90-ամյակին: Նիստերը տեղի էին ունեցել Հայաստանի կոմպոզիտորների տանը: Բացման խոսքով հանդես էր եկել ՀԿՄ նախագահ, Հայաստանի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը: Այնուհետև զեկուցումներով հանդես էին եկել Ռոբերտ Աթայանը, Մաթևոս Մուրադյանը, Նիկողոս Թահմիզյանը, Կարինե Խուդաբաշյանը և Գայանե Չեբոտարյանը: Նստաշրջանի ընթացքում ներկայացվել էին նաև հուշեր՝ Քուշնարյանի մասին, և Արթուր Աղամյանի կատարմամբ հնչել էր Քուշնարյանի Երգեհոնային սոնատը: Նստաշրջանի զեկուցումների ժողովածուն չի հրատարակվել:

յան և տեսության նորաստեղծ սեկտորը: Հենց այդ Սեկտորի հիման վրա էլ 1948-ին ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորը, իսկ 1958-ին՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը: Գիտնականի «Вопросы истории и теории армянской монодической музыки» հիմնարար աշխատությունը (1958, Լենինգրադ) յուրաքանչյուր երաժշտագետի սեղանի գիրքն է:

Միննույն ժամանակ՝ Ք. Քուշնարյանը կարևոր տեղ է գրավում սովետական երաժշտարվեստի կայացման ու զարգացման գործում մեծ դեր կատարած ակադեմիկոս գործիչների շարքում (երկար տարիներ դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիայում): Երաժիշտ-մտածող, գիտական և երաժշտական հետաքրքրությունների լայն շրջանակի տեր անձնավորություն՝ նա միաժամանակ խոշոր տեսաբան էր ու տաղանդավոր կոմպոզիտոր, ակադեմիկոս գիտնական-պոլիֆոնիստ և հրաշալի մանկավարժ, հետազոտող-ֆոլկլորիստ և երաժշտական-հասարակական անխնջ գործիչ:

Ք. Քուշնարյանի անունով է անվանակոչվել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող արվեստի դպրոցը (տնօրեն՝ Էդգար Գյանջումյան), որի հետ « ԳԱԱ Արվեստի ինստիտուտն ամենօրյա սերտ կապերի մեջ է:

« ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները. Քրիստափոր Քուշնարյան» գիտական նստաշրջանի բացումը և Լիագումար նիստը տեղի ունեցավ հունիսի 27-ին:



Նստաշրջանի մասնակիցներին և հյուրերին ողջունեց « ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը**: Նա մասնավորապես նշեց. «Քուշ-

նարյանը Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստիտուտից գործուղվել էր Հայաստան որպես գիտարշավի ղեկավար: Նա ուսումնասիրեց հայ երաժշտության զարգացման ընթացքը, ինչը հիմք դարձավ հետագայում իր նշանավոր հրապարակումների համար: Ակադեմիական արվեստագիտության ասպարեզում առաջին քայլերը կատարվել են Քուչնարյանի ղեկավարությամբ, և այս գիտաժողովն արժևորելու է նրա մեծ ավանդը երաժշտության տեսության և պատմության զարգացման գործում»:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր **Արամ Սաթյանը**:

Այնուհետև տեղի ունեցավ Քրիստափոր Քուչնարյանի սան՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ (1984-2005), Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի նախագահ (1975-1981), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Կարինե Խուդաբաշյանի (1929-2015) «Կենսամատենագիտության» շնորհանդեսը (ներածականը՝ Անահիտ Բաղդասարյանի):

Գիտական նստաշրջանի *Լիագումար նիսպը* մեկնարկեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Արևշատյանի** «Քրիստափոր Քուչնարյանը՝ նշանավոր գիտնական երաժշտագետ» զեկուցումով:

Ինչպես հայտնի է, Քուչնարյանի երաժշտագիտական ժառանգության մեջ կարևոր տեղ է գրավում ծայնակարգային տեսությունը, որի հիման վրա հետագայում ձևավորվեցին Էդուարդ Փաշինյանի և Գևորգ Գյոդակյանի տեսությունները, առաջադրվեցին հայ ավանդական երաժշտության վերլուծության մեթոդաբանական հիմնադրույթներ (Մարգո Բրուտյան, Կարինե Խուդաբաշյան): ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Միեր Նավոյանը** «Ք. Քուչնարյանի ծայնակարգային տեսության որոշ առանձնահատկությունների շուրջ» զեկուցման մեջ նկատեց, որ այսօր կիրառական որոշ տեսական սկզբունքներ հակասում են Քուչնարյանի համակարգին՝ ծայնակարգային կառույցների նույնականացման և կիրառվող ծայնակարգային անվանակարգության (տերմինաբանական նոմենկլատուրա) առումով: Այդ հակասությունների պատճառը որոշ դեպքերում Քուչնարյանի տեսության հիմնատարերի և առանձնահատկությունների անտեսումն է և տեսական իրողությունների պարզեցումը, որն անհամապատասխանություն է առաջացնում հայ մոնոդիկ երաժշտության տեսական հիմքերի վերաբերյալ այսօր ընդունելի մոտեցումների հետ: Մյուս կողմից՝ կատարվել են տեսական դրույթների վերանայման փորձեր, որ դեռևս վերջնական հիմնավորում չունեն: Բանախոսը եզրակացրեց, որ Քուչ-

նարյանի առաջարկած ձայնակարգային տեսությունը հայ մոնոդիկ երաժշտության համապատասխան ոլորտում ամենալիարժեք համակարգն է մինչ օրս:

Քուշնարյանը գիտական դպրոցի հիմնադիր է. նրա ասպիրանտներն իրենց հետագա գործունեությամբ մեծապես նպաստեցին հայ երաժշտագիտության առաջընթացին: Հաջորդ 3 զեկուցումներում ուրվագծվեցին Քուշնարյանի սաների գիտամանկավարժական դիմանկարները և բացահայտվեց նրանցից յուրաքանչյուրի ներդրումը հայ երաժշտագիտության մեջ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանը** հանդես եկավ «Երաժշտագիտական մտքի զարգացումը Հայաստանում. Քրիստափոր Քուշնարյանի սաները՝ Գայանե Չեբոտարյան և Կարինե Խուդաբաշյան» բանախոսությամբ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանը** «Քրիստափոր Քուշնարյան և Մարգարիտ Բրուտյան» զեկուցման մեջ նշեց, որ Ք. Քուշնարյանի շնորհալի սաներից էր Մարգարիտ Բրուտյանը (1922-2002), ում 100-ամյակը նշվեց 2022 թվականին: Սիրելի ուսուցչի պայծառ հիշատակը Մ. Բրուտյանը հավերժացրեց երկու աշխատությամբ. առաջինը՝ «Քրիստափոր Քուշնարյան» վերնագրով ժողովածուի կազմումն ու խմբագրումն էր, որտեղ ամփոփվեցին Քրիստափոր Ստեպանովիչի՝ երաժշտագիտական տարբեր խնդիրներին վերաբերող հոդվածներն ու ուսումնասիրությունները, ինչպես նաև գործընկերների և սաների հուշերն ու կարծիքները, երկրորդը՝ Ք. Քուշնարյանի «Вопросы истории и теории армянской монодической музыки» հիմնարար աշխատության հայերեն թարգմանությունը, որոնք լույս տեսան Մ. Բրուտյանի մահից հետո:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի «Երաժշտական Հայաստան» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, երաժշտագետ **Գոհար Շագոյանը** ներկայացրեց «Ք. Քուշնարյանի ասպիրանտը՝ Նիկողոս Թահմիզյան» զեկուցումը:

Լիագումար նիստը եզրափակվեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Հասմիկ Հարությունյանի** «Քրիստափոր Քուշնարյանը՝ էթնոերաժշտագետ» զեկուցումով:

Գիտական նստաշրջանի *Առաջին նիստում* (համանախագահներ՝ Աննա Արևշատյան, Էդգար Գյանջումյան) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստա-

գիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիլիթ Երնջակյանը** հանդես եկավ «Քրիստափոր Քուչնարյան՝ արևելագետ» զեկուցումով:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դոցենտ **Ռիտա Աղայանը** բացահայտեց Ք. Քուչնարյանի ներդրումը սովետական երաժշտագիտության զարգացման գործում:

Երևանի Ք. Քուչնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր **Էդգար Գյանջումյանն** ուրվագծեց Երևանի Քրիստափոր Քուչնարյանի անվան արվեստի դպրոցի անցած կեսդարյա ուղին, ներկայացրեց դպրոցի ձեռքբերումներն ու նվաճումները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Անի Հակոբյանը** քննության առավ հայկական ավանդական օրորները Ք. Քուչնարյանի բանահավաքչական գրառումներում:

Նիստը եզրափակվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Հովհաննես Մանուկյանի** «Ք. Քուչնարյանի Սոնատը երգեհոնի համար» զեկուցումով:

Երկրորդ նիստում (համանախագահներ՝ Լիլիթ Երնջակյան, Արամ Սաթյան), որը տեղի ունեցավ հունիսի 28-ին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյանը** հանդես եկավ «Քրիստափոր Քուչնարյանի նորահայտ նամակները Ռոբերտ Աթայանին» զեկուցումով:

Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու **Ռուզան Սարյանն** անդրադարձավ Քրիստափոր Քուչնարյանի և Մարտիրոս Սարյանի մարդկային ու ստեղծագործական շփումներին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ **Հռիփսիմե Պիկիչյանը** ներկայացրեց «Թաղման ծեսի երաժշտախոսքային տեքստերի գրանցման և կենցաղավարման խնդիրների շուրջ (Ք. Քուչնարյանի հավաքածուի օրինակով)» հետազոտության արդյունքները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Գայանե Ամիրադյանը** բացահայտեց Քրիստափոր Քուչնարյանի ձայնակարգային տեսության որոշ առանձնահատկությունները հայ հոգևոր երգարվեստի համատեքստում:

Աննա Ասատրյանը «Քրիստափոր Քուչնարյանը՝ Հայաստանում ակադեմիական երաժշտագիտության հիմնադիր» զեկուցման մեջ համառոտ ներկայացրեց Ք. Քուչնարյանի վաստակը որպես երաժշտագետ-գիտնականի, գիտության կազմակերպչի և երաժշտագիտական դպրոցի սկզբնավորողի: Այդ երեք ուղղություններով էլ հետագայում Հայաստանում ընթացավ ակադեմիական երաժշտագիտության զարգացումը:

Գիտական կոնֆերանսը եզրափակվեց Երևանի Ք. Քուչնարյանի անվան արվեստի դպրոցի սաների տարեկան հաշվետու համերգով (գեղարվեստական ղեկավար՝ Էդգար Գյանջումյան), որը տեղի ունեցավ Հայաստանի կոմպոզիտորների տան համերգասրահում, հունիսի 28-ին:

Համերգի սկզբում հնչեց Ք. Քուչնարյանի Սոնատը՝ երգեհոնի համար՝ կոմպոզիտոր և երգեհոնահար **Հովհաննես Մանուկյանի** կատարմամբ:

Գիտական կոնֆերանսի արդյունքները կարևոր քայլ դարձան հայ երաժշտագիտական մտքի ուսումնասիրության ասպարեզում:

«Հ Հ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները. Գևորգ Գյոդակյան»

2023 թ. սեպտեմբերի 19-ին գումարվեց «Հ Հ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները» գիտական կոնֆերանսների շարքի 2-րդ միջոցառումը՝ նվիրված հայ անվանի երաժշտագետ և արվեստագիտության հմուտ կազմակերպիչ, ՀՍՍՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Գյոդակյանին (1928-2015), ով իր գիտական, գիտակազմակերպական, գիտամանկավարժական և երաժշտական-հասարակական ծանրակշիռ գործունեությամբ անուրանալի ավանդ է բերել հայ ակադեմիական արվեստագիտության (մասնավորապես՝ երաժշտագիտության) զարգացմանն ու առաջընթացին: Կոնֆերանսը կազմակերպել էր Հ Հ ԳԱԱ արվեստի ինստիտուտը՝ Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հետ համագործակցությամբ:



Բացման խոսքում **Աննա Ասատրյանը** համառոտ ներկայացրեց Գևորգ Գյոդակյանի գիտական ու գիտակազմակերպական վաստակը:



Գևորգ Շմավոնի Գյոդակյանը ծնվել է 1928 թ. օգոստոսի 12-ին ՀՍՍՀ Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: 1928 թ. նա ծնողների հետ տեղափոխվել է Երևան, 1946-ին ոսկե մեդալով ավարտել Երևանի Ֆ. Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցը և Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը: 1951 թ. Գ. Գյոդակյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժինը (գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Գ. Տիգրանով), եղել Ստալինյան կրթաթոշակառու, իսկ 1952 թ.՝ դաշնամուրային բաժինը (պրոֆեսոր Գ. Սարաջյանի դասարան): 1953-1956 թթ. նա

սովորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում (տեսության ամբիոն, գիտական ղեկավար՝ պրոֆեսոր Բ. Յարուստովսկի):

1957-ին Գ. Գյոդակյանն աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորում (1958-ից՝ Արվեստի ինստիտուտ)՝ որպես կրթություն գիտաշխատող: 1960-ին նշանակվել է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար: Նույն թվականից մինչև կյանքի վերջին օրը նա Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր:

Գ. Գյոդակյանը 1961 թվականին պաշտպանել է դիսերտացիա՝ «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1964-ին Գ. Գյոդակյանին շնորհվել է ավագ գիտական աշխատակցի գիտական կոչում:

1965-ից մինչ կենսագ վախճանը՝ 2015 թվականը, կես դար շարունակ, Գ. Գյոդակյանն Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչն էր. նրա հմուտ ղեկավարության շնորհիվ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժինը դարձավ Հայաստանի երաժշտագիտական գլխավոր կենտրոնը:

1979-ին Գ. Գյոդակյանը նշանակվել է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտորի՝ գիտական գծով տեղակալ՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 2005-ը:

2005-2015 թթ. Գ. Գյոդակյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդականն էր:

2007-ին Գ. Գյոդակյանը պաշտպանել է դոկտորական պատենախոսություն՝ «Հայ դասական երաժշտության ձևավորման ուղիները» վերնագրով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

Ծանրակշիռ է գիտնականի վաստակը հայ երաժշտության պատմության և պետության հարցերի ուսումնասիրության ասպարեզում:

Հայրենական երաժշտագիտության կարևոր հանգրվաններից են «Ակնարկ հայ երաժշտության պատմության» ուսումնասիրությունը (1963, համահեղինակներ՝ Բ. Կուշնարյան, Մ. Մուրադյան), «Пути формирования армянской музыкальной классики» և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» հիմնարար մենագրությունները, Տիգրան Չուխաճյանի, Կոմիտասի, Ռոմանոս Մելիքյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արամ Խաչատրյանի ստեղծագործության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները:

Արժեքավոր է երաժշտագետի վաստակը չուխաճյանագիտության ասպարեզում: Հայ երաժշտական թատրոնի առաջնեկին՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերային են նվիրված Գ. Գյոդակյանի՝ 1971-ին հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսած «Տիգրան Չուխաճյանը և «Արշակ Երկրորդ» օպերան» աշխատությունը, ինչպես նաև “Пути формирования армянской музыкальной классики” և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» գրքերի համապատասխան գլուխները:

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում, կոմիտասագիտության կայացման ու զարգացման գործում: Արվեստի ինստիտուտի՝ կոմիտասագիտության զարգացման մեջ անուրանալի ավանդ ունեցող երեք սյուներից մեկը՝ Մաթևոս Մուրադյանի և Ռոբերտ Աթայանի կողքին, հենց Գևորգ Գյոդակյանն էր: Խոստովումնալից էր Գ. Գյոդակյանի մուտքը կոմիտասագիտություն, որը տեղի ունեցավ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի տարում՝ 1969-ին. Հրապարակվեց «Комитас» մենագրությունը: Կոմիտասագիտության նվաճումներից էր «Կոմիտասականի» առաջին հատորում տեղ գտած Գ. Գյոդակյանի «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» հիմնարար հոդվածը, որն ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Ակնառու են Կոմիտասի նորարարական սկզբունքները, որ բացահայտվում են ոչ միայն հայ ազգային երաժշտության շրջանակներում, այլև առավել լայն պլանով՝ համաշխարհային երաժշտական արվեստի զարգացման հեռանկարում: Կոմիտասը մեծ է, թերևս, ամենից առաջ այն բանով, որ սեփական՝ ազգային մշակույթի առավել հրատապ խնդիրների լուծումը կարողացավ բարձրացնել 20-րդ դարի ամբողջ երաժշտական արվեստի առջև ծառայած պրոբլեմների լուծման մակարդակին: Ընդ որում, նա ոչ միայն հենվում էր իր նախորդների և ժամանակակիցների

փորձի ու նվաճումների վրա, այլև նրանց շարքում էր, ովքեր անմիջականորեն երաժշտական մրաժողության որակապես նոր հիմքերն էին դնում»:

Հետագայում կոմիտասյան ժառանգության ուսումնասիրությունն ուղեկցեց Գ. Գյողակյանին իր ողջ կյանքում: «Նշանավոր ճեմարանականների» առաջին հատորում տեղավորված՝ Կոմիտասի մասին հոդվածի հեղինակը վերստին Գ. Գյողակյանն էր: Կոմիտասին էր նվիրված «Путь формирования армянской музыкальной классики» մենագրության ակնարկներից մեկը: Գ. Գյողակյանի «Կարապի երգը» դարձավ Կոմիտասի մասին անգլերեն ուսումնասիրության հրատարակումը:

Կոմիտասին նվիրված իր հայերեն, ռուսերեն և անգլերեն մենագրություններով և գիտական հոդվածներով նա Կոմիտաս երևույթը դուրս բերեց ազգային շրջանակներից և դիտարկեց XX դարի համաշխարհային մշակույթի համատեքստում: Նրա ջանքերով և գիտական խմբագրությամբ հրատարակվեցին Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 7-14-րդ հատորները (1997-2006):

Մեծ է երաժշտագետի վաստակը հայկական ռոմանսի վարպետ Ռոմանոս Մելիքյանի սրբեղծագործական գործունեության ուսումնասիրության բնագավառում: 1960-ին ՀՍՍՀ ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և սրբեղծագործությունը» մենագրության մեջ երաժշտագետն ուսումնասիրել է կոմպոզիտորի հիմնական սրբեղծագործությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ռոմանսի ժանրին, որտեղ առավելագույնս դրսևորվեց Ռ. Մելիքյանի սրբեղծագործական դեմքը: «Հայ երաժշտության ասպետի»՝ Ռ. Մելիքյանի սրբեղծագործությունը մնաց հետազոտողի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: 1977-ին Գ. Գյողակյանի խմբագրությամբ ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց կոմպոզիտորի «Հողվածներ, նամակներ, հուշեր» ժողովածուն, որտեղ նա նաև հեղինակել էր «Ռ. Մելիքյան՝ երաժշտական գործիչ և երգահան» հոդվածը: 2009-ին Գ. Գյողակյանը կազմեց և հրատարակեց Ռ. Մելիքյանի անտիպ ռոմանսներից մի քանիսը և պետերբուրգյան շրջանում գրված «Աշնան տողեր» վոկալ շարքը՝ կոմպոզիտորի լավագույն սրբեղծագործություններից մեկը:

Շոշափելի է Գ. Գյողակյանի վաստակը խաչատրյանագիտության մեջ: Նա կազմել և խմբագրել է (Ռաֆայել Ստեփանյանի հետ) 1972-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հրատարակած «Арам Хачатурян» հոդվածների ժողովածուն, «Արամ Խաչատրյանը՝ սովետահայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր» թեմայով զեկուցումով մասնակցել է 1974 թ. հոկտեմբերի 22-ին ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանում, իսկ «Традиционное и новаторское в музыке А. Хачатуряна» և «Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը» հոդվածներում քննության առնելով կոմպոզիտորի հարմոնիկ լեզվի առանձնահատկությունները՝ եզրա-

կացրել է, որ «Արևելյան լադային կառուցվածքների ու քրոմատիկ տոնայնության միաձուլումը Ա. Խաչատրյանի սպեղծագործության մեջ գտնում է ինքնատիպ և զարմանալիորեն վառ մարմնավորում: Եվ միշտ այն հանդես է գալիս որպես օրգանական սինթեզ, անքակտելի ամբողջություն, որտեղ մեղեդու արևելյան կերպվածքը բացահայտում է քրոմատիկ տոնայնությունը և ինքն էլ բացահայտվում նրա միջոցով»: Գ. Գյոդակյանի անմիջական մասնակցությամբ են կազմակերպվել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գումարած՝ Ա. Խաչատրյանին նվիրված երկու գիտական նստաշրջանները (1974, 1984):

Գ. Գյոդակյանը հեղինակ է ավելի քան 150 գրքերի, մենագրությունների, գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուզբեկստանի, Գերմանիայի գիտական ժողովածուներում և հանդեսներում: Նրա գրչին են պատկանում ժամանակակից երաժշտության խնդիրներին նվիրված քննադատական-հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ: Երաժշտագետը զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: Նրա նախաձեռնությամբ և գիտական խմբագրությամբ Արվեստի ինստիտուտում հրատարակվել են երաժշտագիտական հոդվածների ժողովածուներ, կազմակերպվել են մի շարք գիտական նստաշրջաններ:

Գ. Գյոդակյանը գիտական և գիտակազմակերպական արգասաբեր գործունեությունը համապեղել է հասարակական ակտիվ աշխատանքների հետ: 1959 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ էր, 1968-1995 թթ.՝ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, 1973-1991 թթ. վարել է ՀԿՄ վարչության՝ երաժշտագիտության գծով քարտուղարի պաշտոնը: 1979-1991 թթ. Գ. Գյոդակյանն ընտրվել է Խորհրդային Միության կոմպոզիտորների միության վարչության անդամ: Մինչ այդ՝ 1973-ին, արժանացել է ՍՍՀՄ կոմպոզիտորների միության «3а лучшую музыкально-критическую статью в газетах и журналах 1972 года» մրցանակին: 2008-ին նրան շնորհվել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության մրցանակը:

1988-2001 թթ. Գ. Գյոդակյանը եղել է «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, 1973-1989 թթ.՝ «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, Հայկական համառոտ հանրագիտարանի խմբագրական խորհրդի անդամ (1995-ից), «Երաժշտական Հայաստան» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ (1998-ից) և: 2000 թվականից նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ էր:

Գ. Գյոդակյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ, գիտական կադրերի պատրաստմամբ: 1973-ից նա դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1977-ին նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1997-ին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ: Նրա գիտական ղեկավարությամբ ու խորհրդավորությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական

և դոկտորական արեւմտախոսություններ: Երկար տարիներ Գ. Գյոդակյանը ՀՀ ԳԱԱ արվեստի հնստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ էր:

Իր գիտական ու գիտակազմակերպական արդյունաշար գործունեության համար 2003-ին և 2013-ին Գ. Գյոդակյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով, իսկ 2005-ին՝ ՀՀ ԳԱԱ պատվոգրով: 1980-ին նրան շնորհվել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, 2009-ին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, 2011-ին՝ «Մովսես Խորենացի» մեդալով:

Գ. Գյոդակյանին նվիրված գիտական կոնֆերանսի մասնակիցներին և հյուրերին ուղղված ողջույնի խոսքում Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ **Արամ Սաթյանն** ընդգծեց այն կարևոր դերը, որ կատարել է Գևորգ Գյոդակյանը՝ հանդիսանալով կապող օղակ Հայաստանի կոմպոզիտորների միության և Արվեստի ինստիտուտի միջև: Այդ կապը, որ խզվել էր վերջին տարիներին, վերջին շրջանում կրկին վերականգնվել է և օրեցօր ամրապնդվում է:



Ողջունելով կոնֆերանսի մասնակիցներին՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր **Սոնա Հովհաննիսյանը** նշեց. «Գյոդակյանի աշխատությունները, հայերաժշտագիտական բարձրարժեք հետազոտություններ լինելուց բացի, մեր երախտավորների հետ իր ամենօրյա զրույցների վկայությունն են, որը մեզ է փոխանցել նվիրյալ գիտնականն ու հմայիչ

մարդը, ով այսօր էլ ազատորեն խոսում է սերունդների հետ միանգամայն արդիական լեզվով»:

Գիտական կոնֆերանսին զեկուցումներով հանդես եկան և հայրենական երաժշտագիտության մեջ վաստակաշատ գիտնականի ներդրումը բացահայտեցին երաժշտագետ-մանկավարժի սաներն ու գործընկերները:

Գ. Գյոդակյանի ասպիրանտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Մհեր Նավոյանն** ուրվագծեց Գևորգ Գյոդակյանի գիտաստեղծագործական դիմանկարը՝ հընթացս բացահայտելով նրա երաժշտա-տեսական հայացքները:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու **Արմեն Բուդաղյանը** ներկայացրեց Գ. Գյոդակյանի գործունեությունը:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյանը** «Գևորգ Գյոդակյանի Կոմիտասականը» զեկուցման մեջ անդրադարձավ կոմիտասագիտության զարգացման գործում կոմիտասագետի ավանդին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանի** զեկուցումը «Գևորգ Գյոդակյանի տիկինը. Ալինա Փահլևանյան. գիտնականը, մանկավարժը» թեմայով էր:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու **Միխայիլ Կոկժակի** զեկուցումը նվիրված էր Արամ Խաչատրյանի «Սոնատ-երգի» վերլուծությանը:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս **Սեդա Շեյրանյանը**, ով Գ. Գյոդակյանի առաջին ուսանողն է եղել, բացահայտեց Գ. Գյոդակյանի երաժշտա-մանկավարժական մեթոդի առանձնահատկությունները:

Գ. Գյոդակյանի ասպիրանտ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու **Աստղիկ Մուշեղյանը** ներկայացրեց հայ երաժշտական միջնադարագիտության մեջ Գ. Գյոդակյանի ունեցած մեծարժեք ներդրումը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանի** զեկուցումը նվիրված էր Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում Գևորգ Գյոդակյանի ունեցած մեծ ավանդին:

Կոնֆերանսի աշխատանքները եզրափակեց Գ. Գյոդակյանի ասպիրանտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը**, որի բանախոսության նպատակն էր չլուսաճյանագիտության մեջ Գ. Գյոդակյանի ունեցած վաստակի արժևորումը:

Կոնֆերանսի աշխատանքներին ներկա էին Գ. Գյոդակյանի ընտանիքի անդամները. տիկինը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր **Ալինա Փահլևանյանը**, որդին՝ Կոնստանտին Գյոդակյանը, դուստրը՝ Ելենա Գյոդակյանը, որը ժամանել էր ԱՄՆ-ից, և թոռնիկը՝ կոմպոզիտոր Դավիթ Գյոդակյանը:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

**ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ.
«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ - 120» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ**

2023 թ. սեպտեմբերի 12-14-ը ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան - 120» միջազգային գիտական կոնֆերանսը, որը ՀՀ ԿԳՄԱՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի համաֆինանսավորմամբ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ:

Կոնֆերանսի նպատակն էր՝ ներկայացնել խաչատրյանագիտության արդի վիճակը, քննության առնել հայ ականավոր կոմպոզիտորի ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեությունը, արժևորել նրա թողած ժառանգությունը, բացահայտել Արամ Խաչատրյանի ստեղծագործության դերն ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային երաժշտության անդաստանում:

Իր բացման խոսքում **Աննա Ասատրյանը** նկատեց, որ գիտական միջոցառումը գումարվում է հայ ժողովրդի համար դրամատիկ ժամանակահատվածում: «Վերջին ամիսներին արցախահայությունը գտնվում է շրջափակման մեջ: Մեր ժողովուրդը երկար ժամանակ փորձում է հաղթահարել 44-օրյա պատերազմի աղետալի հետևանքները: Նման պայմաններում Խաչատրյանի անձը և նրա՝ լավատեսությամբ և հումանիստական ուղղվածությամբ աչքի ընկնող երաժշտությունը կարող են կարևոր դեր ունենալ մեր ժողովրդի կյանքում: Պատահական չէ, որ 1943 թվականին՝ Հայրենական մեծ պատերազմի դաժան օրերին, երբ ողջ Եվրոպան ծնկի բերած ֆաշիստական բանակը շարունակում էր իր հաղթարշավը Սովետական Միության տարածքում, կոմպոզիտորն իր երկրորդ սիմֆոնիան ավարտեց լավատեսական ֆինալով: Նա հավատում էր իր ժողովրդի հաղթանակին: Ու չսխալվեց: Արամ Խաչատրյանը մերժում էր պատերազմը, մերժում էր հումանիզմի բոլոր հակոտնյաները, նա հումանիստ էր: Վստահ լինելով, որ մեր կոնֆերանսի արդյունքները շատ կարևոր հանգրվան կդառնան միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում, առհասարակ, երաժշտագիտության մեջ՝ ուզում եմ հավատալ, որ Արամ Խաչատրյանի երաժշտությունը, անձն ու գործը կօգնեն հայ ժողովրդին հաղթահարել իր պատմության այս դժվարին փուլը և թևակոխել լուսավոր ու պայծառ ապագա»:

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին, ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս **Աշոտ Սաղյանը**, մասնավորապես, նկատեց. «Աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսն է: Նա ակադեմիկոս է ընտրվել ուղիղ 60

տարի առաջ՝ 1963 թ. մարտի 9-ին՝ Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ և առաջարկությամբ:

Այդ օրվանից մինչև կյանքի վերջը Արամ Խաչատրյանը սերտորեն կապված էր Ակադեմիայի, մասնավորապես, Արվեստի ինստիտուտի հետ: Եվ պատահական չէ, որ նա ցանկացել է, որպեսզի իր թանգարանը բացվի և գործի Արվեստի ինստիտուտին կից: Գիտությունների ակադեմիան, մասնավորապես, Արվեստի ինստիտուտը, հետագայում իրենց կարևոր ավանդը բերեցին միջազգային խաչատրյանագիտության կայացման ու զարգացման գործում:

Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության հարցերին նվիրված ակադեմիական առաջին գիտական նստաշրջանը գումարվեց այս դահլիճում՝ 1974 թ. հոկտեմբերի 22-ին, որին մասնակցում էր հենց ինքը՝ Արամ Խաչատրյանը: ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանը համախմբեց համամիութենական երաժշտագիտական մտքի առաջատար ուժերին: 13 զեկուցումներում ներկայացվեց Ա. Խաչատրյանի ստեղծագործությունն ու գործունեությունը, արժևորվեց այն թե՛ որպես ազգային երաժշտության ու մշակույթի երևույթ և թե՛ որպես Անդրկովկասի, Արևելքի, սովետական և համամարդկային երաժշտական մշակույթի երևույթ:

Եվ այսօր կրկին, սակայն՝ այս անգամ՝ առանց Արամ Խաչատրյանի, այս դահլիճում հավաքվել են արդի միջազգային արվեստագիտության, մասնավորապես, երաժշտագիտության վաստակաշատ ներկայացուցիչներն ու երիտասարդ հետազոտողները:

Կոնֆերանսի ծրագրին ծանոթանալիս ինձ հաճելիորեն զարմացրեց զեկուցումների թեմատիկ ընդգրկումը և բանախոսների աշխարհագրությունը: 40 մասնակից աշխարհի 3 մայրաքաղաքներից՝ 8 երկրներից: Սա վկայում է այն մասին, որ անցած տարիների ու տասնամյակների ընթացքում աշխարհում ոչ միայն չի նվազում հետաքրքրությունն Արամ Խաչատրյանի հանճարեղ երաժշտության հանդեպ, այլև նրա ստեղծագործական գործունեությունը շարունակում է մնալ հայ և օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Զարմանալի զուգադիպությամբ՝ Արամ Խաչատրյանի հոբելյանները միշտ համընկնում են Ակադեմիայի հոբելյանների հետ: 2023 թվականին ՀՀ ԳԱԱ-ն բոլորում է իր հիմնադրման 80-ամյակը:

Եվ կարծում եմ, որ ինչպես անցած 80 տարիների ընթացքում, այնպես էլ հետագայում, Ակադեմիան՝ ի դեմ Արվեստի ինստիտուտի, շարունակելու է մնալ հայ արվեստագիտության միակ ու գլխավոր կենտրոնը՝ իր շուրջը համախմբելով թե՛ գիտական, թե՛ ստեղծագործական և թե՛ կատարողական աշխարհի երևելի ներկայացուցիչներին:

Վստահ եմ, որ եռօրյա գիտաժողովի ընթացքում մեզ սպասում են հետաքրքիր ու բովանդակալից զեկուցումներ և աշխույժ բանավեճեր:

Համոզված եմ նաև, որ Կոնֆերանսի արդյունքները կդառնան կարևոր և նշանակալի ներդրում միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում»:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը** նշեց. «2023 թվականին ԿԳՄՍ նախարարության իրականացրած մշակութային միջոցառումների շարքում, բնականաբար, հատկապես կարևոր տեղ է գրավում Արամ Խաչատրյանի երաժշտության հանրահռչակումը: Համաձայն հոբելյանական հանձնաժողովի համապատասխան որոշումների՝ անցած ամիսների ընթացքում հայ երաժիշտները հյուրախաղերով հանդես են եկել աշխարհի տարբեր երկրներում՝ ներկայացնելով կոմպոզիտորի սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները: Հոկտեմբեր-նոյեմբերին նախատեսվում են Օպերային թատրոնի հյուրախաղերը Ֆրանսիայում, որի ընթացքում Փարիզում կներկայացվեն Խաչատրյանի բալետները:

Ինչ խոսք՝ կոմպոզիտորն ապրում է այնքան, որքան հնչում է նրա երաժշտությունը: Կատարվելով ու բեմադրվելով ողջ աշխարհում՝ արդեն վաղուց Արամ Խաչատրյանը դարձել է հայ ժողովրդի երաժշտական այցեքարտերից մեկը, եթե չասենք՝ այցեքարտը:

Կարծում եմ՝ արվեստի, տվյալ դեպքում՝ երաժշտության, մասին խոսելիս անհրաժեշտ է ընդգծել այն կարևոր դերը, որն ունի արվեստագիտությունը, տվյալ դեպքում՝ երաժշտագիտությունը:

Երաժշտագիտությունը և երաժշտագետները չափազանց մեծ նշանակություն են ունեցել Արամ Խաչատրյանի ստեղծագործական ճակատագրում: Նշեն ընդամենը մեկ փաստ՝ կոմպոզիտորի Երկրորդ սիմֆոնիայի վերնագիրը՝ այն է «Չանգերով սիմֆոնիա», պատկանում է հենց երաժշտագետի՝ կոմպոզիտորի մասին ստվարածավալ մենագրության հեղինակ Գեորգի Խուբովին: Ի դեպ՝ Սիմֆոնիան, որը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հասակակիցն է, 2023-ին տոնում է իր ստեղծման 80-ամյա հոբելյանը:

Երաժշտագետ Գեորգի Խուբովը նրբորեն նկատեց, թե ինչ կարևոր դրամատուրգիական նշանակություն ունեն Սիմֆոնիայի սկիզբը և ավարտը ազդարարող զանգերը, և այդտեղից էլ ծնվեց վերնագիրը...

Այս տեսակետից չափազանց կարևոր եմ համարում նման ներկայանալի միջազգային գիտական կոնֆերանսի կազմակերպումն ու անցկացումը, որի աշխատանքներին մասնակցում են 17 արտասահմանցի մասնագետներ աշխարհի 8 երկրներից և որի արդյունքները կհարստացնեն հարուստ ճանապարհ անցած և լավ ավանդույթներ ունեցող խաչատրյանագիտությունը:

Տրամաբանական է և ուրախալի, որ կոնֆերանսի նախաձեռնողն ու հիմնական կազմակերպիչը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան է, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտը: Սակայն ինձ համար կրկնակի հաճելի է, որ այս ձեռնակով Արվեստի ինստիտուտն իր շուրջ է համախմբել Երևանում Արամ Խաչատրյանի ևս երկու շատ հարազատ օջախներին՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանին և Հայաստանի կոմպոզիտորների միությանը:

Կոնֆերանսը ներկայացնում է միջազգային խաչատրյանագիտության արդի փուլը, որը, համաձայն Կոնֆերանսի ծրագրի, առավել քան տպավորիչ է:

Շնորհավորում եմ բոլորիս՝ Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ, իսկ գիտական կոնֆերանսին մաղթում հաջող ընթացք և հետաքրքիր քննարկումներ»:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն **Արմինե Գրիգորյանը** նշեց, որ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների նկատմամբ երաժշտագետների կողմից հետաքրքրությունը տարիների ընթացքում միայն մեծանում է: Շնորհակալություն հայտնելով Կոնֆերանսին մասնակցելու նպատակով Երևան ժամանած հյուրերին, այդ թվում՝ Արամ Խաչատրյանի թոռնուհուն՝ Օլգա Կուզինային, նա հրապարակեց Արամ Խաչատրյանի որդու՝ Կարեն Խաչատրյանի ողջույնի խոսքը՝ ուղղված գիտական միջոցառման մասնակիցներին: «Մենք չպետք է մոռանանք, որ պատկանում ենք այն ազգին, որը համաշխարհային մշակույթին նվիրեց այնպիսի մեծություն, ինչպիսին է Արամ Խաչատրյանը, ով դարձավ մի ամբողջ դարաշրջանի սիմվոլ», - նշեց Արմինե Գրիգորյանը:

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Արամ Սաթյանը** կարևորեց Արամ Խաչատրյանի ստեղծած կոմպոզիտորական դպրոցը: «Արամ Խաչատրյանը ստեղծագործական իմաստով մեծ ազդեցություն ունեցավ մեր սերնդի վրա: Այս նստաշրջանը հնարավորություն կտա նորովի մեկնաբանել Խաչատրյանի երաժշտությունը և նրա մոտեցումները դեպի երաժշտություն», - ասաց Արամ Սաթյանը:

Եռօրյա կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ:

Լիագումար նիստի (12 սեպտեմբերի) առավոտյան նիստում Արամ Խաչատրյանի թոռնուհի, Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի փաստաթղթերի և անձնական արխիվների բաժնի ավագ գիտաշխատող **Օլգա Կուզինան** (Ռուսաստան, Մոսկվա) ներկայացրեց «Նամակներ մոսկովյան թղթակիցներին» զեկուցումը, իսկ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ, Կիևի մշակույթի և արվեստների ազգային համալսարանի խորեոգրաֆիկ արվեստի ամբիոնի վարիչ **Ալեքսանդր Չեպալովը** (Ուկրաինա, Կիև)՝ «Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի բեմական մեկնաբանությունների կոմպարատիվ վերլուծությունը», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար **Աննա Ասատրյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանը՝ երաժշտության մեջ ազգային ինքնատիպության հիմնախնդրի մասին», Ել.Ֆ. Գնեսինայի Մեմորիալ թանգարան-բնակարանի տնօրեն **Անդրեյ Գապոնովը** (Ռուսաստան, Մոսկվա) և Ել.Ֆ. Գնեսինայի Մեմորիալ թանգարան-բնակարանի ֆոնդապահ **Աննա Ավդեևան** (Ռուսաստան, Մոսկվա)՝ ««Հավերժ երախտապարտ Արամ Խաչատրյանից» (Արամ Խաչատրյանը Գնեսինայի տանը)», արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտ-

աշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ **Մարգարիտա Ռուխկյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանն իր նամակների հայելիում», արվեստագիտության դոկտոր, Սանկտ Պետերբուրգի Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր **Իգոր Վորոբյովը** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Կանտատ-օրատորիալ ժանրը 1930-1950-ականների սովետական երաժշտության մեջ որպես ստալինյան ժամանակի գաղափարա-առասպելաբանական պարադիգմայի արտացոլում (Արամ Խաչատրյանի և Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործության օրինակով)», արվեստագիտության դոկտոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ **Իրինա Ջուրտովան** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանը և ազգային դաշնամուրի բնույթը» և երաժշտագիտության դոկտոր, Կաուֆմանի երաժշտական կենտրոնի պրոֆեսոր **Նունե Մելիքյանը** (ԱՄՆ, Նյու Յորք)՝ «Արամ Խաչատրյան և Առնո Բաբաջանյան. տարբեր սերունդների երկու կոմպոզիտորների հարաբերությունների դինամիկան» զեկուցումները:

Լիագումար նիստն ընդմիջվեց Մարգարիտա Ռուխկյանի «Հնչող երաժշտությունը դարաշրջանի կենդանի տարեգրությունն է (1990-2020)» հոդվածների ժողովածուի շնորհանդեսով. աշխատությունը ներկայացրեցին հեղինակն ու ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, խմբավար ու երաժշտագետ **Սարինա Ավթանդիլյանը**:

Լիագումար նիստի երեկոյան նիստում (համանախագահներ՝ *Արմինե Գրիգորյան, Անդրեյ Գապրոնով*) Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր **Արմինե Գրիգորյանը** (Հայաստան, Երևան) հանդես եկավ «Մատերոյի տունը: Տուն-թանգարանի և Արամ Խաչատրյանի անվան տրիոյի հոբելյանական նախագծերը», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Սանկտ Պետերբուրգի Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի դեկան **Անդրեյ Իվանովը** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Արամ Խաչատրյանի թավջութակի ժառանգությունը», արվեստագիտության թեկնածու, Սախա Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Մ.Կ. Ամմոսովի անվան Հյուսիս-Արևելյան ֆեդերալ համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ, **Տատյանա Պավլովա-Բորիսովան** (Ռուսաստան, Սախա Հանրապետություն (Յակուտիա), Յակուտսկ)՝ «Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը յակուտական բեմում», արվեստագիտության թեկնածու, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, **Միխայիլ Կոկժանը** (Հայաստան, Երևան)՝ «Միկրոկառուցվածքների՝ միաձուլման կամ փոխադարձ դիրքային վերադասավորման ունակությունն Արամ Խաչատրյանի ստեղծագործություններում», արվեստագիտության դոկտոր, Ուֆայի Ջագիր Իսմագիլովի անվան արվեստի պետական ինստիտուտի դոցենտ, Բաշ-

կորոստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ **Գուլնազ Գալինյան** (Ռուսաստան, Բաշկորտոստանի Հանրապետություն, Ուֆա)՝ ««Սալավաթ Յուլաս» կինոնկարի համար գրված Արամ Խաչատրյանի երաժշտությունը», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կրթության որակի ապահովման բաժնի ղեկավար, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ **Նարինե Ավետիսյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի դաշնամուրային երաժշտությունը XX դարի 60-ական թվականներին», արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Լատվիայի վաստակավոր արտիստ, Լատվիայի Ի. Կոզակեիչի անվան ազգային մշակութային ընկերությունների Ասոցիացիայի նախագահ **Ռաֆֆի Խարաջանյանը** (Լատվիա, Ռիգա)՝ «Արամ Խաչատրյանն իմ հիշողություններում», «Արումենիա-Նիպոն» հայ-ճապոնական գիտամշակութային միության հիմնադիր-նախագահ, տնտեսագիտության թեկնածու, ճապոնագետ-միջազգայնագետ **Աննա Վարդանյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյան. մեծանուն Սենսեյը Տերահարայի հուշերում» և արվեստագիտության թեկնածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ **Վյաչեսլավ Եդիգարյանը** (Հայաստան, Երևան)՝ «Խաչատրյանական պիանիզմի կայացման ինքնատիպությունը և առանձնահատկությունները» զեկուցումներով:

Կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց սեպտեմբերի 13-ին: Առաջին նիստում (համանախագահներ՝ **Լիլիթ Արտեմյան, Արսեն Համբարձումով**) արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր **Մովսիսյանը** (Հայաստան, Երևան) ներկայացրեց «“Солнцем его музыки...” (Արամ Խաչատրյան-Էդգար Հովհաննիսյան ստեղծագործական աղերսներ)», ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի աշխատակից **Դանիել Երաժիշտը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի Սովետական Հայաստանի Պետական հիմնի երաժշտության գաղտնագրությունը և արդիականությունը», դաշնակահար, մանկավարժ, Կալիֆոռնիայի Երաժշտության ուսուցիչների ասոցիացիայի անդամ **Սուսաննա Տարոնցին** (ԱՄՆ, Լոս Անջելես)՝ «Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմի» նոր հրատարակության նպատակը և կարևորությունը», երաժշտագետ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ **Գոհար Շագոյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի արվեստի ազդեցիկ նշանակությունը երաժշտագիտական մտքի վրա «Երաժշտական Հայաստանի» էջերում», արվեստագիտության թեկնածու, դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ **Լիլիթ Արտեմյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործության հանրահռչակումը ՀՀ անկախության շրջանում», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի

Գյումրու մասնաճյուղի տնօրեն **Հասմիկ Հարությունյանը** (Հայաստան, Գյումրի)՝ «Ավանդական պարը Արամ Խաչատրյանի ստեղծագործական տեսադաշտում», Բեյրութի ֆիլիարմոնիկ նվագախմբի դիրիժոր, Լիբանանյան Ամերիկյան համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ **Կարապետ Ավեսյանը** (Լիբանան, Բեյրութ)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության լիբանանյան էջը», Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի փոխտնօրեն **Անի Ասատրյանը** (Հայաստան, Գյումրի)՝ «Գեորգի Տիգրանովը Ա. Խաչատրյանի բալետներում հումանիստական գաղափարների արտահայտման մասին» և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս **Նվարդ Եղոյանը** (Հայաստան, Գյումրի)՝ «Պրոֆեսոր Մարգարիտա Գաբրիելի Հարությունյանի ներդրումը խաչատրյանագիտության մեջ» զեկուցումները:

Նիստի եզրափակիչ մասում ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար **Ռուբեն Հարությունյանը** ներկաների հետ կիսվեց Արամ Խաչատրյանի մասին իր արտակարգ հետաքրքիր հուշերով:

Երկրորդ նիստում (համանախագահներ՝ *Մարգարիտա Քամայան, Կարապետ Ավեսյան*) արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող **Արսեն Համբարձումովը** (Հայաստան, Երևան) ներկայացրեց «Արամ Խաչատրյանի երաժշտության դերը «Պեպո» և «Չանգեզուր» ֆիլմերում» զեկուցումը, իսկ արվեստագիտության դոկտոր, Ռուսաստանի Պետական ակադեմիական Փոքր թատրոնին կից Մ.Ս. Շչեպկինի անվան բարձրագույն թատերական ուսումնարանի (ինստիտուտի) պրոֆեսոր **Գալինա Պոժիդան** (Ռուսաստան, Մոսկվայի մարզ, Կրասնոգորսկ)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական սկզբունքները նրա սաների ստեղծագործություններում. Վլադիմիր Պոժիդանի (1946-2009) երկերը», արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ **Սաթենիկ Մելիքյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի կերպարը հայ կերպարվեստում», արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր, երգեհոնահար, միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ **Հովհաննես Մանուկյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի ինքնատիպ և եզակի սիմֆոնիզմը», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, Յուրի Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիայի երգչախմբի ղեկավար, Հանրային ռադիո-ընկերության «Արևիկ» մանկապատանեկան անսամբլի վոկալի մասնագետ **Նաիրա Մելիքյանը** (Հայաստան, Երևան)՝ «Կոնստանտին Օրբելյան. «Я его любил как божество»», տնտեսագիտության թեկնածու, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող **Լիանա Կարապետյանը** (Հայաստան, Երևան)՝ «ՀՀ ազգային բրենդի հետքերով. մշակութային դիվանագիտության զարգացման հեռանկարներն ու Արամ Խաչատրյանը», Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի գիտաշխատող, Երևանի Կոմիտասի

անվան պետական կոնսերվատորիայի դասախոս **Մարինա Մարտիկյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի գործիքային կոնցերտները» և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի **Հեղինե Սարգսյանը** (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի և Արա Սևանյանի ստեղծագործական համագործակցությունը» բանախոսությունները:

Կոնֆերանսի եզրափակիչ՝ երրորդ նիստում (համանախագահներ՝ *Աննա Ասափրյան, Անդրեյ Իվանով*) լավեցին արվեստագիտության թեկնածու, Ա.Ի. Գերցենի անվան ռուսաստանյան պետական մանկավարժական համալսարանի Երաժշտության, թատրոնի և խորեոգրաֆիայի ինստիտուտի երաժշտական-գործիքային պատրաստման ամբիոնի դոցենտ **Նադեժդա Մեդվեդևայի** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ) «Ռաֆֆի Խարաջանյանի «խաչատրյանապատումը»», երաժշտագետ **Նունե Պողոսյան-Ջելցբուրգի** (UWC Maastricht, MA, Նիդերլանդներ, Մասստրիխտ) «Արամ Խաչատրյան. մարդն աշխարհի երաժշտության մեջ (էթնոերաժշտագիտական դիտարկումներ)» և արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Սանկտ Պետերբուրգի Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույթների պատմության կաբինետի վարիչ **Տատյանա Բրոսլավսկայայի** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ) «Նյութեր Ա.Ի. Խաչատրյանի հասցեատերերի որոշ նամակներից (համառոտ տարբերակ)՝ լրացված նախկինների կարևոր ձեռքբերումների մասին խորհրդածություններով» բանախոսությունները:

«Արամ Խաչատրյան - 120» միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները դարձան կարևոր հանգրվան երաժշտագիտության, մասնավորապես՝ խաչատրյանագիտության ասպարեզում:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՔԱՆԱՆՅԱՆ ԷՋԸ

Նիկոլ Գալանդերյանի «Պողոս-Պետրոս» (օր. 387) մանկական օպերայի ստեղծման աղբյուր է հանդիսացել Հովհաննես Թումանյանի համանուն ստեղծագործությունը: Սա իր տևողությամբ ամենակարճ մանկական օպերան է Գալանդերյանի պահպանված մանկական օպերաների շարքում: Այն իրենից մի ամբողջական տեսարան է ներկայացնում: Դժվար է այն անվանել գործողություն, ինչպես ընդունված է օպերային արվեստում, քանի որ բաղկացած է մի քանի էջից և չունի բաղադրիչ մասեր: Որպես հիմնական տոնայնություն հնչում է G-dur-ը, որը խորթ մոր կերպարում փոխակերպվում է g-moll-ի, երբեմն մինորում են հնչում նաև որբերի ողբի ձայները, և միայն Աստծո խոսքն է, որ իր արտահայտումն է գտնում c-moll-ում: Օպերայում չի օգտագործվել որևէ պար: Օպերայի հիմքում ընկած է բարու և չարի պայքարի գաղափարը:

Միայն երկու՝ «Պողոս-Պետրոս» և «Սևուկ ուլիկը» մանկական օպերաներում է Գալանդերյանն օգտագործում երկձայն երգեցողության փոքրիկ էլեմենտներ (երգչախմբային կտորներում), ինչպես նաև մետրի հաճախակի փոփոխություն:

«Պայն ու շաղգամը» (օր. 611) մանկական օպերան Գալանդերյանը գրել է ըստ Աթաբեկ Խնկոյանի համանուն հեքիաթի: Այն իր ծավալով ամենաերկարն

է՛ կրկին մեկ գործողությամբ, բայց վերջինս բաղկացած է 7 տեսարանից: Հետաքրքրականն այն է, որ այս օպերայի տոնայնական կառուցվածքը նույնպես հենվում է G-dur-g-moll հարաբերակցության վրա: Այստեղ կատարողների համար դժվարություններ են առաջանում այն առումով, որ մաժորից մինոր անցումները կատարվում են շատ կտրուկ՝ մասնակիցներից մեկի երաժշտական խոսքը ավարտվում է մաժորում, մյուսինը՝ սկսվում անմիջապես մինորում: Պետք է նշել, որ Գալանդերյանը հազվադեպ է տեմպային նշումներ անում, բայց այս մանկական օպերայում հաճախ է հանդիպում Largo տեմպը:

«Սևուկ ուլիկը» (օպ. 612) Գալանդերյանի մանկական օպերաների շարքում աչքի է ընկնում իր ձևի հստակությամբ: Սկսվում է շատ կարճ նախաբանով, որի միջոցով խումբը ներկայացնում է պատմության հիմնական առանցքը: Գործող անձինք են այժը, ուլիկը, գայլը և խումբը՝ որպես պատմող: Տոնայնական պատկերը շատ հստակ է՝ բոլոր երգաբաժինները, բացառությամբ գայլի (c-moll), գրված են C-dur-ում: Այստեղ նույնպես Գալանդերյանը կիրառել է համանուն մաժոր-մինոր հարաբերակցությունը: Օպերան բաղկացած է մեկ տեսարանից և հազեցած է պարերով: Գալանդերյանն օպերայում օգտագործել է շուրջ 6 պար, (այդ թվում՝ լեգգինկա և կենտապար), որից 4-ը հնչում են օպերայի ավարտին՝ ունկնդրին տեղափոխելով F-dur-d-moll:

«Չարի վերջը» (օպ. 13) մանկական օպերան, որը Գալանդերյանը գրել է ըստ Հովհաննես Թումանյանի համանուն հեքիաթի, միակն է, որ բաղկացած է 2 տեսարանից, սակայն դա չի անդրադառնում ծավալի վրա: Այն կրկին փոքրածավալ է: Գործող անձինք են՝ կկու մայրիկը, աղվեսը, ագռավը, շունը, կկվի ձագուկները: Առաջին գործողությունը բաղկացած է 3 տեսարանից: Տոնայնական կառուցվածքը կրկին հստակ է արտահայտված: Սկսվում է մաժորում՝ լուսավոր տրամադրությամբ, հաջորդիվ կկվի լացն է համանուն մինորում, որից հետո ամբողջ օպերան ընթանում է d-moll-ում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև ավարտին հաղթում է բարին, կոմպոզիտորը դա ընդգծելու համար չի վերադառնում մաժոր, այլ ավարտում է բնական մինորում:

Ագռավի դերերգը հիմնականում կառուցվում է մեծ սեկունդա ինտերվալի վրա՝ երբեմն ուղեկցվելով ֆորշլագներով:

20-րդ դարի սկզբին մանկական օպերային ժանրը հայ երաժշտական իրականության մեջ իր ուրույն տեղն էր գրավում և մշտապես գտնվում էր կոմպոզիտորների ուշադրության կենտրոնում: Թեև վերը նշված մանկական օպերաներից շատերը ժամանակին բազմիցս բեմադրվել են կովկասյան տարբեր քաղաքներում և մեծ հաջողություն ունեցել, այսօր՝ մոռացության են մատնված:

Եզրակացություն

Ամփոփելով մեր անդրադարձը Գալանդերյանի մանկական օպերաներին, գտնում ենք, որ՝

- չափազանց կարևոր է ուշադրություն դարձնել հայ դասական երաժշտական արվեստում այս ժանրի զարգացմանը, ինչն, անշուշտ, անհրաժեշտություն է կիրթ հասարակություն ձևավորելու համար,

• նպատակահարմար է դպրոցների տարրական դասարանների աշակերտների ուժերով Ն. Գալանդերյանի մանկական օպերաների բեմականացումը, ինչը ժամանակին արվել է մեծ հաջողությամբ:

Գրականություն

1. Գալանդերյան Ն. Մանկական ստեղծագործություններ, հ. Ե. Երեան, 1999:
2. Երեմյան Ա. Երգահան Նիկոլ Գալանդերյան. Թէիրան, 1947:
3. Հակոբյան Լ. Նիկոլ Գալանդերյան. մանկավարժական գործունեությունն ու մանկական ստեղծագործությունը, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, 2013, թիվ 2, էջ 84-87:
4. Սեգալ (Սեդա Գալանդերյան), Յուշեր. Թէիրան, 2002, էջ 17:
5. Ермаков А. Жанровые особенности детской оперы для любительского театра (на примере творчества уральских композиторов), автореферат на соискание ученой степени кандидата искусствоведения, специальность 17.00.02 – «Музыкальное искусство». Магнитогорск, 2012.
6. Ширяева О. Опера Т. Шкербиной «Дюймовочка»: к вопросу об истории и теории жанра детской оперы, Вестник Челябинской государственной академии культуры и искусств, 2015, № 1, с. 114-120.
7. Хачатрян Э., Адамян А. Из истории возникновения армянской детской оперы, Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия. Материалы VI Международной научно-практической конференции (Казань, 20 октября 2017), с. 233-239.

References

1. Galanderean N. Mankakan steghc'agorc'ut'iunner, h. E. Yerevan, 1999.
2. Eremyan A. Ergahan Nikol Galande'rean. T'e'hran, 1947.
3. Hakobyan L. Nikol Galanderyan. mankarjahan gorc'uneut'yunn u mankan steghc'agorc'ut'yuny', «Akunq» gitakan hodvac'neri jhoghovac'u, 2013, t'iv 2, e'j 84-87.
4. Segal (Seda Galande'rean), Yusher. T'e'hran, 2002, e'j 17.
5. Ermakov A. Zhanrovye osobennosti detskoj operi dlya lyubitel'skogo teatra (na primere tvorcestva ural'skix kompozitorov), avtoreferat na soiskanie uchenoy stepeni kandidata iskusstvovedeniya, special'nost' 17.00.02 – «Музыкальное искусство». Magnitogorsk, 2012.
6. Shiryaeva O. Opera T. Shkerbinoy «Dyumovochka»: k voprosu ob istorii i teorii zhanra detskoj operi, Vestnik Chelyabinskoy gosudarstvennoy akademii kul'turi i ickusstv, 2015, № 1, s. 114-120.
7. Khachatryan Je., Adamyan A. Iz istorii vozniknoveniya armyanskoy detskoj operi, Iskusstvo i hudozhestvennoe obrazovanie v kontekste mezhkul'turnogo vzaimodeystviya. Materiali VI Mezhdunarodnoy nauchno-prakticheskoy konferencii (Kazan', 20 oktyabrya 2017), s. 233-239.

ДЕТСКИЕ ОПЕРЫ НИКОЛА ГАЛАНДЕРЯНА

ЛИЛИТ АКОПЯН*

Для цитирования: Акопян, Лилит. “Детские оперы Никола Галандеряна”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 106-114. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-106

Исключительно важную роль в многогранном творчестве одного из видных деятелей ирано-армянской музыкальной культуры Никола Галандеряна сыграла его педагогическая деятельность. Будучи блестящим педагогом, он практически всю свою жизнь посвятил священному делу воспитания, образования и творческого развития детей. Успех первых детских песен послужил толчком к созданию небольших музыкально-драматических произведений для детей. Он назвал их «детскими операми». До нас дошли только 5 из 10 написанных Н. Галандеряном детских опер. При выборе материала композитор ориентировался на знакомые детям и любимые ими литературные тексты. Такой подход обеспечивал интерес к его сочинениям.

Ключевые слова: опера, жанр, сказка, диапазон, аккомпанемент, партия, тема.

CHILDREN'S OPERAS BY NIKOL GALANDERYAN

LILIT HAKOBYAN*

For citation: Hakobyan, Lilit. “Children’s operas by Nikol Galanderyan”, *Journal of Art Studies*, N 2 (2023): 106-114. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-106

In the multifaceted work of Nikol Galanderyan – one of the prominent figures of Iranian-Armenian musical culture – pedagogical activity played a particular role. Being a brilliant teacher, he devoted practically all his life to the sacred cause of upbringing, educating and developing creativity in children. The success of the very first children’s songs prompted the composer to create miniature musical-and-dramatic pieces for children. He called these works “children’s operas”. Of the 10 operas written by the composer, only 5 have come down to us. When choosing material for his children’s operas, the composer focused on literary texts, familiar to children and loved by them. Such an approach ensured interest in his works.

Key words: opera, genre, fairy tale, diapason, accompaniment, party, theme.

* Научный сотрудник отдела музыки Института искусств НАН РА, lilhak1986@gmail.com, статья представлена 17.05.2023, рецензирована 01.09.2023, принята к публикации 01.12.2023.

* Researcher at the Department of Music of NAS RA Institute of Arts, lilhak1986@gmail.com. The article was submitted on 17.05.2023, reviewed on 01.09.2023, accepted for publication on 01.12.2023.

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱԴ-ՕՐՈՐԸ

ԱՍՏԴԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

Հղման համար. Մուշեղյան, Աստղիկ: «Հայոց հնագույն տաղ-օրորը»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 115-141. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-115

Հայ հոգևոր երգաստեղծության բացառիկ նմուշներից է Ս. Ծննդյան «Երկինք երկնից իմաց արարեք» տաղը: Այն սկզբնաղբում է մի նոր ժանրի՝ «օրորի» ծնունդը, որ երգվում է Մանուկ Հիսուսին: Մեր կարծիքով՝ տաղը հորինվել է կիլիկեցի Անանուն հեղինակի ձեռքով ԺԳ դարի երկրորդ կեսից մինչև ԺԴ դարի առաջին կեսն ընկած ժամանակամիջոցում: Գրական բնագրի վաղագույն գրառումը գտնվում է 1348 թ. Սսում (Կիլիկիա) երաժիշտ-փիլիսոփա Եսայի Արևելցու ընդօրինակած Տաղարանում:

Տաղի երաժշտական բաղադրիչը մեզ է հասել երեք տարբերակով՝ գրառված հայկական նոտագրությամբ: Դրանցից առաջինը ձայնագրել է Ն. Թաշճյանը, որ վավերացվել է Հայ եկեղեցու կողմից, երկրորդը՝ Հ. Չերչյանը (Արմաշի ավանդույթ), իսկ երրորդը՝ անհայտ ձայնագրողը (Անթիլիասի տարբերակ): Բոլոր երեք ձայնագրությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք սերում են մեկ սկզբնաղբյուրից և աչքի են ընկնում Կիլիկյան երաժշտական արվեստին բնորոշ մեծակերտ-զարդարական ոճով, լայն վիպաքնարական շնչով և ծորերգային բնույթով:

Մեր քննության առանցքում Հայ եկեղեցու կողմից վավերացված նմուշն է, որով բացահայտվում են գրական և երաժշտական բաղադրիչների մի շարք հատկանիշներ, ինտոնացիոն-ռիթմական կազմին, տիպական մեղեդիական դարձվածքներին, ձայնեղանակային կառույցին, դրամատուրգիական զարգացմանն առնչվող առանձնահատկություններ: Հատկապես կարևորվում է կրկնակների դերը՝ որպես բանաստեղծական տեքստն ու մեղեդիական հյուսվածքը կերտող կարևորագույն հիմնանյութեր: Ոճական հատկանիշներով և ձայնակարգային-եղևջային բաղադրությամբ տաղը հարազատություն է դրսևորում Կոմիտասի գրառած Ակնա նշանավոր «Օրորի» հետ:

Միջնադարի տաղանդաշատ հեղինակի կերտած «Երկինք երկնից» եզակի տաղ-օրորն իր գեղարվեստական բարձր արժանիքներով, կատարելությամբ և ազդու ներգործությամբ մի իսկական ներբողյան է՝ նվիրված Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան ու Աստվածահայտնության տոնին:

Բանալի բառեր* Ս. Ծնունդ, Կիլիկիա, տաղ, օրոր, ինտոնացիոն-ռիթմական դարձվածք, ձայնեղանակ, կրկնակ:

Ներածություն

«Տաղարան» երգչական մատյանի ուսումնասիրությամբ բացահայտվում են հայ հոգևոր տաղերգության՝ մինչ այժմ անհայտ երեսակներ: Այս առումով մեծ կարևորություն են ներկայացնում հնագույն Տաղարանները՝ որպես երաժշտաբանաստեղծական արվեստի վաղ շրջանի նմուշները ներփակող ժողովածուներ:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, a.musheghyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 06.11.2023, գրախոսելու օրը՝ 20.11.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

Պատմամշակութային և գեղարվեստական խոշոր արժեք ունի 1348 թ. Սսում Հեսու Արևելցի երաժիշտ-փիլիսոփայի ընդօրինակած Տաղարանը, որ պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում (N 2070)¹: Այստեղ, ի շարս այլ նշանակալի ստեղծագործությունների, գրառված է Ս. Ծննդյան մի բացառիկ տաղ՝ «Երկինք երկնից իմաց արարեք» սկզբնատողով (թ. 263ա-264ա) [28, էջ 657]: Այն ոչ միայն հայ հոգևոր տաղերգության, այլև, առհասարակ, հոգևոր երգաստեղծության մեջ սկզբնադրում է մի նոր ժանրի՝ «օրորի» ծնունդը: Անկասկած է, որ տաղն ավելի վաղ ծագում ունի. այս համոզմանը հանգում ենք Հեսու փիլիսոփայի ինքնագիր հիշատակարանից, որում նա հայտնում է, թե ձեռագիրն ընդօրինակել է Հովհաննես սարկավագի շնորհած օրինակից (թ. 196ա): Մեր կարծիքով՝ տաղը հորինվել է կիլիկեցի Անանուն հեղինակի ձեռքով ԺԳ դարի երկրորդ կեսից մինչև ԺԴ դարի առաջին կեսն ընկած ժամանակամիջոցում:

Հայ հոգևոր երաժշտության մեջ Հիսուսի Ս. Ծննդյան Ավետարանական պատմությունն իր ընդլայն մեկնությունն է ստացել Ս. Մովսես Խորենացու, Սահակադուխտ Սյունեցու, Ս. Գրիգոր Նարեկացու, Սարգիս Անեցու, Ս. Ներսես Շնորհալու, Հովհաննես Երզնկացի Պլուզի, Վարդան Արևելցու, Կոստանդին Սրիկ Սսեցու, Առաքել Սյունեցու, Գրիգոր Է Անավարզեցու, ինչպես նաև բազմաթիվ հայտնի ու անհայտ երաժիշտ-բանաստեղծների շարականներում, գանձերում, տաղերում ու մեղեդիներում: Նրանց կերտած սքանչելի նմուշները տպավորում են խորախորհուրդ ու կերպառատ պատկերներով և գեղարվեստական արտահայտչամիջոցների բազմազանությամբ: Անանուն հեղինակն, անշուշտ, քաջաճանոթ է եղել ոչ միայն հայոց հարուստ երաժշտաբանաստեղծական ժառանգությանը, այլև Հայ և Ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայրերի աստվածաբանական մեկնություններին, ճատերին ու քարոզներին, որոնցում սահմանվում են քրիստոսաբանական վարդապետության հիմնական բանաձևումները:

«Երկինք երկնից տաղի գրական բնագիրը

«Երկինք երկնից» տաղն իր նախատիպը չունի ոչ միայն ժանրային, այլև բովանդակային-մեկնողական առումով: Հեղինակը պատմում է Ս. Կուսի Ավետման, Բեթղեհեմի քարայրում Աստծո Որդու և Երկնավոր Արքայի՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ծննդյան, Նրա մարդեղության խորհրդի, Փրկչական առաքելության և տնօրինությանց մասին: Ապա նկարագրում է Հինկտակարանյան մի քանի իրադարձություններ և գործածելով «Այս Մանուկս» բառակապակցությունը որպես հարակրկնություն (անաֆորա)՝ վկայում է Հիսուսի՝ որպես Ս. Երրորդության համագո անձի՝ արարչական և տիեզերաստեղծ գործունեության և հավիտենական իշխանության ու թագավորության մասին, քանզի Քրիստոս՝ Բանն-Աստված, ի սկզբանե Հայր Աստծու մոտ էր և ամեն ինչ Նրանով եղավ. «և առանց Նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղևն: Նովա՛ կեանք էր [...] Յաշխարհի էր և

¹ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Հոգեշնորհ Տ. Վահան ծ. վրդ. Օհանյանին՝ Վենետիկյան հավաքածուի N 2070 Տաղարանի թվային օրինակը մեզ տրամադրելու համար:

աշխարհ Նովա եղաւ (Յովհ. Ա, 2-3, 10) [1, էջ 183]: Հովհաննէս ավետարանչին երկրորդում է Պողոս առաքյալը՝ «Նովա հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, որ երկին՝ և որ ոչն երկին. [...] ամենայն ինչ Նովա՝ և ի Նոյն հաստատեցաւ. և Նա է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ Նովա եկաց բովանդակ» (Կողոս. Ա, 16-18) [1, էջ 485]:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ ԱԻՐԱԻՐՔՆ Է


Երկինք երկնից յիմաց արարեք,
և երկնայինք դուք խոնարհեցէք:
Ի Բեդդահէմ ի յայրին եդեալ,
Ձերկնից արքայն ի յերկրի տեսեալ:
Յայն յանարատ Մարէն մարմնացեալ:
Այրաւր այրաւր այ արաւր արաւր,
Ձայն հին և զնոր զԱստուածն այ արաւր:

Ձայս Մանուկս Գաբրիէլ յառաջ գուշակեաց,
Յականջ Կուսին աւետիս ձայնեաց:
Ի քէն մարմնանայ, որ ըզքեզ ստեղծեաց,
Այն որ յառաջ զԱդամ նորոգեաց:
Այսաւր եկեալ ի Կուսէն ծընեալ,
Յայն յանարատ Մարէն մարմնացաւ:
Այրօր այրաւր այ արաւր արաւր,
Ձայն հին և զնոր զԱստուածն այ արաւր:

Այս Մանուկս ըզՆոյի զտապանըն շինեաց,
զԱբրահամու զծընունդն աւետեաց:
Կայր խոյն կախեալ զծառոյն Սաբեկայ,
Այն փոխանակէր Իսահակայ:
Այսաւր եկեալ ի Կուսէն ծընեալ,
Յայն յանարատ Մարէն մարմնացաւ:
Այրաւր այրաւր այ արաւր արաւր,
ՁԱբրահամու զԱստուածն այ արաւր:

Այս Մանուկս ի Սինեա լերինն երևեալ,
Ընդ Մովսիսի ինքըն խաւեցաւ:
Հրաման ծովուն որ պատահեցաւ,
Երկոտասան փողոց կապեցաւ:
Իսրայելեան զաւրջըն ընդ այն անցան,
Մանանայիւրն կերակրեցան:
Այսաւր եկեալ ի Կուսէն ծընեալ,
Յայն յանարատ Մարէն մարմնացաւ:
Այրաւր այրաւր այ արաւր արաւր,

ՉՄովսիսի զԱստուածն այ արար:
 Այս Մանուկըս կամար կապեաց ամպեղէն,
 և ի վերա կամար լուսեղէն:
 Անթի զաստեղսն ի ներս հաւաքեաց,
 և զարեգակն որ լուսաւորեաց:
 Այսար եկեալ ի Կուսէն ծընեալ,
 Յայն յանարատ Մարէն մարմնացաւ:
 Այրար այրար այ արարար արար,
 Զայն հին և զնոր զԱստուածն այ արար:



Հեսու Արևելցու ձեռագիրը (Վնսկ. 2070)

«Երկինք երկնից» տաղը մեր միջնադարյան բանաստեղծական արվեստի սքանչելի նմուշներից է²: «Շատ գեղեցիկ և վսեմ է հին

² Հարկ է ասել, որ մինչ այժմ քննության չեն արժանացել ո՛չ տաղի գրական բնագիրը, ո՛չ էլ առավել՝ երաժշտական բաղադրիչը:

Օրօրս», - գրել է Հ. Ներսես վրդ. Սարգսյանը՝ հնագույն ձեռագրերից կատարելով տաղի ընդօրինակությունը [27, սյուն. 1158]՝ ըստ ամենայնի ձեռքի տակ ունենալով Հեսու Արևելցու օրինակը³ (այդ է հավաստում երկու բնօրինակ տեքստերի՝ թեկուզ և ոչ լրիվ համեմատությունը):

Հայկազյան բառգրքի հեղինակները «Օրօրք» մեկնում են «Անուն երգոյ, որպէս Օր օր գեղգեղ մարց ի ննջեցուցանել զգաւակն», և որպէս եզակի նմուշ հիշատակում խնդրո առարկա տաղը՝ «Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրօրքն է (ի բերանոյ Կուսին). Երկինք երկնից իմաց արարէք... ա՛յ օրօր» [2, էջ 1036]:

Գրական բնագիրը հորինված է տուն+կրկներգ կառուցվածքով: Տների բովանդակային առանցքը կազմում են Հինկտակարանյան իրադարձություններից մինչև Ս. Մարիամի Ավետումն ու Հիսուսի Սուրբ Ծնունդը նկարագրող դրվագները: Կրկներգի սկզբնական երկու տողերում ամփոփված է տաղի հիմնական բովանդակությունը՝ Ս. Կույսից ծնվում և մարմնավորվում է Բանն Աստուած: Հիսուսի Ծննդյան մեծասքանչ տեսարանին Անանուն հեղինակն այնուհետև ագուցում է մի նոր պատկեր՝ երբ Ս. Տիրամայրն անհուն սիրով Աստվածորդուն գիրկն առած՝ գգվանքով ու խանդաղատանքով օրոր է ասում: Որքան էլ բնականորեն ենթադրելի, սակայն երաժշտաբանաստեղծական արվեստում երբևէ չարտացոլված այս նորամույժ դրվագը մի նոր երգատեսակի հիմք է դառնում: Այս հազվագյուտ մեկնությամբ «Երկինք երկնից» տաղն առանձնանում է ոչ միայն հետշնորհալիական շրջանի ստեղծագործությունների շարքում, այլև հայ միջնադարյան տաղերգության մեջ ընդհանրապես:

Անհիշելի ժամանակներից օրորը գլխավոր տեղերից մեկն է գրավել հայ կնոջ կենցաղում, երբ երեխային քնեցնելիս մայրը երգ է ասել: «Մեր բազմադարյա պատմության ընթացքում ամենուրեք, որտեղ եղել են ծնունդ և օրորոց, միշտ հնչել է օրորոցային երգը, որով հայ կինն իր սիրասուն մանկան գովքն է արել, արտահայտել իր անսահման սերն ու գորովը», - գրում է Ա. Փաիկանյանը [50]: Հայ ժողովրդական երաժշտական բանահյուսության մեջ այն պատկանում է քնարական երգատեսակների թվին և հայտնի է հայրուր, բուրիկ, լուրիկ, այեր, նանիկ, նեննի և այլ անուններով [4, էջ 194]⁴: Ինչպես բնութագրում է

³ Տաղի ընդօրինակությունը գտնվում է «Հաւաքումն բանից նախնեաց ԺԱ» վերտառությամբ ձեռագրի «Տաղք, Մեղեդիկք, և Յորդորակք» բաժնում (թ. 240բ-244ա) [27, սյուն. 1158], որում ընդգրկված են հայտնի և անհայտ հեղինակների՝ նշված ժանրերին պատկանող բազմաթիվ հոգևոր երգեր: Ըստ Բ. Սարգիսյանի վկայության [27, սյուն. 1139]՝ մատյանը Հ. Ներսես վրդ. Սարգսյանն օրինակել է 1846-1847 թթ.՝ «իր ուղևորութեան միջոցին ի Հայս Մշոյ Առաքելոց, Ս. Կարապետի և Եւդոկիոյ անթուական և թուական ունեցող հին Ձեռագիրներէ: [...] Հաւաքումն շատ ճոխ է, և կը պարունակէ հարիրաւոր յայտնի և երբեմն անանուն հեղինակներու իմաստասիրական, ներբողեան և մեկնողական ճառեր, պատմական, ևն, թուղթեր, բազմաթիւ տաղեր և գանձեր»: Բ. Սարգիսյանը նշում է նախագաղափար ձեռագրերի մի շարք թվականներ՝ ՉԾԴ (1305), ՊԺԷ (1368), ՋԼԷ (1488) և այլն:

⁴ Նշված մի քանի եզրերի մասին տե՛ս [25, էջ 441, 26, էջ 454]: Նորերս օրորների մասին հանգամանալից ուսումնասիրություն է կատարել Ա. Հակոբյանը [18]:

Մ. Բրուսյանը՝ օրորներն ունեն հարուստ ու պատկերավոր լեզու, հիմնականում լայնաշունչ են, մեծ հնչյունածավալով, մեծ հատվածներ ընդգրկող աստիճանական շարժումով: Դրանց մեղեդիները գեղեցիկ են՝ շնորհիվ զարդարուն ռիթմի, ոլորուն ինտոնացիոն պատկերների, օգտագործված երաժշտական զարդարանքների [4, էջ 200]: Ժողովրդական երգաստեղծության նմուշների, հատկապես օրորների կառուցվածքային էական հատկանիշներից մեկը կրկնակների առկայությունն է, որոնք ծագումնաբանորեն հասնում են մինչև խոր հնադար [12, էջ 209]: Առանցքային դեր են կատարում նաև կրկներգերը՝ որպես մտքերի ամփոփման յուրատեսակ հանգրվաններ⁵ [5, էջ 35]: Ժողովրդական երգարվեստին բնորոշ այս հատկանիշները ներթափանցել են նաև հոգևոր երգեցողության ոլորտ՝ արտացոլվելով խնդրո առարկա օրորում:

«Երկինք երկնից» տաղի բանաստեղծական տեքստում մեծ է ռեաբանական ֆիգուրների՝ կրկնակների դերը⁶: Ինչպես նկատել է Ա. Մնացականյանը՝ կրկնակներով գրելու արվեստը, որ ժողովրդական երգի կարևորագույն առանձնահատկությունն է, միջնադարյան բանաստեղծները սկսել են գործածել X դարից [34, էջ 99]: Մեր տաղում դրանք հանդես են գալիս նախ որպես բացականչություններ («այ»)՝ ըստ Կոմիտասի՝ արտահայտելով «երաժշտական մեծ կամ փոքր մտքի ներքին էությունն ու բովանդակությունը» [15, էջ 249], ապա և հիմնարար բառեր՝ «աւար»-ներ՝ մեծ պատկերավորություն հաղորդելով բանաստեղծական խոսքին և դառնալով ժանրային հատկանիշի կրողներ: Ի վերջո՝ առավել խոշոր դեր է վերապահված բուն կրկներգին, որն արտահայտում է ամբողջ տաղի գաղափարական իմաստը: Կրկներգի եզրափակիչ տողերում կրկնակ «օրոր»-ների բարդումնային շղթան ընդմիջարկվում է Հիսուս Մանկանն ուղղված հորդորով՝ որպես դիմելաձև գործածելով Քրիստոս-Աստծու տարբեր պատշաճ որակումներ, ինչպես՝ «Չայն հին և զնոր զԱստուածն» կամ «ՉԱբրահամու զԱստուածն» և այլն: Բացի այն, որ դրանք արտահայտում են տվյալ որոշակի տան խորքային-այլաբանական իմաստը, միաժամանակ նաև՝ ժանրին բնորոշ յուրատեսակ գովքի տարրեր են ներմուծում օրորի մեջ:

Տաղի ձեռագրական գրառումները

Կիլիկյան Տաղարանում գրառված հնագույն օրինակում Հեսու Արևելցին առանձնահատուկ շեշտել է տաղի ժանրային պատկանելությունը՝ «Քրիս-

⁵ Մեկ այլ աշխատանքում ուսումնասիրողն ընդգծում է երգերի ձևակառուցվածքային հորինվածքում կրկներգերի ունեցած առաջնակարգ նշանակությունը՝ շեշտադրելով նաև այն հանգամանքը, որ օրորոցային երգը ձևավորվում է կրկներգի ակտիվ ներգործությամբ [6, էջ 17]:

⁶ Կրկնակների և դրանց դասակարգման մասին տե՛ս [15, էջ 248-250]: Կոմիտասն իր «Լոռու գութաներգը Վարդաբլուր գիղի ռոճով» ուսումնասիրության մեջ առանձնակի ընդգծում է երգում գործածված կրկնակների կարևորությունը՝ շեշտելով, թե դրանք երգի «բուն ուղն ու ծուծն են եւ նշանակ՝ հայ գեղցուկ մտքի բանաստեղծ կարողությունների» [16, էջ 111]:

տոսի Աստուծոյ մերոյ Արարքն է»⁷: Հետագա դարերում արտագրված մի քանի գրչագրերում մատյանների կազմող-խմբագիրները զետեղել են հարևանման խորագրեր՝

Քրիստոսի Աստուծոյ մերոյ Արարքն է. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան⁸ (այսուհետև՝ ՄՄ) 3503, Տաղարան, Սիս, 1394, թ. 355բ:

Քրիստոսի Աստուծոյ ատուրքք⁹. Եղմ. 1193, Տաղարան, 1476, տեղի՝ անյայտ [էջ 190][30, էջ 302]:

Տաղ եւ արօրս Աստուածածն[այ]. ՄՄ 3595, Տաղարան, ԺԵ դ., տեղի՝ անյայտ, թ. 65ա:

Քրիստոսի Աստուծոյ այրուրք. ՄՄ 1153, Ժողովածոյ, 1659 թ., Սպահան, թ. 141ա:

Տաղ Յիսուսի Քրիստոսի, արօր օրօրին. Վնտկ. 1823, Տաղարան, 1659 թ., թ. 18ա [28, սյուն. 748]:

Քրիստոսի արարք. Վնտկ. 643 (նոր 304), Հաաքումն բանից նախնեաց, ԺԱ. 1846-1847, Ս. Առաքելոց վանք և Ս. Կարապետ (ի Մուջ), թ. 243բ [27, սյուն. 1158]:

«Երկինք երկնից» տաղը զանազան խորագրերով, նաև՝ անխորագիր, գրի է առնվել նաև հետևյալ գրչագրերում.

Տաղ Աստուածածնին. Եղմ. 135, Գանձարան, 1575 թ., Սողած գիւղ (Խլաթ) եւ Թեղայ վանք, [էջ 107] [29, էջ 379]:

Տաղ Ծնընդեան գեղեցիկ ասացեալ է. Վնտկ. 1387, Տաղարան, ԺԶ-ԺԷ դ., տեղի՝ անյայտ, թ. 34ա [28, էջ 711]:

Տաղ Ծնընդեան Փրկչին. Զմմատ 533 (հին՝ ՃԻԵ), Ժամագիրք-Տաղարան, 1622-ից առաջ, տեղի՝ անյայտ, թ. 131բ [49, էջ 141]:

[Անխորագիր]. ՄՄ 4284, Ժողովածոյ, 1631-1635 թթ., տեղի՝ անյայտ, ձեռ. Ե, թ. 151բ:

Տաղ ծընընդեան Աստուածածնին ասայ. ՄՄ 4287, Ժողովածոյ, 1640 թ., տեղի՝ անյայտ, թ. 77ա:

Տաղ Աստուածածնին. Եղմ. 1417, Աղամգիրք-Տաղարան, 1644, Ս. Յակոբ, Երուսաղէմ, էջ 521 [31, էջ 79]:

Տաղ Ծընընդեանն եւ Յայտնութեան Տեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ՄՄ 5992, Ժողովածոյ, 1645 թ., Ախալգօր գիւղաքաղաք, թ. 27ա:

Տաղ Յայտնութեանն ասա. ՄՄ 6172, Տօնացոյց, Պարզատոմար, 1663 թ., Արնդանց գիւղ (Մոկաց աշխարհ), թ. 150ա:

Տաղ վասն Ծնընդեան. ՄՄ 7717, Տաղարան, Աղրիանուպօլիս, 1695 թ., տեղի՝ անյայտ, թ. 175բ:

⁷ Ըստ ամենայնի՝ գրիչը հետևել է նախօրինակ ձեռագրի բնագրին:


⁸ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում առկա տվյալները ներկայացնում ենք ըստ մեր կատարած ուսումնասիրության արդյունքների: Բացի դա՝ օգտվել ենք չափածո նյութերի սկզբնատողերի քարտարանից, ինչպես նաև «Մայր ցուցակ ձեռագրաց»-ի հատորներից:

⁹ **Ատուրքք՝** ակնհայտ տպագրական վրիպակ է, պետք է լինի՝ **արարքք**:

Տաղ Ծննդեան. Վնտկ. 459, Տաղարան, ԺԷ դ., տեղի՝ անյայտ, թ. 83բ [28, սյուն. 798]:

Տաղ Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերո. ՄՄ 1639, Տաղարան, ձեռ. Գ, ԺԷ դ., տեղի՝ անյայտ, թ. 193ա:

[Անխորագիր]. ՄՄ 1682, Ժողովածոյ, ԺԷ դ., տեղի՝ անյայտ, թ. 153բ:



Ս. Ծնունդ, ծաղկող՝ Թորոս Ռոսլին
ՄՄ 10675, «Մալաթիայի» Աւետարան,
1267-1268 թթ., Հռոմկա, թ. 177ա

Այլ տաղ ասա՛ եւ զգրիչս յիշեա՛. ՄՄ 2649, Գանձարան, ԺԷ դ., տեղի՝ անյայտ, թ. 114ա:

[Անխորագիր]. ՄՄ 4285, Տաղարան, ձեռ. Դ, 1700 թ., տեղի՝ անյայտ, թ. 166ա:

[Անխորագիր]. ՄՄ 2190, Ժողովածոյ, ձեռ. Ա., 1712 թ., տեղի՝ անյայտ, թ. 150բ:

Տաղ Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ ասացեալ ի հնոց վարդապետացն մերոց. ՄՄ 1387, Ժողովածոյ, 1733-1735 թթ., Պրուսա, Ադրիանուպոլիս [Յաւելագրութիւնք ԺԸ դ., թ. 2ա]:

[Անխորագիր]. Վնտկ. 1821, Տաղարան, 1762, տեղի՝ անյայտ, թ. 43բ [28, սյուն. 877]:

Այլ տաղ գեղեցիկ Ծննդեան. ՄՄ 7129, Ժողովածոյ, ԺԷ, ԺԸ դդ., տեղի՝ անյայտ, թ. 79բ:

Տաղ Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ՄՄ 2339, Ժողովածոյ, ԺԸ դ., տեղի՝ անյայտ, թ. 279ա:

Տաղ Ծննդեան Տեառն մերոյ. ՄՄ 7723, Ժողովածոյ, ԺԸ դ., տեղի՝ անյայտ, թ. 60ա:

Տաղ Ծննդեան ասա. ՄՄ 9271, Տաղարան, ԺԸ դ., տեղի՝ անյայտ, թ. 16ա:

Տաղ Ծննդեան. ՄՄ 8223, Ժողովածոյ, 1842-1893 թթ., տեղի՝ անյայտ, թ. 142ա:

[Անխորագիր]. ՄՄ 3608, Տաղարան, ԺԹ դ., տեղի՝ անյայտ, թ. 13ա:

Այլ տաղ գեղեցիկ Ծննդեան. Անկիր. 149, Հաւաքածոյ (վկայութիւնք, տաղք, պատմութիւնք, քարոզք, հ. Ա), Ժամանակ և տեղի՝ անյայտ¹⁰ [3, սյուն. 740]:

Ժամանակի ընթացքում տաղի գրական բնագիրը ենթարկվել է մի շարք փոփոխությունների: Եղմ. 1193 ձեռագրում, օրինակ, բացի տարընթերցումներից, ակնհայտ տարբերություններ ենք արձանագրում երրորդ տան մեջ, որտեղ «Կայր խոյն կախեալ զծառոյն Սաբեկայ, / Այն փոխանակէր Իսահակայ» տողերի փոխարեն առկա է՝ «Կայր խոյն կախեալ զծառոյն եղջերաց,/ այն փոխանակ Սահակայ զոր յառաջն ազգեաց»¹¹: Բացի այդ, վերջին տան մեջ «Ձայն հին և զնոր զԱստուածն» փոխարինված է «ըզերկնային զԱստուածն» բանաձևումով: Հետաքրքիր է տաղի ՄՄ 3595 ձեռագրի տարբերակը, որում Ա. Մնացականյանը նշմարել է ժողովրդական երգերի հորինվածքային առանձնահատկություններից մեկը՝ բարդումների սխտեմը, որը գործածված է նաև Ս. Գրիգոր Նարեկացու «Սայլն այն իջանէր» տաղում: Գիտնականը եզրակացրել է նաև, որ տաղը «մշակված է ժողովրդական դիցաբանական երգերի հիման վրա»:

Այս մանուկս աթոռ շինեաց ամբողէն,

Եւ այլ ի վեր կամար՝ հրեղէն,

Եւ այլ ի վեր կամար՝ լուսեղէն,

Ինքն ի վերայ կամարայ՝ նստաւ [34, էջ 100]:

«Երկինք երկնից» տաղի սկզբնական տարբերակը հիմք ընդունելով՝ մատյանների խմբագիրները կամ գրիչները հետագա դարերում բնագրին հավելել են տարբեր տներ, որոնցում «նկատելի է դառնում ժողովրդական բառուբանից օգտվելու, ժողովրդական մոտիվներով գրելու, մշակումներ կատարելու սովորությունը» [35, էջ 511], ինչպես տեսնում ենք ՄՄ 5992 ձեռագրի տարբերակում (թ. 28բ)։

Այս Մանուկըս կազմեալը ընդդէմս արծուի,

և միւսն յանուանելի,/և նստեալ յաթոռ բարձր գահիւ իլի.

փառքըն Հաւրն և պատիւն աւելի:

այսաւր ծընաւ զՏէրն ի Բէթլայեմ ի յայրին:

Այսպիսով, «Երկինք երկնից» տաղն իր տարբեր խմբագրություններով հասել է մինչև ուշ միջնադար, երբ, ըստ մեր ուսումնասիրությունների, հաստատվել է բանաստեղծական տեքստի երկու տարբերակ, որոնցից առաջինում առկա է նոր բովանդակությամբ հետևյալ տունը.

Երեք արքայք առ Քեզ խոնարհեալ

զԵրրորդութիւնըն մեզ ծանուցեալ,

¹⁰ Նկարագրության մեջ միավորների թերթահամարները բացակայում են: Տաղացանկը ենթադրել է տալիս, որ ձեռագիրը ուշ միջնադարյան ծագում ունի:

¹¹ Հայ մատենագրության մեջ «Սաբեկայ ճիղ-Իսաչ» և «Իսահակ-Քրիստոս» խորհրդանշանային զուգահեռների և դրանց մեկնությունների մասին տե՛ս [51, էջ 18-20, 387-388]:

զօրք անմարմնոցն ի յերկնից իջեալ և
անդ հովաքն աստիս տըւեալ,
զՈրդի Կուսիդ Աստուած քարոզեալ,
Արքայ և Տէր ըզՔեզ ծանուցեալ¹² [41, էջ 26, 27; 42, էջ 245]:

Մյուս տարբերակը հրատարակված ենք տեսնում ժԹ դարի Տաղարաններում և Երգարաններում [43, էջ 193; 44, էջ 193; 45, էջ 193; 46, էջ 208; 47, էջ 204; 40, էջ 279]: Միջնադարյան բնագրային տեքստում մի քանի հարյուրամյակ հետո արձանագրված խոշոր փոփոխությունները խոսում են ժամանակի գրական նոր միտումների մասին, որոնց բացատրությունը տալիս է Ա. Մնացականյանը. «Հայ տպարաններից դուրս եկած գեղարվեստական գրականության հիմնական արտադրանքը պատկանում էր անցյալի ժառանգությանը: Հաճախ գրիչները, երգիչները, ասացողները, հրատարակողները փոփոխում, վերախմբագրում էին առակների, երգերի, հանելուկների հին նմուշները և նրանց շարքերը լրացնում նորանոր միավորներով: Անցյալի ժառանգությունը ծառայում էր նոր ժամանակներին նաև նոր ու ժամանակակից մեկնաբանություններ գրելու ճանապարհով» [35, էջ 510]:

Ահա այսպիսի էական վերափոխումներ կրելով՝ «Երկինք երկնից» տաղի նոր վերամշակված բնագիրը հիմք է դարձել ժԹ դարում հայկական նոտագրությամբ կատարված ձայնագրությունների համար:

Տաղի երաժշտական բաղադրիչը

Դրանցից առաջինը Հայ Եկեղեցու կողմից վավերացված օրինակն է՝ Նիկողայոս Թաշճյանի գրառմամբ, որ լույս է տեսել «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հատորում [20, էջ 107; 21, էջ 156]: Երկրորդը պատկանում է Արմաշի երաժշտապետ Համբարձում Չերչյանին և վանքում կատարվող Ս. Պատարագի արարողության մաս է կազմել¹³: Երրորդ գրառումը զետեղված է Անթիլիասում տպագրված հոգևոր երգերի ժողովածուում [32, էջ 22]¹⁴ և, հավանաբար, տեղական ավանդույթը ներկայացնող տարբերակ է (թեև այդ մասին ծանոթություն չի տրված): Նշված երեք նմուշների երաժշտական բաղադրիչները սերում են մեկ սկզբնաղբյուրից և դրա ճյուղավորումներն են՝ մի քանի մասնավոր տարբերություններով հանդերձ, որ վերաբերում են ինտոնացիոն-դարձվածքային կազմին, և ի հարկին ցույց կտրվեն:

Մեր քննության առանցքում Հայ Եկեղեցու կողմից վավերացված նմուշն է, որը Ն. Թաշճյանը զետեղել է «Տաղը ըստ պատշաճի աուրցն, զորս երգեն զկնի «Քրիստոս պատարագեալ»ի» խորագիրը կրող բաժնում: Երաժշտական բա-

¹² Հրատարակիչները զանց են առել բնագրի «Օրօր» բառերով երգվող տողերը:

¹³ Ձայնագրությունը զետեղված է Արմաշի վանքից մեզ հասած ձեռագրերում, որ պահվում են ՄՄ Նորագույն հավաքածուում՝ № 103, 29 և 5:

¹⁴ Տաղը վերնագրված է «Ի Բեթղեհէմ»՝ ըստ բանատողերից մեկի: Նույն տարբերակն ընդգրկված է նաև՝ [19, էջ 145]:

ըլադրիչը կրում է մեծակերտ-զարդարական ոճի կնիքը, աչքի է ընկնում լայն վիպաքնարական շնչով և ծորերգային բնույթով:

ՏԱՂ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՐԿԻՆՔ ԵՐԿՆԻՑ

The musical score is written on ten staves in a single system. It features a complex rhythmic structure with frequent sixteenth and thirty-second notes, often beamed together. The melody is highly ornamented with grace notes and slurs. The lyrics are written in Armenian and are placed below the notes. The key signature has two flats (B-flat and E-flat), and the time signature is 3/8. The score concludes with a double bar line and repeat dots.

Եր
և
կինք
կրկ
կրկ
ևս
նից
յինք
ի
դուք
մնաց
խո
ս
ևսք
ըկք.
գլք.
ի Բկթ
դե
ևս
ի
3
յայ
դն
ըն
թու
ըկք.

գերկ -

նից Արի -

քայն

ի մրս - րին տե -

սէք. այ օր, այ օր,

այ օր, օր օր,

օր օր, օր օր,

օր օր, օր օր

1) 1878 թ. հրատարակության մեջ տպված է երկրորդ վերնախաղ կիսակը, որը վրիպակ է: Պարույկ կիսակը ուղղում ենք ըստ 1874 թ. հրատարակության [Ա.Մ.]:

օր օր:
 Իմ Մի -
 սի - ծին
 Որ - դեակս օր
 օր օր. Իմ սնդ -
 րա - նիկ Յի - սու օր
 օր, օր, օր օր
 օր, օր օր օր
 օր օր օր օր
 օր:

Տաղի մեղեդիական հորինվածքը բաղկացած է երեք մասից:
 Առաջինը կազմում են բնագրի սկզբնական երկու տողերը՝ «Երկինք երկնից
 յիմաց արարեք, / և երկնայինք դուք խոնարհեցեք», որոնք երգվում են միևնույն

եղանակով: Հանդիսավոր, լուսավոր-պայծառ բնույթով մեղեդու ընթացքով՝ գրական բնագրին համահունչ, ազդարարվում է Ամենակալ Տիրոջ Ա. Ծննդյան մասին, և հուզական-բերկրալից զգացումներով լի մեղեդու ծավալումը դառնում է յուրատեսակ հիմներգ այս համատիեզերական իրադարձությանը:

Երկրորդ մասի հիմքում ընկած են «Ի Բեթղեհեմ ի յայրն ընթացէք, / զերկնից Արքայն ի մարին տեսէք» տողերը: Այստեղ ի հայտ են գալիս նոր երաժշտական հիմնանյութեր՝ նոր ձայնեղանակում, որոնք առաջ են բերում ցնծալի զգացումների նոր ալիքներ (տե՛ս «[Ի Բեթ]ղեհեմ» և «զերկնից» բառերին համապատասխան հատվածները):

Երրորդ մասը կրկներգն է՝ «այ օր, այ օր, օր օր օր օր օր օր օր օր օր օր օր / իմ Միածին Յիսուս օր օր օր/իմ անդրանիկ Որդեակս օր օր օր»¹⁵: Կրկներգի մեղեդիում առավել ցցուն է դրսևորվում տաղի ժանրային հատկանիշը, երբ գործվալից ու կաթոգին զգացումներով լեցուն՝ Ա. Աստվածամայրը Մանուկ Հիսուսին մեղմանուշ օրոր է երգում: Բայց անսպասելիորեն հորդում է հույզերի մի հեղեղ, Միածին Որդու Ծննդյան առթիվ Ա. Տիրամորը համակած անսահման ուրախության ու բերկրանքի մի նոր ալիք, փոթորկուն հոգու մի նոր ճիչ: Երաժշտական բաղադրիչում այս ամենը մարմնավորվում է նոր թեմատիկ նյութի միջոցով՝ ԳՁ դարձվածքին բնորոշ գունավորմամբ, որը ոչ միայն կրկներգի, այլև ամբողջ տաղի գագաթնակետն է: Այստեղ անձնական ապրումները հասցված են գաղափարական ընդհանրացման բարձր աստիճանի՝ արտահայտելով Տիրոջ սքանչելափառ Ծննդյան և Հայտնության առթիվ համայն մարդկության ցնծությունը:



Ինչպես արդեն նշել ենք, բանաստեղծական տեքստում ձևակառուցողական մեծ դեր են ստանձնում կրկնակները՝ ուժգնացնելով հորինվածքի գեղարվեստական արտահայտչականությունը: Նրանց նույնպիսի դեր է վերապահված նաև երաժշտական բաղադրիչում և հատկապես կրկներգում, որոնցում փոքրագույն մեղեդիական կազմավորումները, տիպական պտույտները, դասույթներն ու նախադասությունները հանդիսանում են մեղեդիական հյուսվածքը կերտող կարևորագույն հիմնանյութեր:

Դրանք են՝

1. «այ» բացականչությանը համապատասխանող երաժշտական մոտիվն իր տարբերակներով.

¹⁵ Ն. Թաշճյանը նոտագրել է միայն «օրօր»-ների մասը՝ ցուցելով, որ շարունակությունը պետք է երգել «զերկնից Արքայն ի մարին տեսէք» հատվածի եղանակով: Մենք անհրաժեշտ համարեցինք ամբողջացնել տաղի երաժշտական համապատկերը՝ համադրելով իրված գրական տեքստը երաժշտական բաղադրիչի հետ:



2. ներքընթաց սեկվենցիան բազմապիսի տարբերակումներով.



3. տարբեր մասերում հանդիպող գործիքային տիպի պասսաժներն իրենց տարբերակումներով.



4. միևնույն դարձվածքով սկսվող դասույթները՝ կրկնվող ու միանգամայն տարբեր.



5. ամբողջական դասույթներն ու նախադասություններն իրենց նույնական կրկնություններով.





ե. կրկներգն ամբողջությամբ:

Կարևոր է նշել նաև, որ փոքր դասույթները, միավորվելով մեկ ամբողջական նախադասության մեջ, նույնպես հանդես են գալիս որպես կրկնակներ (ինչպես 2, 3 և 4 նմուշների որոշակի հատվածները միասին՝ 5գ օրինակում, կամ 5ա և 5բ հատվածները միասին՝ տաղի «ի մարին տեսէք» հատվածում): Օրորի մեղեդիական շարադրանքում բազմակի կրկնվող կաղապար-դարձվածքները ստանձնում են որոշակի ատաղձի դեր՝ դառնալով յուրատեսակ լայթթեմաներ: Սա վերաբերում է նաև կրկներգին ամբողջապես, և համաձայն Կոմիտասի խոսքի՝ կարող ենք փաստել, որ այն ճշտիվ արտացոլում է երգի զգացմունքի և մտքի բովանդակությունը՝ ազդելով ամբողջ երգի վրա [15, էջ 250]:

Տաղի երաժշտաոճական աչքի ընկնող առանձնահատկություններից մեկը երգային և ասերգային նախասկզբերի միախլուսումն է: Ասերգայինը՝ հուզական տարրի թանձրացմանը զուգահեռ, հատկապես ակնառու է բարձր ձայնասահմանում ծավալվող մեղեդիական դարձվածքներում, իսկ գազաթնակետային հատվածներում այն վերափոխվում է յուրատեսակ «բարբառումների»՝ վերաճելով հույզերի արտահայտման կիզակետի:

«Երկինք երկնից» տաղի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ Անանուն հեղինակը փայլուն տիրապետել է հայ երաժշտաբանաստեղծական արվեստի ստեղծագործական ամենատարբեր հնարներին, ձայնեղանակների ուսմունքին, խազագրությանը: Նա, ըստ ամենայնի, մասնագիտական բարձր կրթություն է ստացել Կիլիկիայի համբավավոր ուսումնագիտական կենտրոններից մեկում: Անկասկած է, որ Անանուն փիլիսոփա-երաժիշտը ուսումնասիրել է նաև ժողովրդագուսանական արվեստը, հատկապես՝ Ակնա քնարական երգերը, որոնք, ըստ Ք. Քուշնարյանի, իրենց մի շարք ոճական առանձնահատկություններով սերտորեն առնչվում են ԺԲ-ԺԳ դարերի տաղային արվեստի նմուշներին [52, էջ 199, 201-202]: Դրանց բնորոշ իմպրովիզացիոն-դեկլամացիոն բնույթը, գործիքային տիպի անցումները, մեխլամատիկ ոճը և, հատկապես, ալտերացված աստիճաններով ձայնակարգերը՝ ինտոնացիոն կազմում առկա մեծացրած սեկունդա և կվարտա, փոքրացրած կվարտա և կվինտա՝ պիրկ հնչողությամբ ինտերվալներով, բնութագրական են նաև Ս. Ծննդյան տաղին: Իրապես, նշված առումներով և հատկապես ձայնակարգային-ելևէջային բաղադրությամբ (տե՛ս 5ա նոտային օրինակը) տաղը հարազատություն է դրսևորում Կոմիտասի գրա-

նաժ Ակնա նշանավոր «Օրորի», առավել ճշգրիտ՝ նրա առաջին հատվածի հետ [36, էջ 1; 13, էջ 139; 14, էջ 91]¹⁶: Կոմիտասն ինքը ձայնեղանակը բնորոշել է որպես ԱԿ, որի վերաբերյալ հետագայում տարբեր կարծիքներ են հայտնել Ք. Քուշնարյանը¹⁷, Ն. Թահմիզյանը¹⁸, Ռ. Աթայանը¹⁹: Սակայն անկախ տարատեսակ մեկնաբանումներից՝ անբեկանելի է այն փաստը, որ քննարկվող մեղեդիական դարձվածքը՝ իրեն բնորոշ ձայնեղանակային առանձնահատկությամբ, դարձել է մի չափանմուշ, և առնվազն ԺԲ դարից (թեև աներկբա է, որ այն ավելի հնավանդ ծագում ունի) որպես կաղապար ծառայել օրորի ժանրի համար թե՛ հոգևոր, թե՛ ժողովրդագուսանական երաժշտարվեստում²⁰:

Առանձնակի պետք է ընդգծել այն հանգամանքը, որ տաղում քանիցս գործածվող այս զարտուղող հատվածը՝ իր էկորճ կիսվարով, շարադրանքում անմիջապես համադրվում է հիմնական՝ ԴՁ ձայնեղանակին բնորոշ մեղեդիական դարձվածքին՝ բնական էկորճ ձայնաստիճանով, ինչը առանձնահատուկ հմայք է հաղորդում հնչողությանը՝ միաժամանակ արտահայտելով հուզական տարբեր երանգավորումներ: Ե՛վ նշված, և՛ այլ ձայնեղանակային համակցումներով առավել հարուստ է կրկներգը, որոնցից ամենացուներ մեր կողմից արդեն նշված բարձրակետային հատվածն է՝ բնական և կիսվար վերնախաղերի հերթագայումով (նույն դարձվածքն առկա է նաև երկրորդ մասի սկզբում): Ձայնեղանակային զուգադրումների և դրանց բնորոշ մեղեդիական դարձվածքների մեծահմուտ կիրառման շնորհիվ տաղի գեղեցկագույն եղանակը ժամանակի ընթացքում դար-

¹⁶ Տաղի գրական բնագիրն առաջին անգամ հրատարակվել է [24, էջ 407]:

¹⁷ Ք. Քուշնարյանը տվյալ ձայնակարգը մեկնում է որպես կրկնակի ձայնակարգից ածանցված [52, էջ 199], և ավելի մասնավորեցնելով՝ որակում որպես իջեցված 4-րդ աստիճանով փոյուզիական ձայնակարգ, ապա՝ դորիական հեպտախորդ իջեցված 5-րդ աստիճանով [52, էջ 382-383]:

¹⁸ Ըստ Ն. Թահմիզյանի՝ շարքի մի քանի երգեր, այդ թվում նաև «Օրոր»-ը, որոնք էկորճ կիսվար գործածելով՝ ավարտվում են խոսրովայինի վրա, Կոմիտասը ԱԿ է անվանել հավանաբար այն պատճառով, որ դրանցում ընդհանուր առմամբ շեշտված են «c»-ի՝ որպես դիմող ձայնի դիրքերը [8, էջ 12]: Գիտնականը, այնուհանդերձ, գտնում է, որ «Օրորին», ինչպես նաև մյուս երգերին, բնութագրական է մի ձայնեղանակ, որի հիմքը դորիական ձայնակարգն է՝ իջեցված 5-րդ աստիճանով [8, էջ 17 և 20]:

¹⁹ Ռ. Աթայանը «Օրոր»-ի ծանոթագրության մեջ գրում է, որ Կոմիտասը ԱԿ նշումը դիտարկել է որպես ԱԿ դարձվածք՝ հավանաբար նկատի ունենալով «նախադասությունն ավարտող սոլ հիմնաձայնով և սի-բեմոլ հնչյունով ձայնակարգ, ռե-բեմոլը դիտելով որպես դիպվածային «կիսաձայն» (ըստ Ն. Թաշճյանի համակարգի՝ «ԱԿ դարձվածք-զարտուղի»)»: Ռ. Աթայանը նկատում է նաև, որ նախադասությունը մոդուլացնող է, և առաջարկում է տարբեր մոտեցումներ՝ փոյուզիական մինոր լա հիմքով և ցած 4-րդ աստիճանով քառալար («ԱԿ զարտուղի») կամ սի-բեմոլ հիմքով և ռե-բեմոլ տերցիային օժանդակ հենակետով և կիսատոնային ստորին ձգտող հնչյունով մինոր եռալար [14, էջ 167]:

²⁰ Այս առանձնահատկությունը դրսևորվում է նաև այլ ավանդական օրորներում, ինչպիսիք են, օրինակ, Կոմիտասի աշակերտ Միհրան Թումանյանի գրառած նմուշները՝ նույն Ակնա «Աղվոր ես, չունիս խալատ»-ի երեք տարբերակները, «Օրոր, օրոր» [11, էջ 141, 142, 143], ինչպես նաև «Սալնջախ եմ ձգեր» [10, էջ 43] և այլ երգեր: Դրանց մասին տե՛ս [17, էջ 181-191]:

ձել է չափանմուշ՝ հիմք ծառայելով այլ հոգևոր երգերի համար, ինչպիսին, օրինակ, «Խոնարհեալ Բանին Աստուծոյ» Սրբոց Մարտիրոսաց գանձն է (ծայրակապ՝ «Խաչատուր», Եղմ. 135, թ. 10ա, «Երկինք երկնիցի գոյնն է») [29, էջ 372]:

Ինչպես արդեն ընդգծել ենք, օրորի երաժշտական բաղադրիչի բուն սկզբնաղբյուրը մեկն է, սակայն սփռվելով տարբեր տարածաշրջաններում՝ այն երգվել է զանազան տարբերակներով, որոնցից յուրաքանչյուրը ձեռք է բերել իր անհատական դիմագիծը:

Հ. Չերչյանի գրառման մեջ՝ վավերացված օրինակի համեմատ, այլ կերպ է եղանակավորված կրկներգի «օր օր» բառերով գագաթնակետային հատվածը.

Ն. Թաշճյանի և Հ. Չերչյանի համեմատությամբ ակնառու տարբերությամբ են ձայնագրված Անթրիլիասական տարբերակի հետևյալ հատվածները՝

ա.

Հատկապես ուշարժան է երկրորդ օրինակը, որում «ընթացէք» բառին համապատասխանող հատվածը՝ ինտոնացիոն-ձայնակարգային առումով, եզակի է երեք ձայնագրությունների մեջ: Դարձվածքը սկսվում է հանկարծակի հուժկու թռիչքով դեպի բարձրակետային ոլորտ, և ընթանալով զարտուղի ձայնեղանակում՝ պարույկ հիմքով ու երկրորդ կիսվար խոսրովայինով, հուզախոռվ-պոռթ-

կուն ծավալումից հետո վարընթաց «հառաչանքի» սեկվենցիաներով էջք է կատարում դեպի դիմող ձայնի ոլորտ՝ շրջագարդող շարժումով կանգ առնելով պարույկի վրա: Այս երաժշտական նախադասությունը, որ անակնկալ հանդիպեցինք Անթիլիասական գրառման մեջ, Ս. Գրիգոր Նարեկացու «Աչքն ծով ի ծով» տաղից է, իսկ եզրափակիչ շրջագարդումը նրա սկզբնական հանրահայտ՝ քիչ վերափոխված դարձվածքն է: Ըստ Ն. Թահմիզյանի՝ «Աչքն ծով»-ը ԺԲ-ԺԳ դդ. վերաեղանակավորել են Կիլիկիայի վարպետ-երաժիշտները (ժամանակի զարդու լրուն ոճի պահանջներին համապատասխան)²¹ [9, էջ 219], իսկ դրա կաղապար դարձվածքները գործածել են որպես ատաղձ՝ իրենց սեփական ստեղծագործությունները հորինելիս: Կիլիկյան երաժշտարվեստի՝ մեր կատարած ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս դարձվածքը կիրառվել է նաև այլ տաղերում:

«Երկինք երկնից» Ս. Ծննդյան օրորի սկզբնավորումով հայ հոգևոր տաղերգության մեջ հիմք է դրվել մի նոր ժանրի զարգացման: Այն վերագարթոնք է ապրել հատկապես Վերանորոգության շրջանում, երբ Կիլիկյան Անանուն տաղերգուի հետևողությամբ հայ հեղինակները հորինել են նմանատիպ ստեղծագործություններ: Առաջին հերթին պետք է հիշատակել Ղազար Ա Զահկեցու տաղը կամ *երգը*՝ ինչպես բնորոշել է հեղինակը՝ «Հրեշտակք եւ մարդիկք ահա՛ ցընծացէք/երկնի երկրի իմաց արարէք..... այ օր այ օր. օր օր օր օր օր. զայն երկնի և երկրի զԱստուածն օր օր օր»²²: Այս օրորը, որ աստվածաբան Հայրապետն ավելի ընդարձակել և ճոխացրել է Քրիստոսի տնօրինությունների մասին բազմապիսի մեկնություններով, չափազանց հարազատ է «Երկինք երկնից»-ի բանաստեղծական տեքստին իր բովանդակությամբ, ոճական հատկանիշներով, տաղաչափությամբ, բառազանձով և անգամ տների սկզբնատողերի միևնույն հարակրկնություններով: Այնուհետև նշելի են Մխիթար Սեբաստացու «Ննջեա որդեակ, քաղցր եւ անուշ... օր, օր, օր, օր» («Երգ գորովագթական և դրուատական ի դիմաց Սրբուհոյ Կուսին Մարիամու՝ առ մանկացեալ Աստուածորդին իր») [33, էջ 85], Սիմեոն Երևանցու «Խորհուրդ մեծ յայտնեցաւ այսօր յաշխարհի..... օր, օր, օր, օր» («Տաղ ի Սուրբ Ծնունդն Քրիստոսի ի դիմաց Սրբուհոյ Աստուածածնին») [38, թ. 9բ; 39, էջ 3], Մարտիրոս արք. Ուռուանցու «Խայտայ Որդեակ իմ եւ ցընծայ» («Տաղ ննջարանի Տեառն, օրորոցի երգով մաղթանս յԱստուածածնէ») ²³, Սերովբե Պատկանյանի «Անհամեմատ և անսահման եղանակաւ յղացելոյդ.... օր, օր, օր, օր, օր, օր» («Նուագ ի Ծնունդն Քրիստոսի») [37, էջ 13] տաղերը: Այս ցանկից մեզ ծանոթ է միայն Մխիթար Սեբաստացու տաղի ձայնագրությունը, որի մեղեդին Յակովբ քին. Նախաշյանցի երգածից հայկական ձայնանիշներով գրառել և հրատարակել է Մինաս քին. Խումաշյանցը [22, էջ 45]:

²¹ Ն. Թահմիզյանը նկատի ունի Ն. Թաշճյանի գրառումը [21, էջ 96]:

²² Խորագիրը՝ «**Երգ Ծննդեան: Նորին տեառն Ղազարու Հայրապետին ամենայն Հայոց**» [23, էջ 23]:

²³ Հռչակ Երուսաղեմի **Մարտիրոս Արքեպիսկոպոսի**, Նիկուս. 62 (հին թիվ՝ 5), 1773, Երուսաղեմ, թ. 24բ [48, էջ 118]:

Եզրակացություն

«Երկինք երկնից» տաղն իր գրական և երաժշտական բաղադրիչների սերտ ներդաշնությամբ, երաժշտական մտքի ճշգրիտ կազմակերպմամբ, մեծ ձայնա-ծավալում տիպական զարդոլորուն պոստյունների վերելք-վայրէջքների տրամաբանական համադրումով, ռիթմական բազմազան պատկերների առկայությամբ, ձայնեղանակների համադրումների և դրամատուրգիական զարգացման հանգուցակետերի վարպետ կիրառմամբ գեղարվեստական բարձր արժանիքներով օժտված երկ է: Միջնադարի տաղանդաշատ հեղինակի կերտած այս եզակի օրորն իր կատարելությամբ և ազդու ներգործությամբ մի իսկական ներբողյան է՝ նվիրված Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան ու Աստվածահայտնության տոնին, որի առթիվ նրա ժառանգորդները ցնծում են անկողոպտելի ուրախությամբ. «Արդ, որովհետեւ զայսպիսի հրաշափառ եւ զգերամբարձեալ տաւնս տաւնել արժանաւորեցաք, ընդ աստեղսն ընթասցուք, ընդ մոգսն ընծայաբերեսցուք, ընդ հովիան երկրպագեսցուք, ընդ երկնային զաւրսն տուք արհնութիւն, եւ փառաւորեսցուք զեկեալն ի մարմնի զԲանն Աստուած, ընդ որում Հաւր, միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ՝ փառք, այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտենից. ամէն»²⁴:

Գրականություն

1. Աստուածաշունչ մատեն Հին եւ Նոր Կտակարանաց, յաշխ. Տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան Վարդապետի, հ. Չորրորդ. ի Վենետիկ, ի գործարանի Սրբոյն Ղազարու, 1805:
2. Աւետիքեան Հ.Գ., Սիրմէլեան Հ.Խ., Աւգերեան Հ.Մ. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա (Ա-Կ). ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1836:
3. Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս. Յուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից. Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1957:
4. Բրուտյան Մ. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, մաս 1, Գեղջկական երգ. Երևան, «Ամրոց գրուպ», 2014:
5. Գրիգորյան Ռ. Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:
6. Գրիգորյան Ռ. Հայ մանկական բանահյուսությունը (մասնագիտություն՝ Ժ.01.09 – բանագիտություն): Բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր. Երևան, 1996, <https://dspace.nla.am/bitstreams/47993271-8998-4d59-ad40-e696226bc3d9/download>
7. Զաքարիա կաթողիկոս Զագեցի (855-877). Ճառք, աշխատասիրութեամբ Հ. Պողոս վրդ. ի Անանեան յՈւխտէն Մխիթարայ. Վենետիկ-Ս. Ղազար, 1995:
8. Թահմիզյան Ն. «Շար Ակնա ժողովրդական երգերի» ժողովածուն պատմաքննական լույսի տակ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1969, № 11, էջ 7-26:
9. Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1985:
10. Թումանյան Մ. Հայրենի երգ ու բան, հ. 1. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1972:
11. Թումանյան Մ. Հայրենի երգ ու բան, հ. 2. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

²⁴ **Տեառն Զաքարիայի Հայոց կաթողիկոսի** ասացեալ Ի Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի [7, էջ 2, 30]:

12. Խաչատրյան Ռ. Հայկական ժողովրդական երգերի կրկնակների զարգացման ձևերը, Պատմա-բանասիրական հանդես, 1998, № 1-2, էջ 209-220:

13. Կոմիտաս. Երկերի ժողովածու, առաջին հատոր, Մեներգեր, խմբ. Ռ. Աթայանի. Երևան, Հայպետհրատ, 1960:

14. Կոմիտաս. Երկերի ժողովածու, իններորդ հատոր, Երաժշտական-ազգագրական ժառանգություն. Հայ ժողովրդական երգեր, գիրք Ա, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռ. Աթայան. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:

15. Կոմիտաս. Մի թուրքիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վերայ, Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի. Երեւան, «Սարգիս Խաչենց – Փրինսֆոն», 2007, էջ 219-320:

16. Կոմիտաս. Լոռու գութաներգը Վարդաբլուր գիւղի ոճով, Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի. Երեւան, «Սարգիս Խաչենց – Փրինսֆոն», 2007, էջ 92-130:

17. Հակոբյան Ա. Ավանդական օրորը Միհրան Թումաճանի գրառումներում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», գիտական հոդվածների պարբերական ժողովածու, № 1. Երևան, «Լիմուշ» հրատ., 2020, էջ 181-191:

18. Հակոբյան Ա. «Հայ ավանդական օրորները», ԺԷ.00.02 – «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր. Երևան, 2022, հղումը՝ <https://www.bok.am/sites/default/files/2023-02/%D5%8D%D4%B5%D5%82%D5%84%D4%B1%D4%B3%D4%BB%D5%90%20%D5%8E%D4%B5%D5%90%D5%8B%D5%86%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86-1.pdf>

19. Հոգեւոր երգեր, կազմեց եւ խմբագրեց Ա. Արեւշատեանը. Երեւան, «Անահիտ» հրատ., 1998:

20. Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1874:

21. Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1878:

22. Ձայնագրեալ Տաղարան ի պէտս սպասատրաց Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցոյ. Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1900:

23. Ղազար Վարդապետ [Ջահկեցի]. Գիրք նորաբոյս որ կոչի Երգարան. Կ. Պոլիս, տպարան Աստուածատուրի, 1737:

24. Ճանիկեան Յ.Կ. Հնութիւնք Ակնայ. Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, 1895:

25. Մալխասեանց Ս. Հայերէն բացատրական բառարան. Երեւան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., հ. երրորդ, 1944:

26. Մալխասեանց Ս. Հայերէն բացատրական բառարան. Երեւան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., հ. չորրորդ, 1945:

27. Մայր ցուցակ ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. երկրորդ, յօրինեց՝ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան Մխիթարեան Ուխտէն. ի Վենետիկ, 1924:

28. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե, Յայսմատուրք-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմնեմեան Մխիթարեան Ուխտէն. Վենետիկ-Ս. Ղազար, 1995:

29. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. առաջին, կազմեց՝ Ն. եպս. Պողարեան. Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1966:

30. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. չորրորդ, կազմեց՝ Ն. եպս. Պողարեան. Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1969:

31. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. հինգերորդ, կազմեց՝ Ն. եպս. Պողարեան. Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1971:
32. Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր Հայաստանեայց Եկեղեցոյ, կազմ.՝ Զարեհ եպս. Ազնաւորեան. Անթիլիաս, հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1990:
33. Մխիթարայ Վարդապետի Սեբաստացոյ Աբրահայր կոչեցելոյ Գիրք Քրիստոնէականի վարդապետութեան, շարադրեցեալ աշխարհաբարոյի լեզուաւ. ի Վէնէտիկ, ի տպարանի Անդօնի Պօռօլի, 1732:
34. Մնացականյան Ա. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր. Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1956:
35. Մնացականյան Ա. Գրականություն. տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1972:
36. Շար Ակնայ ժողովրդական երգերի, ծայնագրեց Կոմիտաս Վարդապետ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1895:
37. Սերովբէ վարժապետ Պատկանեան. Երգք, ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Աւետիքայ Խազեգեանց. ի Մոսկուա, ի տպագրատան ճեմարանի Տեարց Լազարեանց, 1857:
38. Սիմէօն Երեանցի. Նոր Տաղարան փոքրիկ, ՄՍ 3945, ԺԹ դ. (1832-ից յետոյ). Էջմիածին:
39. Սիմէօն Երեանցի. Տաղարան փոքրիկ. ի Սուրբ Աթոռս Էջմիածին, ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, 1777:
40. Սոխակ Հայաստանի. լիակատար երգարան, խմբագրեց Աազ Գրիգորեանց, աշխատութիւն Բ, հ. 1, Բազու, Ն. Մալաֆէեանցի եւ ընկ. տպարան, 1874:
41. Տաղարան վայելուչ և գեղեցիկ. Կ. Պոլիս, ի տպարանի Մարտիրոս դարի, ի թուին Հայոց 1201 [1752]:
42. Տաղարան վայելուչ և գեղեցիկ. Կ. Պոլիս, ի տպարանի Պետրոսեան Ստեփանոսի, 1788:
43. Տաղարան հարուստ վայելուչ և գեղեցիկ. Կ. Պոլիս, ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի, 1803:
44. Տաղարան հարուստ վայելուչ և գեղեցիկ. Կ. Պոլիս, ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի, 1816:
45. Տաղարան հարուստ վայելուչ և գեղեցիկ, յՕրթագիւղ. Կ. Պոլիս, ի տպարանս Արապեան Պօղոսի Ապուշեխցոյ և երից որդոց իմոց՝ Աստուածատրոյ, Գէորգեայ և Գալուստի, 1825:
46. Տաղարան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ, յՕրթագիւղ. Կ. Պոլիս, ի տպարանի երից որդոց Պօղոսի Արապեան Ապուշեխցոյ, 1840:
47. Տաղարան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ, յՕրթագիւղ. Կ. Պոլիս, ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուշեխցոյ, 1850:
48. Յուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց՝ Հ. Ներսէս վ. Ակինեան. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1961:
49. Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ. «Անտոնեան հաւաքածոյ», կազմեցին Հ.Ն. Ակինեան եւ Հ.Հ. Ոսկեան Մխիթ. Ուխտէն. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1971:
50. Փահլևանյան Ա. Երկու խոսք, «Հայկական օրորոցային գոհարներ», խտասալիկ, կատարումը՝ Ա. Պապայանի. Երևան, «Արևիկ» հրատ., 2015:
51. Քյոսեյան Հ. Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանություն. Երևան, «Մատենադարան» հրատ., 2021:

52. Кушнарeв Х.С. Вопросы истории и теории армянской монодической музыки. Ленинград, Государственное музыкальное издательство, 1958.

References

1. The Holy Bible. The Old and New Testaments, edited by Hovhann Archimandrite Zohrapcan, Vol. 4. Venice, St. Lazzaro, 1805 (in old Armenian).
2. Avetikean G., Siurmelean Kh., Avgerean M. The New Dictionary of the Armenian Language, Vol. A (A-K). Venice, St. Lazzaro, 1836 (in old Armenian).
3. Babgen Catholicos. Catalogue of Manuscripts of the Red Monastery of Ancyra and its Surroundings. Antelias-Lebanon, The Armenian Catholicosate of the Great House of Cilicia Printing House, 1957 (in Armenian).
4. Brutyan M. Armenian Folk Music, Part I, Folk Songs. Yerevan, “Amrots group”, 2014 (in Armenian).
5. Grigoryan R. Armenian Folk Lullabies and Children’s Songs. Yerevan, Publishing House of National Academy of Armenian SSR, 1970 (in Armenian).
6. Grigoryan R. The Armenian Children’s Folklore. Abstract of the thesis for degree of Doctor of Philological Sciences, specialty 10.01.09 – “Folkloristics”. Yerevan, 1996, <https://dspace.nla.am/bitstreams/47993271-8998-4d59-ad40-e696226bc3d9/download>
7. Zakaria Catholicos Dzagetsi (855-877). Orations, edited by Poghos Archimandrite Ananyan from Mekhitarist Congregation. Venice-St. Lazzaro, 1995 (in Old Armenian).
8. Tahmizyan N. The Collection ‘Series of Folk Songs of Akn’ in the New Historical and Analytical Light, *Lraber hasarakakan gitutyunneri* (Herald of Social Sciences), 1969, № 11, p. 7-26.
9. Tahmizyan N. Grigor Narekatsi and Armenian Music of V-XV Centuries. Yerevan, Publishing House of National Academy of Armenian SSR, 1985 (in Armenian).
10. Toumajan M. Native Folk Songs and Lore, Vol. 1. Yerevan, Publishing House of National Academy of Armenian SSR, 1972 (in Armenian).
11. Toumajan M. Native Folk Songs and Lore, Vol. 2. Yerevan, Publishing House of National Academy of Armenian SSR, 1983 (in Armenian).
12. Khachatryan R. The Development Forms of the Refrains of Armenian Folk Songs, *Patmabanasirakan handes* (Historical-Philological Journal), 1998, № 1-2, p. 209-220 (in Armenian).
13. Komitas. The Complete Works, Vol. 1, Songs, edited by R. Atayan. Yerevan, Publishing House of Armenia, 1960 (in Armenian).
14. Komitas. The Complete Works, Vol. 9, Musical-Ethnographic Heritage. Armenian Folk Songs, Book 1, compiling, editing and commentaries by R. Atayan. Yerevan, “Gitutyun“ (“Science“) Publishing House of National Academy of Sciences of Republic of Armenia, 1999 (in Armenian).
15. Komitas. A Brief Overview on Armenian Folk Music // Komitas Vardapet, Studies and Articles, Book 2, edited by G. Gasparian and M. Mousheghian. Yerevan, “Sargis Khachents-Printinfo”, 2007, p. 219-320 (in Armenian).
16. Komitas. The Plough Song of Lori in style of Vardablur Village//Komitas Vardapet, Studies and Articles, Book 2, edited by G. Gasparian and M. Mousheghian. Yerevan, “Sargis Khachents-Printinfo”, 2007, p. 92-130 (in Armenian).
17. Hakobyan A. The Lullabies of M. Toumajan’s Collection, “Mesrop Mashtots University Bulletin” (periodical collection of scientific articles). Yerevan, “Limush” Publishing House, 2020, № 1, p. 181-191 (in Armenian).
18. Hakobyan A. Armenian Traditional Lullabies, Abstract of the thesis for degree of PhD in Art, specialty 17.00.02 - “Musical Art”, Yerevan-2022. <https://www.bok.am/sites/defa>

ult/files/2023-02/%D5%8D%D4%B5%D5%82%D5%84%D4%B1%D4%B3%D4%BB%D5%90%20%D5%8E%D4%B5%D5%90%D5%8B%D5%86%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86-1.pdf (in Armenian).

19. Sacred Songs, compiled and edited by A. Arevshatyan. Yerevan, “Anahit” Publishing House, 1998 (in Armenian).

20. Notated Chants of Sacred Patarag (Liturgy). Vagharshapat, Printing house of St. Etchmiadzin Cathedral, 1874 (in old Armenian).

21. Notated Chants of Sacred Patarag (Liturgy). Vagharshapat, Printing house of St. Etchmiadzin Cathedral, 1878 (in old Armenian).

22. Notated Taghbook for Servants of the Armenian Church, Publishing house of the Mother See of Holy Etchmiadzin, 1900 (in old Armenian).

23. Ghazar Archimandrite [Jahketsi]. A New Book called the Songbook, Constantinople, Astvatsatur Printing House, 1737 (in old Armenian).

24. Janikean H.K. Antiquities of Akn. Tiflis, M.D. Rotineants Printing House, 1895 (in Armenian).

25. Malkhaseants S. Armenian Explanatory Dictionary. Yerevan, State Printing House of Armenian SSR, Vol. III, 1944 (in Armenian).

26. Malkhaseants S. Armenian Explanatory Dictionary. Yerevan, State Printing House of Armenian SSR, Vol. IV, 1945 (in Armenian).

27. Grand Catalogue of Manuscripts of Mekhitarists Library in Venice, Vol. II, compiled by Barsegh Archimandrite Sargisean from Mekhitarist Congregation. Venice, 1924 (in Old Armenian).

28. Grand Catalogue of Armenian Manuscripts of Mekhitarists Library in Venice, Vol. V, Menology – Festive Book – Taghbook – Calendar of Feasts, compiled by Sahak Archimandrite Djemdjemian from Mekhitarist Congregation. Venice-St. Lazzaro, 1995 (in Old Armenian).

29. Grand Catalogue of St. James Manuscripts, Vol. I, by Bishop Norair Bogharian, Jerusalem, Armenian Convent Printing Press, 1966 (in Old Armenian).

30. Grand Catalogue of St. James Manuscripts, Vol. IV, by Bishop Norair Bogharian. Jerusalem, Armenian Convent Printing Press, 1969 (in Old Armenian).

31. Grand Catalogue of St. James Manuscripts, Vol. V, by Bishop Norair Bogharian. Jerusalem, Armenian Convent Printing Press, 1971 (in Old Armenian).

32. Meghedies. Taghs and Gandzes of Armenian Church, compiled by Zareh Bishop Aznavorean. Antelias, The Armenian Catholicosate of the Great House of Cilicia Printing House, 1990 (in Armenian).

33. Mkhitar Archimandrite Sebastatsi. Book of the Christian Doctrine. Venice, Antonio Bortoli Printing House, 1732 (in Armenian).

34. Mnatsakanyan A. Armenian Medieval Folk Songs. Yerevan, Publishing House of National Academy of Armenian SSR, 1956 (in Armenian).

35. Mnatsakanyan A. Literature, History of Armenian People, Vol. 4. Yerevan, Publishing House of National Academy of Armenian SSR, 1972 (in Armenian).

36. Collection of Folk Songs of Akn, recorded by Komitas Vardapet, Mother See of Holy Etchmiadzin Printing House, 1895 (in Armenian).

37. Patkanean Serovbe. Songs, edited by Avetik Khazezeants. Moscow, Lazareants Seminary Printing House, 1857 (in Old Armenian).

38. Simeon Yerevantsi. A Little New Taghbook, Mesrop Mashtots Matenadaran of Ancient Manuscripts, Ms. 3945, 19th century (after 1832). Etchmiadzin (in Old Armenian).

39. Simeon Yerevantsi. A Little Taghbook, Mother See of Holy Etchmiadzin, St. Grigor Lusavorich Printing House, 1777 (in Old Armenian).
40. The Nightingale of Armenia, Complete Songbook, edited by A. Grigoreants, book 2, Vol. 1. Baku, N. Malafeants & Co. Printing House, 1874 (in Armenian).
41. Taghbook graceful and fine, Constantinople, Martiros Dpir Printing House, 1752 (in Old Armenian).
42. Taghbook graceful and fine, Constantinople, Stepanos Petrosean Printing House, 1788 (in Old Armenian).
43. Taghbook rich, graceful and fine. Constantinople, Poghos Yohannisean Printing House, 1803 (in Old Armenian).
44. Taghbook rich, graceful and fine. Constantinople, Poghos Yohannisean Printing House, 1816 (in Old Armenian).
45. Taghbook rich, graceful and fine. Constantinople, Poghos Arapean and Sons Printing House, 1825 (in Old Armenian).
46. Taghbook of Armenian Holy Church. Ortagyugh-Constantinople, Poghos Arapean Apuchekh and Sons Printing House, 1840 (in Old Armenian).
47. Taghbook of Armenian Holy Church. Ortagyugh-Constantinople, Poghos Arapean Apuchekh Printing House, 1850 (in Old Armenian).
48. Catalogue of Armenian manuscripts of Nicosia in Cyprus, compiled by N. Akinean. Vienna, Mekhitarists Printing House, 1961 (in Old Armenian).
49. Catalogue of Armenian manuscripts of the library of Bzommar monastery, Vol. 2, "Antonean collection", compiled by Mekhitarist Fathers N. Akinean and H. Voskean. Vienna, Mekhitarists Printing House, 1971 (in Old Armenian).
50. Pahlevanyan A. Preface, "Armenian Lullaby Jewels", CD, soloist: A. Papayan. Yerevan, "Arevik" Publishing House, 2015 (in Armenian).
51. Qyoseyan H. Theology of Armenian Medieval Art. Yerevan, "Matenadaran" Publishing House, 2021 (in Armenian).
52. Kushnaryov K. Issues on the History and Theory of Armenian Monodic Music. Leningrad, State Musical Publishing House, 1958 (in Russian).

АРМЯНСКАЯ ДРЕВНЕЙШАЯ КОЛЫБЕЛЬНАЯ-ТАГ

АСТХИК МУШЕГЯН*

Для цитирования: Мушегян, Астхик. "Армянская древнейшая колыбельная-таг". *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 115-141. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-115

Одним из исключительных образцов армянского духовного песнетворчества является таг (духовное песнопение) «Небеса небес», положивший начало новому жанру – Рождественской колыбельной песне, которую пели Младенцу

* Старший научный сотрудник Матенадарана им. Месропа Маштоца, научный сотрудник Музея-института Комитаса, член Союза композиторов Армении, кандидат искусствоведения, a.musheghyan@gmail.com, статья представлена 06.11.2023, рецензирована 20.11.2023, принята к публикации 01.12.2023.

Иисусу Христу. По нашему мнению, он был создан в период между второй половиной XIII и первой половиной XIV веков анонимным автором из Киликии. Самая ранняя запись оригинального литературного текста тага сделана музыкантом-философом Есаи Аревелци в скопированном им в Сисе (Киликия) в 1348 г. «Тагаране» (Сборнике тагов).

Музыкальный компонент тага сохранился в трех вариантах, записанных армянской нотописьмью. Первый из них нотирован Н. Ташчяном и заверен Армянской Церковью, второй записан А. Черчяном (Армашская традиция), а третий – неизвестным музыкантом (Антилиасская традиция). Проведенный нами сравнительный анализ всех трех записей показал, что они исходят из одного и того же источника и отличаются характерным для Киликийского музыкального искусства декоративно-монументальным стилем, эпико-лирическим повествованием и широкой кантиленой.

В центре внимания нашего исследования был образец тага, заверенный Армянской Церковью. Нами выявлен ряд специфических особенностей, касающихся литературного и музыкального компонентов, интонационного строя и типических мелодических оборотов, ритмики, гласовых структур и драматургического развития. Одним из важнейших элементов в построении поэтического текста и мелодической фактуры являются рефрены. По определенным стилистическим и гласовым признакам и интонационному составу таг близок к знаменитой «Колыбельной» из Акна, записанной Комитасом.

Уникальная колыбельная-таг «Небеса небес», созданная талантливым средневековым автором, имеет большую художественную ценность и является своего рода панегириком, посвященным великому празднику Рождества и Богоявления Господа нашего Иисуса Христа.

Ключевые слова: Рождество Христово, Киликия, таг, колыбельная, интонационно-ритмический оборот, глас, рефрен.

ARMENIAN ANCIENT TAGH-LULLABY

ASTGHİK MUSHEGHYAN*

For citation: Musheghyan, Astghik. "Armenian ancient tagh-lullaby", *Journal of Art Studies*, N 2 (2023): 115-141. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-115

One of the exceptional examples of Armenian spiritual songwriting is the tagh (canticle) named "Heaven of Heavens", which gave rise to a new genre – Christmas

* Senior Researcher at Mesrop Mashtots Matenadaran, Researcher at Komitas Museum-Institute, Member of the Composers Union of Armenia, Doctor of Arts, a.musheghyan@gmail.com. The article was submitted on 06.11.2023, reviewed on 20.11.2023, accepted for publication on 01.12.2023.

Lullaby sung to the Infant Jesus Christ. We assume that it was created by an anonymous author from Cilicia between the second half of the XIII and the first half of the XIV centuries. The earliest recording of the original literary text of the tagh was made by the musician-philosopher Yesayi Areveltsi in the “Tagharan” (Book of Taghs), copied by him in Sis (Cilicia) in 1348.

The musical component of the tagh is preserved in three versions, written down in Armenian notation. The first of the three mentioned is recorded by N. Tashchyan and certified by the Armenian Church; the second was recorded by H. Cherchyan (Arماش tradition), and the third – by an unknown musician (Antelias tradition). Our comparative analysis of all three records showed that they are derived from the same source and are distinguished by decorative and monumental style, epic-lyrical narrative and wide cantilena, typical for Cilician music art.

In our research we focused on the version, certified by the Armenian Church. We revealed a number of specific features related to the literary and musical components, intonation and typical melodic patterns, rhythmic, modal structures and dramatic development. The role of refrains as one of the most important elements in the construction of the poetic text and melodic texture is particularly emphasized. Some stylistic and modal peculiarities and the intonational structure of the tagh are close to the famous “Lullaby” from Akn, recorded by Komitas.

The one-of-a-kind tagh-lullaby “Heaven of Heavens”, created by the talented medieval author, is of great artistic value. It is a true eulogy dedicated to the great Feast of the Nativity and Epiphany of our Lord Jesus Christ.

Key words: Nativity of Jesus, Cilicia, tagh, lullaby, intonation-rhythmic pattern, mode, refrain.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԶԱՑՎԱԾ ՀԵՏՆՈՐԴԸ. ՍՊԵՆԴԻԱՐՈՖՈՆ

ՀՌԻՓՍԻՄԵ ՊԻԿԻԶՅԱՆ*

Հղման համար. Պիկիջյան, Հռիփսիմե: «Ավանդական նվագարանների սիմֆոնիզացված հետնորդը. Սպենդիարոֆոն»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 142-153. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-142

Հոդվածը նվիրված է Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանում ցուցադրվող *սպենդիարոֆոն* կոչվող ինքնատիպ նվագարանի ստեղծման պատմությանը, բնութագրմանն ու աղմկային-հարկանային ընտանիքի գործիքների հնագույն տարբերակների հետ համեմատական քննությանը: Ռուս անվանի բանաստեղծ Մ.Յու. Լերմոնտովի «Երեք արմավենի» բալլադի հիման վրա սիմֆոնիկ պատկեր ստեղծելիս՝ Ալ. Սպենդիարյանը ձգտում էր առավել կենդանի հնչյունավորել շիկացած անապատով անցնող ուղտերի քարավանի ընթացքը: Ուղտերի զանգերի դողանջի հնչողությունը նվագախմբի միջոցով պատկերելու փնտրտուքներում՝ ստեղծում է կաշվե շրջանակին ամրացված 12 գնդաձև բոժոժներով մի յուրօրինակ գործիք, որն, ի պատիվ կոմպոզիտորի՝ Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովն անվանում է սպենդարոֆոն:

Բնականաբար, մեծանուն կոմպոզիտորը քաջատեղյակ էր, որ նկարագրվող միջավայրին կամ ժամանակաշրջանին բնորոշ ինքնատիպ ու հարուստ հնչողություն կամ տեմբրային բազմերանգություն ստանալու նպատակով՝ դեռևս 18-րդ դարից, ստեղծագործողները դիմում էին տարբեր երկրներում ու ժամանակներում կիրառվող ավանդական նվագարաններին, ծայն արկանող հնամենի գործիքներին ու հարմարանքներին:

Ալ. Սպենդիարյանի ստեղծած բոժոժավոր նվագարանը համեմատելով Հայաստանի տարբեր պեղավայրերից հայտնաբերված հնագույն զանգակների ու բոժոժների, ինչպես նաև նախաքրիստոնեական ու քրիստոնեական աշխարհիկ ու հոգևոր տոների, ծեսերի ու արարողությունների ընթացքում և անասնապահական մշակույթում տարածված աղմկային-հարկանային նվագարանների ու ծայն արտաբերող հմայական պահպանակների հետ կարելի է եզրակացնել, որ կոմպոզիտորը համակողմանի պատկերացում ուներ հիշյալ նվագարանների գործառույթների ու առանձնահատկությունների վերաբերյալ և, իբրև նորարար, նրա հեղինակած սպենդիարոֆոնն այդ հնամենի նվագարանների «սիմֆոնիզացված» հետնորդն է:

Բանալի բաներ՝ Ալեքսանդր Սպենդիարյան, սպենդիարոֆոն, «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկեր, ավանդական նվագարան, զանգ, բոժոժ, թանգարան:

Ներածություն

Երևանի կենտրոնում գտնվող Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի խորհրդանիշներից է կոմպոզիտորի ստեղծած բոժոժավոր-հարկանային նվագարանը, որը նրա դստեր՝ Մարինա Սպենդիարովայի նվերն էր թանգարանին: Թանգարանի բացման օրվանից (1967 թ.) ի վեր՝ այդ յուրօրինակ նվագարանը հիմնական ցուցադրության կարևոր նմուշներից է, որը մեծ հետաքրքրությամբ

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու, riposh@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20.01.2023, գրախոսելու օրը՝ 20.02.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

են դիտում աշխարհի տարբեր կողմերից ժամանած այցելուներն ու ծանոթանում դրա ինքնատիպ հնչողությանը [5, էջ 175-178]: Եվ իբրև այցեքարտ ու խորհրդանիշ՝ սպենդիարոֆոնը լայնորեն կիրառվում է նաև թանգարանի տեղեկատվական-գովազդային նյութերում, հուշանվերային հավաքածուներում և կրթական ծրագրերում: Էքսկուրսիայի և կրթական ծրագրերի ընթացքում թանգարանի այցելուներին առաջարկվում է լսել «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի ձայնագրությունը, որից հետո մասնակիցները հնարավորություն են ստանում անմիջականորեն վայելել կոմպոզիտորի ստեղծած բնօրինակ սպենդիարոֆոնի հնչողությունը, ապա նաև ինքնուրույն հնչեցնել նույն նվագարանի կրկնօրինակը:

Մեր ուսումնասիրության շրջանակներում կանդրադառնանք այդ ինքնատիպ նվագարանի ստեղծման ու կիրառման խնդրին՝ համեմատական եզրեր փնտրելով նաև գործիքի հնագույն նախատիպերի հետ:

Նվագարանի ստեղծման նպատակը

Ալեքսանդր Սպենդիարյանի նամակներից ու հուշագրություններից հայտնի է դառնում, որ նոր նվագարան ստեղծելու գաղափարը հղացել էր Միխայիլ Լերմոնտովի «Երեք արմավենի» բանաստեղծության հիման վրա սիմֆոնիկ ստեղծագործություն գրելու ընթացքում, երբ կոմպոզիտորը ձգտում էր նվագախմբի միջոցով վերակերպավորել կիզիչ անապատով անցնող ուղտերի քարավանի պատկերը: Կարծում ենք, սիմֆոնիկ նվագախմբի հնչյուններով այդ տեսարանն առավել ցայտուն արտահայտող զանգակաձայն նվագարան ստեղծելու միտքը կարող էին հուշել նաև շեկ ավազուտներով անցնող քարավանի ղողանջուն ընթացքը նկարագրող լերմոնտովյան տողերը.

И только замолкли – в дали голубой
 Столбом уж крутился песок золотой,
 Звонком раздавались нестройные звуки,
 Пестрели коврами покрытые выюки,
 И шел, колыхаясь, как в море челнок,
 Верблюд за верблюдом, взрывая песок [11, էջ 147-149]¹.

Նվագախմբի տեմբրային գունապնակը հարստացնելու փնտրտուքը

Դասական երաժշտության տարբեր ժանրերի ստեղծագործություններում և սիմֆոնիկ նվագախմբերում այլևայլ մշակույթներին բնորոշ ավանդական նվագարաններ ներմուծելն, անշուշտ, Ալ. Սպենդիարյանի համար նորություն չէր:

¹ Հայերեն թարգմանությունը՝

Ղողանջեցին, բոժոժներն աններդաշնակ զնգոցով.
 Ահա բեռներ գույնզգույն՝ խալիների ծածկոցով
 Եվ ուղտն ուղտի հետևից, ինչպես նավակն օվկիանում,
 Օրորվելով հողմածեժ միշտ առաջ էր ընթանում
 Ու աղմուկով ծառերին քարավանն է մոտենում [2, էջ 50-52]:

Դեռևս 18-րդ դարում նկարագրվող միջավայրին կամ ժամանակաշրջանին բնորոշ ինքնատիպ ու հարուստ հնչողություն կամ տեմբրային բազմերանգություն ստանալու նպատակով՝ կոմպոզիտորները դիմում էին տարբեր երկրներում ու ժամանակներում կիրառվող ավանդական նվագարաններին ու ձայն արկանող հնամենի գործիքներին: Եվ այդ շարունակական փնտրտուքների շնորհիվ էլ՝ ժամանակակից սիմֆոնիկ նվագախմբերում կարելի է տեսնել թե՛ տարբեր մշակույթներին բնորոշ հարվածային, աղմկային, փողային ու լարային նվագարանների ընտանիքներին պատկանող տարաբնույթ գործիքներ, թե՛ դրանց փոխակերպված տարբերակները: Ասվածի վառ օրինակներից են Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Արևելքի ու Եվրոպայի տարբեր ժողովուրդների առօրյա և տոնածիսական կյանքում տարածված հնամենի նվագարաններն ու ձայն արտաբերող բազմաբնույթ գործիքները (թմբուկ, գոնգ, կոչնակ, դափ, քսելաֆոն, զանգ, ծնծղա, սիսոր, զիլ, կաստանետ, չխչխկան, կարկաչա...) [13, էջ 98-109] և սիմֆոնիկ, կամերային, ջազային, էստրադային և այլ նվագախմբերում կիրառություն ստացած դրանց հետագա փոխակերպումները [14, էջ 19-22 զանգակներ, 25-վիբրաֆոն, 27-տուբաֆոն, 30-32-քսիլոֆոն, 34-մարիմբա, 64-բրազիլյան պանդեյրա, 65-բոժոժներ, 66-զանգ (կովի), 84, 86-գոնգ, 87-լաստրա, 88-89-կաստանետ, 90-չխչխկան, 96-կլավես, 102-մարաքաս, 103-բամբուկ, 103-կաբացա]: Այսու՝ շիկացած անապատով անցնող ուղտերի քարավանի ընթացքն ունկնդրին առավել տպավորիչ ներկայացնելու փնտրտուքների ինքնատիպ արտահայտությունը դարձած Ալ. Սպենդիարյանի հեղինակած այդ նվագարանը դիտարկելի է հենց վերջիններիս համապատկերում:

Նվագարանի ստեղծման մասին հակիրճ տեղեկություն կարելի է գտնել Վ.Լ. Սպենդիարովայի հուշագրություններում, ըստ որի՝ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի համար Ալ. Սպենդիարյանը զանգակներով մի հատուկ գործիք էր ստեղծել: Հեղինակը նշում է, որ կոմպոզիտորն անչափ ոգևորված էր և ընթացքում խորհրդակցում էր նաև տիկնոջ հետ: Եվ որքան հիշում է՝ նվագարանը պատրաստվել էր Սիմֆերոպոլում [12, էջ 123]:

Իր ուսուցչի՝ Նիկոլայ Անդրեևիչ Ռիմսկի-Կորսակովի կողմից կատակով «սպենդիարոֆոն» կոչված [12, էջ 123-124] այդ նոր նվագարանը կազմված էր կաշվե շրջանակի վրա ամրացված մետաղե 12 գնդաձև, սնամեջ բոժոժից: Ձայնն արտաբերվում էր թափահարման կամ հարվածի միջոցով, որի ընթացքում բոժոժների ներսում տեղադրված մանր գնդիկները դիպչում էին պատերին ու զնգզնգում (նկ. 1):

1905 թ. օգոստոսի 6-ին գրված նամակներից մեկում էլ Ալ. Սպենդիարյանը Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովին տեղեկացնում է, որ մայիս ամսին արդեն ավարտել է Միխայիլ Լերմոնտովի «Երեք արմավենի» պոեմի հիման վրա գրված իր սիմֆոնիկ ստեղծագործությունը, որի պարտիտուրը շուրջ 100 էջից է բաղկացած և առաջին անգամ մեծ նվագախմբի կազմում բաս կլարնետ ու կոնտրաբաս է ներառել: Կոմպոզիտորը շեշտում է, որ մինչ հանրության դատին հանձնելը՝ կկամենար ուսուցչին ներկայացնել իր այդ նոր ստեղծագործությունը և, նրա հավանությանն արժանանալու պարագային, հնարավորություն ստանալ այն

հնչեցնելու առաջիկա սեզոնի ռուսական սիմֆոնիկ համերգներից մեկի ընթացքում [15, էջ 65-66]:

Կարճ ժամանակ անց, բնութագրելով Ալ. Սպենդիարյանի ղեկավարությամբ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի համերգային կատարման տպավորությամբ դահլիճի արձագանքը՝ անվանի ջութակահար Հովհաննես Նալբանդյանը, գրում է. «...համերգի ընթացում Ալ. Սպենդիարյանը ներկայացավ իբրև օժտված դիրիժոր, իսկ «Երեք արմավենի»-ն ներկաներին հիացրեց իր թարմությամբ, մեղեդայնությամբ, նուրբ հարմոնիայով ու գործիքավորմամբ: Ունկնդիրներին հատկապես դուր էին եկել զանգակների ուղեկցությամբ քարավանի գալու և մեկնելու պատկերները» [15, էջ 123-124]: Եվ ի լրումն ասվածի՝ Մարիա Սպենդիարովան էլ հիշում է, որ համերգին հաջորդող ընթրիքի ժամանակ Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովն իր մեկ այլ տաղանդաշատ աշակերտին՝ Ալ.Կ. Գլազունովին դիմելով նկատել է, թե, ամենայն հավանականությամբ, իրենց չէր հաջողվի քարավանի երթն այդպես նկարագրել-հնչեցնել, քանի որ դրա համար պետք էր «արևելքի մարդ լինել» [15, էջ 124]:

Կոմպոզիտորի կենդանության օրոք սպենդիարոֆոն նվագարանը հնչում էր «Երեք արմավենի» ստեղծագործության համերգային բոլոր կատարումների ընթացքում և դարձել էր Ալ. Սպենդիարյանի համերգային շրջագայությունների անբաժան ուղեկիցը:

Սպենդիարոֆոնի հնագույն նախատիպերը

Մեր ուսումնասիրության այս հատվածում փորձելու ենք դիտարկել սպենդիարոֆոնը՝ տարբեր ժողովուրդների ավանդական մշակույթներում կիրառվող ձայնային պահպանակ-հմայիլների, ինչպես նաև աղմկային ու հարկանային ղողանջող տարաբնույթ գործիքների ու նվագարանների համապատկերում: Ինչպես նշեցինք՝ սպենդիարոֆոնը բաղկացած է կաշվե շրջանակի վրա ամրացված բրոնզե 12 սնամեջ բոժոժից, որոնց ներսում տեղադրված գնդիկները թափահարելիս կամ ձեռքին հարվածելիս՝ ախորժալուր ղողանջում են: Կառուցվածքով՝ անվանի կոմպոզիտորի հեղինակած նվագարանն աղերսվում է տարբեր երկրների ավանդական կյանքում կիրառվող բույսերի ցողուններից, ընձյուղներից, թելերից հյուսված ճոպանների, գոտիների, ինչպես նաև գործվածքի, կաշեփոկի, ոսկրե կամ փայտե շրջանակի վրա ամրացված փայտե, ոսկրե կամ մետաղե զանգակներից ու բոժոժներից բաղկացած երաժշտական գործիքներին [13, էջ 264-301; 9, հավելված, նկար N 66-67 բոժոժավոր գդալներ, N 150 ռեշետո՝ ծնծղայավոր դափ, N 313 տրիդեկսնիս՝ արդիականացված, N 307-312-էգլիտե՝ ավանդական և արդիականացված կրթավոր աղմկայիններ, N 306 ծնծղայավոր դափ՝ սիետինիշ, N 375 սկրաբալայ և կյալմաս, N 427-428-դափ, N 482-դափ-դայրա բոժոժներով, N 511՝ փայտե կարգանագ, N 520 փայտե պխաչիչ, N 612 շրջանակ՝ 10 բոժոժով; 7, էջ 56-86]:

Այդ ձայնարկու գործիքներից ու նվագարաններից շատերը հստակ գործառույթ էին կրում և նախաքրիստոնեական ու քրիստոնեական շրջանի հոգևոր ու աշխարհիկ տոների ու ծեսերի անփոխարինելի բաղադրիչներն էին: Այդ շար-

քում կարող են դիտարկվել նաև հայկական ժողովրդական պարի, երգի ու ծիսախաղի ժամանակ կիրառվող բոժոժներով կամ ծնծղաներով շրջանակված մեծ ու փոքր դափերը (նկ. 2), զանգակները, զիլերը, ծնծղաները, չխչխկանները, ինչպես նաև բնության զարթոնքն ու պտղաբերությունը խթանող ձայնային-հմայական խորհրդանիշ ընկալվող Ծաղկազարդի կարկաչան, եկեղեցական արարողակարգում տարածված մեծ ու փոքր զանգերը, գոնգը, կոչնակը, քռոցն ու բոժոժավոր բուրվառը: Բնական է, որ իբրև Հայ առաքելական եկեղեցու հետևորդ, Ալ. Սպենդիարյանին ևս հայտնի էին ծիսական կյանքում շրջանառվող տարաբնույթ զանգերի, քռոցի (նկ. 3) ու բոժոժավոր բուրվառի թե՛ կառուցվածքի ու գործառույթի, թե՛ տեմբրի ու հնչողության առանձնահատկությունները: Հայրմ, նոր նվագարան ստեղծելիս, կոմպոզիտորը կարող էր ըստ անհրաժեշտության կիրառել նաև դրանց հնարավորությունները:

Նկատենք նաև, որ սպենդիարոֆոնի կաշվե շրջանակի երկու կողմերի վրա հավասարապես բաշխված վեցական բրոնզե բոժոժները համեմատելի են Հայաստանի տարբեր բնակավայրերի պեղումներից հայտնաբերված 2-րդ-1-ին հազարամյակներով թվագրվող բոժոժների ու զանգակների հետ, որոնք կախվել են ընտանի կենդանիների վզից (նկ. 6) կամ մարտակառքերի վրա [3, աղյուսակ XVIII]²: Մասնագետների վկայությամբ՝ նախնական շրջանում տարաբնույթ ձայներ արտաբերող այդ ղողանջող գործիքները երաժշտության մեջ հազվադեպ էին կիրառվում և չարխափան նշանակությամբ առավել տարածված էին կրոնական-հմայական ծեսերում ու արարողություններում: Ըստ հնագույն կրոնահավատալիքային պատկերացումների՝ բոժոժներն ու զանգերը միաժամանակ մի քանի գործառույթ էին իրականացնում և կիրառվում էին իբրև ձայնային հմայիչներ ու պահպանակներ.

ա) ձայնի միջոցով չար ուժերին վանելու համար,

բ) ձայնի միջոցով բարի ոգիների ուշադրությունը գրավելու և հովանավորությանն արժանանալու նպատակով [16, էջ 31; 10, էջ 147-153; 1 էջ 50-56 մանուկների, 57-62 կենդանիների; 8, էջ 12-13; 6, էջ 200-201]:

Զանգակների ու բոժոժների ոճավորված տարբերակներն, իբրև պտղաբե-

² Աղյուսակ XVIII - բրոնզե ծակոտկեն բոժոժներ, էջ 105 բրոնզե հմայիլ-կախիկներ, զանգակներ (կապարային բրոնզ, պղինձ)՝ Մեծամորի N 32 դամբարանից, դրանք արծվագլուխ կանթերով ամրացվել են բուրվառի շղթաներին: Նմանատիպ պեղածո զանգակներ (բոժոժ) հայտնաբերվել են նաև Լճաշենի դամբարանաբլուրներում, Արթիկում, Կարմիր Բլուրի մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող N 1 դամբարանում, Կարմիր Բլուրում, Թագավորանիստում (Վանաձոր), Կամոյում (Գավառ), Անիում և այլուր: Հիշյալ բոժոժների մեծ մասը պահվում են Հայաստանի Պատմության և Սարդարապատի հուշահամալիր, հայոց ազգագրության թանգարաններում: Օրինակ, Ազգագրության թանգարանում կարելի է տեսնել հետևյալ պեղածո բոժոժները. Լոռի Բերդ, 14 դամբարան, 4 բոժոժ, մ.թ.ա. 14-13-րդ դդ., հայտնաբերվել են 1977 թ.: Նույն թվականին Լոռի Բերդի 21 դամբարանից գտնվել է բոժոժներով շղթա, մ.թ.ա. 12-11-րդ դդ., պեղումների ղեկ.՝ Ս. Դևեջյան: 1978 թ. Լճաշենի պեղումներից հայտնաբերվել են մ.թ.ա. 10-8-րդ դդ. թվագրվող բոժոժներ, պեղումների ղեկ.՝ Հ. Իսրայելյան:

րության խորհրդանիշ ու չարխափան հմայիլ, լայնորեն կիրառվում էին նաև հայոց ավանդական տարազի ու զարդերի համալիրներում և անասնապահական մշակույթում: Բոժոժներով ու զանգակներով զարդարված ղողանջուն հմայիլ-վզնոցը, ապարանջանը, գլխազարդն ու թեզանիքի կախիկները բնորոշ էին հատկապես կանանց ու երեխաների (նկ. 4) ծիսական հանդերձանքին [4, էջ 92-94: Սյունիք-Արցախի կանանց տարազ, էջ 126-127, գլխազարդեր, էջ 133-137 ճակատազարդեր, էջ 144, 147, 149-151 կրծքազարդեր]: Հիշյալ զարդերի ու հանդերձանքի միջոցով կարելի է պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի ու միջավայրի կենսակերպի, հավատալիքների, արհեստավորական հմտությունների ու գեղագիտական պատկերացումների մասին:

Մոզական-հմայական արարողություններից զատ, այդ հնամենի նվագարանները նաև հաղորդակցական գործառույթ էին կրում՝ ձայնի միջոցով տեղեկություն փոխանցելով մարդկանց ու կենդանիների գտնվելու վայրի մասին: Զանգերի, բոժոժների ու չարխափան այլ հմայիլ-դաղդղանների տարատեսակ համադրություններից կազմված վզնոցները կախում էին նախրի առջևից գնացող կենդանիների ու լավագույն կաթնատուների պարանոցներին: Այս առումով ուշագրավ է Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարանում ցուցադրվող բոժոժավոր դաղդղանը [ՀԱՊԹ 889, ԱԿ 3-86, ՀՀ Հոկտեմբերյանի շրջան, գ. Բամբակաշատ, 20-րդ դ. սկիզբ], որը թե՛ կառուցվածքով, թե՛ հնչողությամբ, ուղղակի աղերսներ ունի սպենդիարոֆոնի հետ (նկ. 5): Հայաստանի Պատմության և Ազգագրության թանգարաններում պահվում են նաև 19-20-րդ դդ. տարածված ուղտի զանգակների տարբեր տեսակներ: Ե՛վ բոժոժները, և՛ զանգերը կարող էին կիրառվել մեկական կամ փնջային տարբերակներով. շարքով կամ մեծից փոքր՝ իրար մեջ կախվելով (նկ. 6): Զանգերի ու բոժոժների ղողանջի հնչողությունն ու տևողությունը պայմանավորված է թե՛ հումքի տեսակից (բրոնզ, պղինձ, համաձուլվածք) ու պատաստման եղանակից, թե՛ չափից, քանակից ու դասավորությունից:

Անտարակույս, անասնապահական մշակույթի ավանդույթները պահպանվում ու կիրառվում էին նաև թաթարական միջավայրում, որին կարծում ենք, քաջատեղյակ էր նաև Ալ. Սպենդիարյանը:

Հոդվածին կցված լուսանկարներում ներկայացրել ենք Սարդարապատի հուշահամալիր, հայոց ազգագրության թանգարանի և Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուներում պահվող 18-19-րդ դարերի անասնապահական մշակույթում կիրառվող այդ ձայնային պահպանակ-հմայիլների ու բոժոժավոր նվագարանների մի քանի նմուշ, որոնց «սիմֆոնիզացված» հետնորդը դարձավ Ալ. Սպենդիարյանի հեղինակած սպենդիարոֆոն նվագարանը:

Եզրակացություն

Ռուս անվանի բանաստեղծ Մ.Յու. Լերմոնտովի «Երեք արմավենի» բալլադի հիման վրա սիմֆոնիկ պատկեր ստեղծելիս՝ Ալ. Սպենդիարյանը ձգտում էր առավել կենդանի հնչյունավորել շիկացած անապատով անցնող ուղտերի քարավանի ընթացքը: Ուղտերի զանգերի ղողանջի հնչողությունը նվագախմբի միջոցով պատկերելու փնտրտուքներում՝ ստեղծում է կաշվե շրջանակին ամրաց-

ված 12 գնդաձև բոժոժներով մի յուրօրինակ գործիք, որն, ի պատիվ կոմպոզիտորի՝ Ն.Ա. Ռինսկի-Կորսակովն անվանում է սպենդարոֆոն (նկ. 1):

Բնականաբար, մեծանուն կոմպոզիտորը քաջատեղյակ էր, որ նկարագրվող միջավայրին կամ ժամանակաշրջանին բնորոշ ինքնատիպ ու հարուստ հնչողություն կամ տեմբրային բազմերանգություն ստանալու նպատակով՝ դեռևս 18-րդ դարից, ստեղծագործողները դիմում էին տարբեր երկրներում ու ժամանակներում կիրառվող ավանդական նվագարաններին, ձայն արկանող հնամենի գործիքներին ու հարմարանքներին:

Այ. Սպենդիարյանի ստեղծած բոժոժավոր նվագարանը համեմատելով Հայաստանի տարբեր պեղավայրերից հայտնաբերված հնագույն զանգակների ու բոժոժների, ինչպես նաև նախաքրիստոնեական ու քրիստոնեական աշխարհիկ ու հոգևոր տոների, ծեսերի ու արարողությունների ընթացքում և անասնապահական մշակույթում տարածված աղմկային-հարկանային նվագարանների ու ձայն արտաբերող հմայական պահպանակների հետ կարելի է եզրակացնել, որ կոմպոզիտորը համակողմանի պատկերացում ուներ հիշյալ նվագարանների գործառույթների ու առանձնահատկությունների վերաբերյալ և, իբրև նորարար, նրա հեղինակած սպենդիարոֆոնն այդ հնամենի նվագարանների «սիմֆոնիզացված» հետնորդն է:

Գրականություն

1. Իսրայելյան Ա. XVIII-XIX դդ. հայկական հմայական պահպանակները. Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2012:
2. Լերմոնտով Մ.Յու. Ընտիր երկեր. Երևան, «Սովետական գրող», 1982, էջ 50-52:
3. Խանգաղյան Է. Էլառ-Դարանի. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979:
4. Հայկական տարազ. XVIII-XIX դարեր, Ալբոմ-կատալոգ, Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից. Երևան, «Ասողիկ», 2014:
5. Մեյմարյան Լ. Մի ցուցանմուշի պատմություն. Սպենդիարոֆոն, *Սպենդիարյան 140*, «Թանգարան» տեսական-գիտամեթոդական հանդես. Երևան, 2011, էջ 175-178:
6. Պիկիչյան Հ. Երաժշտությունը հայոց ավանդական առտոնին և տոնաձիսական կյանքում. Երևան, «Ամրոց գրուպ», 2012:
7. Քոչարյան Ա. Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում. Երևան, «Ամրոց գրուպ», 2008:
8. Барсегян Э. Сакральные функции инструментального музицирования в ранних культурах Армянского нагорья, Проблемы генезиса и специфики форм музыкальной культуры. тезисы докладов. Ереван, 1986, с. 12-13.
9. Вертков К., Благодатов Г., Язовицкая Э. Атлас музыкальных инструментов народов СССР. Москва, Государственное музыкальное издательство, 1963.
10. Израелян А. Колокольчики и бубенцы в армянских народных верованиях, «Историко-филологический журнал», 1993, 1-2, с. 147-153.
11. Лермонтов М.Ю. Стихотворения, поэмы, Маскарад, Герой нашего времени, Библиотека всемирной литературы; литература XIX века. Москва, «Художественная литература», 1972.
12. Летопись жизни и творчества А.А. Спендиарова. Ереван, изд. АН Армянской ССР, 1973.
13. Музыкальные инструменты мира. Иллюстрированная Энциклопедия 4000 иллюстраций, пер. с англ. Т.В. Лихач. Минск, «Попурри», 2001.

14. Панаиотов А. Ударные инструменты в современных оркестрах. Москва, «Советский композитор», 1973.
15. Спендиаров Ал. Письма, составление, вступительная статья и примечания К.Г. Григорян, Литературное наследство, т. 2. Ереван, изд. АН Армянской ССР, 1962.
16. Wachsmann Klaus P. The Primitive Musical Instruments Through the Ages. Edited by Anthony Bains. Singapore, 1982.

References

1. Israyelyan A. XVIII-XIX dd. haykakan hmayakan pahpanaknery'. Yerevan, Hayastani patmut'yan t'angaran, 2012.
2. Lermontov M.Yow. Y'ntir erker. Yerevan, «Sovetakan grogh», 1982, e'j 50-52.
3. Xanzadyan E'. E'lar'-Darani. Yerevan, HSSH GA hrat., 1979.
4. Haykakan taraz. XVIII-XIX darer, Albom-katalog, Hayastani patmut'yan t'angarani havaqacuic. Yerevan, «Asoghik», 2014.
5. Meymaryan L. Mi cucanmushi patmut'yun. Spendiaronfon, Spendiaryan 140, «T'angaran» tesakan-gitamet'odakan handes. Yerevan, 2011, e'j 175-178.
6. Pikichyan H. Erajshsut'yuny' hayoc avandakan ar'tnin ev tonac'isakan kyanqum. Yerevan, «Amroc grup», 2012.
7. Qocharyan A., Harkanayin ev shnchakan erajhshtakan gorc'iqnery' Hayastanum. Yerevan, «Amroc grup», 2008.
8. Barsegian Je. Sakral'nye funkci instrumental'nogo muzicirovanija v rannih kul'tah Armjanskogo nagor'ja, Problemy genezisa i specifiki form muzikal'noj kul'tury. tezisy dokladov. Yerevan, 1986, s. 12-13.
9. Vertkov K., Blagodatov G., Jazovickaja Je. Atlas muzykal'nyh instrumentov narodov SSSR. Moscow, Gosudarstvennoe muzykal'noe izdatel'stvo, 1963.
10. Israeljan A. Kolokol'chiki i bubency v armjanskih narodnyh verovanijah, «Istoriko-filologicheskij zhurnal», 1993, 1-2, s. 147-153.
11. Lermontov M.Ju. Stihotvorenija, pojemy, Maskarad, Geroj nashego vremeni, Biblioteka vseмирnoj literatury; literatura XIX veka. Moscow, «Hudozhestvennaja literatura», 1972.
12. Letopis' zhizni i tvorchestva A.A. Spendiarova. Yerevan, izd. AN Armjanskoj SSSR, 1973.
13. Muzykal'nye instrumenty mira. Illjustrirovannaja Jenciklopedija 4000 illjustracij, per. s angl. T.V. Lihach. Minsk, «Popurri», 2001.
14. Panaiotov A. Udarnye instrumenty v sovremennyh orkestrah. Moscow, «Sovetskij kompozitor», 1973.
15. Spendiaron Al. Pis'ma, sostavlenie, vstupil'el'naja stat'ja i piimechanija K.G. Grigoryan, Literaturnoe nasledstvo, t. 2. Yerevan, izd. AN Armjanskoj SSR, 1962.

**СПЕНДИАРОФОН: «СИМФОНИЗИРОВАННЫЙ» НАСЛЕДНИК
ТРАДИЦИОННЫХ МУЗЫКАЛЬНЫХ ИНСТРУМЕНТОВ**

РИПСИМЕ ПИКИЧЯН*

Для цитирования: Пикичян, Рипсима. «Спендиарофон: «симфонизированный» наследник традиционных музыкальных инструментов». *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 142-153. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-142

Статья посвящена истории создания музыкального инструмента *спендиарофон*, который экспонируется в доме-музее Александра Спендиаряна. Рассмотрены характерные особенности инструмента и проведен сравнительный анализ с древнейшими образцами из группы ударных шумовых инструментов. Работа над созданием симфонической картины «Три пальмы» на сюжет баллады выдающегося русского поэта Михаила Лермонтова, А. Спендиарян стремился достичь наиболее выразительного звукового изображения идущего по пустыне каравана верблюдов. Пытаясь симитировать средствами симфонического оркестра звон бубенчиков на верблюжьей упряжи, композитор создал оригинальный инструмент, состоящий из кожаного ремня с прикрепленными к нему двенадцатью шарообразными бубенцами. Н.А. Римский-Корсаков назвал его в честь «создателя» *спендиарофоном*.

Безусловно, выдающийся композитор был прекрасно осведомлен о том, что еще с XVIII века для получения оригинального и богатого звучания, для достижения тембрового многообразия, присущего той или иной среде или эпохе, композиторы обращались к традиционным музыкальным инструментам, применявшимся в разное время в разных странах, а также к старинным шумовым инструментам и устройствам.

Сравнивая созданный А. Спендиаряном инструмент с разнообразными бубенцами, колокольчиками и бубенчиками, найденными во время раскопок на территории Армении, с представленными в различных музеях ударными шумовыми инструментами и звуковыми оберегами, применяемыми во время дохристианских и христианских духовных и светских праздников, обрядов и церемоний, а также распространенными в скотоводческих культурах, можно заключить, что композитор имел разностороннее представление о функциях и особенностях подобных инструментов, а следовательно, созданный им новаторский *спендиарофон* является своего рода «симфонизированным» наследником древних музыкальных инструментов.

Ключевые слова: Александр Спендиарян, спендиарофон, симфоническая картина «Три пальмы», традиционный музыкальный инструмент, колокольчики, бубенцы, музей.

* Старший научный сотрудник отдела народной музыки Института искусств НАН РА, доцент Ереванского государственного университета, кандидат исторических наук, ripsh@mail.ru, статья представлена 20.01.2023, рецензирована 20.02.2023, принята к публикации 01.12.2023.

SPENDIAROPHONE: THE “SYMPHONIZED” SUCCESSOR TO TRADITIONAL MUSICAL INSTRUMENTS

HRIPSIME PIKICHIAN*

For citation: Pikichian, Hripsime. “Spendiarophone: the “Symphonized” Successor to traditional musical instruments”, *Journal of Art Studies*, N 2 (2023): 142-153. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-142

The article focuses on the history of *Spendiarophone*, a musical instrument exhibited in the Alexander Spendiaryan House-Museum. The author reviews its specific features and compares it with the most ancient examples from the family of percussion instruments. While working on “Three Palms”, a symphonic picture inspired by the great Russian poet Mikhail Lermontov’s poem, Spendiaryan sought to create the most expressive sound image depicting a caravan of camels walking through the desert. In his efforts to imitate the sound of ringing camel bells by means of a symphony orchestra, the composer created an original instrument consisting of a leather strap with twelve ball-shaped bells fastened to it. In honor of the “creator”, N. Rimsky-Korsakov called it *Spendiarophone*.

No doubt, the great composer was well aware that, from as far back as the XVIII century, in different countries at different times the composers, striving to produce an original and rich sound and achieve the timbre diversity, characteristic of the particular environment or epoch, employed traditional musical instruments, in addition to ancient percussion instruments and devices.

Having compared the instrument, created by Spendiaryan, with various bells and jingles from the excavation sites in Armenia, with the exhibited in various museums percussion instruments and sound charms used during pre-Christian and Christian spiritual and secular celebrations, rites, and ceremonies, as well as with those widespread in herding cultures, we concluded that the composer had a comprehensive understanding of the functions and specific features of these instruments. Thereby, the pioneering *Spendiarophone* he created is a kind of ‘symphonized’ successor to the ancient percussion instruments.

Key words: Alexander Spendiaryan, Spendiarophone, symphonic picture «Three Palms», traditional musical instruments, bells, jingles, museum.

* Senior Researcher at the Department of Folk Music of NAS RA Institute of Arts, associate professor at the Yerevan State University, Doctor of Historical Sciences, riposh@mail.ru. The article has been delivered on 20.01.2023, reviewed on 20.02.2023, accepted for publication on 01.12.2023.



Նկ. 1. Սպենդիարոֆոն

Նկ. 2. Մեծ դափ



Նկ. 3. Քշոց, Էջմիածին, 1621 թ.



Նկ. 4. Մանկական ոտքի ապարանջան-պահպանակ, ՀՊԹ

Նկ. 5. Դաղղղաններ, բոժոժներ, բոժոժավոր դաղղղան, ՀԱՊԹ



Նկ. 6. Ուղտերի գանգակներ և բոժոժներ, ՀՊԹ

«ԷԹՆՈԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ*

Հղման համար. Տիգրանյան, Մարիաննա: «Էթնոերաժշտագիտության հիմնախնդիրներ» առարկայի դասավանդման մեթոդիկա»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 154-166. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-154

Հոդվածը ներկայացնում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մագիստրոսական կրթական ծրագրի համար նախատեսված «Էթնոերաժշտագիտության հիմնախնդիրներ» առարկայի դասավանդման մեթոդիկան: Էթնոերաժշտագիտությունը բազմաֆունկցիոնալ (*ինտեգրատիվ*) համակարգ է, որն իրականացնում է ժողովրդական երաժշտության համակողմանի ուսումնասիրությունը՝ համատեղելով երաժշտագիտական, ձայնաբանական (*ակուստիկ*), մշակութաբանական, սոցիոլոգիական, հոգեբանական, ազգագրական վերլուծություններ: Առարկայի ծրագիրը պայմանավորված է առաջին հերթին երաժշտական բանահյուսության կարևորության հանրային ճանաչմամբ՝ որպես պատմամշակութային հիշողության դրսևորման ձևերից մեկը:

«Էթնոերաժշտագիտության հիմնախնդիրներ» մագիստրոսական դասընթացը ներկայացնում է արդի երաժշտական ֆոլկլորագիտության հիմնախնդիրները և հայ ժողովրդի երաժշտական ֆոլկլորագիտության շուրջ 150-ամյա պատմությունը համաշխարհային երաժշտական ֆոլկլորագիտության համեմատական վերլուծության լույսի ներքո: Առարկան ընդգրկում է 19-րդ դարի 70-ականներից մինչև մեր օրերի ժամանակահատվածը՝ ուսանողի ուշադրությանը ներկայացնելով հայ երաժշտական ֆոլկլորագիտության ձևավորման գործընթացում մեծ դեր ունեցած երաժշտագետների, կոմպոզիտորների և բանահավաքների կյանքն ու լուսավորչական գործունեությունը, ինչպես նաև նրանց կողմից աշխատասիրված նշանակալից ուսումնասիրությունները: Հոդվածի շրջանակում անդրադարձ է արվում առարկայի հիմնական ծրագրում ներառված թեմաներին, նշվում են դասընթացի ուսուցման մեթոդաբանության սկզբունքները, ձևաչափը, պահանջները և ուսանողների ուսումնառության արդյունքները:

Բանալի բառեր՝ էթնոերաժշտագիտություն, բանահյուսություն, ազգագրություն, ազգաբանություն, ժողովրդական երաժշտություն, «Էթնոերաժշտագիտության հիմնախնդիրներ», մագիստրոսական դասընթաց:

Ներածություն

Էթնոերաժշտագիտությունը գիտական համակարգ է, որը զբաղվում է աշխարհի ժողովուրդների երաժշտական համակարգերի ուսումնասիրմամբ և միջմշակութային փոխհարաբերությունների համեմատական վերլուծությամբ: Առարկան չի սահմանափակվում նեղ երաժշտագիտական խնդիրներով, այլ տրամաբանորեն լրացնում է հարակից գիտական առարկաների համակարգը: Գիտական մտքի այլ ոլորտների՝ ազգաբանության, բանահյուսության, բարբա-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, tigranyan.marianna@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 11.08.2023, գրախոսելու օրը՝ 13.09.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

ռազգիտության, ազգագրության հետ համատեղ՝ էթնոտերաժտագիտությունը լուծում է մշակույթի արմատական հիմքերի բացահայտման, ոլորտին առնչվող մնայուն արժեքների փոփոխվող պայմաններում պահպանելու և վերարտադրելու խնդիրները:

Ժողովրդական փիլիսոփայության, գեղագիտության, լեզվի հիմունքների, սովորույթների և ծեսերի, բանավոր պոեզիայի հետ մեկտեղ՝ ժողովրդական երաժշտությունն առանցքային դեր է խաղում ազգային ոգով ապագա սերունդներ դաստիարակելու խնդիրների լուծման գործում: Գիտության այս ոլորտին, ի սկզբանե, բնորոշ է եղել միջառարկայական, համակարգային բնույթը, որն այսօր իր վառ դրսևորումն ունի ժամանակակից առաջատար հետազոտողների աշխատություններում: Գտնվելով ժողովրդի հոգևոր մշակույթի և էթնոհոգեբանության հանգուցակետում՝ էթնոտերաժտագիտությունն իր բնույթով կենտրոնական դիրքերից մեկն է զբաղեցնում, քանզի համաշխարհային հանրության գիտական մտքի զարգացման գործընթացում, որպես միավոր, յուրաքանչյուր ազգային մշակույթ իր պատմական նշանակությունն ունի:

Դասընթացը չունի նախադեպ և նորությունը կայանում է նրանում, որ վերը նշված խնդիրների համակողմանի վերլուծությունից և ներկայացումից զատ, առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում ոլորտին վերաբերող արխիվային փաստաթղթեր, արխիվային նյութերի վրա հիմնված առաջատար մասնագետների նորանոր ուսումնասիրություններ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին հետևելու և ծանոթանալու էթնոտերաժտագիտության ոլորտում տեղի ունեցող զարգացումներին, պարբերաբար լույս տեսնող հրապարակումներին և գիտական նոր տեսանկյուններին:

Դասընթացի նպատակը

Էթնոտերաժտագիտության նպատակն է՝ ազգային, մշակութային և քաղաքական ինքնության խնդիրների ուսումնասիրումը, որը մշակութային համատեքստում սահմանվում է որպես ժողովրդական երաժշտության տարբեր ճյուղերի համակողմանի և ամբողջական ուսումնասիրություն: Դասընթացի ընդգրկումը բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ հետապնդում է մի քանի նպատակ: Դրանք են՝ ուսանողներին ծանոթացնել.

ա/ էթնոտերաժտագիտության հիմնավոր խնդիրներին,

բ/ հայ էթնոտերաժտագիտության պատմության կայացման, ձևավորման և զարգացման հիմնափուլերին,

գ/ հայ ժողովրդի երաժշտական բանահյուսությունն ուսումնասիրող երախտավոր կոմպոզիտորների, երաժշտագետների, բանահավաքների կյանքին և գործունեությանը, ինչպես և նրանց գիտական մեծ վաստակին և ուսումնասիրություններին:

Երաժշտագիտական, ստեղծագործական, խմբավարական, լարային, փողային, ակադեմիական երգեցողության բաժինների, ինչպես նաև Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի մագիստրոսներն իրազեկված պետք է լինեն վերոնշյալ դրույթներին և ստացած գիտելիքները կարողանան կիրառել մասնագիտական ոլորտում:

Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակի պահանջներ

«Էթնոտերաժտագիտության հիմնախնդիրներ» առարկայի ընդհանուր ծավալը մեկ կիսամյակ է՝ 34 ժամ (17 շաբաթ): Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

ա/ պատկերացում ունենա անվանի երաժշտագետ-բանահավաքների և կոմպոզիտորների գործունեության մասին, որոնք զգալի դերակատարում են ունեցել հայ ֆոլկլորագիտության զարգացման և հանրահոշակման գործընթացում,

բ/ ծանոթ լինի հայ երաժշտագետ-ֆոլկլորագետների ծավալած գործունեությանը, գիտենա նրանց կարևոր աշխատություններն ու գիտակցի նրանց կատարած դերը հայ էթնոտերաժտագիտության կայացման մեջ,

գ/ կարողանա օգտվել մասնագիտական գրականությունից,

դ/ ծանոթ լինի ազգագրական ժողովածուներում ամփոփված երաժշտական ֆոլկլորային նյութին:

Դասընթացի թեմատիկ պլանն ու բովանդակային շարադրանքն ըստ շաբաթների

1-ին շաբաթ

• Էթնոտերաժտագիտությունը՝ որպես գիտական համակարգ (Մաքս Վեբեր, Կուրտ Զաքս, Կառլ Շտոմպֆ, Էրիխ Հորնբոսթել, Բեռլինի ֆոնոգրաֆարխիվ, «Կրոսսմշակույթ», Բելա Բարտոկ, Պաուլ Հինդեմիտ):

• Հայ ազգագրությունը և երաժշտական բանահյուսությունը 19-րդ դարի երկրորդ կեսին:

• Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դերն ու նշանակությունը հայ երաժշտագիտական մտքի զարգացման գործընթացում:

Արիստակես Սեդրակյան, «Քնար մշեցոց և վանեցոց» (1874)

Սահակ վրդ. Ամատունի, «Արարատ» ամսագիր

«Պարականոն շարականներ» (1883), «Ձայնագրյալ ժողովածու» (1883)

2-րդ շաբաթ

• Մխիթարյան միաբանության դերը հայ երաժշտական մտքի զարգացման գործընթացում, «Բազմավէպ» և «Գեղունի» հայերեն պարբերականները (Մինաս Բժշկյան, Ղևոնդ Տայան, Գաբրիել Այվազովսկի)

• Հայր Ղևոնդ Ալիշան, «Հայոց երգ ուսմական» (1852), «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» (1910)

3-րդ շաբաթ

• Կ. Պոլսի երաժշտական կյանքը 19 դ. երկրորդ կեսին (Համբարձում Լիմոնճյան, Եղիա Տնտեսյան, Տիգրան Չուխաճյան, Նիկողայոս Թաշճյան, Միքայել Նալբանդյան, Արիստակես Հովհաննիսյան, Գաբրիել Երանյան)

• «Քնար արևելյան» (1853), «Քնար հայկական»

Ավետիս Խորասանճյան, Քերովբե Զիլճյան, Մ. Միանսարյանց

Հովհաննես Աճեմյան («Հարսնաճղա»)

- Թիֆլիսը՝ որպես հայ երաժշտական մշակույթի կենտրոն
Երվանդ Լալայան, «Ազգագրական հանդես»-ներ
Գևորգ Շերենց, «Վանա սագ» (1885)

Բարսեղ Ղորղանյան

Ժողովրդական երգը Մ. Եկմայանի և Ք. Կարա-Մուրզայի արվեստում

4-րդ շաբաթ

• Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը 19-րդ դարի երկրորդ կեսին
Արևելյան երաժշտությունը և կոմպոզիտորական արվեստը (Նիկողայոս Տիգրանյան)

Արշակ Բրուսյան, «Ռամկական մրմունջներ» (1880-90-ականներ)

- Շուշիի երաժշտական կյանքը 1820-1920 թվականներին

Ստեփան Դեմուրյան, «Քնար» ժողովածուն (1907)

Գրիգոր Սյունի, «Խմբերգեր»

Դանիել Ղազարյան

5-րդ շաբաթ

• Կոմիտաս վարդապետը որպես համեմատական երաժշտագիտության
հիմնադիր

Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ

Կոմիտասը հայ ֆոլկլորագիտության հիմնադիր

- Հայ երաժշտական ֆոլկլորագիտությունը 20-րդ դ. սկզբին (Մոսկվա)

Մոսկվայի Լազարյան ճեմարանի դերն ու նշանակությունը

Սարգիս Հայկունի, «Էմինեան ազգագրական ժողովածու»:

6-րդ շաբաթ

- Թիֆլիսի «Երաժշտական լիգա»-ն

«Հայոց երաժշտական ընկերություն»-ը

Ռոմանոս Մելիքյան

Ազատ Մանուկյան

Կոնսերվատորիայի ստեղծումը (1921)

- «Հայարտների» (Հայ արվեստի տուն) դերն ու նշանակությունը (Թիֆլիս, Կ. Պոլիս, Բաքու, Բաթում, Մոսկվա)

7-րդ շաբաթ

• Բանահավաքչական աշխատանքները Հայաստանի շրջաններում

Սպիրիդոն Մելիքյան՝ «Շիրակի երգեր» (1917), «Վանա ժողովրդական երգեր» (1927), «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» (2 հատոր)

• Քրիստափոր Քուչնարյան՝ 1927-29 թթ. բանահավաքչական աշխատանքներ, «Հայ մոնոդիկ երաժշտության տեսության և պատմության հարցեր» (1958)

- ԱրմՖԱՆ-ի ստեղծումը (1935)

- Հայ փիլիսոփայական և գեղագիտական միտքը Արշակ Ադամյան
Հակոբ Հարությունյան, «Մանյակ» ժողովածու (1958)

8-րդ շաբաթ

Միջանկյալ ստուգում

9-րդ շաբաթ

- Հայ ֆուլկլորագիտությունը 1940-1960-ական թվականներին Արամ Քոչարյան, «Ժողովրդական նվագարաններ»
- Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա (1943) և Արվեստի պատմության և տեսության սեկտոր (1948)
- Հայկական ԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի ստեղծում (1958) և համակարգված բանահավաքչական աշխատանքները
- ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ստեղծում (1964)
Մաթևոս Մուրադյան

10-րդ շաբաթ

- Միհրան Թումանյան («Հայրենի երգ ու բան»)
- Վարդան Սամվելյան («Հայ ժողովրդական աշխատանքային երգեր»)
- Մանուկ Մանուկյան («Ավետիսներ»)
- Ռոբերտ Աթայան (Կոմիտասագիտություն)

11-րդ շաբաթ

- ԵՊԿ-ի Ֆուլկլորի կաբինետի ստեղծումը (1969)
Մարգարիտ Բրուտյան («Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն»)
- Սրբուհի Լիսիցյան (Կինետոգրաֆիա)
«Հայ ժողովրդի հնագույն ծիսական պարերն ու թատերական ներկայացումները»

12-րդ շաբաթ

- Հայ էթնոերաժշտագիտությունը 1960-80-ական թվականներին Գիտատեխնիկական նոր նվաճումներ և ծրագրեր (ՌԻՄՆԱԿԱՏ, Վ. Հոշովակի) Կարինե Խուդաբաշյան-Սարգսյան
- Հայ էթնոերաժշտագիտությունը 20 դ. վերջին քառորդում Պետրոս Ալահայտոյան
Զավեն Թագակցյան

13-րդ շաբաթ

- Էթնոերաժշտագիտությունը 21-րդ դարում. արդի հիմնախնդիրներ Ալինա Փահլևանյան, «Հայրենի երգեր» ժողովածու
- Արուսյակ Սահակյան, «Սասնա ծռեր դյուցազնավեպ»

Առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ «Սասնա ծռեր» Էպոսի և «Կարոս խաչ» վիպերգի երաժշտական պատումների համեմատական քննական վերլուծություն

14-րդ շաբաթ

- Մերօրյա հայկական հարսանիքն ավանդական ծեսի համատեքստում Ծիսական խորհրդաբանություն
- Կենդանապաշտության դրսևորումները ժողովրդական երգարվեստում Մսամորթը՝ որպես ցլապաշտության դրսևորում «Աղվես աղբերը»՝ որպես պտղաբերության և հարս բերող խորհրդանիշ, «Հավթռուքը»՝ որպես նախնյաց պաշտամունք Այծապաշտությունը՝ որպես հնագույն սիմվոլ (Խաչվերաց-Սպանդարամետաց տոներ, Քոչարի)
- Հնագույն սիմվոլների դրսևորումները ժողովրդական երգարվեստում «Օձը»՝ որպես իմաստության և հավերժության խորհրդանիշ («Պղնձյա Օձ»), Հարսանեկան ծիսապար «Սաքմա», Վիշապագորգեր
- Արևապաշտություն («Էգ բարև», Սահարի)

15-րդ շաբաթ

- Բուսապաշտության դրսևորումները հայկական ավանդական հարսանեկան գովքերգերի համատեքստում Հինադրեքի հայկական արմատները Նորափեսայի թագվորածառ «Ուռք»-ը՝ որպես Տիեզերական «Կենաց Ծառ»
- Պատմական երգերի նորահայտ օրինակներ Կիլիկյան Հայաստանի շրջանի պատմական երգերը, «Երգ ի Լևոն որդի Հեթմո» (XIII դ.), «Երգ քաջ Լիպարիտ զորավարի մասին» (XIV դ.), «Երգ Լևոն Լուսինյանի մասին»

16-րդ շաբաթ

- Ժողովրդական ծեսերի հնագույն արմատները և պաշտամունքային երաժշտություն, նախաքրիստոնեական արմատներ
- Ձմեռային տոներ (Սուրբ Ծնունդ, Տեառնընդառաջ, Սուրբ Սարգիս, Բարեկենդան)
- Գարնանային տոներ (Ծաղկազարդ, Ջատիկ)
- Ամառային տոներ (Համբարձում, Վարդավառ, Նավասարդ)
- Աշնանային տոներ (Խաղողօրհներ, Սուրբ խաչ)

17-րդ շաբաթ

Ստուգարք / հարցում

Մեթոդական համառոտ ցուցումներ և պահանջներ

Ուսման համար անհրաժեշտ են տեսա-ձայնային և համակարգչային սարքավորումներ: Յուրաքանչյուր դասաժամը ենթադրում է համապատասխան տե-

ասցուցադրում (սլայդ-շոու), ինչը շահեկանորեն նպաստում է ներկայացվող թեմայի յուրացմանը: Մագիստրանտը պետք է ծանոթ լինի դասընթացին առընթեր հիմնական և լրացուցիչ գրականության ցանկին [տե՛ս գրականությունը 1-54], որը տրամադրվում է նախապես: Կիսամյակի ընթացքում մագիստրանտը պարտավոր է ներկայացնել գրավոր աշխատանք՝ ռեֆերատ (ծրագրում տեղ գտած ցանկացած թեմայի վերաբերյալ): Քննական (ստուգարք) հարցերը հիմնված են բացառապես դասընթացի ծրագրում հաստատված թեմաների շուրջ: Հարցաշարը կազմվում է նախապես և բուհական պահանջներին համաձայն և նշանակված ժամկետում տրամադրվում ուսանողներին:

Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը պետք է՝

Տիրապետի գիտական աշխատանքի բաղկացուցիչներն ու հիմնատարները. ոճ, լեզու, շարադրանք, մասնագիտական տերմինաբանություն՝ ըստ ժանրերի /ընդհանուր պատմական, վերլուծական, համեմատական, դիմանկար և այլն/:

Կարողանա օգտվել աղբյուրագիտական գրականությունից, տարանջատել աշխատանքի հիմնական ժանրերը, ներկայացնել և վերլուծել երաժշտական նյութը, հիմնավորել սեփական տեսակետներն ու եզրակացությունները:

Տիրապետի գրավոր շարադրանքի լեզվա-ոճական առանձնահատկություններին, մասնագիտական տեքստ կազմելու կանոններին, գործնական աշխատանք կառուցելու հմտություններին:

Գրականություն

1. Աբեղյան Մ. Երկեր. Հայ վիպական բանահյուսություն, հ. Ա. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, 571 էջ:
2. Աղամյան Ա. Հայ էպոսիկական մտքի պատմությունից, Հետազոտությունների ժողովածու, Գիրք 5, Կազմ. և խմբ.՝ Յա. Խաչիկյան. Երևան, «Ոսկան Երևանցի», 2004, 135 էջ:
3. Աթանասյան Ն., Ստեփան Դեմուրյան. Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ակունքներում. Երևան, «Ամրոց գրուպ», 2020, 151 էջ:
4. Ալիշան Հ. Ղևոնդ. Հայոց երգք ոսմկականք. Վենետիկ-Ս.Ղազար, 1852, 84 էջ /Armenian Popular songs. Translated into english. By the R. Leo M. Alishan D.D., of the Mschitaristic society. Venice - S. Lazarus, 1852/:
5. Ասատրյան Ա. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 394 էջ:
6. Արևշատյան Ա. Գրիգոր Գապասակալյանի երաժշտագիտական ժառանգությունը. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 106 էջ:
7. Բաղդասարյան Ա. Խուդաբաշյան Կարինե Էմանուելի. Հայ նշանավոր կին գիտնականներ. Նյութեր կենսամատենագրության № 1. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 39 էջ:
8. Բեյբության Ս. Սահակ Ամատունի, «Էջմիածին», 1970, № 4, էջ 31-35:
9. Բրուտյան Ա. Ռամկական մրմունջներ, խմբ.՝ Մ. Բրուտյան, հ. 1, Երևան, «Սովետական գրող», 1985, 237 էջ:
10. Բրուտյան Ա. Ռամկական մրմունջներ, խմբ.՝ Մ. Բրուտյան, հ. 2, Երևան, «Ամրոց գրուպ», 2002, 227 էջ:
11. Բրուտյան Մ. Ստեփան Դեմուրյան. Երևան, «Հայաստան», 1969, 105 էջ:

12. Գրիգոր Սյունի. Խմբերգեր, Կազմ., խմբ.՝ Ռ. Աթայան. Երևան, «Հայաստան», 2013, 371 էջ:
13. Գյոդակյան Գ. Ռոմանոս Մելիքյան. կյանքը և գործունեությունը. Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ., 1960, 245 էջ:
14. Երնջակյան Լ., Պիկիչյան Հ. Հիմն արևին. «Սահարին» հայ երաժշտական մշակույթում. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1998, 115 էջ:
15. Թահմիզյան Ն. Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, «Սովետական գրող», 1982, 59 էջ:
16. Թումաճան Մ. Հայրենի երգ ու բան (4 հատորով). Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ. (հ. 1, 1972, 263 էջ), (հ. 2, 1983, 439 էջ), (հ. 3, 1986, 219 էջ), (հ. 4, «Զանգակ», 2005, 431 էջ):
17. Կիրակոսյան Ա. Մարգարիտ Բրուտյան /նյութեր կենսամատենագրության/. Երևան, «Ամրոց գրուպ», 2007, 71 էջ:
18. Կոմիդասական, հ. 1, խմբ.՝ Ռ. Աթայան. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 260: Կոմիդասական, հ. 2, խմբ.՝ Ռ. Աթայան, կազմ.՝ Մ. Մուրադյան. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 267 էջ: Կոմիդասական, հ. 3, խմբ.՝ Ա. Ասատրյան. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2019, 267 էջ:
19. Հակոբյան Ա. Ազգային մշակույթի պահպանումը. Պետրոս Ալահայտոյան, «Արվեստագիտական հանդես», 2021, № 2, էջ 98-103:
20. Հասկաքաղ. Միհրան Թումաճան (1890-1973) (Պատկերագիրը և գիտական հոդվածներ), Համադրող և առաջաբ. հեղ.՝ Ն. Խաչատուրեան, Պատ. խմբ.՝ Գ. Ամիրադյան. Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2018, 211 էջ:
21. Հովհաննիսյան Կ. Վարդան Սամվելյանի կյանքն ու ֆոլկլորագիտական գործունեությունը, ԵՊԿ մագիստրոսական առենախոսություն, գիտական ղեկ.՝ Մ. Տիգրանյան, 2021, 80 էջ:
22. Մուրադյան Մ. Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության. Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 337:
23. Մուրադյան Մ. Ազատ Մանուկյան. Երևան, «Հայաստան», 1977, 60 էջ:
24. Մուրադյան Մ. Ք. Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ. Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ., 1956, 284 էջ:
25. Մելիքյան Սպ. Հայ ժողովրդական երգեր և պարեր (2 հատորով), խմբ.՝ Մ. Աղայան. Երևան, «Հայպետհրատ», հ. 1, 1949 (323 էջ), հ. 2, 1952 (265 էջ):
26. Սահակյան Ա., Փահլևանյան Ա. Սասնայ ծոեր դիցազնավէպ. առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փասատենա, «Դրագարկ», 1996, 122 էջ:
27. Սահակյան Լ. Կոմիտասագիտությունը հայ երաժշտության մեջ. Երևան, «Տիգրան Մեծ», 2010, 167 էջ:
28. Սահակյան Լ. Կոմիտաս Վարդապետ (Հոդվածների ժողովածու). Երևան, 2019, «Տիգրան Մեծ», 305 էջ:
29. Սահակյան Լ. Ռոբերտ Աթայան, խմբ.՝ Գ. Գասպարյան. Երևան, «Տիգրան Մեծ», 2021, 350 էջ:
30. Սահակյան Ա. Հակոբ Հարությունյան, մասն. խմբ.՝ Մ. Բրուտյան. Երևան, «Սովետական գրող», 1985, 186 էջ:
31. Սամուելյան Խ. Հին Հայաստանի կուլտուրան, Ա հ. (Քարե դար). Յերեվան, «Պետհրատարակչություն», 1931, էջ 195:
32. Սիմոնյան Լ. Տոմարային ծիսաշար: Նոր Տարի, Սուրբ Ծնունդ, հ. 1, խմբ. Ա. Սահակյան. Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2006, 294 էջ:

33. Սիմոնյան Լ. Տոմարային ծիսաշար: Սուրբ Սարգիս, Տըրնդեզ, Բարեկենդան, հ. 2, խմբ.՝ Ռ. Մելիքյան. Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2007, 315 էջ:
34. Տիգրանյան Մ. «Աղվես» տոտեմի հնագույն արմատների դրսևորումը հայոց հարսանեկան ծեսում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, № 3, էջ 229-241:
35. Տիգրանյան Մ. «Լորկե»-ն որպես հայոց ավանդական ծիսական շուրջպար, «Կանթեղ», 2015, № 4, էջ 249-267:
36. Տիգրանյան Մ. Ծաղիկների և բույսերի դերն ու նշանակությունը հայկական հարսանեկան ծիսական երգերում, «Երաժշտական Հայաստան», 2008, № 4, էջ 113-130:
37. Տիգրանյան Մ. Թռչունների և կենդանիների տոտեմի դրսևորումները հայկական հարսանեկան ծիսական երգերում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական III նստաշրջանի նյութեր. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 169-174:
38. Տիգրանյան Մ., Մինասյան Լ. Մանուկ Մանուկյան (1927-2010); Կյանքը և գործունեությունը, «Երաժշտական Հայաստան», 2022, № 2, էջ 136-143:
39. Փահլևանյան Ա. Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի խնդիրները, խմբ.՝ Ա. Արևշատյան. Երևան, «Ամրոց գրուպ», 2018, 175 էջ:
40. Փահլևանյան Ա. Կենսամատենագիտություն, խմբ.՝ Ա. Բաղդասարյան. Երևան, «Լիմուշ», 2020, 76 էջ:
41. Քոչարյան Արամ. Ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2004, 61 էջ:
42. Քուշնարյան Քրիստափոր (Հոդվածներ և ուսումնասիրություններ, կարծիքներ, հուշեր), Մասնագիտական խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Մ. Բրուտյան, կազմողներ՝ Մ. Մուրադյան, Ն. Քուշնարյան. Երևան, «Ամրոց գրուպ», 2003, 191 էջ:
43. Гапасакаян Григор. Книга о музыке, Перевод с габара и введение А. Аревшатыан, ред. Л. Акопян. Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2017, 141 с.
44. Земцовский И. Этнография музыкальная, Музыкальная энциклопедия (в 6 т-х), гл. ред. Ю.В. Келдыш, т. 6. Москва, «Советский композитор», 1982, с. 578-581.
45. Календарные обычаи в странах Зарубежной Европы. Москва, «Наука», Зимние праздники (1973, 352 с.); Весенние праздники (1977, 360 с.); Летне-осенние праздники (1978, 296 с.).
46. Капанцян Г. Хайаса-колыбель армян: этногенез армян и их начальная история. Ереван, изд. АН АССР, 1947, 291 с.
47. Кушнарёв Х. Вопросы истории и теории армянской монодической музыки. Ленинград, МузГосИздат., 1958, 627 с.
48. Лисициан С. Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 1. Ереван, изд. АН АССР, 1958, 613 с.
49. Лисициан С. Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 2. Ереван, изд. АН АССР, 1972, 501 с.
50. Мазманян Р. Никогойос Тигранян. Очерк жизни и творчества. Ереван, «Советакан грох», 1978, 80 с.
51. Наджарян А. Вклад Србуи Лисициан в сохранение произведений танцевального искусства, «Academia»: Танец. Музыка. Театр. Образование. Москва, 2015, № 1, с. 54-55.
52. Тагмизян Н. Теория музыки в Древней Армении. Ереван, изд. АН АССР, 1977, 318 с.
53. Худабабян К. Армянская музыка в аспекте сравнительного музыкознания. Ереван, «Амроц груп», 2011, 272 с.
54. Шавердян А. Очерки по истории армянской музыки XIX-XX веков, ред. Р. Атаян. Москва, «Госмузиздат», 1959, 445 с.

References

1. Abeghyan M. Erker. Hay vipakan banahyusut'yun, h. A. Yerevan, HSSH GA hrat., 1966, 571 e'j.
2. Adamyan A. Hay e'st'etikakan mtqi patmut'yunic, Hetazotut'yunneri jhoghovac'u, Girq 5, kazm. Ev xmb.' Ya. Xachikyan. Yerevan, «Oskan Yerevanci», 2004, 135 e'j.
3. At'anasyan N. Step'an Demuryan. Hay erajhshtakan folkloragitut'yan akunqnerum. Yerevan, «Amroc grup», 2020, 151 e'j.
4. Alishan H. Ghevond. Hayoc ergq r'amkakanq, Venetik-S. Ghazar, 1852, 84 e'j /Armenian Popular songs. Translated into english. By the R. Leo M. Alishan D.D., of the Mschitaristic society. Venice - S. Lazarus, 1852/.
5. Asatryan A. HH GAA Arvesti institut – 50. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2010, 394 e'j.
6. Arshak Adamyan. Hay e'st'etikakan mtqi patmut'yunic, Hetazotut'yunneri jhoghovac'u, Girq 5, kazm. Ev xmb.' Ya. Xachikyan. Yerevan, «Oskan Yerevanci», 2004, 135 e'j.
7. Arevshatyan A. Grigor Gapasakalyani erajhshtagitakan jhar'angut'yuny'. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2013, 106 e'j.
8. Baghdasaryan A. Xudabashyan Karine E'manueli. Hay nshanavor kin gitnakanner. Nyut'er kensamatenagrut'yan № 1. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 1999, 39 e'j.
9. Beybut'yan S. Sahak Amatuni, «E'jmiac'in», 1970, № 4, e'j 31-35.
10. R'amkakan mrmunjner, xmb.' M. Brutyan, h. 1. Yerevan, «Sovetakan grogh», 1985, 237 e'j.
11. Brutyan A. R'amkakan mrmunjner, xmb.' M. Brutyan, h. 2. Yerevan, «Amroc grup», 2002, 227 e'j.
12. Brutyan M. Step'an Demuryan. Yerevan, «Hayastan», 1969, 105 e'j.
13. Grigor Syuni. Xmberger, Kazm., xmb.' R. At'ayan. Yerevan, «Hayastan», 2013, 371 e'j.
14. Gyodakyan G. R'omanos Meliqyan. kyanqy' ev gorc'uneut'yuny'. Yerevan, HSSR' GA hrat., 1960, 245 e'j.
15. Ernjakyan L., Pikichyan H. Himn arevin. «Saharin» hay erajhshtakan mshakuyt'um. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 1998, 115 e'j.
16. T'ahmizyan N. Erajhshtut'yuny' hin ev mijnadaryan Hayastanum. Yerevan, «Sovetakan grogh», 1982, 59 e'j.
17. T'umachyan M. Hayreni erg u ban (4 hatorov). Yerevan, HXSH GA hrat. (h. 1, 1972, 263 e'j), (h. 2, 1983, 439 e'j), (h. 3, 1986, 219 e'j), (h. 4, «Zangak», 2005, 431 e'j):
18. Kirakosyan A. Margarit Brutyan /nyut'er kensamatenagrut'yan/. Yerevan, «Amroc grup», 2007, 71 e'j.
19. Komitasakan, h. 1, xmb.' R. At'ayan. Yerevan, HSSH GA hrat., 1969, e'j 260. Komitasakan, h. 2, xmb.' R. At'ayan, kazm.' M. Muradyan. Yerevan, HSSH GA hrat., 1981, 267 e'j. Komitasakan, h. 3, xmb.' A. Asatryan. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2019, 267 e'j.
20. Hakobyan A. Azgayin mshakuyt'i pahapany'. Petros Alahaytoyan, «Arvestagitakan handes», 2021, № 2, e'j 98-103.
21. Haskaqagh. Mihran T'umachyan (1890-1973) (Patkeragirq ev gitakan hodvac'ner), Hamadrogh ev ar'ajab. hegh.' N. Xachaturean, pat. xmb.' G. Amiraghyan. Yerevan, Komitasi t'angaran-instituti hrat., 2018, 211 e'j.
22. Hovhannisyan K. Vardan Samvelyani kyanqn u folkloragitakan gorc'uneut'yuny', EPK magistrosakan atenaxosut'yun, gitakan ghek.' M. Tigranyan, 2021, 80 e'j.
23. Muradyan M. Urvagic' arevmtahay erajhshtut'yan patmut'yan. Yerevan, HXSH GA hrat., 1989, 337 e'j.
24. Muradyan M. Azat Manukyan. Yerevan, «Hayastan», 1977, 60 e'j.

25. Muradyan M.Q. Kara-Murzan ev bazmad'aynut'yan armatavorumy' hay erajhshtut'yan mej. Yerevan, HSSR' GA hrat., 1956, 284 e'j.
26. Meliqyan Sp. Hay jhoghovrdakan erger ev parer (2 hatorov), xmb.' M. Aghayan. Yerevan, «Haypethrat», h. 1, 1949 (323 e'j), h. 2, 1952 (265 e'j).
27. Sahakyan A., P'ahlevanyan A. Sasnay c'r'er diucaznave'p. ar'aspelakan y'nderq, vipakan kar'oyc, vipasanakan eghanak, P'asatena, «Drazark», 1996, 122 e'j.
28. Sahakyan L. Komitasagitut'yuny' hay erajhshtut'yan mej. Yerevan, «Tigran Mec'», 2010, 167 e'j.
29. Sahakyan L. Komitas Vardapet (Hodvac'neri jhoghovacu). Yerevan, 2019, «Tigran Mec'», 305 e'j.
30. Sahakyan L. R'obert At'ayan, xmb.' G. Gasparyan, Yerevan, «Tigran Mec'», 2021, 350 e'j.
31. Sahakyan S. Hakob Harut'yunyan, masn. Xmb.' M. Brutyan. Yerevan, «Sovetakan grogh», 1985, 186 e'j.
32. Samuelyan X. Hin Hayastani kulturan, A h. (Qare dar). Yerevan, «Pethratarak-chut'yun», 1931, e'j 195.
33. Simonyan L. Tomarayin c'isashar: Nor Tari, Surb C'nund, h. 1, xmb. A. Sahakyan. Yerevan, «VMV-Print», 2006, 294 e'j.
34. Simonyan L. Tomarayin c'isashar: Surb Sargis, Ty'rndež, Barekendan, h. 2, xmb.' R'. Meliqyan. Yerevan, «VMV-Print», 2007, 315 e'j.
35. Tigranyan M. «Aghves» totemi hnaguyn armatneri drsevorumy' hayoc harsanekan c'esum, «Lraber hasarakakan gitut'yunneri», 2015, № 3, e'j 229-241.
36. Tigranyan M. «Lorke»-n vorpes hayoc avandakan c'isakan shurjpar, «Kant'egh», 2015, № 4, e'j 249-267.
37. Tigranyan M. C'aghikneri ev buyseri dern u nshanakut'yuny' haykakan harsanekan c'isakan ergerum, «Erajhshtakan Haysatan», 2008, № 4, e'j 113-130.
38. Tigranyan M. Tr'chunneri ev kendanineri totemi drsevorumnery' haykakan harsanekan c'isakan ergerum, Eritasard hay arvestabanneri gitakan III nstashrjani nyut'er. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2009, e'j 169-174.
39. Tigranyan M., Minasyan L. Manuk Manukyan (1927-2010); Kyanqy' ev gorc'unekut'yuny', «Erajhshtakan Hayastan», 2022, № 2, e'j 136-143.
40. P'ahlevanyan A. Hay erajhshtakan folkloragitut'yan ardi xndirneri', xmb.' A. Arevshatyan. Yerevan, «Amroc grup», 2018, 175 e'j.
41. P'ahlevanyan A. Kensamatenagitut'yun, xmb.' A. Baghdasaryan. Yerevan, «Limush», 2020, 76 e'j.
42. Qocharyan Aram. C'nndyan 100-amyakin nvirvac' gitajhoghovi nyut'er. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2004, 61 e'j.
43. Qushnaryan Qristap'or (Hodvac'ner ev usumnasirut'yunner, karc'iqner, husher), Masnagitakan xmbagir ev ar'ajabani heghinak' M. Brutyan, Kazmoghner' M. Muradyan, N. Qushnaryan. Yerevan, «Amroc grup», 2003, 191 e'j.
44. Gapasakaljan Grigor. Kniga o muzyke, Perevod s grabara i vvedenie A. Arevshatjan, Red. L. Akopjan. Yerevan, izd. «Gitutjun» NAN RA, 2017, 141 s.
45. Zemcovskij I. Jetnografija muzykal'naja, Muzykal'naja jenciklopedija (v 6 t-h), gl. red. Ju.V. Keldysh, t. 6. Moscow, «Sovetskij kompozitor», 1982, s. 578-581.
46. Kalendarnye obychai v stranah Zarubezhnoj Evropy. Moscow, izd. «Nauka», Zimnie prazdniki (1973, 352 s.); Vesennie prazdniki (1977, 360 s.); Letne-osennie prazdniki (1978, 296 s.).
47. Kapancjan G. Hajasa-kolybel' armjan: jetnogenez armjan i ih nachal'naja istorija, Yerevan, izd. AN ASSR, 1947, 291 s.

48. Kushnarjov H. Voprosy istorii i teorii armjanskoj monodicheskoj muzyki. Leningrad, MuzGosizdat., 1958, 627 s.

48. Lisician S. Starinnye pljaski i teatralizovannye predstavlenija armjanskogo naroda, t. 1. Yerevan, izd. AN ASSR, 1958, 613 s.

49. Lisician S. Starinnye pljaski i teatralizovannye predstavlenija armjanskogo naroda, t. 2. Yerevan, izd. AN ASSR, 1972, 501 s.

50. Mazmanjan R. Nikogajos Tigranjan. Oчерk zhizni i tvorchestva. Yerevan, «Sovetakan groh», 1978, 80 s.

51. Nadzharjan A. Vklad Srbui Lisician v sohranenie proizvedenij tanceval'nogo iskusstva, «Academia»: Tanec. Muzyka. Teatr. Obrazovanie. Moscow, 2015, № 1, s. 54-55.

52. Tagmizjan N. Teorija muzyki v Drevnej Armenii. Yerevan, izd. AN ASSR, 1977, 318 s.

53. Hudabashjan K. Armjanskaja muzyka v aspekte sravnitel'nogo muzykoznanija. Yerevan, «Amroc grup», 2011, 272 s.

54. Shaverdjan A. Oчерki po istorii armjanskoj muzyki XIX-XX vekov, red. R. Atajan. Moscow, «Gosmuzizdat», 1959, 445 s.

МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ ПРЕДМЕТА «ОСНОВЫ ЭТНОМУЗЫКОЛОГИИ»

МАРИАННА ТИГРАНЯН *

Для цитирования: Тигранян, Марианна. “Методика преподавания предмета «Основы этномузыкологии»”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 154-166. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-154

В статье представлена методика преподавания предмета «Проблемы этномузыкологии» в магистратуре Ереванской государственной консерватории имени Комитаса. Этномузыкология – многофункциональная (интегративная) система, осуществляющая комплексное изучение народной музыки, объединяющее музыковедческий, фонетический (акустический), культурологический, социологический, психологический, этнографический анализы. Предметная программа обусловлена, прежде всего, общественным признанием значения музыкального фольклора как одной из форм проявления историко-культурной памяти.

Данный учебный курс представляет проблемы современного музыкального фольклора и 150-летнюю историю музыкального фольклора армянского народа в свете сравнительного анализа мирового музыкального фольклора. Предмет охватывает период с 70-х годов XIX века до наших дней и представляет вниманию студентов жизнь и просветительскую деятельность музыковедов, композиторов и фольклористов, сыгравших большую роль в процессе формирования армянского музыкального фольклора, и их значимые исследования в данной области. В рамках статьи обозначены темы, включенные в основную

* Старший научный сотрудник отдела народной музыки Института искусств НАН РА, преподаватель ЕГК имени Комитаса, кандидат искусствоведения, tigranyan.marianna@mail.ru, статья представлена 11.08.2023, рецензирована 13.09.2023, принята к публикации 01.12.2023.

программу предмета, упоминаются принципы методики преподавания курса, формат, требования и результаты обучения студентов.

Ключевые слова: этномузыкология, фольклор, этнография, этнология, народная музыка, «Проблемы этномузыкологии», магистратура.

METHODS OF TEACHING THE SUBJECT “PROBLEMS OF ETHNOMUSICOLOGY”

MARIANNA TIGRANYAN*

For citation: Tigranyan, Marianna. “Methods of teaching the subject “Problems of Ethnomusicology””, *Journal of Art Studies*, N 2 (2023): 154-166. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-154

The article presents the methods of teaching the subject “Problems of Ethnomusicology” in the master’s degree program at the Komitas Yerevan State Conservatory. Ethnomusicology is a multifunctional (integrative) system carrying out a comprehensive study of folk music, which combines musicological, phonetic (acoustic), cultural, sociological, psychological, and ethnographic analyses. The subject program has been determined, first of all, by the public recognition of the importance of musical folklore as one of the forms of manifestation of historical and cultural memory.

This training course introduces the students to the problems of modern musical folklore and the 150-year history of musical folklore of the Armenian people in the light of comparative analysis of the world musical folklore. The subject covers the period from the 70s of the XIX century to date, presenting to students the life and educational activities of the musicologists, composers and folklorists, who had played a major role in the formation of Armenian musical folklore, and their noteworthy studies in this field. The article outlines the topics included in the main program of the subject, sets forth the principles of teaching methods of the course, the format, requirements and the student learning outcomes.

Key words: ethnomusicology, folklore, ethnography, ethnology, folk music, “Problems of Ethnomusicology”, master’s degree program.

* Senior researcher at the Department of Folk Music of NAS RA Institute of Arts, Doctor of Arts, tigranyan.marianna@mail.ru. The article was submitted on 11.08.2023, reviewed on 13.09.2023, accepted for publication on 01.12.2023.

**ՌՈՒՍԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ
ԹԱՏՐՈՆՈՒՄ**

ԱՇԽԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ*

Հղման համար. Աթանեսյան, Աշխեն: «Ռուսական դրամատուրգիայի դրսևորումները արդի հայ թատրոնում»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 167-172. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-167

Ռուս դրամատուրգիան հայ թատերախմբերի խաղացանկում ներառվել է հայ պրոֆեսիոնալ թատրոնի սկզբնավորման օրից: Դրա տարածմանը նպաստել են մոսկովյան կամ պետերբուրգյան թատերական կրթօջախներում ուսումնառած առաջատար հայ թատերական գործիչները, ովքեր վերադառնալով այնտեղից զբաղվել են թատերախմբեր հավաքելու և բեմադրական աշխատանքների կազմակերպման գործով: Հետագայում այն ավելի արմատանալով կազմել է հայկական թատրոնների խաղացանկի անբաժանելի մասը: Արդի հայ թատրոնների խաղացանկերն ուսումնասիրելիս ռուս գրականության ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից նմուշների պակաս չտեսանք: Ավելին՝ այսօր հայ երիտասարդ թատերական գործիչներին ակնհայտորեն այդ երկրի նորագույն գրականության գեղագիտության կրողները կարելի է համարել:

Բանալի բաներ^{*} ռուս գրականություն, խաղացանկ, հայ թատրոն, նոր դրամա, բեմադրություն, դերասան, վավերագրական թատրոն:

Ներածություն

Ուսումնասիրելով արդի հայ թատրոնում արտասահմանյան, մասնավորապես՝ ռուս գրականության և, հատկապես, դրամատուրգիական դրսևորումներն ու նախընտրությունները, հարկ ենք համարում նախ պատմական անդրադարձ կատարել այդ հարցի վերաբերյալ: Հետևաբար՝ գրականագետի մեր քննախոյզ հայացքն ուղղում ենք հայ թատրոնի պատմությանը և փորձում հասկանալ անցյալում հաստատված գրական նախընտրություններն ու ձգտումները:

Հայ թատրոնի պատմությանը վերաբերող արժեքավոր աղբյուրներում մեր հայեցակարգին առնչվող համապարփակ և ամբողջական ձևակերպումների, փաստագրական լիարժեք ուսումնասիրությունների պակաս թերևս չկա:

Դիտելով 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ թատերական խմբերի խաղացանկերի վերաբերյալ ուսումնասիրությունները՝ կանգ ենք առնում մի իրողության վրա, որ այդ թատերախմբերն իրենց խաղացանկը երբեմն կառուցել են խմբի առաջատար դերասանների անձնական նախընտրությունների հիման վրա՝ առաջնորդվելով տվյալ դերասանի ստացած կրթության կամ փորձառության ազգային առանձնահատկություններով: Այսինքն, եթե խմբի առաջատար դերասանը՝ որպես ստեղծագործող, իր ճանապարհը սկսել էր եվրոպական թատերական և գրական միջավայրում, ապա նրա խաղացանկում գերա-

* ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուս գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, athanesyan@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 01.11.2023, գրախոսելու օրը՝ 20.11.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

կշռում էին այդ գրականության նմուշները, իսկ եթե ռուսական միջավայրում էր սկսել, ապա՝ ռուս գրականությունը:

Ռուս գրականությունը հայ թատերախմբեր ներմուծվել է մոսկովյան կամ պետերբուրգյան թատերական կրթօջախներում ուսումնառած առաջատար գործիչների նախաձեռնությամբ, ովքեր վերադառնալով այնտեղից՝ զբաղվել են թատերախմբեր հավաքելու և բեմադրական աշխատանքների կազմակերպման գործով. «...Հայկական խաղացանկի պատկերը որոշում էին նաև իրենց՝ դերասանների անձնական նախասիրությունները, նրանցից շատերը (Գևորգ Պետրոսյան, Հովհաննես Աբելյան, Սաթենիկ Ադամյան, Գրիգոր Ավետյան, Օլգա Մայսուրյան) ռուսական կրթություն ստացած, ռուսական միջավայրին ծանոթ և այդ միջավայրը պատկերելու ընդունակ մարդիկ էին, որոնք հաճախ լինում էին Մոսկվա և Պետերբուրգ, դիտում ռուսական թատրոնների ներկայացումները և նրանց խաղացանկի հայտնի պիեսները բերում հայ թատրոն» [1, էջ 35]:

Նրանց շնորհիվ հայ հանդիսատեսը հնարավորություն է ունեցել դիտել ռուս անվանի հեղինակների գործերի բեմադրությունները, մասնավորապես Չեխովի, Գորկու, Տոլստոյի, Նայդյոնովի, Պշիբիշևսկու, Օստրովսկու լավագույն ստեղծագործությունները:

Հիմնական նյութի շարադրանք

Տարբեր ժամանակներում հասարակական-քաղաքական զարգացումները գրականության մեջ և արվեստում հեղինակներին մղում էին նոր տիպի հերոսների որոնման: Հետևաբար՝ թատերական արվեստն անմիջականորեն մղվում էր դեպի գրականությունը՝ այնտեղ փնտրելով նորագույն ձևերով դրսևորվելու պայմանաձևերը: Նոր գրականության և խաղաձևերի օրինակներ եղան 20-րդ դարասկզբի դերասանուհիներ Քնարիկի և Սաթենիկ Ադամյանի՝ ռուս անվանի դերասանուհի Վերա Կոմիսարժևսկայայի խաղացանկից վերցված երկու դերերը: Բաքվում և Նոր Նախիջևանում բեմադրվեց Ա.Պ. Չեխովի «Ճայը», որտեղ Քնարիկը խաղաց Նինա Զարեչնայայի դերը, Նոր-Նախիջևանում՝ Օստրովսկու «Անօժիտը», որտեղ Լարիսայի դերը խաղաց Սաթենիկ Ադամյանը [1, էջ 124]:

Արդեն 1920-ականներին, խորհրդային կարգերի հաստատումից հետո, Երևան տեղափոխված արևմտահայ թատերական գործիչները փորձում են իրենց հետ բերել ոչ միայն թատերական այն մշակույթն ու ավանդները, որի կրողներն էին իրենք, այլև խաղացանկային ուղղվածությունն ու նախընտրությունները:

Օրինակ, 1922 թվականի հունվարի 25-ին բացված հայկական առաջին պետական թատրոնի անդրանիկ թատերաշրջանի խաղացանկում, ի թիվս հայկական և արևմտաեվրոպական գործերի, ընդգրկված էր նաև Մ. Գորկու «Հատակումը» (բեմադրիչ՝ Իս. Ալիխանյան) [2, էջ 19]:

Ռուս գրականության ստեղծագործությունների բեմադրություններն ավելի հաճախադեպ և, նույնիսկ, պարտադիր դարձան Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ կրելով արդեն գաղափարախոսական ուղղվածություն:

Անկախացումից հետո դրանք սկսեցին բեմադրվել ոչ միայն Երևանի, այլև

մարզերի տարբեր թատրոններում (Վանաձորում՝ «Երեք քույր», Ա.Պ. Չեխով, 1987, «Անմեղ մեղավորներ», Օստրովսկի, 1992, բեմադրիչ՝ Վ. Շահվերդյան):

Արդի հայ թատրոնի խաղացանկային նախընտրությունները դիտարկելիս ակնհայտ դարձավ, որ այսօր էլ ռուս դասական և ժամանակակից գրողների ստեղծագործությունները հայ թատերական գործիչների և հանդիսատեսի հետաքրքրությունների առանցքում են:

Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի խաղացանկում այսօր ընդգրկված են ինչպես դասական, այդ թվում՝ Ա. Չեխովի «Բալետնու այգին», Ա. Օստրովսկու «Բալզամինովի ամուսնությունը», Ալ. Պուշկինի «Եվգենի Օնեգին» և «Փոքրիկ ողբերգությունները», Ն. Գոգոլի «Վիհ», այնպես էլ ժամանակակից դրամատուրգների գործերը: Ժանրային այսպիսի բազմազանության նպատակն, անշուշտ, հայ հանդիսատեսին ռուս դասական և ժամանակակից գրականությանը ծանոթացնելն ու այն տարածելն է, ինչպես նաև գրական ճաշակի և նախընտրությունների ձևավորմանը նպաստելը:

Պատանի հանդիսատեսի թատրոնի խաղացանկում ընդգրկված Լ. Ռազումովսկայայի «Սիրելի Ելենա Սերգենևա» պիեսը, որը հեղինակի դեբյուտն էր 1982 թվականին և մեծ հետաքրքրություն առաջ բերեց ոչ միայն ավագ սերնդի, այլև երիտասարդների շրջանում: Պիեսն այսօր էլ բեմադրվում է արտասահմանյան տարբեր բեմերում: Այն արդիական է բոլոր ժամանակներում, որովհետև հեղինակը պիեսի սյուժետային պայմանաձևում դրել է սերունդների հակասությունը. պիեսում հակադրված են բարոյական կայուն արժեքներ և սկզբունքներ ունեցող մարդիկ և նրանք, ովքեր զուրկ են այդ հատկանիշներից, չունեն ոչ չափի, ոչ պատվի զգացում: Պատանի հանդիսատեսի թատրոնն այս հաղորդագրությունն էր դրել բեմադրության գաղափարային կառույցում (բեմադրիչ՝ Շ. Ղազարյան, 2022)՝ փորձելով պատանիներին ցույց տալ նման վարվելակերպի ողջ արատավորությունն ու անընդունելիությունը:

Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի բեմում, բացի մանկական ներկայացումներից, կարելի է դիտել նաև Ա. Չեխովի «Երեք քույր» դրամայի բեմադրությունը (բեմադրիչ՝ Ս. Մովսեսյան, 2020):

Ն. Գոգոլի «Ռևիզոր» կատակերգությունը հայ թատրոնում բեմադրական հարուստ ավանդույթ ունի: 1923 թվականին Ա. Բուրջայանն այն բեմադրել է Թիֆլիսի Հայ դրամայում, այնուհետև 1925 թվականին վերաբեմադրել նորաստեղծ Երևանի պետական թատրոնում (այժմ՝ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն), այնուհետև՝ Լենինականի (այժմ՝ Գյումրի) Ա. Մռավյանի անվան թատրոնում (1931) [3]:

2019 թվականին ռուս դասական գրականության ամենահայտնի և արժեքավոր ստեղծագործությունը՝ Ն. Գոգոլի «Ռևիզոր» կատակերգությունը, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում բեմադրել է Հ. Ղազանջյանը:

Ռուս գրականությունից ընտրված վերոնշյալ բոլոր ստեղծագործությունների ընտրության տրամաբանությունը, թերևս, կարելի է բացատրել բոլոր ժամանակներում կարևորագույն հայեցակարգի դրդապատճառով. համամարդ-

կային թեմաների ընդգրկունությամբ, որոնք արդիական են բոլոր ժամանակներում և բոլոր հասարակարգերում: «Մարդը մարդու մասին» բանաձևն է դրված գրականության և արվեստի նախահիմքում, և դրա շուրջն է կառուցվում և տեղի ունենում ամեն ինչ: Թեպետ տարիների ընթացքում փոխվել են հանդիսատեսի գեղարվեստա-գեղագիտական պահանջները, ինչպես արվեստում, այնպես էլ գրականության մեջ ի հայտ են եկել նոր արտահայտչաձևեր, նոր միտումներ, նույնիսկ՝ ուղղություններ (վավերագրական դրամա կամ *Teatr.doc*), սակայն նպատակն ու ասելիքը մնացել է նույնը. վեր հանել ժամանակակից մարդուն հուզող խնդիրները, մասնավոր օրինակով բարձրացնել հասարակական հնչեղության հարցերը: Այս համատեքստում այսօր գրականության մեջ առաջին պլան են բերվում թեմաներ, որոնք առնչվում են սոցիալ-քաղաքական, կրոնական, ազգային փոքրամասնությունների, ներգաղթի խնդիրներին: Առանձնակի ուշադրության կենտրոնում է դրվում սահմանային վիճակում գտնվող մարդը՝ իրեն հուզող առօրյա հոգսերով (Լ. Պետրուշևսկայա, Ն. Կոլյադա, Ե. Իսակա, Օ. Միխաիլովա և այլն):

Համաշխարհային գրականության մեջ ի հայտ եկած «նոր դրամա» (կամ նոր ալիք) ուղղությունն իր դրսևորումը գտավ նաև ռուս գրականության մեջ (Պավել Պոլյաժկո, Իվան Վիռիպակ, Եվգենի Գրիշկովեց, Վասիլի Սիգարև, Նիկոլայ Կոլյադա): 20-րդ դարավերջի իրականությանը բնորոշ է նոր գեղագիտական, ստեղծագործական նոր ձևերի որոնումները: «Նոր դրամա» այսպես են քննադատներն անվանում երիտասարդ դրամատուրգիան:

Ուղղության դրսևորման միջավայրը թատրոնն էր, սակայն կառուցվածքաբանական և թեմատիկ բոլորովին այլ պայմանաձևեր ենթադրող գրական այս ուղղությունը թատերական միջավայրում պետք է նոր արտահայտչակերպեր, դրսևորման այլ հարթականեր ենթադրեր: Ուստի սկսում են ի հայտ գալ թատերական նոր հարթակներ, մասնավորապես՝ Մոսկվայում հիմնվում է «*Teatr.doc*» էքսպերիմենտալ հարթակը, որտեղ խաղացվում են բացառապես այս ժանրին հարող պիեսներ:

Հայկական իրականության մեջ՝ ռուս նոր գրական ուղղության դրսևորումներ նույնպես եղան, որոնք հետագայում տեղափոխվեցին թատերական հարթակներ: Օրինակ, նոր դրամայի վառ ներկայացուցիչներից մեկի՝ Վասիլի Սիգարևի «Ֆանտոմային ցավեր», «Արնախումի ընտանիքը» պիեսները բեմադրել է ռեժիսոր Գրիգոր Խաչատրյանը: 2020 թվականին երիտասարդ բեմադիր Ռավիթ Աբրահամյանը բեմադրել և խաղացել է Ի. Վիռիպակի «Թթվածին» և Ե. Գրիշկովեցի «+1» վավերագրական պիեսները: «Թթվածին» փաստավավերագրական դրաման Իվան Վիռիպակի ամենահայտնի պիեսն է, Մոսկվայի «*Teatr.doc*» էքսպերիմենտալ հարթակում բեմադրված աղմկահարույց ներկայացումներից մեկը: Այն իր գեղարվեստական կառուցվածքում ներառում է «նոր դրամա» ուղղությանը բնորոշ բոլոր բաղադրատարրերն ու գաղափարադրույթները: «Նրա հերոսները գոյաբանական միայնակության զգացումով տառապողներն են, ովքեր կորցրել են ապրելու իմաստն ու աստվածատուր հավատը» [4, էջ 30]:

Երիտասարդ բեմադրիչը, հավատարիմ մնալով հեղինակային տեքստի ինչպես գրական, այնպես էլ արտահայտչական սկզբունքներին, բեմում պատկերել էր մարդու, ով ինքն իր հետ ունեցած կոնֆլիկտը լուծել չկարողանալու պատճառով սկսում է պատմել մեկ ուրիշի՝ իր ընկերոջ և նրա կնոջ պատմությունը: Աստվածաշնչյան պատվիրաններից մեջբերումներ անելու միջոցով լարում է իրավիճակն ու է՛լ ավելի սրում կոնֆլիկտը: Սա պոստմոդեռնիստական արտահայտչակերպին հարող հնար է: Բեմադրությունն էլ իր բոլոր լուծումներով այդ ուղղության տիպիկ օրինակը կարելի է համարել:

Եզրակացություն

Վերլուծելով ժամանակակից գրականության թատերական դրսևորման գեղագիտությունը հայ իրականությունում, հանգում ենք այն եզրակացության, որ ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից պիեսներ բեմադրելիս թատերական գործիչները առաջնորդվում են ոչ թե ավանդական դարձած ձևերով և զանազան հնարներով, այլև լայնորեն օգտագործում են հանդիսանքային նոր ձևերը, համարձակորեն միաձուլում հրապարակային թատրոնի և ժողովրդական թատրոնի արտահայտչատարրերը, ներկայացումները կառուցում զվարճահանդեսի և երբեմն համերգային լուծումների տրամաբանությամբ: Քաջածանոթ են նորագույն ուղղություններին ու արտահայտչակերպերին և համարձակորեն կիրառում են դրանք իրենց աշխատանքներում:

Նպատակը մեկն է՝ հանդիսատեսին հետաքրքրել և մղել դեպի թատրոն, որտեղ նա կարող է տեսնել իր խնդիրներով ապրող և դրանց դեմ պայքարող մարդկանց, նույնիսկ եթե նրանք ապրել են մի քանի դար առաջ: Արդի հայ թատրոնում նկատելի է ժամանակակից գրականության ուղղություններին և հոսանքներին ակնդետ հետևելու ձգտումը, որի պտուղները մենք կարող ենք տեսնել ինչպես մայրաքաղաքային, այնպես էլ մարզային թատրոնների բազմազան և արդիականացված խաղացանկում:

Գրականություն

1. Հախվերդյան Լ. Հայ թատրոնի պատմություն (1901-1920). Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
2. Հայ սովետական թատրոնի պատմություն. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:
3. Հարությունյան Բ. Սովետահայ թատրոնի տարեգրություն, Գիրք 2. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:
4. Мещанский А., Савелова Л. Человек и действительность в драматургическом тексте И. Вырыпаева, Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов, 2020, т. 13, выпуск 7, с. 28-32.

References

1. Haxverdyan L. Hay t'atroni patmut'yun (1901-1920). Yerevan, HSSH GA hrat., 1980.
2. Hay sovetakan t'atroni patmut'yun. Yerevan, HSSH GA hrat., 1967.
3. Harutyunyan B. Sovetahay t'atroni taregrut'yun, Girq 2. Yerevan, HSSH GA hrat., 1969.
4. Meshanski A., Savelova L. Chelovek i dejstvitel'nost' v dramaturgicheskom tekste I. Viripaeva, Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki. Tambov, 2020, t. 13, vipusk 7, s. 28-32.

РУССКАЯ ДРАМАТУРГИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ТЕАТРЕ

АШХЕН АТАНЕСЯН*

Для цитирования: Атанесян, Ашкен. “Русская драматургия в современном армянском театре”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 167-172. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-167

Русская драматургия была включена в репертуар армянских театральных коллективов с момента зарождения армянского профессионального театра. Ее распространению способствовали ведущие армянские театральные деятели, получившие образование в московских или петербургских театральных училищах. Вернувшись, они занялись созданием театральных коллективов и организацией сценических работ. Со временем русские пьесы стали неотъемлемой частью репертуара армянских театров. Изучая репертуар современных армянских театров, мы не увидели недостатка в классических или современных образцах русской драматургии. Более того, нынешних молодых армянских театральных деятелей можно считать носителями новейшей российской литературной эстетики.

Ключевые слова: русская литература, репертуар, армянский театр, новая драма, спектакль, актер, документальный театр.

RUSSIAN DRAMA IN THE CONTEMPORARY ARMENIAN THEATER

ASHKHEN ATANESYAN*

For citation: Atanesyan, Ashkhen. “Russian drama in the contemporary Armenian theater”, *Journal of Art Studies*, N 2 (2023): 167-172. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-167

Russian drama has been included in the repertoire of Armenian theater groups since the birth of the Armenian professional theater. Its spread was facilitated by the leading Armenian theater figures who had studied at the Moscow or St. Petersburg theater schools. On their return, they engaged in the creation of theater groups and organization of stage work. Over time, Russian plays became an integral part of the repertoire of Armenian theaters. When studying the repertoire of the Armenian theaters of today, we saw no shortage of either classical or modern Russian plays. Moreover, the present-day young Armenian theater workers can be considered bearers of the latest literary aesthetics of Russia.

Key words: Russian literature, repertoire, Armenian theater, new drama, performance, actor, documentary theater.

* Доцент кафедры русской литературы факультета русской филологии ЕГУ, кандидат филологических наук, athanesyan@mail.ru. статья представлена 01.11.2023, рецензирована 20.11.2023, принята к публикации 01.12.2023.

* Associate professor at the Chair of Russian Literature of Yerevan State University, PhD in Philology, athanesyan@mail.ru. The article is submitted on 01.11.2023, reviewed on 20.11.2023, accepted for publishing 01.12.2023.

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ ՀՐԱԶՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԲԵՄԱԴՐԱԾ ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

Հղման համար. Առաքելյան, Ռուզաննա: «Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում Հրաչյա Ղափլանյանի բեմադրած հայ դասական կատակերգությունները»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 173-183. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-173

Թատերական գործիչ, բեմադրիչ Հրաչյա Ղափլանյանը Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում բեմադրել է թե՛ հայ ժամանակակից դրամատուրգների, թե՛ արտասահմանյան և թե՛ ազգային դրամատուրգիայի արդեն բեմական հարուստ կենսագրություն ունեցող ստեղծագործություններ: Այս հոդվածում քննության առնելով Հրաչյա Ղափլանյանի՝ Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազարը», Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալան», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» բեմադրությունները, մենք փորձել ենք ներկայացնել, թե նա ինչպես է բեմադրել հայ դասական թատերագրության լավագույն երկերը:

Բանալի բաներ¹ ակադեմիական թատրոն, ազգային դրամատուրգիա, պիես, ներկայացում, կատակերգություն, բեմադրիչ, բեմավիճակ:

Ներածություն

Բեմադրիչ Հրաչյա Ղափլանյանը Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում ընդհատումներով աշխատել է 1956-1988 թվականներին¹:

1960-ականներին, երբ վերանայվում էին հայ թատերական գործիչների (մասնավորապես՝ դերասանների ու ռեժիսորների) ստեղծագործական մոտեցումները, քննության էր առնվում պիեսների բեմական մեկնաբանության կերպը, կարևորվում էր թատրոնում ժամանակակից խնդիրներին անդրադառնալը՝ մայր թատրոնում սերնդափոխության շրջան էր:

1970-80-ական թթ. ընկած ժամանակահատվածում մայր թատրոնում բեմադրիչները հիմնականում նախապատվությունը տվել են հայ ժամանակակից դրամատուրգիային: Թատրոնում բեմադրվել են նաև Շեքսպիրի, Տոլստոյի, Օստրովսկու և արտասահմանյան այլ հեղինակների պիեսներ: Բեմադրությունների ցանկը թերթելիս տեսնում ենք, որ մայր թատրոնում այդ երկու տասնամյակում ազգային դրամատուրգիա շատ քիչ է բեմադրվել [1, էջ 599-603]:

Հ. Ղափլանյանը մտահոգված էր այդ խնդրով. «Ազգային թատրոնի խաղացանկի հիմքը պետք է լինի ազգային դասական և ժամանակակից դրամատուր-

* Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ, ruzanarakelyan91@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 01.09.2023, գրախոսելու օրը՝ 04.10.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

¹ Այս ժամանակահատվածում Հ. Ղափլանյանը զբաղվել է ստեղծագործական տարաբնույթ գործունեությամբ: Նա բեմադրություններ է հեղինակել Հայաստանի և արտասահմանյան թատրոններում, 1965-ին ընտրվել է Հայկական թատերական ընկերության նախագահ, 1966-ին արժանացել ՀՍՍՀ ժողովրդական արտիստի կոչման և ստեղծել «Բարեկամություն» թատրոնը, իսկ 1967-ին հիմնադրել Երևանի դրամատիկական թատրոն-ստուդիան: 1973-ին, 1977-1979 թթ. և 1986-ին նա ղեկավարել է մայր թատրոնը՝ որպես տնօրեն և գեղարվեստական ղեկավար:

գիան: Վաղուց մայր թատրոնի բեմում չկար հայ դասական դրամատուրգիայից գրեթե ոչ մի գործ», - հարցազրույցի ժամանակ ասել է նա [9, էջ 10]: Ուստի Ղափլանյանը մայր թատրոնում բեմադրում է նաև հայ դասական դրամատուրգիա:

Այս հոդվածում քննության առնելով ազգային պիեսների Ղափլանյանի բեմադրությունները, փորձել ենք պարզել, թե ինչպես է Ղափլանյանը բեմադրել հայ դասականների պիեսները և ինչու են այդ ներկայացումները մասնագետների կողմից արժանացել քննադատության, աշխույժ քննարկումների:

«Քաջ Նազար» հեքիաթ-կոմեդիայի բեմադրությունը

«Թատրոնը գրական արվեստ չէ (այդպիսին չի եղել նույնիսկ իմպրովիզացիոն թատրոնը), այլ գործողության արվեստ, և բեմադրական կարողությունը տեքստ հորինելը չէ, այլ տեքստի դրամատիկական պոտենցիալը հայտնագործելը, տեքստի խորքում կերպարների վարքագիծը հայտնաբերելը», - գրել է թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը՝ «Քաջ Նազար» ներկայացման մասին թատերախոսականում [13, էջ 23]: Դիտարկելով Ղափլանյանի՝ ազգային պիեսների բեմադրությունները, նկատելի է, որ դրանք որոշ մասով են համապատասխանում թատերագետի այս ձևակերպմանը: Ղափլանյանն իր այս ներկայացումներում տեղ-տեղ տեքստի հետ կատարած ազատ աշխատանքով է ներկայացել, ներմուծումներ արել, հեռացել պիեսից, տեղ-տեղ էլ կարողացել է «կերպարների վարքագիծը հայտնաբերել» և ստեղծել պատճառահետևանքային կապից բխող բեմական հավաստի գործողություն:

Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազարը» մայր թատրոնում բեմադրել է Արշակ Բուրջայանը (1924): Թատերագետները գրում են, որ պիեսի բեմադրությունը երկար տարիներ պլանավորել էր և Վարդան Աճեմյանը: Վերադառնալով ակադեմիական թատրոն՝ Ղափլանյանը 1977-ին ինքն է նախաձեռնում պիեսի բեմադրությունը:

Ղափլանյանը տեքստեր, կերպարներ է ներմուծել, դրամատուրգի ստեղծագործությունից հեռանալով, ըստ պիեսի, բեմական այլ պատում ներկայացրել, որը կազմված էր արագ, իրար հաջորդող, հորինված, երևակայական բեմավիճակներից: Ներկայացման մասին թատերախոսականներից ակնհայտ է դառնում, որ բեմադրությունը ձախողված է համարվել, արժանացել անողորմ քննադատությունների: Ղափլանյանի կողմից կերպարների ներմուծմանը և տեքստերի հավելումներին անդրադառնալով՝ Հովհաննիսյանը գտնում է, որ դրանք դրության մեջ չէին հասկացվում²:

Խաչատուր Ավագյանը «Քաջ Նազարը» համարել է էպիկական թատրոնին բնորոշ վճիռներով ներկայացում [Հմմտ. 2, էջ 27]: Լևոն Հախվերդյանն էլ, դիտողությունների արժանացնելով ներմուծումները, ակադեմիական թատրոնին անհարիր է համարել պարային գրավիչ ելույթները ևս [Հմմտ. 10, էջ 34]:

Մասնագետները տարակարծիք են եղել նաև գլխավոր հերոս Նազարի՝ Խորեն Աբրահամյանի դերակատարման և մեկնաբանման վերաբերյալ: Հով-

² ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանի հետ զրույցից:

հաննիսյանը գրել է, որ Նազարին հատուկ որակներից բացի Աբրահամյանի կերպարն ունեցել է նաև մեկ այլ կարևոր հատկանիշ. «<...> ներքին, չբացահայտված ստորություն, որը հետո դրսևորման ասպարեզ է գտնելու: Իր այս տրամաբանությամբ Աբրահամյանի Նազարը համոզիչ է» [13, էջ 22]: Սակայն, դերակատարման մասին գրված շարունակության մեջ կարդում ենք, որ թատերագետը դերասանի և դերի անհամապատասխանություն է նկատում. «Նա այնուամենայնիվ հոգեբանական թատրոնի դերասան է, և ներկայացման էքսցենտրիկ-գրոտեսկային միջավայրում ձեռք չի բերում նախատեսվող տպավորությունը» [13, էջ 22-23]:

Լևոն Հախվերդյանը Քաջ Նազարը Խորեն Աբրահամյանի՝ այդ շրջանի լավագույն դերակատարումն է համարել. «Խ. Աբրահամյանի այս խաղը, դերասանի լավագույն աշխատանքը վերջին տարիներին, ենթարկված է ամուր ու մտածված տրամաբանության՝ որքան ավելի վեր փառքի ու իշխանության աստիճաններով, այնքան նվազ ծիծաղելի և ավելի ու ավելի վանող, ավելի դաժան ու սահմոկելի» [10, էջ 38]:

Բեմադրության մեջ հատուկ նպատակով կիրառվել են միկրոֆոններ, տեխնիկական տարբեր միջոցներ (ալեհավաք, ծայնի հաղորդիչ և այլն), որոնց գործածության մասին հիմնականում բացասական կարծիքների ենք հանդիպում: Այս մասին Բ. Հարությունյանը գրել է. «Ներկայացումը քաղաքականապես սրելու նպատակով ռեժիսորը չափից ավելի էր տարվել պայմանականությամբ՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկայի ընձեռած հնարավորությունները, կրկեսային հնարքները, կինոյի միջոցները» [11, էջ 348]:

Ականատեսների կարծիքները մեզ հուշում են, որ Ղափլանյանը բեմադրության մեջ հիմնականում կարևորել է զավեշտը, ծիծաղաշարժ դրությունները և քաղաքական հնչեղությունը:

Անդրադառնալով բեմադրիչի կատարած վերաձևակերպումներին և ներմուծումներին՝ Արտաշես Մարտիրոսյանը գտնում է, որ փոխելով կերպարների երկխոսությունների տեքստը նա նպատակ է ունեցել ծիծաղ առաջացնել և կապ ստեղծել հանդիսատեսի ու բեմի միջև [Հմմտ. 17, էջ 19]: Ինչպես թատերախոսն է նշում, այդ օրինակներից է Գոգ-Մագոգաց աշխարհում Նազարի իրականացրած հերոսությունները պատմող տեսարանի տեքստի հետևյալ փոփոխությունը.

«Նազար-Կոիվ եղավ Գոգ-Մագոգաց աշխարհքում:

Սաքո-ես էնտեղ եղել եմ, դու ասա:

Նազար-Սուտասան շան որդի, գնացի, գնացի, հասա...

Դահլիճից-Ո՞ւր

Նազար-Հարեշտարան:

Դահլիճից-Իյա:

Նազար-Ձահրումար» [17, էջ 19]:

Թատերախոսի կողմից բերված մեկ այլ օրինակ (սատկած ճանճերին վռնդելու տեսարանը) ևս վկայում է, որ բեմադրիչն, ասես, տեքստը խաղարկել է ու զավեշտական առատ բեմավիճակների հիմք դարձրել: Այս տեսարանում, ինչպես գրում է Մարտիրոսյանը, Քաջ Նազարը Դեմիճյանի գրած «Հը՞, սատ-

կեցիք, դե գնացեք» նախադասության փոխարեն ճանճերին է դիմել հետևյալ խոսքերով. «Հը, սատկեցիք, հա՛, դե ուղի ըլեք», որին հաջորդել է սատկած ճանճին կերպավորող դերասանի շարժվելը [Հմմտ. 17, էջ 19]:

Խորհրդանշական է եղել ներկայացումն ավարտող տեսարանը, որը նկարագրված է Հախվերդյանի հոդվածում. «<...> Քաջ Նազարի խորտակումից հետո բեմի խորքից ընդառաջ է գալիս դատարկ գահը և պալատական ամբոխը նույն ոգևորությամբ գոչում է. «Կեցցե՛ Քաջ Նազարը... Կեցցե՛ Քաջ Նազարը»» [10, էջ 38]: Այս պատկերից պարզ է դառնում, որ ժողովուրդը շարունակելու է նազարներ հայտնաբերելը և դատարկ գահին բազմեցնելը: Բեմադրիչը, կարծես, այս տեսարանով ընդգծել է նազարների հարատևությունը:

«Խաթաբալախի» բեմադրությունը

Սունդուկյանի «Խաթաբալա»-ին Ղափլանյանը մայր թատրոնում երկու անգամ է անդրադարձել՝ 1978 և 1987 թթ.: Այս պիեսը հայ թատրոնում երկար ճանապարհ է անցել: Մինչ Ղափլանյանը, այն բեմ է բարձրացել Արմեն Գուլակյանի (1927 և 1945) և Թադևոս Սարյանի (1940) բեմադրությամբ:

Հատկանշական է այն, որ Ղափլանյանի այս բեմադրության մեջ, որպես կենտրոնական հերոս, ներկայացել է նաև Մարգրիտը: Ականատեսները նշում են, որ բեմադրիչն այնպիսի բեմավիճակներ է ստեղծել, որտեղ հերոսուհին հնարավորություն է ունեցել ներկայանալ իր զգացմունքներով, մտածելակերպով ու նախասիրություններով: Օրինակ, տեսարաններ, որտեղ նա գիրք կարդալով ու ինքնակրթությամբ տարված է ներկայացել կամ տնային տարբեր գործեր կատարել: Թատերախոսը գրում է, որ այս Մարգրիտը հասարակ կյանքով ապրելու մասին է երազել. «<...> երազում է հասարակ բախտ և հասարակ ամուսին, սիրում է հորը, հոգ է տանում իր տկար («բեհալ») մոր նկատմամբ, պատրաստ է ծառայելու բոլորին <...>» [12, էջ 4]:

Այսինքն, Ղափլանյանը կարևորել է ոչ միայն հոր, այլև՝ դստեր կերպարները և բեմական մտահղացումը նրանց շուրջ կառուցել. «Ղափլանյանն առանձնապես աշխատել է հոր և աղջկա կերպարների վրա և ճիշտ է վարվել, որովհետև հենց այս երկուսի վրա է ծանրացել ավանդույթի բեռը», - անդրադառնալով բեմադրիչի այս մոտեցմանը՝ գրել է Հովհաննիսյանը [12, էջ 4]:

Միեր Մկրտչյանի Չամբախովը ներկայացել է աղջկան ամուսնացնելու գլխավոր խնդրով և ամբողջ եռանդով փորձել է գործը հաջողել: Նա ծանր ապրումների ու հոգսի բեռան տակ կքած հայր է եղել, ապա նոր ներկայացել որպես վաճառական: Հանդիսատեսն այս Չամբախովի կողմից հայրական ջերմություն է տեսել դստեր հանդեպ: Չամբախովը ֆրակով է եղել, չնչին գրիմով:

Դերակատարումը նկարագրող կարևոր տեսարաններից մեկն է համարվել աղջկա երկրպագուի մասին լուրը լսած հոր և դստեր հանդիպման տեսարանը, որը Արաքսմանյանը բեմադրիչի «գյուտն» է համարել. «Հուսավառված հոր մի երկար մնջախաղ է, մի՞թե իսկապես տանը մնացած աղջկա ցավից պիտի պրծնի: <...> Չամբախովը նրան ծնկներին է նստեցնում, շոյում ու համբուրում» [5, էջ 4]:

Ներկայացման մասին հրապարակումների հեղինակները գտել են, որ Մկրտչյանի Չամբախովյն Ավետ Ավետիսյանի դերակատարումից հետո ստվերում չի եղել, հաջողված է եղել և արդեն էներգետիկ նոր ուժով հանդիսատեսին գրավել:

Հ. Հովհաննիսյանը դերակատարման կարևոր դետալներ է գրառել, որոնք արտահայտում են Չամբախովի կերպարի մտատանջությունները. «<...> փեսայի տանը լուռ, բոպեական մտորումի մեջ, ձեռնափայտով նախշեր է քաշում հատակի վրա, երբ, թաքնված պատի տակ, իբրև թե աֆիշ է կարդում, կամ գրամաֆոնի մոտ, աչքերը կիսափակ, լուռ է (իրականում չի լուռ) իտալական մոդայիկ արիան <...>» [12, էջ 4]:

Թատերախոսականներում Չամբախովի նման մեկնաբանությունը մասնագետների հավանությանն է արժանացել:

Կերպարի ներկայացման բարձրակետերից մեկը եղել է ավարտական տեսարանը: Դրա մասին Ս. Բարսեղյանը գրում է, որ այն ողբերգական շեշտադրում է ունեցել: Վարդուհի Վարդերեսյան-Մարգրիտը, այլևս անկարող հանդուրժել նման նվաստացումը, դեն է նետել հարսանեկան քողը, կոշիկները և սարսափած փորձել դուրս սլանալ [Հմմտ. 18, էջ 4]:

Ներկայացումն ավարտող տեսարանում Ղափլանյանը բեմառաջք է բերել Չամբախովին և Մարգրիտին: Այնուհետև դերասաններին խնդիր է տվել հերոսների մենախոսությունները միաժամանակ արտաբերելու: Այս վճիռն Արաքսմանյանի քննադատությանն է արժանացել. «Այսպես մի կողմից Մարգրիտն է կորցնում իր հուզաթաթավ խոսքի ուժը, մյուս խողմից Չամբախովը՝ ինքնամերկացման պաթոսը» [5, էջ 4]: Ղափլանյանը մինչ այս ներկայացումը նման վճռով էր բեմադրել և Երևանի դրամատիկական թատրոնի «Անուշ» ներկայացման (1969) ավարտական տեսարանը, որտեղ երիտասարդ հերոսները միաժամանակ մենախոսում էին: Բեմադրիչը նախընտրում էր նման կոմպոզիցիա-բեմավիճակները, քանզի դրանք ավելի հուզական էին, տպավորիչ, ազդեցիկ:

Ներկայացումը դերասանական երկու կազմով է եղել: Արդեն անվանի դերասաններին փոխարինող երկրորդ կազմը բաղկացած է եղել երիտասարդներից:

Ռուբեն Չարյանի կարծիքով՝ բեմադրիչը հարել է տրագիկոմեդիայի. «Նա ստեղծել է թատերական հանդիսանք, գունեղ, վառվռուն, սրամիտ, դրամատիկական և զավեշտական պահերով լի մի ներկայացում» [7, էջ 32]:

Այս բեմադրության մեջ Ղափլանյանը սրել է սոցիալական ուղղվածությունը:

1987 թվականին երկրորդ անգամ բեմադրելով «Խաթաբալան»՝ Ղափլանյանն ավելի խորքային է անդրադարձել պիեսին (փոխվել են գլխավոր դերակատարները, սակայն բեմական մտահղացումը հիմնականում անփոփոխ է եղել) ու ստեղծել թատերային, հիշվող ներկայացում:

Հովակ Գալոյանի Չամբախովը խորամանկ ու վտանգավոր մարդ է ներկայացել, ով իր տեսակով հակված է եղել ավելի ու ավելի խորացնել իր հմտությունները, գերազանցել իր նմաններին ու մեծ ոգևորությամբ շարունակել գործարքն ավարտին հասցնելը:

Ռուզան Գասպարյանի Մարգրիտը բոլորովին այլ նկարագիր է ունեցել: Ներսես Կագրամանովը գրում է, որ նա ներկայացել է իր տգեղության փաստի

հետ հաշվի նստած ու ամբողջական գիտակցումով: Եղել է ժպտերես ու հեզ, սակայն ներկայացման վերջին տեսարանում նա ևս, ինչպես Վարդուհի Վարդերեսյանի Մարգրիտը, դեն է նետել երեսի քողը: Ըստ թատերագետի՝ նա դա արել է զայրույթով լի ու հանուն իր հպարտության [Հմմտ. 20, էջ 4]:

Լորենց Առուշանյանի Գևորգ Մասիսյանցը և Մետաքսյա Սիմոնյանի Նատալիան, բացի որոշ դիտողություններից, հիմնականում մասնագետների դրական գնահատականին են արժանացել:

Ներկայացման մեջ առկա են եղել հակադրություններ. «Ճշմարիտ ու կեղծ արժանիքների համադրումը, արտաքին-փայլվիլուն և իսկական, մարդկային գեղեցկության հակադրումն է իմաստավորում դիտարկվող բեմադրությունը, նրան հաղորդում արդիական սուր հնչողություն ու հետաքրքրություն», - գրել է Խաչատուր Ավագյանը [3, էջ 4]:

Ներկայացման մասին իր «Ի՞նչ է նշանակում այս կոմեդիան» հոդվածում ամփոփ պատկերացում է տալիս թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը. «Բեմադրությունն իր հապճեպ, շտապողական ընթացքով, անօրգանական տեմպադիթով, խճողված երկաթե ճեղքակալով, ավելորդ հարթակներով (նկարիչ՝ Ս. Արուսյան), թանկարժեք զգեստներով ստեղծում է արտաքին, որպես թե թատերային մի պատկեր, որտեղ իրականությունն ու միջավայրն ակնարկող քիչ թե շատ բնութագրական նշաններ չկան» [14, էջ 27]:

«Մեծապատիվ մուրացկաններ» բեմադրությունը

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակը բեմադրվել է մի քանի անգամ: Առաջին բեմադրությունը հեղինակել է Արմեն Գուլակյանը (բեմականացումը՝ Վ. Թոթովենցի և Մ. Ջանանի, 1928), այնուհետև՝ Գարիկ Մուշեղյանը (1934), ապա՝ Վարդան Աճեմյանը (բեմականացումը և բեմադրությունը՝ Վ. Աճեմյան, 1941):

1986-ին այն բեմականացրել ու բեմադրել է Հրաչյա Ղափլանյանը:

Ներկայացման մասին «Թատերական Երևանին» տված հարցազրույցում Հ. Ղափլանյանը հայտնել է, որ բեմադրության մեջ ներգրավել է թատրոնի երեք սերնդի դերասանների՝ ստեղծել մասշտաբային բեմադրություն ու փորձել ընդհանրացված ներկայացնել սփյուռքահայությանը՝ առհասարակ [Հմմտ. 9, էջ 11]:

«Ինչու էր տխուր Պարոնյանը» հոդվածում Հենրիկ Հովհաննիսյանը քննադատում է բեմադրիչին, որ նա չի հասկացել և ելակետ չի դարձրել մտավորականների գումար մուրալուն զուգահեռ աղային ծաղրի ենթարկելը. «Բոլորը՝ դերասան, խմբագիր, բանաստեղծ, բժիշկ կամ ուսուցիչ, հաճոյանում են չնչին արժեքի մի մարդու և մեկ առ մեկ հեզնում ու ոչնչացնում նրան: Սա գրվածքի ենթատեքստում է, որ չի նկատել բեմադրողը» [15, էջ 56]:

Ներկայացման մեջ կարևոր դեր են ունեցել հերոսների պերճաշուք զգեստները, տեղի ունեցող գործողությունների պայմանական վայրերը, երկհարկանի, պատշգամբով ու աստիճանասանդուղքով բնակարան կամ նավահանգիստ ներկայացնող բեմի ձևավորումը (Եվգենի Սաֆրոնով), Մարտին Վարդազարյա-

նի հեղինակած երաժշտությունը, որի ակտիվ ակորդները, ռիթմերը լրացրել ու ամբողջացրել են բեմադրության ընդհանուր կերպարը:

Էվոյանը նկարագրում է վարագույրը բացվելուց հետո հանդիսատեսին ներկայացվող բեմավիճակը. «Բեմը հիշեցնում է մի ահռելի ցուցափեղկ, որտեղ կապտավուն լուսաստվերային ֆոնում տարբեր դիրքերով արձանացած են, ասես մանեկեններ, 19-րդ դարի զգեստավորմամբ մարդիկ» [8, էջ 4]:

Կարևորվել է առաջին տեսարաններից Աբխոզում աղայի (Շահում Ղազարյան)՝ նավահանգիստ ժամանելու տեսարանը, որտեղ նրան բազմություն է սպասել: Արծվի Հունանյանը տալիս է դրա պատկերավոր նկարագրությունը. «Հասարակ ու հնաոճ շորերով, սև, թավ հոնքերով և նույնափսի բեղերով այս անտաշ մարդը նոր, իրեն բոլորովին խորթ միջավայրում ազգագրական թանգարանից բերված էքսպոնատի տպավորություն է թողնում» [16, էջ 40]:

Բեմադրության մասին կարծիքներ կարողալիս տպավորություն է ստեղծվում, որ ներկայացումը թատերական մի տոն է եղել, իսկ հերոսները՝ տոնահանդեսի մասնակիցներ: Օրինակ, Խ. Ավագյանը գրում է, որ բեմադրությունում «թատրոն» են խաղացել բոլոր առումներով. ««Թատրոն» է՝ դեպքերի ամենամասնապասելի դարձդարձումներով, խաղի տարերքով ու իներցիայով...» [4, էջ 3]:

Մուրացկանների մասին թատերագետները տարբեր կարծիքներ են հրապարակել: Հ. Հովհաննիսյանի կարծիքով՝ բեմադրիչի մտահղացումը հնարավորություն չի տվել պարզելու, թե ովքե՞ր են աղքատները և ովքե՞ր՝ հարուստները. «Դրամ են շորթում մարդիկ, որոնք, չի երևում, թե դրամի կարիք ունեն» [15, էջ 55]:

Վարսիկ Գրիգորյանը նկատում է, որ բեմադրիչը մուրացկաններին, ասես, խմբերի է բաժանել և տարբերակել խարդախ մուրացողներին՝ կարիքից դրդված մուրացողներից. «Դերասանի ու Վարժապետի թեման մշակելիս նա հանդես է բերում ոչ միայն մեղմ, բարի հումոր, այլև՝ դրամատիկ երանգներ» [6, էջ 3]:

Տարբեր թատերախոսներ նշում են, որ դերասաններից յուրաքանչյուրը տարված է եղել իր հերոսին մտահոգող որևէ խնդրով ու ռեժիսորական առաջադրանքով, ինչն էլ, իր հերթին, օգնել է կերպարները հավաստի ու տպավորող ներկայացնելուն:

Նկարագրելով Գ. Կարագյոզյանի (Ղարագյոզյան)՝ Դերասանի դերակատարումից մի հատված, Ս. Էվոյանը փաստում է, որ ներկայացման մեջ մուրացկաններն Աբխոզումի մոտ այլ կերպարով են ներկայացել, իսկ դրամ կորզելուց հետո՝ դառնացած ու նվաստության գիտակցումով. «Անգրագետ, բայց հարուստ Աբխոզում աղայից նվաստացմամբ փող կորզելուց հետո դերասանի դեմքն անմիջապես փոխվում է: Եռանդուն, հրճվալի արտահայտությանը փոխարինում է անսահմանորեն հոգնած ու սմքած մի դեմք: Գլուխը հետզհետե խոնարհվում, ձեռքը դանդաղ բարձրանում և իրար են հպվում արվեստագետի տառապալից դեմքն ու փայլուն ոսկին» [8, էջ 4]:

Ղափլանյանը բեմականացման ժամանակ ներմուծել է Պարոնյանի այլ ստեղծագործություններից դրվագներ, մեջբերումներ՝ դրանցով ավելի պատկերավոր ու կենդանի դարձնելով հերոսներին:

Արծվի Հունանյանը գրում է, որ վիպակի հերոս Դերասանի տեքստում Ղափլանյանը բեմականացման ժամանակ հավելում է արել, ըստ որի, Շեքսպի-

րի Օթելլոյի «փաթթոցավոր չարագործ տաճիկ» խոսքերի փոխարեն Գ. Կարագյուզյանն արտասանել է. «<...> մի օր Վենետիկում մի փաթթոցավոր թուրք հայհոյում էր մեր տերությունը <...>»: Հունանյանն այս միջամտությունը բեմադրիչի «գյուտն» է համարել և ընդգծել, որ այդ տողերը միջոց դարձնելով մեծապատիվ մուրացկան Դերասանն Աբիսողոմի հայրենասիրական ոգին է արթնացրել և հաջողության հասնելով ոսկի կորգել [Հմմտ. 16, էջ 42-43]:

Ներկայացման մեջ հաջողված են եղել նաև կանանց խմբավորված հատվածները, որոնց ժամանակ նրանք բամբասել են, նաև կավատի ու խոսք տանող-բերողի ռեժիսորական խնդիր են կատարել:

Կանանց տեսարանների մասին Էվոյանի հոդվածից տեղեկանում ենք, որ ներկայացման մեջ Ղափլանյանը մշակելով «Քաղաքավարության վնասները» նովելների կանանց կերպարները՝ դրանց հիման վրա հարակից սյուժետային գիծ է զարգացրել, որը, սակայն, բեմադրության վերջնական տարբերակում կրճատումների է ենթարկվել [Հմմտ. 8, էջ 4]:

Ղափլանյանը, ինչպես Էվոյանն է գրում, այդ մոտեցմանը հարել է տարբեր մասնագետների կարծիքները հաշվի առնելով և վերջնական տարբերակում հիմնականում սևեռվել է մտավորականության վիճակը ներկայացնելու վրա. «Հաշվի առնելով մասնագետների շրջանում գերիշխող կարծիքը՝ բեմադրիչը փոփոխել է շեշտադրումները ներկայացման մեջ: Կրճատվել են «կանանց» և ընդգծվել «գրական մարդոց դրության» վերաբերող որոշ տեսարաններ» [8, էջ 4]:

Ներկայացումն ավարտվել է խորհրդանշական ու գաղափարական ուղղվածությունը շեշտող զավեշտալի բեմավիճակով: Ինչպես Ավագյանն է նկարագրում, մեկ այլ մուրացկան, պահանջելով իրեն հասանելիք ոսկին ու չստանալով այն՝ արցունքն աչքերին անիծել է աղային. «Վարժապետ՝ տ ըլլաս...» գոչելով: Անեծքից ահաբեկված աղան մուրացկանին է պարզել ոսկիները. «Աբիսողոմը պատրաստ է ամեն ինչի, բայց ոչ սրան՝ վարժապետի և այլոց վիճակի մեջ ընկնելուն, մեծապատիվ մուրացկան դառնալուն...», - գրում է Ավագյանը [4, էջ 3]:

«Կոմունիստ» թերթում հրապարակված հոդվածում կարդում ենք, որ ներկայացման գտնված մի շարք ծիծաղաշարժ վճիռների կողքին եղել են նաև չմշակված պարային տեսարաններ, որոնք պետք է ներկայացվեին ավելի թատերային ու պլաստիկ լուծումներով [Հմմտ. 19, էջ 4]:

Դերասանական կատարումներն ու բեմադրիչի վառ երևակայությունից ծնված բեմավիճակները ներկայացումը հաջողված են դարձրել: Բեմադրության մեջ կարևորված են եղել աղայից գումար խնդրող մարդկանց՝ ամեն գնով դրամ կամ ոսկի կորգելու պատրաստակամությունը և հանուն դրա գործադրած նրանց ճիգերն ու հնարամտությունները:

Եզրակացություն

Քննության առնելով Հրաչյա Ղափլանյանի երեք բեմադրությունները՝ մենք տեսնում ենք, որ մայր թատրոնում նա ազգային դրամատուրգիան բեմ է բարձրացրել իր սեփական պատկերացումներով, մշակումներով:

Կարևորելով հայ դասական դրամատուրգիայի առկայությունը թատրոնի

խաղացանկում, Ղափլանյանն ընտրել է իր ստեղծագործական նախասիրություններից բխող պիեսներ:

Բեմադրիչի համար այդ թատերագրությունների խաղային տարերքը, բեմում իրարանցում ունենալու առավելությունը, թատերայնությունն ազատ ու անկաշկանդ բեմական մտահղացումների իրագործման հնարավորություն էին: Վերոնշյալ ներկայացումներում, ինչպես արդեն համոզվեցինք, Ղափլանյանը բեմադրությունների մեջ հարելով տեմպառիթմային առույգության, շարժման թեթևության՝ չէր ունեցել բեմական դադարներ, անտեսել ու կորցրել էր խոհի մղող պահերը: Դա քննադատության պատճառներից էր: Սակայն ներկայացումների՝ քննադատության արժանանալու գլխավոր պատճառը, ինչպես Հենրիկ Հովհաննիսյանն է գտնում, բեմադրիչի՝ ստեղծագործության օբյեկտիվ բովանդակությանը հակառակ գնալն է եղել³:

Ղափլանյանի այս բեմադրությունները, որքան էլ աղմկահարույց էին ու վիճելի, այնուհանդերձ՝ Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի խաղացանկում են եղել երկար տարիներ:

Գրականություն

1. Առաքելյան Ս. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն-90. Երևան, «Լուսակն», 2012:
2. Ավագյան Խ. «Քաջ Նազարը» էպիկական թատրոնի հանդերձով, «Սովետական արվեստ», 1977, N 8, էջ 27-33:
3. Ավագյան Խ. Դասականի արդիականությունը, «Սովետական Հայաստան», 1987, 15 սեպտեմբերի:
4. Ավագյան Խ. Պարոնյանական երկի մի նոր ընթերցում, «Երեկոյան Երևան», 1987, 11 մայիսի:
5. Արաքսմանյան Ա. «Իսաթաբալան»՝ նորովի, «Սովետական Հայաստան», 1978, 18 մայիսի:
6. Գրիգորյան Վ. Տոնին հետամուտ, «Սովետական Հայաստան», 1987, 23 հունվարի:
7. Զարյան Ռ. Երբ ռեժիսորը իր երևակայության տերն է, «Սովետական արվեստ», 1978, N 4, էջ 31-39:
8. Էլոյան Ս. Նոր հանդիպում «Մեծապատիվների» հետ, «Ավանգարդ», 1987, 25 հունվարի:
9. «Թատերական Երևան». Նոր հայացքներ բեմադրական աշխատանքներին, 1987, N 2, էջ 10-15:
10. Հախվերդյան Լ. Ո՞վ է Քաջ Նազարը, «Սովետական արվեստ», 1977, N 8, էջ 34-39:
11. Հարությունյան Բ. Հայ սովետական թատրոն 1917-1977. Երևան, «Սովետական գրող», 1985:
12. Հովհաննիսյան Հ. Ավանդույթի հաղթահարման արգասիքը, «Գրական թերթ», 1978, 19 մայիսի:
13. Հովհաննիսյան Հ. Երբ թատերային ձևը փնտրում են դրամատուրգիական բովանդակությունից դուրս, «Սովետական արվեստ», 1977, N 8, էջ 21-26:
14. Հովհաննիսյան Հ. Թատրոն և թատերախոսություն. Երևան, «Սարգիս Խաչենց», 2004:
15. Հովհաննիսյան Հ. Ինչու էր տխուր Պարոնյանը, «Գարուն», 1988, N 9, էջ 54-56:
16. Հունանյան Ա. Վառ թատերային ներկայացում. Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, «Սովետական արվեստ», 1987, N 10, էջ 40-43:
17. Մարտիրոսյան Ա. «Քաջ Նազարի» փրկիստիպայությունը, «Սովետական արվեստ»,

³ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի հետ զրույցից:

1977, N 8, էջ 16-21:

18. Барсегян С. И снова «Хатабала», «Коммунист», 1979, 20 октября.
19. Даронян С. Вечно живая классика, «Коммунист», 1987, 20 января.
20. Каграманов Н. Хатабала, «Коммунист», 1987, 26 июля.

References

1. Araqelyan S. Sundukyani anvan azgayin akademiakan t'atron-90. Yerevan, «Lusakn», 2012.
2. Avagyan X. «Qaj Nazary» e'pikakan t'atroni hander'd'ov, «Sovetakan arvest», 1977, N 8, e'j 27-33.
3. Avagyan X. Dasakani ardiakanut'yuny', «Sovetakan Hayastan», 1987, 15 septemberi.
4. Avagyan X. Paronyanakan erki mi nor y'nt'ercum, «Erekoyan Yerevan», 1987, 11 mayisi.
5. Araqsmanyani A. «Xat'abalan»` norovi, «Sovetakan Hayastan», 1978, 18 mayisi.
6. Grigoryan V. Tonin hetamut, «Sovetakan Hayastan», 1987, 23 hunvari.
7. Zaryan R'. Erb r'ejhisory' ir erevakayt'yan tern e', «Sovetakan arvest», 1978, N 4, e'j 31-39.
8. E'voyan S. Nor handipum «Mec'apativneri» het, «Avangard», 1987, 25 hunvari.
9. «T'aterakan Yerevan». Nor hayacqner bemandrakan ashxatanqnerin, 1987, N 2, e'j 10-15.
10. Haxverdyan L. O'v e' Qaj Nazary', «Sovetakan arvest», 1977, N 8, e'j 34-39.
11. Harut'yunyan B. Hay sovetakan t'atron 1917-1977. Yerevan, «Sovetakan grogh», 1985.
12. Hovhannisyan H. Avanduyt'i hagh't'aharman argasiqy', «Grakan t'ert'», 1978, 19 mayisi.
13. Hovhannisyan H. Erb t'aterayin d'zeyv' p'ntrum en dramaturgiakan bovandakut'yunic durs, «Sovetakan arvest», 1977, N 8, e'j 21-26.
14. Hovhannisyan H. T'atron ev t'ateraxosut'yun. Yerevan, «Sargis Xachenc», 2004.
15. Hovhannisyan H. Inchow e'r txur Paronyany', «Garun», 1988, N 9, e'j 54-56.
16. Hownanyan A. Var' t'aterayin nerkayacowm. H. Paronyani «Mec'apativ murackan-neri» G. Sundukyani anvan t'atronum, «Sovetakan arvest», 1987, N 10, e'j 40-43.
17. Martirosyan A. «Qaj Nazari» p'ilisop'ayut'yuny', «Sovetakan arvest», 1977, N 8, e'j 16-21.
18. Barsegjan S. I snova «Hatabala», «Kommunist», 1979, 20 oktyabrya.
19. Daronjan S. Vecho zhivaya klassika, «Kommunist», 1987, 20 yanvarya.
20. Kagramanov N. Hatabala, «Kommunist», 1987, 26 iyulya.

АРМЯНСКИЕ КЛАССИЧЕСКИЕ КОМЕДИИ В ПОСТАНОВКЕ ГРАЧЬЯ КАПЛЯНЯНА В АКАДЕМИЧЕСКОМ ТЕАТРЕ ИМЕНИ Г. СУНДУКЯНА

РУЗАННА АРАКЕЛЯН*

Для цитирования: Аракелян, Рузанна. “Армянские классические комедии в постановке Грачья Капляняна в Академическом театре имени Г. Сундукяна”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 173-183. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-173

В театре им. Г. Сундукяна Грачья Каплянян, наряду с произведениями известных драматургов мировой классики, ставил пьесы из армянской драма-

* Соискатель кафедры Истории и теории искусства Ереванского государственного института театра и кино, guzanarakelyan91@gmail.com, статья представлена 01.09.2023, рецензирована 04.10.2023, принята к публикации 01.12.2023.

тургии. В статье рассматриваются спектакли «Храбрый Назар» Дереника Демирчяна (1977), «Хатабала» Габриела Сундукяна (1978) и «Высокочитимые попрошайки» Акопа Пароняна (1986). В результате анализа мы пришли к заключению, что постановки Г. Капланяна по произведениям армянских драматургов отличаются ярким воображением, самобытностью и смелыми решениями. Он свободно редактировал текст, включая отрывки из других произведений данного автора. Постановки режиссера были спорны, критики высказывали противоречивые мнения.

Ключевые слова: академический театр, национальная драматургия, пьеса, спектакль, комедия, постановщик, сценическое состояние.

THE STAGE PRODUCTIONS BY HRACHYA GHAPLANYAN OF ARMENIAN CLASSICAL COMEDIES AT THE G. SUNDUKYAN STATE ACADEMIC THEATRE

RUZANNA ARAKELYAN*

For citation: Arakelyan, Ruzanna. "The stage productions by Hrachya Ghaplanyan of Armenian classical comedies at the G. Sundukyan State Academic Theatre", *Journal of Art Studies*, N 2 (2023): 173-183. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-173

At the G. Sundukyan State Academic Theater, the prominent stage director Hrachya Ghaplanyan, along with the well-known works by famous playwrights of the world classics, staged plays from both classical and modern Armenian drama. The article considers Hrachya Ghaplanyan's productions of "Nazar the Brave" by Derenik Demirtchyan, "Khatabala" by Gabriel Sundukyan, "The Honorable Beggars" by Hakob Paronyan. The conducted study reveals that H. Ghaplanyan's creative methods and approaches stand out for their originality and bold solutions. He freely edited the texts, in particular, including excerpts from other works by the given author. His stagings were controversial, critics expressed conflicting opinions.

Key words: Academic theatre, national drama, play, performance, comedy, theatre director, situation.

* Applicant at the Chair of History and Theory of Arts of Yerevan State Institute of Theater and Cinematography, ruruzanarakelyan91@gmail.com. The article was submitted on 01.09.2023, reviewed on 04.10.2023, accepted for publication on 01.12.2023.

ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՈՒՄ

ՌՈՒԶԱՆ ԱՆԱՆՅԱՆ*

Հղման համար. Անանյան, Ռուզան: «Ռաֆայել Շիշմանյանի կերպարը հայ կերպարվեստում»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 184-191. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-184

Հոդվածում անդրադարձ է արվում գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի (1885-1959) կերպարին՝ ստեղծված մեծանուն արվեստագետների կողմից:

Մինչ 1947 թ. ապրելով օտար ափերում, այնուհետև վերադառնալով հայրենիք՝ Շիշմանյանը ստեղծել է ինքնատիպ գեղանկարչական աշխատանքներ, զբաղվել տեսական գործունեությամբ, ծավալել հասարակական և հայանպաստ գործունեություն: Շիշմանյանի կերպարին անդրադարձել են արվեստի նշանավոր ներկայացուցիչներ՝ թողնելով հայ կերպարվեստի համար նշանակալից գործեր: Դրանք թե՛ իրենց գեղարվեստական և թե՛ վավերագրական առումով մեծ հետաքրքրություն են առաջացնում արվեստասեր հասարակայնության շրջանակներում:

Մեր նյութում անդրադարձ է կատարվում Ռաֆայել Շիշմանյանի՝ որպես մտավորականի կերպարին, ուսումնասիրվում իրեն պատկերող արվեստի ստեղծագործությունները, բերվում վերլուծական խոսք՝ նշելով գործերի առանձնահատկությունները: Հայագրի արվեստագետների կողմից Շիշմանյանին ներկայացնող ստեղծագործությունները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Փարիզի Նուբարյան գրադարանում և մասնավոր հավաքածուներում:

Բանալի բառեր՝ Ռաֆայել Շիշմանյան, կերպար, արվեստագետ, դիմանկար, արձան, գեղանկարիչ, արվեստաբան:

Ներածություն

Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, գեղանկարիչ, արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի (1885-1959) ստեղծագործական, տեսական և հասարակական գործունեության մասին առ այսօր չկա ամփոփ աշխատություն: Սակայն լինելով իր ժամանակի բացառիկ հեղինակություններից մեկը՝ Շիշմանյանին մասնակի անդրադարձել են մի շարք տեսաբաններ, իսկ առավել հետաքրքրականը՝ նաև արվեստագետներ՝ ստեղծելով գեղարվեստական արժեք ունեցող գործեր: Շատերին դեռևս անձանոթ այդ ստեղծագործությունները բացահայտում են Շիշմանյանի կրթյալ քաղաքացու կերպարը:

Չնայած այն հանգամանքին, որ շատ չեն այն գործերը, որոնցում ներկայացված է Ռաֆայել Շիշմանյանը, բայց եղածն էլ բավական հետաքրքրական և ճանաչողական բնույթ է կրում:

Դրանցից մեզ հայտնի են վեց արվեստագետների կողմից ստեղծված երկու քանդակ, երեք գեղանկարչական և երկու գրաֆիկական աշխատանք:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ, ruzan92.92@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 10.11.2023, գրախոսելու օրը՝ 20.11.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

Դրանց կանդորադաճանք ըստ իրենց ստեղծման ժամանակագրության:

Ռաֆայել Շիշմանյանի կերպարը (1920-1940-ական թթ.)

Ռաֆայել Շիշմանյանի գործունեության առաջին փուլն անցել է հայազգի մտավորականների համար կարծես երկրորդ հայրենիք դարձած Ֆրանսիայում: Հենց այդտեղ էլ ամուր կապ է հաստատվել Շիշմանյանի և ֆրանսաբնակ ծովանկարիչ Կարապետ (Շառլ) Ադամյանի (1872-1947) միջև: Շիշմանյանի և Ադամյանի բարեկամության մասին վկայում են նրանց նամակագրությունն ու այն փաստը, որ Շիշմանյանը բազմիցս այցելել է Ադամյանի փարիզյան արվեստանոցը [2, էջ 71]: Լինելով մեծանուն ծովանկարիչ, Ադամյանն իր հետքն է թողել նաև դիմանկարչության ասպարեզում: Այդ շարքում պետք է հիշատակենք Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարար Ֆերնանդ Դավիթի մեծաչափ դիմանկարը (1911) և «Քանդակագործ Էմի Բիանչիի դիմանկարը» (1925):

Մեզ համար, անշուշտ, ավելի հետաքրքրական են հայ մտավորականներ և հասարակական գործիչներ, լուսանկարիչ Աբել Մինասյանի (1908), պոլսահայ նկարիչ Տիգրան Եսայանի (1908) և, իհարկե, նկարիչ, արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի գեղանկար ու քանդակ դիմապատկերները:

1926 թվականին իմպրեսիոնիստական նկարչաձևերով կատարված «**Նկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմանկարը**» (նկ. 1) համարվում է Հայաստանի ազգային պատկերասրահի զարդերից մեկը: Վարժ տիրապետելով գծանկարի տեխնիկային¹, պահպանելով ակադեմիական գծանկարի կանոնները, Ադամյանը կարողացել է իր ժամանակի մոտեցումներին համահունչ՝ մասնավորապես իմպրեսիոնիստական մոտեցմամբ, ստեղծել ինքնատիպ ու տպավորիչ դիմանկար՝ արտահայտելով բնորդի հոգեբանական պատկերը:

Ինչպես նշում է արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը. «Հնարավորինս մոտ դիրքից արված պատկերը բնորոշում է մտավորականի՝ արվեստաբանի ու նկարչի խոհական հոգեվիճակը: Դարչնաշազանակագույն միջավայրից առանձնացող դիմանկարը՝ հաճելի բեղ ու մորուքը, կոկիկ հագուկապը, ճերմակ վերնաշապիկի վրա ամրացված թիթեռնաձև փողկապը, իրապես համոզիչ են դարձնում եվրոպական կրթությամբ հայ մտավորականի կերպարը» [1, էջ 61]:

Կարապետ Ադամյանը դիմապատկերներին անդրադարձել է նաև քանդակների տեսքով: Մեզ հայտնի են քանդակագործ Անդրե Շուլտցի, իր կնոջ՝ Վալերիի և Ռաֆայել Շիշմանյանի դիմաքանդակները²:

¹ Հիշենք, որ մինչ Վենետիկի Գեղարվեստի ակադեմիայի դասընթացներին մասնակցելը Ադամյանը Մուրատ-Ռաֆայելյանում իր մասնագիտական կրթությունը ստացել է եվրոպացի անվանի նկարիչներ Անտոնիո Պաոլետտիի և Տրանքիլ Տալիպիետրայի մասնավոր դասընթացներին, որոնց շնորհիվ էլ սովորել է գծանկարի տեխնիկայի ամենանորին գաղտնիքները:

² Ցավոք, ոչ մի տեղեկություն չունենք Վալերիի դիմաքանդակի մասին: Սակայն նկարչի անձնական արխիվում պահվում է մի լուսանկար, որտեղ Շուլտցի դիմաքանդակի մոտ կանգնած են Ադամյանը և Անդրե Շուլտցը, որից և որոշակի պատկերացում ենք կազմում կիսանդրու մասին:

Հայաստանի ազգային պատկերասրահում է պահվում Կարապետ Աղամյանի «Ռաֆայել Շիշմանյանի դիմաքանդակը» (նկ. 2)³: Քանդակագործությամբ զբաղվելը հետաքրքիր փաստ է Աղամյանի արվեստի ուսումնասիրման գործում: Սույն ստեղծագործությունում երևացող մտավորականի մտախոհ կերպարը, ազնվական կեցվածքը, մի փոքր երևացող մարմնի հատվածը, փողկապ-թիթեռնիկը դիտողին հուշում է եվրոպական կրթվածությամբ հայազգի մտավորականի իրական բնույթը:

Շիշմանյանին ակնթարթային ճեպանկարով է անդրադարձել ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Բաբկեն Քոլոզյանը (1909-1994): Գծանկարում (1947, նկ. 3) սահուն գծերի և պատկերի արտահայտիչ տպավորությունից տեսնում ենք պարկեշտ ու բարի անձնավորության մի կերպար: Պրոֆիլով պատկերված դիմանկարում նկարչին հաջողվել է դիտողին փոխանցել Շիշմանյանի մտազբաղ վիճակը՝ հավանաբար ընկղմված իր սիրելի գործի մեջ:

Ռաֆայել Շիշմանյանի կերպարը (1950-1960-թթ.)

Խորը արտահայտչականությամբ է առանձնանում հայ կերպարվեստի նահապետ Մարտիրոս Սարյանի (1880-1972) վրձնած «Նկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմանկարը» (1955, նկ. 4): Ռաֆայել Շիշմանյանի և Մարտիրոս Սարյանի մտերմությունը ձևավորվել է դեռ 1927 թվականից Փարիզում: 1947 թվականին՝ հայրենադարձման տարիներին Շիշմանյանը մշտական բնակություն է հաստատում Հայաստանում: Ահա իր և Սարյանի բարեկամությունը շարունակվում է նաև Երևանում⁴: Ի դեպ, 1948 թվականին Շիշմանյանը վրձնում է «Մարտիրոս Սարյանի բնակարանը և այգին» կտավը (Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան), որը 1955 թ. Մ. Սարյանի 75-ամյակի առթիվ Շիշմանյանը նվիրում է վարպետին:

Սարյանը Շիշմանյանին նկարել է փոքր-ինչ դուրս գալով դիմանկարի պատկերման դասական ձևերից: Աշխատանքում Շիշմանյանը չի նայում դիտողին: Այստեղ բնորոշը նստած է, մարմնի փոքր-ինչ երեք քառորդ թեքվածքով, սարյանական ռիթմիկ ու կենդանի վրձնահարվածներով: Ինչ-որ տեղ Շիշմանյանի դիմանկարը պատկերային առումով մեզ մտաբերել է տալիս Սարյանի «Երեք հասակ» ինքնադիմանկարը (1942), որտեղ՝ ձախակողմյա հատվածում Սարյանը միջին տարիքում է, արդեն հաստատված նկարիչ: Մեր քննարկվող աշխատանքում Շիշմանյանի ճերմակած մազերը, բեղ ու մորուսն արտահայտում են բարի և գիտակ ծերուկի կերպար: Պատկերում երևացող Շիշմանյանի խոհեմ ու իմաստուն կեցվածքը կարծես հիմքն է հանդիսացել նկարչի ներշնչմանը: Եվ իրոք՝ Սարյանին բնորոշ էր մարդկային պատկերում որսալ բնորդի հոգեբանական ու խոր բնութագրումների նուրբ թելերը, ինչն էլ փառահեղ դրսևորված է սույն ստեղծագործությունում:

Երևանյան մասնավոր հավաքածուներից մեկում է գտնվում Դմիտրի Նալ-

³ Հստակ տեղեկություն չկա աշխատանքի ստեղծման տարեթվի վերաբերյալ:

⁴ Հայաստանի ազգային պատկերասրահի Շիշմանյանի անձնական արխիվում պահվում է Շիշմանյանի և Սարյանի նամակագրությունը:

բանդայանի (1906-1993) Շիշմանյանին պատկերող գծանկարը. «Ռաֆայել Շիշմանյան» (1956, նկ. 5): Հարկավոր չէ ճանաչել Շիշմանյանին, որպեսզի անմիջապես հասկանաս պատկերվողի մտավորականի լինելու մասին: Փոքրաչափ գծանկարում, Նալբանդյանի վարժ աչքի շնորհիվ դուրս են հանվում Շիշմանյանի դիմագծերի ամենաբնորոշ եզրույթները՝ ցույց տալով հայ կրթային խորհրդանշող կերպարը:

Ռաֆայել Շիշմանյանի կերպարին անդրադարձել է քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը (1923-2015). «Ռաֆայել Շիշմանյան» (1957, նկ. 6): Առհասարակ իսկանդարյանական գործերին բնորոշ են կենցաղային, առօրեական մոտիվները: Թեպետ մեր աշխատանքը ներկայացնում է Շիշմանյանի կերպարը, սակայն այն նույնպես մոտ է քանդակագործի սկզբունքներին: Այստեղ Շիշմանյանը կերտված է կանգուն, գլխի խրոխտ դիրքով, սևեռուն հայացքով, ձեռնափայտը ձեռքին, կարծես զբոսանքի դուրս եկած և ինչ-որ մի պահ տեսածով զմայլված քաղաքացու կերպարով:

Փարիզի Նուբարյան գրադարանում է պահվում հայ դասականներից մեկի՝ Եփրեմ Սավայանի (1909-1974) վրձնած «Ռաֆայել Շիշմանյան» (1960, նկ. 7) աշխատանքը: Շիշմանյանը պատկերված է ստատիկ վիճակում: Գլուխը փոքրինչ թեք, իրեն հատուկ ազնվական կեցվածքով: Այստեղ Շիշմանյանի հայացքը դեպի դիտողը չէ, սակայն պատկերին նայելուց անմիջապես սևեռվում ես Շիշմանյանի հայացքին, որը մտազբաղ է, դեպի հեռուները նայող, թախծոտ տրամադրությամբ: Այնուամենայնիվ, անկախ նկարի ջերմ կոլորիտից, այստեղ նկատվում է փոքր-ինչ անկենդան և սառը տրամադրություն. վարպետորեն կատարված, սակայն պատվեր հիշեցնող մի պատկեր:

Նուբարյան գրադարանի Շիշմանյանի արխիվում մեզ հանդիպած մի լուսանկարից (նկ. 8)⁵ գալիս ենք այն ենթադրության, որ գեղանկար աշխատանքը ճիշտ նույնությամբ կրկնում է լուսանկարը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ աշխատանքը կատարվել է մեր նշած լուսանկար-փաստաթղթից:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ֆրանսիայում և Հայաստանում ծավալած իր մեծ գործունեությամբ և ազնվագարմ կեցվածքով Ռաֆայել Շիշմանյանը գերել է հայ և սփյուռքահայ նկարիչներին ու արձանագործներին: Մեզ հաջողվեց հայտնաբերել Ռաֆայել Շիշմանյանին պատկերող յոթ ստեղծագործություն: Նրան պատկերող դիմանկարներն ու դիմաքանդակները նրա ժամանակակիցները՝ Կարապետ Ադամյանը, Բաբկեն Քոլոզյանը, Մարտիրոս Սարյանը, Դմիտրի Նալբանդյանն ու Խաչատուր Իսկանդարյանը, ստեղծել են նրա կյանքի օրոք: Իսկ Եփրեմ Սավայանի յուղանկարն ստեղծվել է հետմահու: Գեղարվեստական և վավերագրական կարևոր նշանակություն ունեցող այդ ստեղծագործությունները պահվում

⁵ Լուսանկարը փակցված է Շիշմանյանի տվյալների փաստաթղթի վրա:

են ինչպես Հայաստանում (ՀԱՊ), այնպես էլ Ֆրանսիայում (Փարիզի Նուբարյան գրադարան), տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում:

Անկալում ենք, որ մեր համեստ նյութը կունենա իր շարունակությունը՝ նորովի ընկալելու Ռաֆայել Շիշմանյանի կերպարն արդեն ժամանակակից արվեստագետների աչքերով:

Գրականություն

1. Հակոբյան Ա. Ծովանկարիչ Կարապետ (Շառլ) Ադամյանի դիմանկարները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2016, № 2, էջ 59-66:
2. Շիշմանյան Ռ. Նկարիչ Կարապետ Ադամյանը, «Սովետական արվեստ», 1958, № 3, էջ 67-71:

References

1. Hakobyan A. C'ovankarich Karapet (Shar'l) Adamyani dimankarnery', «Banber Yerevani hamalsarani», 2016, № 2, e'j 59-66.
2. Shishmanyanyan R. Nkarich Karapet Adamyany'. «Sovetakan arvest», 1958, № 3, e'j 67-71.

ОБРАЗ РАФАЭЛА ШИШМАНЯНА В АРМЯНСКОМ ИСКУССТВЕ

РУЗАН АНАНЯН*

Для цитирования: Ананян, Рузан. “Образ Рафаэла Шишманяна в армянском искусстве”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 184-191. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-184

В статье речь идет об образе живописца и искусствоведа Рафаэла Шишманяна (1885-1959) в произведениях известных художников.

Как за границей, где он жил до 1947 года, так и вернувшись на родину Шишманян создавал самобытные живописные произведения, занимался теоретической и общественной деятельностью. К образу Шишманяна обращались знаменитые художники, в результате чего армянское искусство обогатилось ценными произведениями, представляющими большой интерес как с эстетической, так и с документальной точки зрения.

В рассматриваемых работах Р. Шишманян представлен в образе художника-интеллектуала. Портреты Р. Шишманяна кисти разных художников хранятся в Государственной картинной галерее Армении, в библиотеке Нубарян (Париж) и в частных коллекциях.

Ключевые слова: Рафаэл Шишманян, образ, художник, портрет, памятник, живописец, искусствовед.

* Аспирант Института искусств НАН РА, ruzan92.92@mail.ru, статья представлена 10.11.2023, рецензирована 20.11.2023, принята к публикации 01.12.2023.

THE IMAGE OF RAPHAEL SHISHMANYAN IN ARMENIAN ART

RUZAN ANANYAN*

For citation: Ananyan, Ruzan. "The image of Raphael Shishmanyan in Armenian Art", *Journal of Art Studies*, N 2 (2023): 184-191. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-184

The article deals with the representations of the painter and art critic Raphael Shishmanyan (1885-1959) in the oeuvre of famous artists.


Both abroad, where he lived until 1947, and upon his return to his homeland, Shishmanian created original paintings, worked on theoretical studies, was engaged in public, pre-eminently pro-Armenian activities.

Shishmanian was portrayed by many renowned artists. As a result, Armenian fine art was enriched with valuable works, which are of great interest both from the artistic and documental viewpoints.

In the analyzed works, Raphael Shishmanian appears as an artist and intellectual. R. Shishmanian's portraits by Armenian painters are stored in the National Gallery of Armenia, the Nuparian Library in Paris and in private collections.


Key words: Raphael Shishmanian, creation, artist, portrait, statue, painter, art historian.

* PhD student at NAS RA Institute of Arts, ruzan92.92@mail.ru. The article was submitted on 10.11.2023, reviewed on 20.11.2023, accepted for publication on 01.12.2023.




Նկ. 1. Կարապետ Աղամյան, Նկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմանկարը, փայտ, յուղաներկ, 35x27, 1926, ՀԱՊ

Նկ. 2. Կարապետ Աղամյան, Ռաֆայել Շիշմանյանի դիմաքանդակը, գիպս, երազ., 42,5x36x20




Նկ. 3. Բաբկեն Քոլոզյան, Ռաֆայել Շիշմանյանի դիմանկարը, թուղթ, մատիտ, 29,8x21,5, 1947, ՀԱՊ

Նկ. 4. Մարտիրոս Սարյան, Նկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմանկարը, կտավ, յուղաներկ, 52x44, 1955, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, ֆոնդ



Նկ. 5. Դմիտրի Նալբանդյան, Ռաֆայել Շիշմանյան, 5.5x3.5, 1956, մասնավոր հավաքածու



Նկ. 6. Խաչատուր Իսկանդարյան, Ռաֆայել Շիշմանյան, բրոնզ, 45x16x12, 1957, մասնավոր հավաքածու



Նկ. 7. Եփրեմ Սավայան, Ռաֆայել Շիշմանյան, կտավ, յուղաներկ, 61x45, 1960, Փարիզի Նուբարյան գրադարան



Նկ. 8. Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվ

**XIX-XX դարերի ՀԱՅ ԿԵՐԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐԸ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԻ
ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1898-1911)**

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*

Հղման համար. Կիրակոսյան, Մերի: «XIX-XX դարերի հայ կերպարվեստի հարցերը «Անահիտ» հանդեսի առաջին շրջանում (1898-1911)»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 192-214. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-192

Արշակ Չոպանյանի գործուն մասնակցությամբ և նախաձեռնությամբ XIX դարավերջին Փարիզում լույս ընծայվեց «Անահիտ» գրական-գեղարվեստական ամսագիրը: Ազգային, գրական-գեղարվեստական այդ հանդեսի հրատարակությունը սկսվել է 1898-ին Փարիզում և ընդմիջումներով հրատարակվել մինչև 1949 թվականը:

«Անահիտում», հայ և արտասահմանյան գրականության վերաբերյալ հողվածներին զուգահեռ, հրապարակվել են նաև արվեստին, կերպարվեստին նվիրված նյութերը: Հանդեսի էջերում լուսաբանվել և ներկայացվել են XIX-XX դարերի հայ արվեստագետներ Էդգար Շահինի, Ջաքար Ջաքարյանի, Փանոս Թերլեմեզյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Արսեն Շաբանյանի, Վարդան Մախոխյանի ցուցահանդեսները: Ժամանակի գեղարվեստական կյանքի համայնապատկերի ուրվագծման առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում «Անահիտ» հանդեսի «Քրոնիկ» բաժինը: «Քրոնիկներում» և հանդեսի այլ հողվածներում արձանագրված են եզակի նշանակության փաստեր, որոնք առնչվում են հայ արվեստագետների ստեղծագործական գործունեությանը, արտասահմանյան և հայ նկարիչների փոխառնություններին և Փարիզի նկարչական սալոններին հայերի գործակցությանը:

«Անահիտ» հանդեսն իր էջերում հրատարակել է Ֆրանսահայ նկարիչ, գրաֆիկ, Ա. Չոպանյանի մտերիմ բարեկամ Էդգար Շահինի արվեստին նվիրված բազմաթիվ հողվածներ:

Լուսաբանվել և ներկայացվել են նաև Ֆրանսիայի սահմաններից դուրս կազմակերպված ցուցահանդեսները, մատնանշվել են կերպարվեստի բնագավառում արվեստագետների նկատելի հաջողությունները, թվարկվել նրանց ակնառու ստեղծագործությունները: Դրվատական նյութերին զուգընթաց երևան եկավ նաև քննադատական, սուր խոսքը:

«Անահիտին» աշխատակցել են արևմտահայ ականավոր գրողներ Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը, Ռ. Սևակը, Դ. Վարուժանը, Սիամանթոն, արևելահայ գրողներից՝ Ա. Շիրվանզադեն, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը և այլք: Չոպանյանի բնորոշմամբ «Անահիտը» ջանաց մեր հասարակությանը ներկայացնել Ֆրանսիայի և քաղաքակիրթ աշխարհի գրական, գեղարվեստական, քաղաքական դեպքերը:

Մեր հողվածում հավաքել և ներկայացրել ենք «Անահիտի» առաջին շրջանում առկա XIX-XX դարերի հայ կերպարվեստին նվիրված հողվածները և հակիրճ անդրադարձները:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սիյուրքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, marykirakosyan@mail.ru, հողվածը ներկայացնելու օրը՝ 22.09.2023, գրախոսելու օրը՝ 20.11.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023.

Բովանդակային նկարագրի ֆոնին շոշափել ենք դրանցում վեր հանված խնդիրները, ժամանակի տեսակետները և կարծիքները:

Քանալի բաներ՝ «Անահիտ», Արշակ Չոպանյան, կերպարվեստ, օֆորտ, ցուցահանդես, քրոնիկ, էդգար Շահին:

Ներածություն

Հայ մշակույթի մեծ երախտավոր, բանասեր, գրականագետ-քննադատ, մանկավարժ, թարգմանիչ Արշակ Չոպանյանը (1872, Կ. Պոլիս – 1954, Փարիզ) հանդիսացել է Փարիզում լույս տեսնող «Անահիտ» գրական-գեղարվեստական ամսագրի հիմնադիրը և խմբագիրը: «Անահիտ» հանդեսը հայ մշակույթի պատմության մեջ բացառիկ կարևորություն ունեցավ: Ազգային, գրական-գեղարվեստական այդ հանդեսի հրատարակությունը սկսվել է 1898-ին Փարիզում և ընդմիջումներով հրատարակվել մինչև 1949 թվականը (1898-1911 առաջին շրջան, նոր շրջան՝ 1929-41, 1946-49): «Անահիտ» հանդեսի 1899 թվականի թիվ 12 համարում լույս է ընծայվել Չոպանյանի ծավալուն հոդվածը՝ նվիրված «Անահիտ» հանդեսի դերի կարևորությանը, որում ասվում է. «Մեր ժողովրդին արդի շփոթ ու ցաւագին կացութեանը մէջ, ես փափաքեցայ հիմնել եղբայրական մեծ ժամադրավայր մը... աշխարհիս չորս անկիւննէն հայ մտքեր, - անոնք որ, հին կամ նոր գեղեցկասէր կամ օգտապաշտ, գործնական կամ գաղափարական...» [45, էջ 389]:

Հանդեսում, հայ և արտասահմանյան գրականության վերաբերյալ հոդվածների կողքին, իրենց արժանի և կարևոր տեղն են զբաղեցնում կերպարվեստին նվիրված անդրադարձները: Եվրոպական արվեստի պրոպագանդմանը զուգընթաց՝ «Անահիտում» Արշակ Չոպանյանը մասնավոր հոգատարությամբ հետևում և քարոզում է դարասկզբի հայկական արվեստը՝ հատկապես գեղանկարչությունը և երաժշտությունը: «Անահիտ» հանդեսի ծրագրի այդ կարևոր բնագավառը Չոպանյանն իրականացնում է մեծ հմտությամբ, միշտ հետապնդելով քաղաքական անսքող նպատակ՝ նպաստել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացմանը, պարտադրել օտարների հարգալից վերաբերմունքը հայ մշակույթի ոչ միայն անցյալի, այլև ժամանակակից արժեքների նկատմամբ [26, էջ 269-270]: Տվյալ գաղափարների տարածման համար ավելի դյուրամատչելի նյութեր են տրամադրում գեղանկարչությունն ու երաժշտությունը, և հենց այդ գործում էլ Չոպանյանը մեծ ջանք է ներդնում: Էդգար Շահինի, Զաքար Զաքարյանի, Փանոս Թերլեմեզյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Արսեն Շաբանյանի, Վարդան Մախոխյանի ցուցահանդեսները մշտապես գտնվել են հանդեսի ուշադրության կենտրոնում: Խմբագրապետը հաճախ իր կարծիքներն է հայտնել այդ արվեստագետների մասին, ծավալուն մեջբերումներ է արել օտար մամուլի դրվատական հոդվածներից, երբեմն միջամտել է ֆրանսաստառ թերթերի ելույթներին և ուղղել վրիպումները: Այսպես, օրինակ, 1900 թվականի միջազգային ցուցահանդեսում է. Շահինը և Զ. Զաքարյանը «Le journal» թերթի հոդվածագիր Գուստավ Ժեֆրուայի (1855-1926) (Gustave Geffroy) կողմից սխալ են ներկայացվում. առաջինը՝ որպես թուրքական, երկրորդը՝ հունական արվեստի ներկայացուցիչներ: Այս առթիվ խմբագրությունը ստանում է մի շարք նամակներ: Թերթի

հաջորդ համարում Գ. Ժեֆրուան ուղղում է իր սխալը՝ վկայակոչելով Չոպանյանի նամակը [26, էջ 270-271]:

«Անահիտը» հրատարակվեց երկու ժամանակահատվածներում: 1898-ից մինչև 1911 թվականը այն հրատարակվում էր իբրև Չոպանյանի¹ անձնական ձեռնարկում և դադարեց միջոցների ծայրահեղ անբավարարության պատճառով: «Անահիտ» հանդեսի առաջին համարը լույս տեսավ 1898-ի նոյեմբերին: Այն բացվում է «Դարագլուխ» ընդարձակ խմբագրականով: Բանասիրական գիտությունների դոկտոր Յ. Ավետիսյանն «Անահիտ» հանդեսին նվիրված իր աշխատության մեջ պարբերականը բնորոշում է որպես նոր քայլ գեղարվեստական հանդեսի զարգացման ճանապարհին, որն աչքի էր ընկնում թեմատիկ, գաղափարական ընդգրկմամբ, գեղարվեստական ընթացքի արվեստագիտական քննության խորությամբ և արվեստի նորահայտ երևույթների վերլուծության գնահատմամբ [23, էջ 140]:

Գեղարվեստական կյանքի բնութագրման դիտանկյունից և հարուստ նյութի ներգրավմամբ առանձնահատուկ հետաքրքիր են «Անահիտ» հանդեսի «Քրոնիկները»: «Քրոնիկներում» և հանդեսի այլ հոդվածներում եզակի նշանակության փաստեր ենք գտնում օտարազգի և հայ արվեստագետների հանդիպումների, համատեղ միջոցառումների, արտասահմանյան թանգարանների կողմից հայ վարպետների ստեղծագործությունները ձեռք բերելու և Փարիզի նկարչական սալոններին հայերի մասնակցության մասին:

«Ազգային քրոնիկ»

«Անահիտ» հանդեսում «Քրոնիկ» բաժինը ազդարարվում է 1898 թվականի նոյեմբերի, թիվ 1-ով: Իսկ կերպարվեստի հարցերին նվիրված անդրանիկ հրապարակումը գտնում ենք 1899 թվականի հոկտեմբերի, թիվ 12-ում, որը նվիրված է հայ ազգային բնանկարի հիմնադիր Գևորգ Բաշինջաղյանի ստեղծագործական գործունեությանը: Հրապարակումից տեղեկանում ենք, որ նկարիչը մեկ ամիս է ինչ գտնվում է Փարիզում և մտադիր է մնալ 2 տարի և մասնակցել 1900 թվականի մեծ ցուցահանդեսին (կարծում ենք՝ խոսքը Փարիզի «Տիեզերական» կամ միջազգային ցուցահանդեսի մասին է - Մ.Կ.) [53, էջ 388]: Հանդեսի «Քրոնիկներում» կերպարվեստին առնչվող թեմաների բազմազանությամբ առավել աչքի է ընկնում հատկապես 1900 թվականը: Նույն թվականի «Ազգային քրոնիկը», անդրադառնալով կրկին Գ. Բաշինջաղյանի արվեստին, նշում է, որ բնանկարչի 4 կտավ՝ «Ամպերը», «Սևանա լիճը», «Դարյալի կիրճը», «Արարատ լեռը» ցուցադրվել են Փարիզի ռուս արվեստագետների պատկերահանդես-

¹ «Անահիտի» խմբագրման տարիներին զուգահեռ, իսկ ընդհատումների շրջանում՝ հատկապես Չոպանյանն ակտիվորեն աշխատակցում է թիֆլիսահայ (1910-ականներին նա արտոնյալ պայմաններով հրավիրվել էր աշխատակցելու «Մշակին», թղթակցել է նաև «Հորիզոնին») և պոլսահայ տարբեր պարբերականների՝ հիմնականում «Բյուզանդիոնին», ինչպես նաև Փարիզի «Ապագա», «Վերածնունդ», Ալեքսանդրիայի «Արև», Բոստոնի «Պայքար» և ուրիշ թերթերի, դրանցում տպագրում է ուշագրավ և արժեքավոր հոդվածներ [22, էջ 68]:

տում, որը բացվել է հունվարի 7-ին և կմնա մինչ փետրվարի 4-ը: Այդ աշխատանքներից 3-ը ընդունվել են Փարիզի «Տիեզերական արվեստահանդեսի» ռուսական բաժնում ներկայացվելու համար: Մեջբերվում է Բաշինջադյանի նկարների վերաբերյալ «La Fronde» լրագրի անդրադարձը [3, էջ 77]: Խոսելով բնանկարչի փարիզյան արվեստանոցում (Բուլվար Մոնպառնաս փողոցի տան սրահում) կազմակերպված մասնավոր պատկերահանդեսի մասին, որտեղ ցուցադրվել են նկարչի 30-ին հասնող գործերը, հանդեսը նկատում է. «Ռուսական բաժնին ընդհանուր յանձնակատարը, անբացատրելի վարմունքով մը, վերջին պահուն ետ դարձուց Բաշինջադեանի երկու նկարները, որոնք ռուս արուեստագետներու ցուցահանդեսին մէջ մեծ յաջողութիւն գտած էին և վաղուց նշանակված էին Տիեզերական ցուցահանդեսին ռուսական բաժնին մէջ դրուելու համար» [4, էջ 217]: Ա. Չոպանյանի առաջնորդությամբ նկարչի անհատական ցուցահանդեսի մասին է գրում ժամանակի երիտասարդ գրող Էդմոն Բիլլոն «La Blume» գրական-գեղարվեստական կիսամսյա թերթի նոյեմբերի 15-ի համարում: Հեղինակի կողմից թեպետ բարձր են գնահատվում նկարչի հատկապես Արարատ լեռան պատկերները, բայց միևնույն ժամանակ նա ընդգծում է, որ միակ «մեղադրանքը», որ կարելի է առաջադրել՝ երանգների չորրոպունն է և նկարչի հակումը պատկերի դետալային, մանրամասն մշակումը հաղորդելու մեջ: Բայց այս թերությունները կորչում են աշխատանքի ամբողջության մեջ և չեն խանգարում բնանկարչական գործի ճիշտ ընկալմանը. «Իր արուեստը սովորականէն տարբեր է: Պրն. Չաքարյանի և Է. Շահինի արուեստին հետ, պատուաբեր է ան իր անբաղդ ազգին» [5, էջ 264]: 1900 թվականի հանդեսի քննարկվող բաժնում երևան է գալիս արևմտահայ ծովանկարիչ Արսեն Շաբանյանի մասնավոր ցուցահանդեսին նվիրված հրապարակումը: Տվյալ պատկերահանդեսը կազմակերպվել էր 1899 թվականին Փարիզի «Ժորժ Պոտի» պատկերասրահում (Galerie George Ptite): Քրոնիկը մեջբերում է փարիզյան մամուլի, մասնավորաբար, «Le journal des Arts»-ի դրվատանքի տողերը՝ ուղղված Շաբանյանի արվեստին [11, էջ 77]: Նույն թվականի քրոնիկը նաև արձագանքում է հայ ռեալիստական գեղանկարչության կարկառուն ներկայացուցիչ, սովյալ ժամանակաշրջանում Փարիզի Ժյուլիենի գեղարվեստի ակադեմիայի ուսանող Փ. Թերլենեգյանի՝ կերպարվեստի ասպարեզում արձանագրած առաջին հաջողությանը: Նշված ակադեմիայում կազմակերպված ուսանողական ցուցահանդեսում նկարչի «Մերկ տղամարդու ֆիգուր» գծանկարն արժանանում է առաջին մրցանակի, ինչի մասին հպարտորեն ազդարարվում է «Անահիտում» [15, էջ 77]: Նույն համարի «Քրոնիկում» շրջանառվում է նաև նկարիչ Է. Շահինի վերաբերյալ տեղեկություն, որ արվեստագետն ընդգրկվել է Լոնդոնի նկարիչ-փորագրիչների թագավորական միության (Royal Society of painter-Etchers and Engravers) շարքերը և նրա գործերը մարտի 12 - ապրիլի 7 պետք է ցուցադրվեն «Գեղարվեստների ընկերության» պատկերասրահում [10, էջ 77]: 1900 թվականի նշված միության (Royal Society of painter-Etchers and Engravers) կողմից կազմակերպված ցուցահանդեսին Շահինի մասնակցության մասին է գրում «Անահիտի» հաջորդ համարը: Արվեստագետի ինքնատիպ և կենդանի տա-

ղանդի վերաբերյալ գովասանքի խոսքով է հանդես գալիս լոնդոնյան մամուլը: Հիշատակվում է նաև Փարիզի «Le Journal» թերթում ֆրանսիացի նշանավոր գեղարվեստական քննադատ, արձակագիր Գյուստավ Ժեֆրուայի կարծիքն այդ տարվա Սալոնում ցուցադրած նկարչի գործերի մասին. «...Արուեստագետը ոչ միայն պղինձը փորելու քաջավարժ է, դեմքերն ու տեսարանները խուզարկել գիտէ եւ մեր հայեցողութեանը կ'ընծայէ այն նուրբ եւ ուշագրավ պատկերները զոր կրցեր է իրականութենէն արտահանել» [6, էջ 142]: 1900 թվականի «Անահիտ» հանդեսի «Ազգային քրոնիկի» «Հայերն ի Բարիզ» վերտառությամբ բաժնում գտնում ենք բավականին ընդարձակ հրապարակում, որն արձարձում է ինչպես 1900 թվականի Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում ներկայացված Շահինի փորագրանկարները և Ջաքարյանի նատյուրմորտները, այնպես էլ ներկայացնում է նույն թվականի Սալոնում ցուցադրված Շահինի աշխատանքների վերաբերյալ ֆրանսիացի արվեստաբան Շառլ Շենյոլի՝ «L'Estampe et l’Affiche» ամսագրում լույս տեսած հոդվածից դրվագներ [36, էջ 176]: 1900 թվականի հունիսի 12-ին Փարիզի «Կաֆե Վոլթեր»-ում «Անահիտի» խմբագրության նախաձեռնությամբ կազմակերպվում է հացկերույթ ի պատիվ ֆրանսիացի նշանավոր գրող Անատոլ Ֆրանսի: Միջոցառմանը մասնակցում էր նաև Է. Շահինը: Այդ ժամանակ Ֆրանսը հնարավորություն է ունենում ծանոթանալ նկարչի փորագրանկարներին և հմայվելով երիտասարդ նկարչի տաղանդով՝ ցանկություն է հայտնում վերջինիս արվեստն ավելի մանրամասն ճանաչելու պատեհություն ունենալ: Միջոցառումից հետո Շահինը Ֆրանսին է ներկայացնում իր աշխատանքները, նկարչի խնդրանքը՝ գրողի կենդանագիրը ստեղծելու փափագը, Ֆրանսի կողմից հաճույքով ընդունվում է: Գրողը, իր հերթին, խնդրում է Շահինին, որ նա պատկերագրողի իր անտիպ վեպը [1, էջ 213-214]:

Շահինի արվեստի ճիշտ գնահատման և արժևորմանը միտված Չոպանյանի ջանքերի առնչությամբ նշենք՝ արդեն վերը հիշատակված՝ 1900 թվականի «Le Journal» թերթի հուլիսի 2-ի համարում Գյուստավ Ժեֆրուայի կողմից նկարիչներ Շահինը ներկայացվեց որպես թուրքական, իսկ Ջաքարյանը՝ հունական արվեստի ներկայացուցիչներ: Այս առթիվ խմբագրությունը ստանում է մի շարք նամակներ: Թերթի հաջորդ համարում Ժեֆրուան սրբագրում է իր սխալը և այս մասին գրում է. «Այս կետին ճշդումը շատ արդարացի կերպով ինձմէ ուզած են մէկ քանի անձեր, որոնցմէ կը յիշեմ Չերագ, Ժ.Մ. Ապտուլահեան, Ա. Չոպանեան»² [36, էջ 177]: Ժեֆրուային ուղղված գրության մեջ Չոպանյանը ցավով փաստում է, որ միջազգային այս ցուցահանդեսում հայ արվեստագետները չկարողացան իրենց առանձին «անկյունը»՝ սրահը ունենալ, որտեղ կհամախմբվեր հայ ժողովրդի մտավոր, մշակութային կարողությունները, ինչի բացակայության պատճառով աշխատանքները հարկադրված ցուցադրվեցին օտար ազգերի բաժիններում: Համաշխարհային սույն պատկերահանդեսին հայազգի

² 1900 թվականի միջազգային ցուցահանդեսում Է. Շահինի և Ջ. Ջաքարյանի աշխատանքներին շնորհվում է ոսկե մեդալ, այս փաստն արձանագրված ենք տեսնում 1900 թվականի «Անահիտ» հանդեսի սույն համարում [8, էջ 214]:

արվեստագետներ Շահինի և Ջաքարյանի մասնակցության մասին «Անահիտի» էջերում հրատարակված այս գրվածքն ավարտվում է Ժեֆրուայի՝ հայ արվեստը արժևորող կարևոր կարծիքի արձանագրմամբ. «Այն պահուն, ուր պաշտօնական Երուսալեմի հայ ժողովուրդը կը լքանէ հրէշային բռնապետութեան ձեռքը... մենք ուրախ պիտի ըլլայինք տեսնելով որ գոնէ մտաւորական Երուսալեմի արդարութեան հարկ մը կը մատուցանէ այս ժողովրդին, որ արժանի է աշխարհի համակրութիւնը գրաւելու ոչ թէ միայն որովհետեւ դժբաղտ է, այլ որովհետեւ քաղաքակրթութեան տարր մըն է» [8, էջ 214]:

Հայ արվեստագետների մասին տրվող հակիրճ լուրերի բազմազանությամբ աչքի ընկան նաև 1901 և 1902 թվականները: 1901 թվականի «Քրոնիկը», կարևորելով Բաշինջաղյանի գործունեությունը Ֆրանսիայում, տեղեկացնում է, որ նկարիչը մտադիր է Փարիզից մեկնել և նրա նկարների ցուցահանդեսը պետք է փակվի [2, էջ 200]: Երկրորդ նյութը վերաբերում է Փարիզի Ժյուլիենի ակադեմիայի հայտնի մանկավարժ Ժան Պոլ Լորանսին աշակերտած, հայազգի շնորհալի գեղանկարիչ Լ. Քյուրքչյանին, որտեղ հաղորդվում է, որ վերոնշյալ ակադեմիայում կազմակերպված նկարչական մրցման ժամանակ նկարիչն արժանացել է առաջին մրցանակի [16, էջ 88]: Արդեն հիշատակված Լոնդոնի 1900 թվականի ցուցահանդեսում Շահինի գործերի հաջող ընդունելության մասին տեղեկատվությունը նաև արժարժվում է 1901 թվականի «Քրոնիկ» բաժնում, բայց այստեղ տվյալ պատկերահանդեսը թվագրված է 1901-ով: Շահինի աշխատանքները համեմատվում են Ժան Լեոն Ժերոմի աշակերտ, ֆրանսիացի գեղանկարիչ, փորագրանկարիչ Պոլ Սեզար Էլյուի (1859-1927) (Paul Cesar Heelleu) գործերի հետ, գտնելով, որ վերջինս «իրեն արդեն սպառել է որպես նկարիչ, մինչդեռ Շահինն իր աշխատանքներում ստեղծագործության դիտողության, վերլուծման հզոր և մշտանորոգ հատկություններ ցույց կտա» [7, էջ 89]: 1901 թվականի ֆրանսիական 2 Սալոններին մասնակցում էր վեց հայ նկարիչ (Ջ. Ջաքարյան, Ա. Շաբանյան, Է. Շահին, Փ. Թերլեմեզյան և այլք) [9, էջ 128]:

1902 թվականի ապրիլի 20-ից - մայիսի 17-ը Փարիզի նկարիչների տանը ցուցադրվում է Ա. Շաբանյանի 50 ծովանկար: Հանդեսը, անդրադառնալով տվյալ ցուցահանդեսին, նկատում է, որ եթե նկարչի վաղ շրջանի գործերը կրում էին Այվազովսկու արվեստի ազդեցությունը, ապա տվյալ պատկերահանդեսի աշխատանքներում ակնառու է արվեստագետի առաջադիմությունը և գործերում երևան է գալիս ավելի ազատ, ինքնատիպ, կենդանի կնիք: Ներկայացվում են նկարչի ստեղծագործության թեմաների նախընտրությունները, գեղանկարչական տեխնիկայի առանձնահատկությունների դրսևորումը նկարչի ստեղծագործության մեջ: Ցուցահանդեսի վերաբերյալ նյութը լրացվում է նաև արտասահմանյան մամուլի արձագանքների մեջբերմամբ («New York Herald», 30 ապրիլի, «Morning Post», 1 մայիսի), որոնք հատկապես արժևորում են Շաբանյանի կավճամատիտով ստեղծված աշխատանքները [12, էջ 115]: Նույն քրոնիկում նշվում է, որ 1902 թվականի փարիզյան երկու Սալոններին մասնակցած հայ արվեստագետներից էին Ջ. Ջաքարյանը, Ա. Շաբանյանը, Ա. Քյուրքչյանը, Է. Շահինը, առաջին անգամ մասնակցում էին Ս. Բեկյանը, Ա. Բաբայանը [12, էջ 115]: Հան-

դեսի ուշադրությունից չի վրիպում նաև Տրապիզոնում ծնված և 1895-1918 թթ. Բեռլինում ապրած և ստեղծագործած մեկ այլ շնորհալի ծովանկարչի՝ Վ. Մախոխյանի՝ Կահիրեում³ կազմակերպված անհատական ցուցահանդեսը: 1902 թվականի «Քրոնիկը» նշում է, որ նկարչն իր 82 աշխատանք ցուցադրել է Կահիրեի «Արվեստագիտական ակումբում»: Հպարտությամբ հավաստում է, որ Կահիրեի ֆրանսալեզու թերթերը՝ «Le Progres», «Journal du Caire», զովեստի խոսքեր են շռայլել հայ արվեստագետի ինքնատիպ տաղանդի վերաբերյալ [13, էջ 84]: 1903-ին «Անահիտի» էջերում նաև հրատարակված ենք տեսնում լուսանկարիչ Հովհաննես Քյուրքչյանի (1855-1903) մասին մահախոսականը, որտեղ, մասնավորաբար, ասվում է, որ Ինդոնեզիայի Ճավա կղզում իր մահկանացուն է կնքել Անիի ավերակների առաջին լուսանկարիչը: 10 տարուց ավել ճավայում բնակվող հայ արվեստագետը մեծ համբավ էր վայելում: 1901 թվականին կղզու լավագույն տեսարանները ներկայացնող լուսանկարների հավաքածուն նկարչի կողմից ուղարկվել էր Հոլանդիայի թագուհուն, ինչի արդյունքում նա արժանացել էր պալատական լուսանկարչի բացառիկ տիտղոսի [17, էջ 132]:

«Անահիտի» 1904 թվականի համարների «Քրոնիկ» բաժնում ներկայացված է հայ արվեստագետների ստեղծագործական գործունեության մասին 2 ակնարկ: Վ. Մախոխյանի՝ 1903-ին Եգիպտոսում կազմակերպված անհատական ցուցահանդեսի կայացման, արձանագրած հաջողության, Եգիպտոսի ֆրանսալեզու թերթերի ներբողական արձագանքի մասին է գրվում «Անահիտ» հանդեսի 1904 թվականի թիվ 3-ում: Այս տեղեկատվությանն առընթեր՝ ակնածանքով նշվում է, որ 1904 թվականին Մախոխյանը դարձավ Բեռլինի «Նկարիչների միության» (Verein Berliner Künstler) գործուն անդամ [14, էջ 71-72]: Նույն թվականի հանդեսի «Քրոնիկը» նաև իրազեկում է, որ ֆրանսիական կառավարությունը գնել է Է. Շահինի գործերը, որոնք ներկայացվել են 1904 թվականի «Շան Տը Մարսի Սալոն»-ում, այդ գործերը պետք է ցուցադրվեն նաև Լյուքսեմբուրգի թանգարանում, որի վարչությունը խնդրում է, որ Շահինը նվիրաբերի փորագրության ամբողջ հավաքածուն: Նկարիչն ընտրվում է «Շան Տը Մարսի Սալոնը» կազմակերպող և վարող «Գեղարեստի ազգային ընկերության» անդամ [21, էջ 96]:

«Անահիտի» առաջին շրջանի հետագա տարիներին՝ 1905-1911 թվականներին, «Ազգային քրոնիկներում» կերպարվեստի վերաբերյալ լուրեր, նյութեր ի հայտ չենկան:

XIX-XX դարերի հայ կերպարվեստը

Էդգար Շահին - Արշակ Չոպանյանի մշտական գորովի և խրախուսանքի առարկան ու նրա մտերիմ բարեկամը Էդգար Շահինն էր:

³ Արվեստաբան Ե. Մարտիկյանը նշում է, որ Մախոխյանի նշված ցուցահանդեսը կայացել է Բեռլինում [38, էջ 11]: Ինչպես գրվում է ժամանակի մամուլում և արվեստագիտության դոկտոր Ա. Հակոբյանի ստվարածավալ հիմնարար աշխատության մեջ՝ Մախոխյանի 1902-ի անհատական ցուցահանդեսը կազմակերպվել է ոչ թե Բեռլինում, այլ Կահիրեում [34, էջ 228]:

Շահինի հետ Չոպանյանը ծանոթացել է Փարիզում 1896 թվականին և անմիջապես հափշտակվել նրան տեսնելու, զգալու, հասկանալու եզակի և ինքնատիպ կարողությամբ: Կարծում ենք՝ պատահական չէ, որ Չոպանյանն «Անահիտ» հանդեսի առաջին շրջանի շապիկի ձևավորումը վստահեց հենց էդգար Շահինին⁴: Չոպանյանը Շահինի մեջ տեսնում էր այն անձը, որ իր արվեստի ուժով պիտի բարձրանար եվրոպական մշակույթի երկնակամար և իր հետ բարձրացներ ու աշխարհին ցույց տար հայ ժողովրդի մշակութային պոտենցիալ բազում կարողությունները [26, էջ 271]:

Հատկանշական է, որ Շահինի ստեղծագործության մեջ Չոպանյանն ամենից ավելի գնահատում էր նրա արվեստի ռեալիստական մեթոդը:

Էդգար Շահինը, թերևս, հայագրի միակ արվեստագետն էր, ում արվեստի հետազոտմանը և ներկայացմանը միտված «Անահիտ» հանդեսում մեծաքանակ հոդվածներ լույս տեսան:

Շահինի մասին եվրոպական մամուլում գրվել են բազմաթիվ հոդվածներ: Դրանցից Չոպանյանն առանձնացրել և «Անահիտում» տպագրել է Ռոժե Մարքսի, Գաբրիել Մուրիեի, Գյուստավ Սուլիեի, անգլո-ֆրանսիական գեղարվեստական մեծ հանդեսներում հրատարակված հոդվածների թարգմանությունները [23, էջ 148]: Այդ նյութերի հետ ծանոթությունը ցույց է տալիս, որ դրանց ընտրությունը պատահական չէ: Նշված հեղինակները՝ Ռ. Մարքսը, Գ. Մուրիեն, Գ. Սուլիեն եվրոպական գեղարվեստական քննադատության ամենահեղինակավոր դեմքերից էին, ժամանակակից արվեստի խոշոր գիտական: Դրանցում Շահինի ստեղծագործությունները գնահատվում էին եվրոպական կերպարվեստի զարգացման մակարդակում, համաշխարհային փորագրանկարչական արվեստում բնորոշվում է հայ նկարչի տեղն իբրև առաջնակարգ դեմքի: Ճշմարիտ ու դիպուկ գնահատումներ են տրվում նկարչի խորհրդածող և զգայուն խառնվածքի, «ողորմելի կյանքը» թարգմանելու նրա ձգտումների, բարձր կարողության ու հազվագյուտ ներքնատեսության մասին [23, էջ 149]:

Էդգար Շահինի վերաբերյալ առաջին հոդվածն «Անահիտ» հանդեսում գտնում ենք 1899 թվականի թիվ 11 համարում, որտեղ Չոպանյանը ներկայացրել է Բլեման Ժանենի («L' Estampe et l' Affiche», Paris, 1899) հոդվածի թարգմանությունը: Հեղինակը հպանցիկ է արժարծում նկարչի կենսագրության որոշ տվյալներ, կենտրոնանում է երիտասարդ, խոստումնալից նկարչի կիրառած նկարչական տեխնիկայի վրա: Դիտարկելով աշխատանքի թեմաների նախընտրությունները և կոմպոզիցիոն խնդիրները՝ շոշափում է իտալական արվեստից կրած ազդեցությունների հանգամանքը: Կոնկրետ ստեղծագործությունների օրինակով մատնանշում է Շահինի կողմից բարձրացված գեղարվեստական խնդիրները՝ հատկանշական համարելով նկարչի վարպետությունը, մասնավոր-

⁴ Վենետիկի Մխիթարյան միաբանությունում (Սբ. Ղազար) Շահինը ծանոթանում է Ղևոնդ Ալիշանի հետ, ուսումնասիրում հայկական մանրանկարչության գրչագիր մատյանների հարուստ հավաքածուն: Տարիներ անց այդ մանրանկարների ազդեցությամբ նա իրականացնում է Չոպանյանի «Անահիտ» հանդեսի անդրանիկ համարի շապիկի (1898) ձևավորումը [32, էջ 5]:

րապես, բազմաֆիգուր կոմպոզիցիաների վերարտադրման հարցում: Արժևորվում է փորագրանկարչության մեջ չոր ասեղի տեխնիկայի՝ արվեստագետի ուրույն ձեռագիրը, օֆորտի ինքնատիպ օրինակները: Ք. Ժանեն գրում է. «Շահին միանգամայն օժտեալ նկարիչ մըն է ու խղճամիտ խուզարկու դիրաւ չգոհացող գծագրիչ մը» [33, էջ 356]: 1899 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր համարում Շահինի երկու աշխատանքների վերատպության ներքո ներկայացվում է նկարչին նվիրված անդրադարձը, որտեղ կարևորելով նրա արվեստը՝ անանուն հոդվածագիրը հայտնում է, որ վերջերս նկարչին են դիմել հրապարակագիր Ժ. Կորնելի⁵ կենդանագիրը ստեղծելու համար: «La Revue d'Art»-ը օֆորտի արդի վարպետների շարքում իբրև սկսնակ նկարիչ հիշատակում է Շահինին և հրատարակում նրա 2 ստեղծագործություն՝ փարիզյան թշվառների, թափառականների կյանքը ներկայացնող գործերը՝ «Շատո Ռուժ», «Շեմինո» (ֆրանսերեն՝ cheminau, թարգմանաբար՝ բատրակ կամ թափառաշրջիկ) [29, էջ 25]: 1900 թվականի «Անահիտում» հատկապես շատ են էդգար Շահինին նվիրված հոդվածները, որոնց մեջ, թերևս, ամենածավալուն գրվածքը Ա. Չոպանյանի հեղինակած «Մանուէլեան և Շահին» վերնագրված հոդվածն է: Արվեստագետ-անհատի, արվեստի ըմբռնման չոպանյանական խոր ընկալման դիտանկյունից, ինչ-որ տեղ հուշագրային էլեմենտներ պարունակող, անձնական տպավորությունների, կարծիքների և յուրահատուկ մեկնաբանմամբ կարևորվում է սույն հոդվածի քննարկումը: Հեղինակը գրում է. «Էտկար Շահինը ճանչցած եմ չորս տարիի չափ առաջ՝ Բարիզի մայթին վրայ: Առաջին վայրկեանէն այդ անկախ ու թափանցող մտքով, տենդոտ ու ինքնուրոյն տեսողութեամբ օժտված տղան զիս գրավեց» [46, էջ 149]: Չոպանյանը մատնանշում է փարիզյան Սալոնում ցուցադրված աշխատանքները, որը լրացվում է շնորհալի հայ նկարչին նվիրված արտասահմանյան մամուլի անդրադարձներով, գեղանկարչական ստեղծագործությունների մեկնաբանմամբ և նկարագրությամբ: Խոսելով Շահինի արվեստում փոփոխությունների (գեղանկար աշխատանքներից անցումը դեպի օֆորտի տեխնիկային) մասին՝ Չոպանյանը նշում է. «Եվ, ահա հանկարծ, Շահինը մտածեց փորագրութիւն փորձել, առանց որեւէ ուսուցչի առաջնորդութեան... ջանաց թափանցել այդ նուրբ ու դժուարին արուեստին գաղտնիքին և առաջին «բլանշը» հրաշակերտ մըն էր» [46, էջ 153]: Հեղինակը մեջբերում է Գյուստավ Ժեֆրուայի դրվատալի տողերը՝ նվիրված Շահինի օֆորտներին: Չոպանյանը կարևորում է՝ կյանքն ըմբռնելու անհատական և խորունկ եղանակը «մտածող-դիտողի և համադրող-իրապաշտի» այդ խառնվածքի մեջ պետք է միշտ պահպանի մտացածին միությունը բազմաձև արտահայտության առերևույթ հակա-

⁵ «Անահիտ» հանդեսի 1899 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ 1-2 միացյալ համարի քննարկվող հոդվածում ժամանակի հայտնի հրապարակագիր Ժյուլ Կորնելի անունը հանդես է գալիս «Ժ. Կորնելի» գրությամբ [29, էջ 25], իսկ Ռ. Շիշմանյանի հեղինակած է. Շահինին նվիրված մենագրության մեջ՝ ստեղծագործության կատալոգում, շրջանառվում է հրապարակագիր Մ. Կորնելի, M. Cornely գրվածքը [43, էջ 98]:

սության մեջ: Չոպանյանը հավատում էր, որ Շահինը մեծ արվեստագետների շարքում իր արժանի տեղը կգրավի: Հանդեսի 1900 թվականի փետրվար-մարտ, թիվ 4-5 միասնական համարում է տպվում նաև Ռոժե Մարքսի («Gazette des Beaux-Arts», 1900)⁶ Շահինի վերաբերյալ հոդվածի հայերեն թարգմանությունը: Շոշափելով նկարչի մասնագիտական կրթության, ուսուցիչների մասին հայտնի տվյալները, հեղինակն անդրադառնում է Շանգ Էլիզեի Սալոնում ցուցադրված նկարաշարին, որը նկարչի կողմից անվանակոչվել էր «ոլորմելի կյանք»: Մարքսը ներկայացնում է նկարիչի արվեստում օֆորտի տեխնիկայի ձևավորումը, չոր ասեղի տեխնիկայով առաջին փորձերը, կարևորում տիպարի կեցվածքի, ժեստերի դրսևորումը տվյալ աշխատանքներում: Հոդվածագիրը բարձր է գնահատում նկարչի դիմանկարները, առանձնացնում է 1900 թվականին ստեղծված բելգիացի գեղանկարիչ Ալֆրեդ Սթիվենսի (1823-1906) կենդանագիրը, որը նկարչի մահից առաջ ցուցադրվել է Գեղարվեստի վարժարանում (Փարիզի գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոց) [39, էջ 112]: Հոդվածի վերջում գետեղված հղման մեջ նշվում է, որ տվյալ հոդվածն ուղեկցվում է Շահինի հինգ փորագրանկարներով, որոնց մեջ է նաև Ա. Սթիվենսի դիմանկարը:

1902 թվականի «Անահիտում» հատվածաբար տպվում է Գաբրիել Մուրեի «Հայ փորագրիչ մը (Էդգար Շահին)» («The Studio», London, 1901) մեծածավալ հոդվածի հայերեն տարբերակը: Շահինի արվեստին անդրադարձող հոդվածում հեղինակը, նկարչի արվեստի թեմատիկայի վերաբերյալ, կատարում է հարցադրումներ՝ առաջ քաշելով Արևմտյան Հայաստանում իրագործված եղերական գործողությունների արձագանքի և վերջինիս արվեստի մեջ ազդեցությունների մասին խնդիրը, գտնելով, որ գուցե Շահինի արվեստի «մելամաղձությունը» շաղկապված է նշված պատմական դեպքերի հետ: Նկարիչն իր առաջին փորագրանկարներում արդեն տիրապետում էր տեխնիկական առանձնահատկություններին. «Դիտողութեան սուր ծիրքերը, էջին կարգաւորման կատարեալ հմտութիւն մը, արժեցումներու թանկագին արուեստ մը... անոր մէջ ի հայտ կը բերէին առաջին կարգի արուեստագէտ մը» [40, էջ 6]: Գրվածքն ուղեկցվում է աշխատանքների թեմատիկ, կոմպոզիցիոն նկարագրություններով, և տիպարների վերարտադրման արտահայտչականությամբ Շահինի գործերը համեմատում է Շվեյցարիայում ծնված նկարիչ Թեոֆիլ Ստեյնլենի (1859-1923) ստեղծագործությունների հետ: Մուրեն բավականին հանգամանալից է անդրադառնում նկարչի գործերին և, ինչպես վերը քննարկված Ռոժե Մարքսի հոդվածում, հատկապես արժևորվում է Շահինի դիմանկարները: Հոդվածի երկրորդ հատվածը տպվում է նույն՝ 1902 թվականի փետրվարի, թիվ 2-ում, որտեղ Մուրեի կողմից ուսումնասիրվում են նկարչի կենդանագրերը: Կատարողական վար-

⁶ Նկարչի ծննդյան 100-ամյակին նվիրված աշխատանքների կատալոգում նշված է, որ Մարքսի, բնագրի լեզվով, սույն հոդվածը հրատարակված է այլ արտասահմանյան հանդեսում (Extrait de garette des Beaux-Arts, Paris, 1900) [30, էջ 34]:

պետությամբ առանձնացնում է Ա. Ֆրանսի, Ժ. Կորնելիի դիմանկարները: Ծավալուն հողվածն ավարտվում է նկարչի արվեստը բնորոշող հետևյալ տողերով. «Իր զգայունության նրբությամբ, իր տեսողության սրությամբ, շինուածքին վարպետությամբ, Շահին իրաւունք ունի արուեստագէտներուն եւ քննադատներուն յարգանքը վայելելու: Խղճամիտ աշխատող մըն է, ճշմարտության անխոնջ հետետող մը» [41, էջ 27]:

Արվեստագիտության թեկնածու Մ. Քամալյանն «Էդգար Շահինի ստեղծագործությունը «Անահիտի» էջերում (1898-1911)» վերտառությամբ իր հողվածում հիշատակում է, որ 1902 թվականի մայիսի 29-ին է. Շահինը մասնակցել է Ա. Չոպանյանի կազմակերպած «Հայ արվեստի երեկույթին»՝ ձևավորելով միջոցառման ծրագիրը: Այն «...պճնուած էր հայկական ոճով գունաւոր սիրուն զարդանկարով մը զոր էտկար Շահին փորագրած էր Բարիզի ազգային մատենադարանին մէջ գտնուած հին նկարաւոր ձեռագրի մը հետետողությամբ» [52, էջ 169]:

Շահինի մասին Գյուստավ Սուվիեի ծավալուն հողվածը տպագրված «L'Art Décoratif», Paris, 1905 գեղարվեստական ամսագրում, որի հայերեն թարգմանությունը զետեղվեց 1905 թվականի «Անահիտում»: Հողվածում ծանուցվում է Անատոլ Ֆրանսի «Կատակերգական պատմություն» (Histoire comique) երկի Շահինի ինքնատիպ փորագրություններով նկարագարդման մասին, որը, ըստ հեղինակի, աչքի էր ընկնում Ֆրանսի կերպարների և Շահինի ստեղծած տիպարային մեկնաբանման ներդաշնակությամբ: Նկարչի արվեստի վերաբերյալ ֆրանսիացի քննադատը գրում է. «Շահինի ոլորտը դիտողութեան եւ նկարագրի ոլորտն է...մշտական եւ այլազան մարդկային կատակերգութիւնն է, որ Շահին կը ճգնի արտայայտել իր օֆորթներուն մէջ...» [49, էջ 55-56]: Հողվածագիրը հպանցիկ է անդրադառնում արվեստագետի կենսագրությանը՝ այդ առանցքում կարևորելով Անտոնիո Պաոլետիի դերը երիտասարդ նկարչի ձևավորման մէջ և միաժամանակ պնդում է, որ Շահինի՝ օֆորտի, գրաֆիկայի հանդեպ նախընտրությունն ամենևին չէր ծագում գեղանկարչության հանդեպ թերի ունակություններից ելնելով: Նշում է առաջին անգամ 1896-ի Սալոնում ցուցադրված «Մի մուրացկան» (Un gueux) աշխատանքը, հաջորդաբար՝ «Ինքնասպան կինը» (1898), «Մոնմարտը» 1899 Սալոն ուղարկված գործերը, որոնց վերլուծման արդյունքում հեղինակը կանգ է առնում ստեղծագործությունների լուսաստվերային մշակման առանձնահատկությունների վրա, ընդգծելով նշված աշխատանքներում լույսի վերարտադրման տարբերությունները: «Փարիզի թշուառութեան ամբողջ կեանքն է, որ իր ուշադրութիւնը կը գրաւէ, մանաւանդ որ ինքն ալ հակամէտ է ատոր՝ ազդուած իր երկրին մէջ տեսած անբարեկեան տեսարաններէն» - եզրահանգում է Սուվիեն [49, էջ 59]: Անդրադառնում է նկարչի «Շատո Ռուժ», «Տաճկաստանի գնչուներ» գործերին, «Լուիզ Ֆրանսի» դիմանկարին: Հողվածի շարունակությունը և վերջը տպվում է «Անահիտի» հաջորդ համարում: Հողվածագիրը նշում է, որ 1899-ին Կլեման Ժանեն արվեստագետի առաջին 25 գործերը ցուցակագրել է, և 1900 թվականին Ռոժե Մարքսը հանրության ուշադրությունը կիրավիրի այդ կարևոր աշխատանքի վրա: Հեղինակը

հայտնում է, որ 1903 թվականի Վենետիկի միջազգային ցուցահանդեսում ինքն առաջարկել է, որ Շահինի (նկարիչը ներկայացրել էր 20 օֆորտային աշխատանք) «անզուգական գործերին» շնորհիվ ոսկե մեդալ [50, 74]: Տվյալ ժամանակահատվածում Շահինը աշխատում էր 3 գրքերի նկարազարդման վրա՝ Գ. Մուրեի «Փարիզյան տոնավաճառի տիպարներ», Ա. Ֆրանսի «Կատակերգական պատմություն», Օ. Միրբոյի «Նախասենյակում» երկերը: Տալիս է այդ գրքերի նկարազարդման ընդհանրական բնութագիրը, գտնելով, որ Շահինը իր նկարազարդումներում գրողի հետ չի մրցում, հեղինակը պատմում է, իսկ նկարիչը ցույց է տալիս ամենահատկանշականը:

1911 թվականի հանդեսում առկա է անանուն հեղինակի կողմից ներկայացված՝ Է. Շահինին նվիրված նախորդ հոդվածների համեմատ առավել հակիրճ անդրադարձը: Հոդվածը վերաբերում է «Ժորժ Պոի» պատկերասրահում (Georges Petit) «La Cimaise» ընկերության կազմակերպած ցուցահանդեսին մասնակցած Շահինի գործերին: Նկարչի ցուցադրած աշխատանքներից հեղինակը հատկապես առանձնացնում է պարուհիների և «մերկի» պատկերումը նրա արվեստում, որոնք բանաստեղծական ըմբռնողության և պատկերի կենդանի արտահայտչականության առումով համարում է գլուխգործոցներ [31, էջ 225]: Նյութը նաև տեղեկացնում է, որ գեղարվեստական քննադատ Գյուստավ Քանն այդ ցուցահանդեսի առթիվ պատրաստում է նկարչի արվեստի վերաբերյալ ուսումնասիրություն, որը հրատարակվելու է «Արվեստն ու արվեստագետները» (L'Art et les Artistes) հանդեսի 1913 թվականի հունվարի համարում [43, էջ 26]:

«Անահիտի» այս գնահատականները, Շահինի ստեղծագործական ձեռքբերումների ու նորանոր հաջողությունների մասին պարբերաբար տրվող հաղորդումները մեծ դեր ունեցան տաղանդավոր մեծ նկարչին հայությանը ներկայացնելու և նրա գործը հանրահռչակելու իմաստով:

Ինչպես նկատեցինք՝ «Անահիտում» թե՛ առանձին հոդվածների ձևով, թե՛ ֆրագմենտային մեջբերումներով դրվում էին Է. Շահինին նվիրված, արտասահմանյան մամուլում առկա հոդվածների թարգմանությունները: Նման մոտեցումը պահպանվում է նաև անվանի ծովանկարիչ Արսեն Շաբանյանի՝ 1905 թվականի մարտի 16-31-ը «Ժորժ Պոի» պատկերասրահում բացված անհատական ցուցահանդեսին առնչվող շարադրանքում, որին արձագանքած օտարալեզու մամուլի հոդվածների թարգմանությունը տեղադրվում է հանդեսում: Նույն 1905 թվականի «Անահիտում» տպվում է «Le Journal» օրաթերթի «Արուեստագետներու ուրուագիծներ» բաժնում Ֆրեդերիկ Պաթայի հոդվածը⁷ [42, էջ 88]: Հեղինակը նշում է. «Արսեն Շապանեանի գործերուն ցուցադրութիւնը, նուիրագործունն է տաղանդի մը, որ գիտէ ամենաբարձր աստիճանով ճշմարտութիւն արտայայտել՝ պարզ լեզուով մը, ուր երբեմն բանաստեղծական սարսուռն երագին ծնունդ կու տայ» [42, էջ 88-89]: Նկարչի աշխատանքներն

⁷ Ֆրանսալեզու օրաթերթի սույն հոդվածի հայերեն թարգմանությունը հրատարակվել է նաև Պոլսում լույս ընծայվող՝ 1905 թվականի «Մասիս» շաբաթաթերթում [25, էջ 36-37]:

արժանանում են քննադատի գովեստին: Մատնանշելով Շաբանյանի ձեռքբերումները և մրցանակները՝ հողվածում հիշատակվում է, որ նկարչի «Մայր մտնող արևը» աշխատանքը գնել է կառավարությունը՝ Լյուքսեմբուրգի թանգարանում ցուցադրելու համար⁸: «Tan» թերթի լրագրող Թիեպո Սիտոն նկարչի աշխատանքները համարում է ճիշտ դիտված պատկերներ, նկարչի ներկապնակը՝ ճկուն և ներդաշնակ: «New York Herald»-ի քննադատի կողմից ևս բարձր են գնահատվում նկարչի ցուցադրած գործերը, մատնանշվում են դրանցից առավել հաջողվածները և ներկայացվում է ծովանկարների պատկերի և երփնագրի նկարագրությունը: «Շապանեան յաջողած է շատ լաւ արտայայտել բանաստեղծութիւնը ջուրերու խաղացած երեսին՝ նորածագ լուսնի մը ճառագայթներու տակ... Արշալոյսին և վերջալոյսին բոլոր գունաշարքը կը գտնուի Շապանեանի նկարներուն և փասթելներուն մէջ...», - գրում է Պոլ Լուի Էրվիենը «La Presse»-ում [42, էջ 89]:

Գրվածքը եզրափակվում է ժամանակի հռչակավոր քննադատ Ռենե Ս. Էզոուայի դրվատալի հողվածով, որտեղ հեղինակը գտնում է, որ Շաբանյանի կտավները տոգորված են լայնածավալ հորիզոնների մաքուր պայծառությամբ, նրանց տեսքը կգրավի այն անձանց, ովքեր իրենց էության լավագույն մասը ձոնել են ծովին՝ այն ունկնդրելու, շնչելու, դիտելու հափշտակությամբ:

Շարունակելով ծովանկարչության թեման նկատում ենք, որ հանդեսը անկարող եղավ անհաղորդ մնալ հայազգի մեծանուն ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու (1817-1900) մահվան գույժին, և 1900 թվականի «Անահիտ» հանդեսի ապրիլ, մայիս, հունիս միացյալ համարում գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի հեղինակությամբ հրատարակեց Հ. Այվազովսկուն նվիրված փոքրածավալ հողվածը: Բաշինջաղյանի կարծիքով՝ XIX դարում հայ ազգը ընդունակ եղավ ծնելու միայն երկու հանճար՝ Հովհաննես Այվազովսկի և Պետրոս Ադամյան: Հեղինակը բարձր է գնահատում Այվազովսկու վաստակը հայկական և, հատկապես, ռուսական կերպարվեստում. «Նա մեծ ծառայութիւն մատուցեց ռուսական արուեստին, թէ իբրեւ ծովանկարչութեան նախահայր եւ թէ ռուսաց նկարչութեան հետ երոպացիներին ծանօթացնող: Նրանից առաջ ոչ մի գեղարուեստագէտ չէր ձեռնարկել պատկերահանդէսներ բանալու արեւմտեան մեծ քաղաքներում» [24, էջ 160]: Հեղինակը նշում է, որ շատ անգամներ թեպետ պախարակում էին նկարչի շտապ նկարված, անհաջող աշխատանքները հրապարակելը, սակայն չէին ուրանում, որ այդ մարդու մեջ տարօրինակ կրակ կա: Բաշինջաղյանը գտնում է, թե նա որպես «մարինիստ» առաջնակարգ էր, իսկ իբրև ծովի երգիչ-բանաստեղծ՝ միակը: Այվազովսկուն համարում էր «երջանիկ մարդ» այն իմաստով, որ երկար ապրելով երկրային կյանքին հրաժեշտ տվեց այն ժա-

⁸ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Ադայանն իր աշխատության մեջ նշում է, որ Շաբանյանի «Լուսնի լույսը» («Clair de Line») գիշերայի էտյուդը ժամանակին ձեռք է բերել Փարիզի Լյուքսեմբուրգյան թանգարանը, որն այլևս գոյություն չունի [19, էջ 241; 42, էջ 24]:

մանակ, երբ այլևս բան չունեի ասելու: Հայազգի ծովանկարչի արվեստը արժևորող իր ընդհանրական ակնարկը Բաշինջադյանն ավարտում է հետևյալ խոսքերով. «Ոմանք ասում են թե իր ազգի համար Այվազովսկին մի մեծ բան չի արած: Նա իր դիպիչ վրձինով մեծ պատիվ բերեց Հայոց ազգին, եւ այդ բանը թոյլ եմ տալիս ինձ համարել անզուգական ծառայութիւն» [24, էջ 161]:

«Անահիտը», հավատարիմ մնալով կերպարվեստի պատկերահանդեսների լուսաբանման իր աչալուրջ վերաբերմունքին, 1904 թվականի ապրիլ-մայիս միացյալ համարում ծավալուն հոդվածով ներկայացրեց 1904-ին, Թիֆլիսի Փառքի Տաճարի սրահում կազմակերպված Թիֆլիսի տեղացի արվեստագետների տարեկան ցուցահանդեսը: Հոդվածի հեղինակն էր գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ և խմբագիր Տիգրան Զավենը⁹ (Չուգասոյան): Հեղինակի՝ թիֆլիսյան պատկերահանդեսին նվիրված ծավալուն հոդվածը հանդես է գալիս ժամանակի գեղարվեստի խնդիրների առաջադրման նախաբանով, որտեղ շրջանառվում է այն միտքը, որ «չենք կարող Կովկասի արվեստագետներից պահանջել եվրոպացի եղբայրակիցների կատարելությունը և խորությունը», որովհետև ինչպես ապացուցել է Իպոլիտ Տենը՝ գեղարվեստական գործը կապված է միջավայրի և ժամանակի հետ [27, էջ 83]: Կովկասյան ժողովուրդը, մշակութային և քաղաքակրթական իր ուրույն աստիճանով պայմանավորված, բնական է, որ անկարող եղավ հասկանալ և քաջալերել գեղարվեստի բարձրագույն արտահայտությունները: Այդ պատճառով ցուցահանդեսը կազմակերպիչների ակնկալած արդյունքները չարդարացրեց: Ինդիի լուծման կարևոր առաջարկ է դիտվում հեղինակի կողմից առաջ քաջված Թիֆլիսի Գոլովինսկի փողոցում նկարչասրահի հիմնումը, որով արվեստագետները կունենային մշտական ցուցադրավայր, դրանով կոյուրանար նաև գործերի վաճառքը և, ամենակարևորը, հասարակությունն իր զբոսանքի, «անհոգ թափառումների» ժամանակ բնազդաբար կառնչվեր գեղանկարչությանը և քանդակագործությանը¹⁰: Թիֆլիսյան ներկա ցուցահանդեսին մասնակցած հայ արվեստագետներից էին Գ. Բաշինջադյանը, Փ. Թերլեմեզյանը, Հ. Հակոբյանը, Ղ. Արտազյանը (Լազար Արտազով), ռուս արվեստագետներ Բ. Ֆոգելը, Ռ. Զոմմերը, Ի. Զանկովսկին, Ա. Զախառովը, վրացի նկարիչ Մ. Թոիձեն և այլք:

⁹ **Զավեն Տիգրան** (Չուգասոյան) (1874, Սեբաստիա – 1938, Երևան): Սովորել է Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանում, ապա Փարիզի և Ժնևի համալսարաններում: 1903-ին Թիֆլիսում աշխատակցել է «Մուրճ» ամսագրին, հանդիսացել է Պոլսի «Սուրհանդակ» (1908), «Ժողովուրդ» (1908), «Զարթոնք» (1921-1922) պարբերականների խմբագիրը: 1933-ին ներգաղթել է Հայաստան, գործուն մասնակցություն է ունեցել գրական-մշակութային կյանքին: Անհիմն բռնադատվել և գնդակահարվել է, հետմահու արդարացվել (1957) [28, էջ 386]:

¹⁰ Հոդվածագիրը գրում է, որ տվյալ առաջարկի վերաբերյալ նկարիչները հայտնել են, որ ունեն հավաքատեղի՝ ակումբ, նկարչասրահ: Տ. Զավենի հավաստմամբ՝ այդ պատկերասրահը գտնվում էր Թիֆլիսի խուլ փողոցներից մեկում և իր առաջադրած խնդիրները չէր լուծում. «Գալերիան՝ գեղարուեստի սիրողներից անելի գեղարուեստով չջահագրգռողներին է պետք» [27, էջ 84]:

Հողվածագիրը մատնանշում է տվյալ նկարիչների հաջողված աշխատանքները, նշում է ցուցադրված գործերի քանակը, որին համադրվում է ստեղծագործությունների հակիրճ նկարագիրը: Արձանագրենք, որ հեղինակը ինչպես զուգահեռներ է անցկացնում և վերլուծում գործերը, այնպես էլ վերոնշյալ արվեստագետների կերպարվեստի բնագավառում կատարած ներդրման, գեղանկարչական մոտեցումների, ընկալումների դիտանկյունից համեմատական վերլուծություններ է կատարում: Անդրադառնալով գեղանկարիչ Վերխադուրովի¹¹ ցուցադրած «Սևազգեստ կինը» աշխատանքին՝ նշում է, որ թեպետ նկարիչն ունի ավյուն և կիրք, բայց չի հավասարվում Թերլեմեզյանի խորատեսության ուժգնությանը [27, էջ 86]:

Նկատում ենք, որ Բաշինջաղյանի, Թերլեմեզյանի, Հակոբյանի, Զախառովի գործերն արժանանում են հեղինակի շոյալ գովասանքին, որին հակադրվում է մի քանի նկարիչների արվեստի մասին քննադատական խոսքը, որոնցից առաջինը Ղազար Արտազյանն է. «Արտագեանի գործերում գոյների տաքութեան, յղացումի խորութեան պակասն է, նրա նկարները ձեզ չեն քաշում, չեն ստիպում կանգ առնել» [27, էջ 86]: Գնահատելով Իյա Զանկովսկու արվեստի տեխնիկական հմտությունները, վերջինիս գործերը համարում է միօրինակ, իսկ ստեղծագործության հղացումը՝ աղքատ: Ռիխարդ Զոմմերի ստեղծագործության վերաբերյալ հեղինակը գրում է. «Նրա պատկերները պաղ են, նա առաջին րոպեին մատնում է իր ամբողջ մտածումը... Գեղարուեստական հաճոյքը, իսկապես մտքի ճիգի գործողութեան մէջ է կայանում» [27, էջ 86]: Հեղինակի քննադատական խոսքին է արժանանում նաև Թոմսի արվեստը:

Ցուցահանդեսին մասնակցած հայ, վրացի և գերմանացի քանդակագործներից արժանահիշատակ է համարվում Միքայել Միքայելյանը: Քանդակագործի շնորհքի պերճախոս ապացույցներն են 1904 թվականին ստեղծված և սույն պատկերահանդեսում ներկայացված «Շուշեցու տիպն» ու ռուս ականավոր կրկեսային գործիչ Ա. Դուրովի դիմաքանդակը:

Շարունակելով պատկերահանդեսների լուսաբանման թեման նշենք՝ «Անահիտն» իր 1905 թվականի համարներում առանձին հրապարակումներով անդրադառնում է հայազգի ևս երկու արվեստագետների ստեղծագործական գործունեությանը: Դրանցից առաջինը XX դարի հայ ազգային կերպարվեստի առաջին կին արվեստագետ Արմինիա Կարբոնել Բաբայանն էր¹²: Սույն հրապարակումը, մասնավորաբար, անդրադառնում է նույն՝ 1905-ի գարնանը Փարիզի «Grand Palais»-ում բացված կին արվեստագետների ցուցահանդեսին, որտեղ հատուկ ընդգծվում է Ա. Բաբայանի մասնակցության հանգամանքը: Հողվածը

¹¹ Կարծում ենք, որ նկատի ունի 1901-1907 թթ. Ի. Ռեպինի արվեստանոցում կրթված ռուս գեղանկարիչ Նիկոլայ Վերխտուրովին (1863-1944), ով կարող էր մասնակցած լիներ վերոնշյալ ցուցահանդեսին:

¹² Նկարչուհու արվեստի ներկայացման, ուսումնասիրման տեսանկյունից խիստ կարևոր են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի սույն հոդվածները [18, էջ 256-265; 20, էջ 97-114]:

իրագրվում է, որ պատկերահանդեսը մասնավոր մի բաժին էր տրամադրել ֆրանսիացի մեծանուն արվեստագետ Էժեն Կարյերի դուստրերին և նրա շնորհալի աշակերտներին: Ա. Բաբայանի ուշագրավ աշխատանքներից են համարվում նրա ինքնատիպ բնանկարները և, հատկապես, կենդանագրերը, որոնց մեջ արժանի է հիշատակման տարեց կնոջ դիմանկարը: Հեղինակի կողմից շեշտվում է, որ Ա. Բաբայանի գործերն «այդ բաժնին ամենէն ուժեղ կտորներն էին՝ անտարակուսելի կերպով» [51, էջ 48]:

Երկրորդ նյութը նվիրված էր պոլսահայ նշանավոր գեղանկարիչ Լևոն (Սերովբե) Քյուրքչյանի¹³ արվեստին: Հանդեսը հայտնում է. «Անժէի նկարչական վերջին Սալոնին զոր կազմակերպած էր Գեղարուեստից եւ գրականութեան միջազգային Միութիւնը, մասնակցած է նաեւ Լ. Քիւրքճեան»: Այս հակիրճ ակնարկում մեջբերվում է նաև արտասահմանյան մամուլի («Les Tendances Nouvelles», «Tan») հիացական խոսքը նկարչի ցուցադրած «Գինով կինը» աշխատանքի վերաբերյալ [54, էջ 252]:

Հետազոտելով «Անահիտի» առաջին շրջանի՝ կերպարվեստին նվիրված հոդվածները, նկատում ենք, որ հանդեսի էջերում առավել շատ ուսումնասիրվել և ներկայացվել են ժամանակի հայ նկարիչների գեղանկարչական և գրաֆիկական գործերը: Մեր ականավոր քանդակագործների մասին առանձին շարադրված հոդված չհայտնաբերեցինք: Միակ նյութը, որն առնչվում է քանդակագործությանը, բայց կրում է տեղեկատվական բնույթ և ոչ արվեստաբանական մտքի շարադրում, դա 1911-ի թիվ 1-2-ում Խ. Աբովյանի արձանի հանգանակությանը նվիրված գրվածքն է [37, էջ 42]: Նյութն իրագրվում է, որ Բաբվում գործող «Հայոց կուլտուրական միությունը» որոշել է հանգանակությամբ Երևանի պուրակներից մեկում տեղադրել Խ. Աբովյանի հուշարձանը: Շուտով հայտարարվում է մրցույթ, և հանգանակությունը բացվում է Թիֆլիսի «Հորիզոն» թերթի խմբագրության կողմից: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Աղասյանն այս մասին գրում է. «Հանձնաժողովին իրենց նախագծերը ներկայացրած արվեստագետներից հաղթող ճանաչվեց Ա. Տեր-Մարությանը, որի առաջարկը շուտով պաշտոնապես հաստատվեց Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայի հանձնաժողովի կողմից» [19, էջ 67]:

¹³ Նկարիչը ծնվել է Պոլսում 1872 թվականին, նախնական ուսումը ստացել է Նարլը-Գափուի թաղային հայ դպրոցում, 1892-ին ընդունվել է Պոլսո Գեղարվեստից վարժարան, ավարտելով այն՝ 3 տարի դասավանդել է դպրոցներում, ապա անցնելով Փարիզ՝ հաճախել է Ժյուլիենի Գեղարվեստի ակադեմիա՝ ժամանակի հայտնի մանկավարժ-վարժապետներ Բենժամեն Կոնստանի և Ժան Պոլ Լորանսի մոտ: Լ. Քյուրքչյանին ճանաչում է բերել «Օջախ» աշխատանքը, որն ընդունվել է ֆրանսիական նկարիչների սալոն, իսկ 1905 թվականին Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում նրա «Գինով կինը» կտավն արժանացել է արծաթե մեդալի [44, էջ 259; 47, էջ 39]:

Եզրակացություն

«Անահիտը», հրապարակի վրա լինելով շուրջ 30 տարի, անփոխարինելի ծառայություններ է մատուցել հայ գրականության ու գեղարվեստի առաջընթացին, մեծապես նպաստել հայ ու եվրոպական մշակույթի, գրական կապերի հաստատմանը: «Անահիտ» հանդեսի հրատարակությունը հաջորդեց Պետերբուրգում հրատարակվող «Արաքս» գրական և գեղարվեստական պատկերազարդ հանդեսին և թիֆլիսյան «Տարագ» գեղարվեստական, գրական, երգիծական պատկերազարդ շաբաթաթերթին: Նկարազարդումներով, պատկերների հարստությամբ թեև «Անահիտը» զիջում էր «Արաքսին» և «Գեղունիին» (Պատկերազարդ հայաթերթ, Վենետիկ), սակայն թեմատիկ, գաղափարական ներառմամբ, գեղարվեստական ընթացքի հետազոտման խորությամբ և արվեստի նորահայտ երևույթների մեկնաբանմամբ «Անահիտը» նոր քայլ էր գեղարվեստական հանդեսի զարգացման ճանապարհին: «Անահիտում» արվեստաբանական քննության են ենթարկվել հայ արվեստի պատմության առանձին հարցեր, տարածվել են հայ ժամանակակից գեղարվեստի նվաճումները, պատմական, արվեստաբանական նյութերի թարգմանություններով ու եվրոպական կերպարվեստի արժևորմամբ ուղիներ են հարթվել հայ գեղարվեստական մտքի միջազգային առնչությունների համար: Հանդեսը ընթերցասեր հասարակայնությանն էր ծանոթացնում հայկական հին ու նոր ժամանակաշրջանների արվեստի եվրոպական գնահատումները:

Ընդհանրապես «Անահիտում» ինչպես արվեստի, այնպես էլ գրականության խնդիրների արծարծումները ներառում են նաև գեղարվեստական պատկերների, հայ և համաշխարհային մշակույթի նշանավոր գործիչների, գրողների ու արվեստագետների լուսանկարներ: Համաշխարհային արվեստի կերտվածքներն ընտրվում էին Լուվրի, Փարիզի, Բեռլինի, Մյունխենի, Դրեզդենի, Լոնդոնի և այլ կենտրոնների թանգարաններից: Դրանք մեծապես նպաստում էին հանդեսում հրապարակված նյութերի ընկալմանը:

Գրականություն

1. Ազգային քրոնիկ. Անաթոլ Ֆրանսու եւ Բարիզի հայերը, «Անահիտ». Փարիզ, 1900, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, թիվ 9, 10, 11:
2. Ազգային քրոնիկ. Բաշինջաղեան, «Անահիտ». Փարիզ, 1901, օգոստոս, թիվ 8:
3. Ազգային քրոնիկ. Բաշինջաղեանի նկարները, «Անահիտ». Փարիզ, 1900, հունվար, թիվ 3:
4. Ազգային քրոնիկ. Բաշինջաղեանի ցուցահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1900, օգոստոս-սեպտեմբեր, թիվ 9-10-11:
5. Ազգային քրոնիկ. Բաշինջաղեանցի ցուցահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1900, հոկտեմբեր, թիվ 12:
6. Ազգային քրոնիկ. Էտկար Շահին, «Անահիտ». Փարիզ, 1900, փետրվար-մարտ, թիվ 4-5:
7. Ազգային քրոնիկ. Էտկար Շահին, «Անահիտ». Փարիզ, 1901, մարտ, թիվ 3:
8. Ազգային քրոնիկ. Հայերը Տիեզերական ցուցահանդեսին մէջ, «Անահիտ». Փարիզ, 1900, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, թիվ 9, 10, 11:

9. Ազգային քրոնիկ. Հայ նկարիչները ի Բարիզ, «Անահիտ». Փարիզ, 1901, ապրիլ-մայիս, թիվ 4-5:
10. Ազգային քրոնիկ. Շահին, «Անահիտ». Փարիզ, 1900, հունվար, թիվ 3:
11. Ազգային քրոնիկ. Շապանեանի ցուցահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1900, հունվար, թիվ 3:
12. Ազգային քրոնիկ. Շապանեանի ցուցահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1902, մայիս, թիվ 5:
13. Ազգային քրոնիկ. Վ. Մախոսեանի ցուցահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1902, ապրիլ, թիվ 4:
14. Ազգային քրոնիկ. Վ. Մախոսեանի ցուցահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1904, մարտ, թիվ 3:
15. Ազգային քրոնիկ. Փանոս Թերլեմեզեան, «Անահիտ». Փարիզ, 1900, հունվար, թիվ 3:
16. Ազգային քրոնիկ. Քիրքեան, «Անահիտ», 1901, մարտ, թիվ 3:
17. Ազգային քրոնիկ. Քիրքեանի մահը, «Անահիտ», 1903, օգոստոս, թիվ 8:
18. Աղապյան Ա. Արմինիա Բաբայան՝ էժեն Կարյերի հայ աշակերտուհին, Հայ-Ֆրանսիական պատմամշակութային առնչություններ (VII միջազգային գիտաժողովի նյութեր). Երևան, «Վան Արյան», «Մուղնի», 2001, էջ 256-265:
19. Աղապյան Ա. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում. Երևան, «Ոսկան Երևանցի», 2009:
20. Աղապյան Ա. Մի էջ ֆրանսահայ կերպարվեստի պատմությունից. Արմինիա Կարյեր-Բաբայան, «Պատմաբանասիրական հանդես». Երևան, 2001, № 1, էջ 97-114:
21. Անանուն. «Անահիտ». Փարիզ, 1904, ապրիլ-մայիս, թիվ 4-5:
22. Ավագյան Վ. Արշակ Չոպանյանի կյանքի և գործունեության նկարագիրը, «Պատմաբանասիրական հանդես». Երևան, 2022, № 2, էջ 63-88:
23. Ավետիսյան Յ. Անահիտ հանդեսը. Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1999:
24. Բաշինջաղեանց Գ. Յովհաննես Այվազովսկի, «Անահիտ». Փարիզ, 1900, ապրիլ, մայիս, հունիս, թիվ 6, 7, 8:
25. Գեղարուեստ, «Մասիս». Պոլիս, 2 շրջան, թիվ 3:
26. Դալլաքյան Կ. Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը. Երևան, «Սովետական գրող», 1987:
27. Զաւէն Տ. Կովկասեան քրոնիկ. Թիֆլիսի նկարչահանդեսը, «Անահիտ». Փարիզ, 1904, ապրիլ-մայիս, թիվ 4-5:
28. Զավեն Տիգրան. Ով ով է: Հայեր (կենսագրական հանրագիտարան), հ. 1. Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 2005:
29. Էտկար Շահին. «Անահիտ». Փարիզ, 1899, նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ 1-2:
30. Էդգար Շահինի աշխատանքների կատալոգ (ՀՊՊ-ի հավաքածու), ծննդյան 100 ամյակ. Երևան, 1975:
31. Էտկար Շահինի նոր գործերը, «Անահիտ». Փարիզ, 1911, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիվ 9-12:
32. Էդգար Շահին (Ֆրանսահայ կերպարվեստը Հայաստանյան թանգարաններում). Երևան, 2018:
33. Ժանէն Ք. Էտկար Շահին, «Անահիտ». Փարիզ, 1899, սեպտեմբեր, թիվ 1:
34. Հակոբյան Ա. Հայագրի ծովանկարիչները. Երևան, «Տիգրան Մեծ», 2017:
35. Հայերն ի Բարիզ, «Անահիտ». Փարիզ, 1900, ապրիլ, մայիս, հունիս, թիվ 6, 7, 8:

36. Հայերն ի Բարիզ. Շահին եւ Ջաքարեան, «Անահիտ». Փարիզ, 1900, ապրիլ, մայիս, հունիս, թիվ 6, 7, 8:
37. Հանգանակութիւն Արովեանի յուշարձանին ի նպաստ, «Անահիտ». Փարիզ, 1911, հունվար-փետրվար, թիվ 1-2:
38. Մարտիկյան Ե. Հայկական կերպարվեստի պատմություն, Գիրք Գ. Երևան, «Սովետական գրող», 1987:
39. Մարքս Ռ. Էտկար Շահին, «Անահիտ». Փարիզ, 1900, փետրվար-մարտ, թիվ 4-5:
40. Մուրէ Կ. Հայ փորագրիչ մը. Պ. Էտկար Շահին, «Անահիտ». Փարիզ, 1902, հունվար, թիվ 1:
41. Մուրէ Կ. Հայ փորագրիչ մը. Պ. Էտկար Շահին (շարունակություն և վերջ), «Անահիտ». Փարիզ, 1902, փետրվար, թիվ 2:
42. Շապանեանի ցուցահանդէսը, «Անահիտ». Փարիզ, 1905, ապրիլ, թիվ 4:
43. Շիշմանյան Ռ. Էդգար Շահին. Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1956:
44. Շիշմանյան Ռ. Բնանկարն ու հայ նկարիչները. Երևան, «Հայպետհրատ», 1958:
45. Չոպանեան Ա. Անահիտի դերը, «Անահիտ». Փարիզ, 1899, հոկտեմբեր, թիվ 12:
46. Չոպանեան Ա. Մանուէլեան-Շահին, «Անահիտ». Փարիզ, 1900, ապրիլ, մայիս, հունիս, թիվ 6, 7, 8:
47. Չուգասզյան Լ. Մի մոռացված անուն, «Արվեստ», 1990, № 4, էջ 38-40:
48. Շապանեան Պ. «Անահիտ». Փարիզ, 1905, հունվար, թիվ 1:
49. Սուլիէ Կ. Էտկար Շահին, «Անահիտ». Փարիզ, 1905, մարտ, թիվ 6:
50. Սուլիէ Կ. Էտկար Շահին (շարունակություն և վերջ), «Անահիտ». Փարիզ, 1905, ապրիլ, թիվ 4:
51. Տիկին Բաբաեան-Կարբոնել, «Անահիտ». Փարիզ, 1905, փետրվար, թիվ 2:
52. Քամայյան Մ. Էդգար Շահինի ստեղծագործությունը «Անահիտի» էջերում (1898-1911), Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանի նյութեր. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2023, 15 (№ 2), (17.00.03 - 18.00.01), էջ 163-172:
53. Քիթապճի Խան եւ 1900 ցուցահանդէսին պարսկական բաժինը, «Անահիտ». Փարիզ, 1899, հոկտեմբեր, թիվ 12:
54. Քիւրքեան. «Անահիտ». Փարիզ, 1905, դեկտեմբեր, թիվ 12:

References

1. Azgayin qronik. Anat'ol Frans ev Barizi hayery', «Anahit». P'ariz, 1900, hulis, o'gostos, september, t'iv 9, 10, 11.
2. Azgayin qronik. Bashinjaghean, «Anahit». P'ariz, 1901, o'gostos, t'iv 8.
3. Azgayin qronik. Bashinjagheani nkarnery', «Anahit». P'ariz, 1900, hunvar, t'iv 3.
4. Azgayin qronik. Bashinjagheani cowcahande'sy', «Anahit». P'ariz, 1900, o'gostos-september, t'iv 9-10-11.
5. Azgayin qronik. Bashinjagheanci cowcahande'sy', «Anahit». P'ariz, 1900, hoktember, t'iv 12.
6. Azgayin qronik. E'tkar Shahin, «Anahit». P'ariz, 1900, p'etrvar-mart, t'iv 4-5.
7. Azgayin qronik. E'tkar Shahin, «Anahit». P'ariz, 1901, mart, t'iv 3.
8. Azgayin qronik. Hayery' Tiezerakan cucahande'sin me'j, «Anahit». P'ariz, 1900, hulis, o'gostos, september, t'iv 9, 10, 11.
9. Azgayin qronik. Hay nkarichnery' i Bariz, «Anahit». P'ariz, 1901, april-mayis, t'iv 4-5.
10. Azgayin qronik. Shahin, «Anahit». P'ariz, 1900, hunvar, t'iv 3.

11. Azgayin qronik. Shapaneani cucahande'sy', «Anahit». P'ariz, 1900, hunvar, t'iv 3.
12. Azgayin qronik. Shapaneani cucahande'sy', «Anahit». P'ariz, 1902, mayis, t'iv 5.
13. Azgayin qronik. V. Maxo'xeani cucahande'sy', «Anahit». P'ariz, 1902, april, t'iv 4.
14. Azgayin qronik. V. Maxo'xeani cucahande'sy', «Anahit». P'ariz, 1904, mart, t'iv 3.
15. Azgayin qronik. P'anos T'erlemezean, «Anahit». P'ariz, 1900, hunvar, t'iv 3.
16. Azgayin qronik. Qiurqtean, «Anahit», 1901, mart, t'iv 3.
17. Azgayin qronik. Qiurqteani mahy', «Anahit», 1903, o'gostos, t'iv 8.
18. Aghasyan A. Arminia Babayan' E'jhen Karyeri hay ashakertowhin, Hay-fransiakan patmamshakut'ayin ar'nchut'yunner (VII mijazgayin gitajhoghovi nyut'er). Yerevan, «Van Aryan», «Mughni», 2001, e'j. 256-265.
19. Aghasyan A. Hay kerparvesti zargacman owghinery' XIX-XX darerum. Yerevan, «Oskan Yerevanci», 2009.
20. Aghasyan A. Mi e'j fransahay kerparvesti patmut'yunic. Arminia Karbonel-Babayan, «Patmabanasirakan handes». Yerevan, 2001, № 1, e'j 97-114.
21. Ananun. «Anahit». P'ariz, 1904, april-mayis, t'iv 4-5.
22. Avagyan V. Arshak Chopanyani kyanqi ev gorc'uneut'yan nkaragiry', «Patmabanasirakan handes». Yerevan, 2022, № 2, e'j 63-88.
23. Avetisyan Y. Anahit handes'y'. Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1999.
24. Bashinjagheanc G. Yovhannes Ayvazovski, «Anahit». P'ariz, 1900, april, mayis, hunis, t'iv 6, 7, 8.
25. Gegharowest, «Masis». Polis, Z shrjan, t'iv 3.
26. Dallaqyan K. Arshak Chopanyan: Kyanqy' ev gorc'y'. Yerevan, «Sovetakan grogh», 1987.
27. Zawe'n T. Kovkasean qronik. T'iflisi nkarchahande'sy', «Anahit». P'ariz, 1904, april-mayis, t'iv 4-5.
28. Zaven Tigran. Ov ov e': Hayer (kensagrakan hanragitaran), h. 1. Yerevan, «Haykakan hanragitaran» hrat., 2005.
29. E'tkar Shahin. «Anahit». P'ariz, 1899, noyember-dektember, t'iv 1-2.
30. E'dgar Shahini ashxatanqneri katalog (HPP-i havaqac'ow), c'ndnyan 100 amyak. Yerevan, 1975.
31. E'tkar Shahini nor gorc'ery', «Anahit». P'ariz, 1911, september-dektember, t'iv 9-12.
32. E'dgar Shahin (Fransahay kerparvesty' Hayastanyan t'angarrannerum). Yerevan, 2018.
33. Jhane'n Q. E'tkar Shahin, «Anahit». P'ariz, 1899, september, t'iv 1.
34. Hakobyan A. Hayazgi c'ovankarichnery'. Yerevan, «Tigran Mec'», 2017.
35. Hayern i Bariz, «Anahit». P'ariz, 1900, april, mayis, hunis, t'iv 6, 7, 8.
36. Hayern i Bariz. Shahin ew Zaqarean, «Anahit». P'ariz, 1900, april, mayis, hunis, t'iv 6, 7, 8.
37. Hanganakut'iun Aboveani yushard'anin i npast, «Anahit». P'ariz, 1911, hownvar-p'etrvar, t'iv 1-2.
38. Martikyan E. Haykakan kerparvesti patmowt'yown, Girq G. Yerevan, «Sovetakan grogh», 1987.
39. Marqs R'. E'tkar Shahin, «Anahit». P'ariz, 1900, p'etrvar-mart, t'iv 4-5.
40. Mowre' K. Hay p'oragrigh my'. P. E'tkar Shahin, «Anahit». P'ariz, 1902, hunvar, t'iv 1.
41. Mure' K. Hay p'oragrigh my'. P. E'tkar Shahin (sharunakut'yun ev verj), «Anahit». P'ariz, 1902, p'etrvar, t'iv 2.
42. Shapaneani cucahande'sy', «Anahit». P'ariz, 1905, april, t'iv 4.

43. Shishmanyanyan R'. E'dgar Shahin. Yerevan, Haykakan SSR' Gitut'yunneri akademiayi hrat., 1956.
44. Shishmanyanyan R'. Bnankarn u hay nkarichnery'. Yerevan, «Haypethrat», 1958.
45. Cho'paneanyan A. Anahiti dery', «Anahit». P'ariz, 1899, hoktember, t'iv 12.
46. Cho'paneanyan A. Manue'lean-Shahin, «Anahit». P'ariz, 1900, april, mayis, hunis, t'iv 6, 7, 8.
47. Chugaszyan L. Mi mor'acvac' anun, «Arvest», 1990, № 4, e'j 38-40.
48. Shapanean P. «Anahit». P'ariz, 1905, hunvar, t'iv 1.
49. Sulie' K. E'tkar Shahin, «Anahit». P'ariz, 1905, mart, t'iv 6.
50. Sulie' K. E'tkar Shahin (sharunakut'yun ev verj), «Anahit». P'ariz, 1905, april, t'iv 4.
51. Tikin Babaeanyan-Karbonel, «Anahit». P'ariz, 1905, p'etrvar, t'iv 2.
52. Qamalyan M. E'dgar Shahini steghc'agorcut'yuny' «Anahiti» e'jerum (1898-1911), Eritasard hay arvestabanneri gitakan nstashrjani nyut'er. Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2023, 15 (№ 2), (17.00.03 - 18.00.01), e'j 163-172.
53. Qit'aptchi Khan ev 1900 cucahande'sin parskakan bajhiny', «Anahit». P'ariz, 1899, hoktember, t'iv 12.
54. Qiurqchean. «Anahit». P'ariz, 1905, dektember, t'iv 12.

ВОПРОСЫ АРМЯНСКОГО ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА В ЖУРНАЛЕ «АНАИТ» ПЕРВОГО ПЕРИОДА ИЗДАНИЯ (1898-1911)

МЭРИ КИРАКОСЯН*

Для цитирования: Киракосян, Мэри. “Вопросы армянского изобразительного искусства в журнале «Анаит» первого периода издания (1898-1911)”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 192-214. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-192

По инициативе Аршака Чопаняна и при его активном участии с 1898-го по 1949-й год (с некоторыми перерывами) в Париже издавался литературно-художественный журнал «Анаит». Наряду со статьями об армянской и зарубежной литературе, на страницах журнала помещались также материалы, затрагивающие проблемы изобразительного искусства, освещались выставки армянских художников XIX-XX веков, в частности, Эдгара Шаина, Закара Закаряна, Фаноса Терлемезяна, Геворга Башинджагяна, Арсена Шабаняна, Вардана Махояна. С этой точки зрения особый интерес представляет раздел «Хроники», отражавший панораму художественной жизни того времени. «Хроники» содержат уникальные факты, касающиеся творческой деятельности армянских мас-

* Старший научный сотрудник отдела искусства армянской диаспоры и международных связей Института искусств НАН РА, кандидат искусствоведения, marykirakosyan@mail.ru, статья представлена 22.09.2023, рецензирована 20.11.2013, принята к публикации 01.12.2023.

теров, взаимоотношений зарубежных и армянских художников, сотрудничество армян с художественными салонами Парижа.

Журнал «Анаит» помещал на своих страницах статьи, посвященные искусству близкого друга А. Чопаняна, французского художника и графика армянского происхождения Эдгара Шаина, освещал выставки, состоявшиеся за пределами Франции, сообщал о значимых успехах художников, приводил перечень их наиболее заметных произведений. Нередко вместе со словами одобрения высказывалась и острая критика.

В журнале «Анаит» сотрудничали известные западноармянские писатели Т. Камсаракан, Е. Отян, В. Текеян, Р. Севак, Д. Варужан, Сиаманто, из восточноармянских писателей – А. Ширванзаде, О. Туманян, А. Исаакян, Д. Демирчян и другие. По определению А. Чопаняна, «Журнал "Анаит" старался представить нашему обществу события культурной, художественной и политической жизни Франции и цивилизованного мира».

В статье собраны и представлены нашедшие место в журнале «Анаит» первого периода издания публикации, посвященные армянскому изобразительному искусству XIX-XX веков. Обобщенное изложение содержания сочетается с обзором актуальных для того времени проблем, точек зрения и мнений.

Ключевые слова: «Анаит», Аршак Чопанян, изобразительное искусство, офорт, выставка, «Хроники», Эдгар Шаин.

THE ISSUES OF ARMENIAN VISUAL ARTS IN “ANAHIT” MAGAZINE OF ITS FIRST PERIOD OF PUBLICATION (1898-1911)

MARY KIRAKOSYAN*

For citation: Kirakosyan, Mary. “The issues of Armenian visual arts in “Anahit” magazine of its first period of publication (1898-1911)”, *Journal of Art Studies*, N 2 (2023): 192-214. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-214

On the initiative of Arshak Chopanyan and with his vigorous involvement, from 1898 to 1949 (with interruptions), the literary-and-artistic magazine “Anahit” came out in Paris. Along with the articles on Armenian and foreign literature, the magazine published materials on the problems of visual arts, covered the exhibitions of Armenian artists of the XIX-XX centuries, namely Edgar Shahin, Zakar Zakaryan, Panos Terlemezyan, Gevorg Bashinjaghyan, Arsen Shabanyan, Vardan Makhokhyan. From that perspective, of special interest is the “Chronicle”

* Senior Researcher at the Department of the Art of Armenian Diaspora and International Relations of NAS RA Institute of Arts, Doctor of Arts, marykirakosyan@mail.ru. The article was submitted on 22.09.2023, reviewed on 20.11.2023, accepted for publication on 01.12.2023.

section of the magazine, which reflected the panorama of the artistic life of the time. The “Chronicle” provided unique facts about the Armenian masters’ creation, their interrelation with foreign artists, cooperation with Art Salons of Paris.

The magazine placed numerous articles, dedicated to A. Chopanyan’s best friend, French painter and graphic artist of Armenian origin Edgar Shahin, covered exhibitions organized outside of France, informed about the artists’ notable achievements, provided the list of their most conspicuous works. Quite often, together with words of encouragement, vocal criticism was also published.

The renowned Western Armenian authors T. Kamsarakan, Ye. Otyan, V. Tekeyan, R. Sevak, D. Varuzhan, Siamanto and Eastern Armenian writers A. Shirvanzade, H. Tumanyan, A. Isahakyan, D. Demirchyan and others contributed to the magazine. As A. Chopanyan put it, ““Anahit” magazine sought to introduce our society to the events of cultural, artistic and political life of France and the civilized world”.

The article presents a collection of materials from “Anahit” magazine of the first period of its publication, dedicated to the XIX-XX centuries Armenian visual art. The summarized content of the articles is accompanied by overviews of the problems, viewpoints and opinions actual for the time.

Key words: “Anahit”, Arshak Chopanyan, visual arts, etching, exhibition, “Chronicle”, Edgar Shahin.

ՆԿԱՐԻՉ ՍՄՔԱՏ ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍՁՅԱՆ*

Հղման համար. Չուգասյան, Լևոն: «Նկարիչ Սմբատ Տեր-Կյուրեղյանի նկարների վավերագրական կարևորության մասին»: *Արվեստագիտական հանդես*, N 2 (2023): 215-234. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-215

Սփյուռքահայ գաղթաօջախների պատմության և արվեստի և արվեստագետների մասին թեև արտերկրում ու Հայաստանում լույս են տեսել առանձին գրքեր ու բազմաթիվ հոդվածներ, այնուամենայնիվ այդ երևույթների ըստ ամենայնի ուսումնասիրությունը դեռևս սպասում է իր ուսումնասիրողներին: Իրանի հայերի արվեստը նույնպես քիչ է ուսումնասիրված, թեև այդ երկրում նրանք կառուցել են պալատներ, տներ, քաղաքացիական նշանակության շենքեր, ստեղծել գեղանկարչության, ոսկերչության ընտիր նմուշներ և այլն: Իրանում հայ արվեստագետների գործունեության մասին հնագույն փաստերը հայտնի են 14-րդ դարից: Այդ մասին են վկայում մանրանկարիչներ Կիրակոս Թավրիզեցու, Մխիթար Անեցու, Ավագի նկարագարդած ձեռագրերը: Իրանահայության արվեստի ծաղկումը վերաբերում է 20-րդ դարին: Այդ երկրի հայկական մամուլում սփռված են բազմաթիվ հոդվածներ, որոնք գաղափար են տալիս արվեստագետների մշակութային գործունեության մասին: 20-րդ դարի իրանահայ նկարչությունը մեզ է ներկայանում բազմաթիվ հեղինակներով, որոնցից շատերն աչքի են ընկնում իրենց անկրկնելի աշխատանքներով ու ոճով: Այդ աստղաբույլի մեջ իր ուրույն տեղն ունի նկարիչ Սմբատ Տեր-Կյուրեղյանը (1913-1999):

Բանալի բառեր՝ Սմբատ Տեր-Կյուրեղյան, Սպահան, Նոր Ջուղա, Սարգիս Խաչատուրյան, Փերիա, Չարմահալ, Սանգիբարան:

Ներածություն

Նկարիչ Սմբատ Տեր-Կյուրեղյանի անունը քաջ ծանոթ է իրանահայ և ամերիկահայ գեղարվեստասեր հասարակության շրջանում և պակաս հայտնի է Հայաստանում: Նրա մասին կան բազմաթիվ հոդվածներ Իրանի, Լիբանանի, Կանադայի և ԱՄՆ-ի հայկական մամուլում, գրված են գրքեր հայ և պարսիկ հեղինակների, կյանքի և ստեղծագործությունների մասին կարելի է կարդալ առանձին ժողովածուներում ու համացանցում [4, էջ 306; 9; 12, էջ 78-81; 13; 14]: Հայաստանում ևս, տարիներ առաջ լույս են տեսել առանձին հոդվածներ Սմբատ Տեր-Կյուրեղյանի մասին, որոնք, սակայն, հանգամանքների բերումով, դժբախտաբար մոռացվել են:

Հիմնական նյութի շարադրանք

Սմբատ Տեր-Կյուրեղյանը ծնվել է 1913 թ. հոկտեմբերի 19-ին Նոր Ջուղա-

* Երևանի պետական համալսարանի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Միլանի (Իտալիա) Ամբրոզիան Ակադեմիայի անդամ, Մոնպելյեյի (Ֆրանսիա) Ակադեմիայի թղթակից-անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, levonch@yahoo.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 26.07.2023, գրախոսելու օրը՝ 11.08.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.12.2023:

յում: Նախնական կրթությունը նա ստացել է տեղի Ազգային դպրոցում, որից հետո մեկ տարի սովորել է Սպահանի Ստյուարտ Մեմորիալ անգլիական Քոլեջում: Արվեստի նկատմամբ նրա սերն ու նկարչական շնորհքն ի հայտ են եկել դեռևս աշակերտական շրջանում: Նկատելով երեխայի հետաքրքրությունն ու հակումը դեպի նկարչությունը, թե՛ դպրոցական, և թե՛ ընտանեկան միջավայրում նրան միշտ ոգևորում և քաջալերում են: Ազգային դպրոցում նրա նկարչության ուսուցիչն է եղել եղիա Եղջանյանը: Ավելի ուշ նա որոշ ժամանակ աշակերտել է հետագայում հայտնի նկարիչ դարձած Հակոբ Վարդանյանին (1903-1983) [12, էջ 62-65]:

Նրա համար բախտորոշ է դառնում 1930 թ. հանդիպումը հայ նշանավոր նկարիչ Սարգիս Խաչատուրյանի հետ [11, 249-253; 6, էջ 90, 173, 219, 339-343; 3, էջ 208-209; 5, էջ 24; 7, էջ 309-313; 8, էջ 165-166; 1, էջ 489; 2, էջ 508]: Ս. Խաչատուրյանը Սպահան էր եկել պարսից շահի հրավերով Սպահանի պարսկական պալատների որմնանկարների վերականգնման համար:

Այդ ծրագրին զուգահեռ՝ տեղի հայ երիտասարդության համար նա որոշում է գիշերային նկարչական անվճար դասընթացներ կազմակերպել: Վերջիններիս, ի թիվս այլ երիտասարդների, մասնակցում է նաև Սմբատ Տեր-Կյուրեղյանը: Ս. Խաչատուրյանը խթանում է Տեր-Կյուրեղյանի նկարչական հակումները, ծանոթացնում ջրաներկի և յուղաներկի հետ աշխատելու գաղտնիքներին, միջոց ստեղծում կատարելագործելու սեփական կարողությունները: Որպես լավագույն աշակերտներից մեկը՝ Տեր-Կյուրեղյանն առիթներ ուներ Խաչատուրյանի հետ աշխատելու: Հաճախ օրվա ընթացքում նա գնում էր Սպահանի Ալի Ղափուփ պալատը՝ դիտելու Խաչատուրյանին աշխատանքի ժամանակ: Ոգևորված ուսումնասիրում էր ուսուցչի նկարելու ընթացքը, փորձում խորանալ նրա վարպետ վրձնի շարժումների մեջ և մտապահել դրանք: Երիտասարդ նկարիչը մեծ բավականություն էր ապրում, երբ առիթ էր ներկայանում կատարելու իր ղեկավարի հանձնարարությունները՝ աշխատանքի ժամանակ այս կամ այն կերպ նրան օգնելու [14, էջ 11-13, 14]: 1929 թվականին Տեր-Կյուրեղյանը հինգ-վեց ամիս սովորում է Խաչատուրյանի դասընթացներում, և նրա ուսումնառությունն ընդհատվում է ուսուցչի Փարիզ վերադառնալու պատճառով: Սակայն, ձեռք բերելով ավելի փորձառություն ու որոշ ինքնավստահություն՝ 1930 թ. Տեր-Կյուրեղյանը Սպահանում Չահարբաղ պողոտայում բացում է յուրատեսակ պատկերասրահ-աշխատանոց, որը բացառիկ երևույթ էր աշխարհի հեռավոր մի անկյունը հանդիսացող արևելյան հին քաղաքի համար: Այդ ժամանակ է, որ Տեր-Կյուրեղյանը ստանում է նաև որոշ մասնավոր պատվերներ:

1931 թ. Սարգիս Խաչատուրյանի Նոր Ջուղա կատարած երկրորդ այցելության ժամանակ Տեր-Կյուրեղյանն ու իր ընկերները վերսկսում են պարապմունքներն ուսուցչի հետ: Նոր Ջուղայում եղած ժամանակ Խաչատուրյանը հաճախ է այցելում նրա աշխատանոցը և արժեքավոր դիտողություններով ուղղություն տալիս իր սանին: Ուսուցչի՝ վերջնականորեն Փարիզ վերադառնալուց հետո սկսվում է Տեր-Կյուրեղյանի ինքնաշխատության շրջանը: Տարեց-տարի աշխատելով ոչ միայն ջրաներկով, այլև գուաշով, պաստելով, յուղաներկով՝ Տեր-Կյու-

րեղյանը քայլ առ քայլ կատարելագործում է սեփական արվեստը՝ որպես նկարիչ, ասես, ինքն իր միջից աճելով:

Այդ տարիներին Տեր-Կյուրեղյանը շրջում է Սպահանի շրջակայքում՝ անբաժան իր հրացանից՝ թռչուն որսալով և լուսանկարչական գործիքից՝ միաժամանակ որոնելով, ուսումնասիրելով և ժապավենի վրա նկարահանելով գյուղական նահապետական վարք ու բարքով ապրող մարդկանց, նրանց զգեստավորումը, տները, փողոցները (նկ. 1), առօրյա կյանքի ու կենցաղի մանրամասները, նաև վրձնելով բնության գեղատեսիլ անկյունները:

Գեղարվեստական այդ այցելություններից տուն վերադառնալուց հետո նա ամեն անգամ քննության է առնում լուսանկարած նյութերը և ապա դրանց հիման վրա ստեղծում ջրաներկով պատկերներ, որոնք իրենց ճշմարտացիությամբ ու արտահայտչականությամբ թվում է, թե նկարված են առանց որևէ լուսանկարչական միջնորդության: Սմբատ Տեր-Կյուրեղյանի նկարները մեծ բավականություն են պարգևում դիտողին և սիրել տալիս արվեստագետին ծննդավայր դարձած հողն ու նրա վրա ապրած մարդկանց, որոնք հավերժ բնավորվել են ու շարունակում են իրենց կյանքը նկարչի պատկերների մեջ:

Նախքան այդ երկերին անդրադառնալը հարկ է նշել, որ վարպետի ստեղծագործական ժառանգության մեջ բազմաթիվ են Սպահանին վերաբերող ստեղծագործությունները: Դրանք ցուցադրում են քաղաքի, մանավանդ Նոր Ջուղայի թաղամասի ճարտարապետությունը, փողոցներն ու տները, համայնապատկերները, բնակիչներին և նրանց առօրյան ու զբաղմունքները:

Տեր-Կյուրեղյանի անձնական հավաքածուի մեջ է պահվում հեղինակի համար անսահման նվիրական մի ստեղծագործություն, որը ցուցադրում է նրա հայրական օջախը՝ այն տունը, ուր ծնվել էր նկարիչը [14, էջ 51] (նկ. 2): Այստեղ տեսանելի են նաև տան ջրհորը և բակում աճող նոնենիները, որոնք նույնքան բնորոշ էին Նոր Ջուղայի հայկական բակերին: Նկարիչը մտաբերում էր, որ պատին հենված պղնձե ամանը զունգուն էր կոչվում: Նրա մեջ պահվող ջուրն արևի տաքությամբ ջերմանում էր և գործածվում բաղնիքի համար:

Աղյուսով ու քարով երեսպատված բակը թանկ հիշողություններ էր արթնացնում նկարչի սրտում: Այս նկարը նախկինում պահվել է նկարչի Սուրբայա (Ճավա) հաստատված քրոջ՝ Լուսաբեր Հովհաննիսյանի մոտ և վերջինս հետևյալ հուզիչ բանաստեղծությունն է գրել պատկերի հետևում, որը կրում է «1950 թվականի փետրվարի 13» թվականը:

Քո վրձինը մոգական
 Հայրենաբաղձ իմ հոգուն
 Բերեց տնից հայրական
 Մշտակարոտ մի անկին:
 Նայում եմ մեր ջրհորին,
 Ու յիշում եմ օրերն հին
 Եվ երազում եմ նորից
 Ծարաւս առնել էդ հորից:

Նկարչի այսօրինակ նկարները կարոտախտի տրամադրություններ են առաջացնում նաև ուրիշների հոգում:

Նկարչի տանը գտնվող նկարներից մեկում ներկայացված է Սպահանի հին թաղերից մի անկյուն: Հազար տարվա ավերակ հիշեցնող իջևանատան նմանող մի շինություն է ցուցադրված, որի պատերը կազմված են ջնարակված աղյուսներից: Այդ կառույցի ստվերին նստած տղամարդիկ պարսկերեն զիվա կամ զիվե կոչվող և թելից գործվող կոշիկն են սարքում: Վաղուց չկան այդ մարդիկ և, ով գիտե, գուցե նաև նրանց զբաղմունքը, բայց մինչ այդ նկարչի վրձինը արձանագրել է նրանց՝ հին-հին դարուց հիշատակած արհեստը զարգացնելու պահին:

Մինչև անգամ մեր իմացած արհեստների մասին նրա պատկերները պարունակում են դրվագներ, որոնք գրեթե անձանոթ են ժամանակակից մարդկանց: Այս առումով ուշագրավ է ստեղծագործություններից մեկը, որտեղ ցուցադրվում է բրուտանոցի (քուզեգյարի) ներսի կյանքը: Սեղանի առաջ նստած բրուտը (քուզեգյարը) ոտքով պտտեցնում է դուրզը և ձեռքով ձև տալիս կավե ամանին: Ըստ նկարչի՝ խոնավ ամանը դնում են վառարանի վրա, հետո վերցնում, ջնարակում և ապա՝ նորից դնում տաքացնում: Հազարավոր տարիների պատմություն ունեցող այս աշխատատեղանակը, թերևս, այսօր այլևս գոյություն չունի: Սպահանի բազարի մեջ տեղավորված երբեմնի արհեստանոցը ապրում է այժմ միայն Տեր-Վյուրեղյանի նկարում:

Նույն շուկայի ներսում կար նաև գորգագործական արհեստանոց: Այն ևս «անմահացել» է նկարչի շնորհիվ: Վաճառված գնացած այդ նկարի հուշը մնացել է արվեստագետի սեփականությունը կազմող լուսապատկերներից մեկում: Այդտեղ տեսանելի են գորգ գործող երկու աղջիկ և մեկ երեխա: Նրանք նստած են աթոռին, իսկ դազգահը դրված է ուղղահայաց դիրքով: Տեր-Վյուրեղյանը պատմում էր, որ մետաքսե գորգերը հյուսելու համար նուրբ մատներ էին պետք, ուստի դրանք հանձնարարվում էին երեխաներին:

Աթոռին նստած կամ գետնի վրա աշխատող գորգագործ կանանց ցուցադրող մի ամբողջ շարք է ստեղծել նկարիչը [13, էջ 5]: Հատկապես տպավորիչ է մեկ այլ նկար, որի մասին նույնպես գաղափար ենք կազմում պահպանված լուսապատկերի շնորհիվ: Ի տարբերություն վերը հիշատակվածի՝ այդ նկարը ներկայացնում է Սպահանի մոտ պարսկական մի գյուղի կյանքից դիտված տեսարան, որը ցույց է տալիս, թե ինչպես երկու կին գորգի վրա նստած գործում են: Դազգահը գետնի վրա է, իսկ թելերը կախված են վերևից: Կանայք որքան որ գործում են՝ այնքան առաջ են գնում: Ըստ նկարչի՝ նման գորգ հյուսելը երկուսից չորս տարի է տևում:

Տեր-Վյուրեղյանի պատկերների մեջ զգալի թիվ են կազմում այն նմուշները, որոնք ցուցադրում են Սպահանի և, ընդհանրապես, Պարսկաստանի հին կառույցները: Այդ կարգի նկարների շարքին են պատկանում Սպահանին վերաբերող «Մեդրեսե Չահարբադը» (1947) [13, էջ 8] (նկ. 3), «Չահարսու Նաղաշի փողոցը» (1954), «Դարդաշտ թաղի պարսկական իջևանատան դուռը» (1956), «Ալիի մզկիթը և մինարեն» (1959), «Շեյխ Լոթֆոլլայ մզկիթը» (1970) և այլ գործեր:

Նույն թեմային վերաբերող, վաճառված և նկարչից հեռացած նկարի մասին է վկայում նրա հավաքածուի մաս կազմող լուսապատկերներից մեկը: Այն ներկայացնում է Սպահանի Չհարբաղ մեդրեսեն (կրոնական դպրոցը): Մեկ այլ լուսապատկերի շնորհիվ գաղափար ենք կազմում նախորդ մասում հիշված Սպահանի Մասչեդ շահ (թագավորական մզկիթ) և Ալի Ղափու հին պալատը ցուցադրող նկարի վերաբերյալ: Տեր-Կյուրեղյանը մտաբերում էր, որ 30-ական թվականներին իր ուսուցիչը՝ Սարգիս Խաչատուրյանը, նույն Ալի Ղափուի ներսում հին որմնանկարներն էր ընդօրինակում: Տեր-Կյուրեղյանի պատկերում՝ հիշյալ պատմական կառույցների առջև տարածվում է Մեյդանե շահ կոչված հրապարակը՝ աշխարհի ամենամեծ հրապարակներից մեկը: Կասկած չկա, որ գործ ունենք նկարչի առավել գեղեցիկ տեսարաններից մեկի հետ, և հիանալի է ընտրված ողջ համայնապատկերը:

Նկարչի տանը պահվում է մի պատկեր, որը ցուցադրում է Սպահանի Ջայանդերուդ գետի վրա «Փոլե Ջամանե խան» կոչվող կամուրջը [13, էջ 9]: Հեղինակը պատմում է, որ շուրջ երկու հարյուր տարի առաջ Ջաման խանը սարերից մեկը երկու կես է անում և նոր հունով ուղղում գետի ջուրը: Խանի հրամանով սարի միջին մասն առանձին հսկա քարակտորի ձևով պահում են և կամուրջը կառուցելիս այդ ժայռը նույնպես հենարան դարձնում: Լսում էի նկարչի բացատրությունները հեռավոր այս պատմության մասին և ակամայից մտածում, որ թերևս քչերն են հիշում կամուրջի կենսագրության դրվագները:

Ահա և մեկ ուրիշ տեսարան Սպահանից և դարձյալ վկայված միայն լուսապատկերի մեջ: Այն նվիրված է Ջայանդերուդ գետի վրայով անցնող Փոլեքյալլե (այսինքն՝ կամուրջի գլուխ) կոչված կամրջին: Այս պատկերում գետը և կամուրջը մասնակիորեն ծածկված են ծառերով: Աշնան գույներով հագեցված նկար է սա: Մի ուրիշ լուսապատկերում ցուցադրված է Ջայանդերուդի վրա շինված Շահաստանի կամուրջը: Սպահանի Մարնուն կոչվող թաղի նույնանուն կամուրջը ներկայացնող նկարը, որը թեև պահպանված չէ, բայց կա լուսապատկերը: Այն շատ մտածված ու հետաքրքիր հորինվածքով նկար է:

Տեր-Կյուրեղյանի ստեղծագործությունների բազմության մեջ իրենց գեղեցկությամբ առանձնանում են Սպահանի ավանդական հագուստներով հայ կանանց դիմանկարները: Ինչպես գիտենք, ընդհանրապես, հայ ազգագրական տարազը շատ բազմազան է և գունագեղ: 1915 թվականի Մեծ եղեռնի պատճառով ոչնչացավ Արևմտահայաստանի գավառների հայ բնակչությունը և փոշիացան հայության բազմադարյան ավանդույթները, նիստ ու կացի սովորություններ, նաև՝ տարազը: Հայ ժողովրդի ազգային զգեստի մասին որոշ գաղափար ենք կազմում հայ արվեստի մի շարք երախտավորների՝ Արշակ Ֆեթվաճյանի, Վարդգես Սուրենյանցի, Սարգիս Խաչատուրյանի և այլ նկարիչների՝ ժամանակին կատարած դիմանկարների շնորհիվ:

Այս մեծ վարպետների շարքում իր նշանակալից տեղն է զբաղեցնում նաև Տեր-Կյուրեղյանը, որովհետև մոռացումից փրկել է իրանահայության տարազի առանձին օրինակները՝ վրձնելով հայ կանանց հիանալի դիմանկարներ: Նկարչի որդու՝ Արմենի անձնական հավաքածուի մեջ պահվում է Նոր Ջուղայի տարա-

զով և ճակատին ու կրծքին դրամներ կրող մի կնոջ դիմանկար (1948) [13, էջ 12] (նկ. 4): Փոքր-ինչ ծիծաղկոտ աչքերով, բերանը խուփ, գլխաշոր կապած այս կինը հմայում է իր կերպարի պարզությամբ և արժանապատվությամբ: Նկարիչը նշում է, որ բերանը փակ կանայք ամուսնացած էին լինում և ամուսնու հոր և եղբոր մոտ չէին խոսում, ծափ տալով ու շարժումներով էին հասկացնում իրենց ուզածը: Տեր-Կյուրեղյանի վրձնած կանացի մյուս դիմանկարների համեմատ այս մեկում «բնորոշուհին» ավելի ամբողջական է ներկայացված և հատուկ, մանրամասն ցուցադրված է զգեստի ողջ գեղեցկությունը: Նկարչի աչքից չի վրիպել և ոչ մի մանրուք: Հիանալի են նկարված կնոջ շալի զարդերը, ծոպերը, կրծքի փողերը, արծաթե գոտին, վերջինիս մեջ մտցված թաշկինակի նախշերը, զգեստի քղանցքի եզրերի զարդերը, ձեռքերի դաստակներին կապված սաթե ապարանջանները և այլն: Կնոջ մատանիները, քարերը, թվում է, թե աննկատելիորեն, բայց անմիջական աշխուժություն են բերում կերպարի ողջ նկարագրի մեջ: Նկարիչը բացատրում էր, որ տպված թաշկինակը ջուղայեցիներն ընդհանրապես կողքից չէին կախում:

Արվեստագետի հավաքածուի մեջ պահվող լուսապատկերների շնորհիվ մոռացությունից փրկվել են մի շարք անգին դիմանկարներ: Դրանցից մեկում Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի խորքի վրա պատկերված է ուրիշ մի գեղեցկուհի: Ինչպես և նախորդ «բնորոշուհին»՝ նախշավոր շալով, դրամները վզից կախած, կզակը սպիտակ լաթով փակած երիտասարդ կինն իրոք շատ գեղեցիկ է [13, էջ 13; 14, էջ 55]: Իրական մադոննայի է նմանում Փերիայի զգեստը հագին, բերանը չծածկած (չամուսնացած) օրիորդը: Նրա պարանոցից իջնում և կուրծքն են զարդարում դրամները, ծաղկավոր գլխաշոր ունի, կապույտ շապիկ և կրծքին կարմիր գոգնոց: Նա պատկերված է տան խորքի վրա: Հատկապես տպավորիչ է օրիորդի գլխաշորը կապելու ձևը: Հիշողության մեջ մեկընդմիջտ սևեռվում է երրորդ մի նկար, որտեղ բնորոշուհին ծաղկազարդ թաշկինակով, կանաչ ծաղկավոր շապիկով ու շագանակագույն գոգնոցով է, և նորից փողերն ու զարդերը կրծքից կախած: Ի տարբերություն նախորդ կանանց՝ այս մեկը ձախ ուսին կուժ է հենել [14, էջ 119] (նկ. 5): Նկարի խորքում երևում են տան պատերը: Այստեղ յուրաքանչյուր մանրամասն՝ արծաթե զարդերը, շապիկի ու գլխաշորի նախշերն առանձին վերցրած կամ միասնության մեջ բացառիկ ճաշակով են հաղորդված: Անսահման կախարդիչ է նկարի գունաշարը:

Սպահանի բնակիչները և ինքը՝ նկարիչը, սովորություն ունեին որսի գնալու քաղաքից դուրս գտնվող գյուղերը: Այդ օրերի մասին է վկայում Տեր-Կյուրեղյանի տանը պահվող նկարներից մեկը, որի մեջ տեսնում ենք աշնանային մի տեսարան Զայանդերուդ գետի մոտ (1951) [14, էջ 147] (նկ. 6): Այստեղ ցույց է տրված նկարչի որսորդական հրացանը հենված ծառին, ջրի տափաշիչը, ծառի տակ դրված թեյնիկը: Արվեստագետի լուսապատկերների հավաքածուի մի օրինակը ներկայացնում է ջուղայեցիների սիրած որսատեղերից մեկի բնությունը: Խոսքը գյուղի մասին է: Խնդրո առարկա նկարում ցուցադրված է Ալավիջեի կոչվող մզկիթը բլրի վրա և վերջինից ցած երևացող ծառերն ու ճանապարհը: Դժվար չէ պատկերացնել Տեր-Կյուրեղյանին հեծանիվով ու ներկատուփով Սպահանի

շրջակայքում որսի գնալիս: Նկարչի վկայությամբ՝ որսը և նկարչությունը երբեմն իրար խանգարում էին: Արվեստագետի եղբայրը հաճախ էր կրկնում նույն սրահոսությունը, թե «Մարդիկ աշխատանքից հոգնում են և գնում պիկնիկի, իսկ Սմբատը տնից է հոգնում և գնում պիկնիկի»:

Տեր-Կյուրեղյանի ստեղծագործությունները նաև սովորեցնում են Պարսկաստանի հեռու ու մոտիկ պատմությունը, անգնահատելի գիտելիքներ տալիս արևելյան հինավուրց մի աշխարհի և դարերի խորքից եկող ավանդույթների մասին, որոնց որևէ այլ նկարիչ երբեք այդքան մանրամասն ուշադրություն չի դարձել ու չի իմաստավորել: Այլ կերպ ասած՝ Սմբատ Տեր-Կյուրեղյանն իր պատկերներին հաղորդել է պատմական, հնագիտական ու ազգագրական արժեք՝ մոռացումից և կորստից փրկելով հայ ու պարսիկ ժողովուրդների կյանքին, կենցաղին վերաբերող անգին մանրամասներ:

Արվեստագետի գործերում արձանագրվել են այնպիսի երևույթներ, որոնք այլևս ոչ ոք չի հիշում, քանի որ աշխարհն անճանաչելիորեն փոխվել է վերջին հիսուն-յոթանասուն տարիների ընթացքում և դարերով թվում է աներեր մնացած արևելյան ավանդույթները, զբաղմունքները, մասնագիտությունները մեկընդմիջ կորցրել են դիմագիծը կամ առնվազն նահանջել արևմտյան աշխարհից եկող մշակութային ալիքների առաջ: Բնակչության հսկայական զանգվածներ թողել են իրենց նահապետական կյանքը և գաղթել դեպի մեծ քաղաքներ՝ կուլ գնալով ժամանակակից՝ խոշոր արդյունաբերություն ունեցող հասարակության եռուզեռին: Բացի այդ, վերջին տասնամյակներում Պարսկաստանը, ինչպես և այլ երկրներ, ապրել է զանազան հասարակական, տնտեսական դժվարություններ ու ճգնաժամեր, կառավարությունների իրար հաջորդում, տեսակտեսակ տազնապներ, և այդ ամենի հետևանքով է՛լ ավելի մեծ ժողովրդագրական փոփոխություններ ու արտագաղթ դեպի ամեն կողմ:

Հիմնվելով այլ քաղաքներում կամ երկրներում, Պարսկաստանի գյուղերի բնակիչները ստիպված մի կողմ են դրել իրենց պապենական սովորություններն ու զբաղմունքները: Մարդկանց հիշողությունից աստիճանաբար ջնջվել են և շարունակում են անհետանալ հայ ու պարսիկ ժողովուրդների ազգագրական կենցաղի կարևոր առանձնահատկությունները: Կյանքի առաջընթացը սրբելտարել է անգամ քաղաքներում գործած արհեստավորների առօրյայի մանրամասները: Այս իմաստով Սմբատ Տեր-Կյուրեղյանի նկարներից շատերը վավերագրական արժեք են ներկայացնում, որովհետև իրենց մեջ են պարփակել հավերժի գիրկն անցած իրականությունը:

Պարսկաստանից մայր հայրենիք ներգաղթած և 1960-1980-ական թվականներին Հայաստանում ապրած, ապա Լոս Անջելեսում հաստատված, ներկայումս՝ հանգուցյալ վարպետ հրուշակագործ Եզնիկ Թամազյանի վկայությամբ, Սմբատ Տեր-Կյուրեղյանը նկարել է նրա հայրական գյուղական տունը, և Թամազյանը, իմանալով պատկերի գոյության մասին, ձգտում էր ամեն կերպ ձեռք բերել այդ՝ իր հոգուն այնքան թանկ մասունքը:

Տեր-Կյուրեղյանը շատ է շրջագայել զուտ հայկական կամ հայերից ու պարսիկներից բաղկացած խառը բնակչություն ունեցող գյուղերում, նաև՝ պարսկա-

կան գյուղերում: Որոշ դեպքերում, օրինակ, Փերիայի շրջանում, նա եղել է բոլոր վայրերում: Նկարիչը հիշում էր, որ տասնվեց գյուղ կար Փերիայում: Դրանք լրիվ հայկական էին, իսկ հիմա խառը բնակչություն ունեն: Իր շրջագայությունների ժամանակ Տեր-Կյուրեղյանը սովորաբար վարձում էր դպրոցի սենյակը կամ իջևանում եկեղեցիների մոտի հյուրատներում և գյուղացիների տանը:

Տեր-Կյուրեղյանը շատ նկարներ է ստեղծել, որոնք ցուցադրում են լավաշ թխող կանանց [13, էջ 7]: Նկարչի տանը պահվող աշխատանքներից հիշարժան է «Լավաշ թխող կանանց» նկարը (1988): Դրա համար գեղջկուհիները թոնրի մեջ վառում էին գոմաղբը: Պատրաստի հացը թոնրից հանելու համար նրանք օգտագործում էին ունելի հիշեցնող երկաթե գործիքը, որը, ըստ արվեստագետի, կոչում էին ակիշ: Տեր-Կյուրեղյանը պատմում էր, որ գեղջկուհիները գոմաղբով նաև թեյ էին սարքում: Լավաշ թխելուց հետո նրանք թոնրի մեջ դնում էին ճաշը, որ հորի ներսում եղած տաքությամբ եփվի: Դարեր ի վեր հացը հայերի համար սուրբ է համարվել, և միշտ երգվել են հացով: Հացը թխելու գործը մի յուրահատուկ սրբազան արարողություն է նմանում և ունի իր անսահման հրապույրը:

Տարբեր առիթներով Տեր-Կյուրեղյանը նկարել է հաց թխող կանանց՝ ամեն անգամ հարստացնելով պատկերը նոր մանրամասներով: Նրա որդու՝ Արմենի տանը պահվում է այդ թեման ներկայացնող մեկ ուրիշ աշխատանք [14, էջ 106] (նկ. 7): 1962 թվականին ստեղծված այդ նկարում առագաստի պես ընդգծվում է զուլավոր մեծ վարագույրը: Վերջինիս միջոցով այրող արևին իրենց ստվեր ապահոված հացթուփ կանայք ջանասիրաբար աշխատում են: Մեկը գրտնակով բացում է խմորը, մյուսը՝ թոնրի վրա կախված հանում է պատրաստի լավաշները: Կանանց կերպարներն աչքի են ընկնում իրենց գույնզգույն զգեստներով: Նկարին իրական ճշմարտացիություն է հաղորդում գլխաշորով երեխան, որը խաղը թողած՝ թեք նստած նայում է մեծերի գործողություններին: Նկարի հետին մասում աջից պատկերված են պատի տակ ավանակի կողքին կանգնած երկու տղամարդ, որոնք բռնված են զրույցով: Արևի լույսը նստելով հողաշեն տների պատերին ու տանիքներին՝ հաղորդում է չոր կիզիչ արևի տաքությունը: Դիտելով այս պատկերը, կարծես, ներքուստ մաքրվում ես՝ մեջդ առնելով նոր թխած հացի անմահական բուրմունքը:

Արվեստագետի տանը գտնվող նկարներից մեկը ներկայացնում է Թեհրանից Քաշան գնացող ճանապարհի վրա ընկած պատմական Աբիանե գյուղի փողոցները: Հեղինակի վկայությամբ՝ տներն այդտեղ շինված էին կարմիր հողից, իսկ դրանց պատուհաններից շատերի շրջանակները նուրբ ձևով քանդակված էին: Սմբատ Տեր-Կյուրեղյանը հիշում էր, որ այդ գյուղը այցելեցին Պարսկաստանի թագուհին և վարչապետ Հովեյդան ու այդ կապակցությամբ վերջինիս ընտրեցին Աբիանեի պատվավոր քեդիսուդա (գյուղապետ): Վաղուց արդեն պատմություն են դարձել այդ օրերը, իսկ նկարչի պատկերում կանգ է առել անցյալի գիրկն անցած իրականությունը:

Առանձին դեպքերում իրենց յուրահատուկ կենսագրությունն ունեն նույնիսկ Տեր-Կյուրեղյանի բնանկարները: Այդպիսի պատմական տեսարան է նկարչի

տանը պահվող 1948 թ. աշխատանքը, որը կոչվում է «Գետի հոսանքը Սպահանի շրջանի Քուհերանգ սարի մոտ» [14, էջ 75]: Արվեստագետը պատմում է, որ 16-րդ դարի վերջին կամ 17-րդ դարի սկզբին Շահ Աբբասը ուզեցել է այդտեղ ամբարտակ շինել՝ գետի մակարդակը բարձրացնելու և Սպահանը ջրով ապահովելու նպատակով: Պատենշ շինելու համար Շահի հրամանով քարեր են բերել այստեղ: Այդ ժամանակներում շինանյութ ստանալու նպատակով մեծ քարերի վրա կրակ էին վառում, հետո ջուրը լցնում դրանց վրա և այդ ձևով քարը պայթեցնում: Տեր-Կյուրեղյանն իր բնանկարում նկարել է ջրի մեջ գտնվող պատենշի քարերը: Լսում էի նկարչի տված բացատրությունները և մտածում, որ, հավանաբար, հարկավոր է անսահման սիրել շրջապատող աշխարհը՝ նրա հին ու նոր պատմությունն այսպես հիշելու համար:

Տեր-Կյուրեղյանի երկերի շարքում առանձին խումբ են կազմում քաղաքային և գյուղական գիշերային տեսարանները: Հատկապես բազմաթիվ են վերջիններս: Լուսապատկերներից մեկում ներկայացված են խավարի մեջ խարույկի մոտ նստած մարդիկ և նրանց կողքին հանգստացող ուղտերը [13, էջ 10; 14, էջ 75]: Այս գիշերային ճամփորդները պատկերված են թեյ պատրաստելիս: Մեկ ուրիշ պատկերում տեսանելի են գիշերով աղավնատան կողքին խարույկի շուրջ նստած մարդիկ [13, էջ 59] (նկ. 8): Անհրաժեշտ է նշել, որ Տեր-Կյուրեղյանն իր աշխատանքներում հաճախ է պատկերել Պարսկաստանի աղավնատները: Ժամանակակից քաղաքաբնակներիս անձանոթ է այս կառույցների իմաստը: Նկարիչը բացատրում էր, որ դարեր շարունակ աղավնատները կարևոր նշանակություն են ունեցել գյուղացիների համար: Աղավնիների ծերտը հավաքելով՝ նրանք դրանով պարարտացրել են իրենց հողերը և նույնիսկ որպես պարարտանյութ վաճառել այն: Վերջինս մենաշնորհն էր միայն գյուղապետերի, քանի որ նրանք էին սարքում աղավնատները: Լսելով այս պատմությունները՝ ակամայից հիշում ես հայոց հինավուրց մայրաքաղաք Անիի ժայռափոր այրերի մասին [10], որոնցից շատերը նույնպես աղավնատներ էին, և մասնագետներիս համար անբացատրելի էր դրանց առատության պատճառը: Պարսիկները բորջե քյարուդար էին անվանում աղավնատները: Դրանց վրա, ինչպես վկայում է նկարիչը, արգելված էր հրացան արձակելը, որովհետև աղավնիները կարող էին վախենալ և այլևս չվերադառնալ այդտեղ:

Տեր-Կյուրեղյանը մեծ թվով՝ շուրջ քսան գործ է ստեղծել հայկական գյուղական հարսանիքի թեմայով: Նրա մոտ պահվող լուսապատկերների միջոցով գաղափար ենք կազմում Փերիայի շրջանի Նամակերտ գյուղին վերաբերող նկարներից մեկի մասին: Նկարիչը մեզ ականատես է դարձնում, թե ինչպես մարդկանց թափորը դուրս է գալիս եկեղեցուց, և բազմությունը գլխավորում են քահանան, տիրացուն, զուռնաչին, դիոլչին, հարսն ու թագավորը (փեսան) [13, էջ 11]:

Հարսանքավորները գնում են հարսի տուն, որ քեֆ անեն: Թափորի ետևից գնում են երեխաները: Բոլորն ազգային տարազներ են կրում: Այս և մյուս հարսանիքների տեսարաններում հեղինակն իսկական գունային հրավառություն է ստեղծում՝ օգտվելով ազգագրական զգեստների նկարչագեղ բնույթից: Նույն

թեմայով կատարված մի ուրիշ պատկերում հարսանիքին մասնակցող գեղջկուհիները պարում են փողոցում, նրանց կողքին փոքրիկ աղջիկը օրոր-շորոր է գալիս փոքրիկ թաշկինակը ձեռքին: Երրորդ նկարում տան բակում ցույց են տրված շուրջպար բռնած կանայք՝ վառվում կարմիր գլխաշորերով: Ահա և մեկ այլ տեսարան, որտեղ առաջին մասում պատկերված են մեծ դիմապատկերներ թե՛ կրծքին, թե՛ գոզնոցին, թե՛ գլխից կախված են մետաղադրամներ: Տեր-Կյուրեղյանը հիշում էր, որ այդպես միայն հարսանիքի օրն են հագնվում կանայք: Հիշյալ բոլոր նկարները վաճառվել ու հեռացել են հեղինակից: Այժմ դրանց մասին դատում ենք պահպանված լուսապատկերներով: Նկարիչը բազմիցս պատկերել է հայկական հարսանիքը, բայց ամեն անգամ փոխելով մանրամասները: Այս նկարաշարի մեջ հանդիպում են բազմաթիվ օրինակներ, որոնց մեջ ներկա պարող գեղջկուհիներն արտակարգ վավռուն զգեստներով են, ուղղակի հիանալիորեն գունագեղ, ասես ապացուցելու համար, որ ի դեմս Տեր-Կյուրեղյանի գործ ունենք ոչ միայն փայլուն գծանկարչի, այլևս սքանչելի գունանկարչի հետ: Հիշյալ թեմայով ստեղծված մի նկար հեղինակը նվիրել է Կալիֆորնիայի նախկին նահանգապետ Ջորջ Դյոքսթրանին, իսկ «Հարսանիքը Նամակերտում», պատկերը նվիրել հանգուցյալ Վեհափառ Վազգեն Ա Հայրապետին [13, էջ 12] (նկ. 9):

Տեր-Կյուրեղյանի որդու՝ Արմենի անձնական հավաքածուի կազմում կա մի պատկեր, որը ներկայացնում է Դրախտակի հայ գյուղապետ Սամսոնի աղջկան ավելը ձեռքին դռան մոտ կանգնած [14, էջ 116] (նկ. 10): Դիտողի հիշողության մեջ երկարատև մնում է աղջկա նուրբ դեմքը, սևեռուն հայացքը, գեղեցիկ աչքերն ու ունքերը: Կարմիր նախշուն գլխանոցը, վանդակազարդ զգեստը յուրահատուկ գրավչություն են հաղորդում նրա կերպարին: Նկարի մանրամասները կատարված են խնամքով, թեթև, սահուն վրձնահարվածներով: Ողջ պատկերը լցված է լույսով: Դռան բացվածքը և բակի ստվերները խորություն են հաղորդում նկարին՝ ավելի արտահայտիչ դարձնելով այն: Այս ստեղծագործությունը նկարչի հոգում վերակենդանացնում է շատ թանկ հիշողություններ:

Արվեստագետը հաճախ է հանգրվանում Սամսոնի տան վերնահարկում՝ իր որսորդ ընկերների հետ: Պատահում էր, որ նրանց էր միանում և Սամսոնը ու հետները գնում որսի: Նկարիչը կարոտով, թախիծով էր հիշում այդ օրերը, Սամսոնի հյուրասիրությունը, նրա Նոր Ջուղա տեղափոխվելը և այնտեղ մահանալը: Այսպես ապրում էին Տեր-Կյուրեղյանի մտքում ու նկարներում տարիները, վայրերը, մարդիկ ու ճակատագրերը:

Նկարիչը պատմում էր, որ Փերիայի կանանց ավելի հաճախ է պատկերել, ի տարբերություն Չարմահայի շրջանի գեղջկուհիների, որովհետև վերջիններիս տարազն այդքան ինքնատիպ չէր: Նա նշում էր, որ 1946 թ. Հայաստան կազմակերպված ներգաղթի հետևանքով բնակչության վիճակը այդ շրջաններում կտրուկ փոխվեց: Գյուղացիների մի մասը եկավ Հայաստան, մյուս մասը տները վաճառեցին ու եկան Թեհրան, որ հայրենիք մեկնեն, բայց ներգաղթը անսպասելի դադարեցվեց, և նրանք ստիպված մնացին քաղաքում: Աստիճանաբար նրանց տարազը փոխվեց, և գործածությունից դուրս եկան դարեր շարունակ

կանանց զարդարող հագուստները: Այդ ժամանակից սկսած Տեր-Կյուրեղյանը գործի է դնում իր լուսանկարչական գործիքը՝ ազգագրական զգեստի վերջին օրինակներն անհետացումից փրկելու, վավերագրելու նպատակով:

Տեր-Կյուրեղյանն իր նկարներում շարունակաբար ցույց է տալիս, որ այս գյուղական գեղեցկուհիների առօրյան լի է բազում պարտականություններով, հոգսերով, չարքաշ ու ծանր աշխատանքով: Լուսապատկերների հավաքածուի օրինակներից մեկում տեսանելի են գլխներին մեծ բոխչաներ կրող երեք կանայք: Աշնան այդ օրը նրանք տերևներ ու ճյուղեր են տուն տանում, որ ճմեռը վառեն: Նրանց ետևում երևում է անտառը: Կանայք շավվարներ են հագել և շատ գեղեցիկ գունավոր չադրաներ փաթաթել փորի շուրջ ու կապել, որ ձեռքերը ազատ մնան և կարողանան բռնել բոխչաները:

Սմբատ Տեր-Կյուրեղյանի վրձնի շնորհիվ մի առանձին հմայք են ստանում գյուղական առուներն ու գետակները: Նկարչի լուսապատկերների հավաքածուի մեջ կան նկարների վերարտադրություններ, որոնք ցուցադրում են շոր լվացող կանանց: Ահա Սանգիբարան գյուղի մի տեսարան, որտեղ ծառերի միջից անցնող գետում շոր է լվանում դեռատի գեղեցկուհիներից մեկը [13, էջ 14]: Ծառերի արանքից երևում են գյուղի տները: Նկարիչը հիշում էր, որ Սանգիբարանը ծառաշատ գյուղ էր: Նրա վկայությամբ այդտեղ, ինչպես և Փերիայի շրջանի Նամակերտ գյուղում, առանձին-առանձին վերցրած շուրջ 1000-ական տուն բնակչություն կար:

Նույն թեման զարգացում է ստացել զանազան այլ նկարներում: Նկարչի վրձինն անմահացրել է Փերիայի շրջանի հայկական Միլակերտ գյուղի կամրջի մոտ գետի մեջ գորգ լվացող կանանց: Այդ նկարի մասին, ավաղ, կարող ենք դատել միայն պահպանված լուսապատկերի միջոցով:

Տեր-Կյուրեղյանը հիշում էր, որ ամեն տարի Նոր Զուղայի հայերը գնում էին Սպահանի շրջանի պարսկական Յասիչա գյուղը ընկույզ առնելու և այնտեղից վերադառնում էին հազարավոր ընկույզներով բեռնավորված: Այս գյուղին նվիրված արվեստագետի նկարներից միայն մեկի մասին կարող ենք խոսել, հիմնվելով պահպանված լուսապատկերի վրա: Վերջինս ներկայացնում է շենքի տակով հոսող ջրանցքի մեջ շոր լվացող պարսկուհիներին: Զրանցքի նեղ մայթն ակամայից հիշեցնում է Վենետիկի փողոցները: Պատկերը շատ գունազեղ է, մանավանդ, լվացող կանանց շորերի սպիտակ ու կարմիր երանգների աշխուժության շնորհիվ:

1969 թ. ստեղծված նկարներից մեկում ցույց է տրված Ղարղուն գյուղի կանանցից մեկը մածունի կճուճը լվանալիս: Արվեստագետի աշխատանքների լուսանկարչական ալբոմում կարելի է տեսնել, թե սանգիբարցի գեղջկուհին ինչպես է լվանում կաթսան առվի ջրի մեջ: Ինչ-որ մեկը նրա կողքին ջրի մեջ է կանգնեցրել իր սայլը: Այս վերջին մոտիվը հաճախ է հայտնվում նկարչի գործերում [14, էջ 39]: Առաջին հայացքից թվում է, թե միտումնավոր ոչինչ չկա այստեղ և սովորական անփութության արդյունք է սայլի՝ ջրի մեջ գտնվելը: Այս մոտիվը նորից հայտնվում է Սանգիբարան գյուղի մուտքը ցուցադրող նկարում, որի մասին գաղափար ենք կազմում մի լուսապատկերի միջոցով: Այստեղ տե-

ասնելի է գյուղամեջը և խորքում Մասիսը հիշեցնող լեռը: Տեր-Կյուրեղյանը բացատրում էր, որ ջրի մեջ մնալով՝ սայլի փայտե անիվը թըջվում է և խոնավություն քաշում իր մեջ, դրանից հետո ուռում և ճանապարհ գնալուց չի ճոճում:

Տեր-Կյուրեղյանը շատ բան էր հիշում հայկական գյուղերի և գյուղացիների վարք ու բարքից կամ նրանց աշխատանքային գաղտնիքներից ու կյանքի դրվածքից: Նա պատմում էր, որ Փերիայի գյուղերի տները շինվում էին աղյուսից, որը հետո ծածկում էին ցեխի ու դարմանի խառնուրդից պատրաստված ծեփով: Նա անգամ մտապահել էր, որ տան կտուրի եզրերին չորացած խոտ էին դնում, որ անձրևի ջրերը չտաշեն պատը: Նկարչի երկերի շարքում հատկապես մեծ թիվ են կազմում Սանգիբարան գյուղին նվիրված նկարները:

Սանգիբարան գյուղին վերաբերող պատկերներից է աղբյուրներից ջուր վերցնող ու գրուցող կանանց ներկայացնող աշխատանքը: Վերջինիս մասին նույնպես կարող ենք գաղափար կազմել լուսապատկերի միջոցով: Աղբյուրը գեղջկուհիների գրուցի վայրն էր, ուր նրանք խոսում էին ամեն տեսակ անց ու դարձի մասին:

Ավարան գյուղի (Փերիայի շրջան) նկարներից մեկում նկարիչը ցուցադրում է լի կուժերը բռնած տուն եկող կանանց: Այս ստեղծագործությունը ևս վաճառվել է ու գնացել և մնացել է միայն այն վերարտադրող լուսապատկերը: Նկարչից «հեռացած» մի ուրիշ պատկերի մեջ հավերժացած Փերիայի շրջանի Դրախտակ գյուղի տեսարանում ներկայացված են աղբյուրի ակից բխող մեծ առվից ջուր խմող կենդանիները, իսկ աղբյուրի գլխին ցուցադրված են տուն տանելու խմելու ջուր վերցնող գեղջկուհիները:

Մեկ ուրիշ լուսապատկերում տեսնում ենք գիշերով ջրի գնացած կնոջը [14, էջ 16]: Աղբյուրի գլխին ծնկի իջած, լույսի ճրագը կողքին, ջուր վերցնող կնոջ դիրքը շատ տպավորիչ է: Ասես մեր առջև է հինավուրց ժամանակներից պահպանված հեթանոսական ծես իրականացնող մի քրմուհի: Ջրի հետ կատարվող խորհրդավոր արարողություն է նմանում մի այլ լուսապատկերում վկայված նկար, որը ցուցադրում է լուսնկա գիշերով բակում տան առաջ ջուր տաքացնող երկու կանանց: Նկարիչը հոյակապ է հաղորդում բացօթյա լուսնյակ գիշերների բանաստեղծականությունը: Այս և նախորդ գործը դիտողին գրավում են հուզական տրամադրության հագեցվածությամբ:

Տեր-Կյուրեղյանը ստեղծել է բազմաթիվ նկարներ, որոնք կարծես ոչնչով աչքի չընկնող իրադարձություններ, պահեր են ընդգրկում (նկ. 11): Դրանցում, թվում է, թե կինոժապավենի հատվածի նման, ասես, կանգ է առել կյանքի մի կտորը, ընդունելով կամ վայրկյանը: Այդպիսին են գյուղերի փողոցներում միմյանց հետ գրուցող մարդկանց ներկայացնող պատկերները: Սանգիբարան գյուղին նվիրված նկարներից մեկում գյուղացիները կանգնած՝ խոսում են տների արանքում: Նման մի սովորական գյուղական առօրյայից դրվագ է արձանագրված Փերիայի շրջանի Ղարղուն գյուղին վերաբերող պատկերում: Այստեղ ցուցադրված են գետը մտած ձիավորն ու կենդանիները, որոնք թրջվելով անցնում են ջրի միջով, քանի որ գյուղի կամուրջը, ըստ Տեր-Կյուրեղյանի, քանդվել էր: Նկար-

րիչը շատ գեղեցիկ է ներկայացրել գետափի եզերքի ծառերը, հեռվում երևացող գյուղական տները և խորքում ուրվագծվող մեկուսի կանգնած Եթիմ սարը:

Ժամանակը, ասես, կանգ է առել Միլակերտ գյուղին վերաբերող նկարներից մեկում, որի մասին ևս դատում ենք ըստ լուսապատկերի: Այն ցուցադրում է փողոցին նայող տան դռան մեջ նստած պառավ մի կնոջ՝ իր թոռան հետ: Այս բոլոր պատկերներում լուսանկարչական ճշգրտությամբ արտացոլվել են նահապետական կյանքի խաղաղությունն ու մաքրությունը, հովվերգական երազային աշխարհը:

1958 թվականն է կրում Սպահանից դուրս գյուղացիների կազմակերպած պտղի բացօթյա շուկան հավերժացրած նկարը, որի մասին ևս լուսապատկերն է գաղափար տալիս: Հեղինակը շուկան պատկերել է այնպես, ինչպես բազմիցս այն տեսել է: Գյուղացիներն այստեղ պտուղները վաճառում են անմիջականորեն սայլերի միջից, բացի այդ՝ գնորդները միրգն ընտրում են նաև գետնին դրված կողովներից: Կիզիչ արևից պաշտպանվելու նպատակով գյուղացիները փայտերի վրա կտոր են քաշել՝ ծածկ սարքելով իրենց համար: Մի այլ լուսապատկերում տեսանելի են Միլակերտ գյուղի փողոցում խաղող ծախող մարդիկ: Նկարիչն ունի նաև այլ ստեղծագործություններ, որոնք ներկայացնում են պտղի բացօթյա շուկաները [14, էջ 17]:

Տեր-Կյուրեղյանը բազմաթիվ մարդկանց ընդգրկող պատկերներ է ստեղծել ոչ միայն շուկայի կամ հարսանիքի տեսարանները նկարելու առիթով: Բազմամարդ նկարներ են նրա ստեղծած սմբատիզմներից շատերը: Դրանք լրագրերի վրա կատարված պատկերներ են, որոնք նկարիչը սմբատիզմներ էր անվանում: Սմբատիզմների որոշ օրինակներ կարծես ներշնչված են Սարգիս Խաչատուրյանի պատկերած հայ գաղթականների նկարներից, թեև ուղղակի կապ համեմատող նմուշների միջև անկարելի է ենթադրել: Առանձին սմբատիզմներում մարդկանց ամբոխներ են դեմ-դիմաց, կամ կողք-կողքի, զանազան մարդիկ իրար հակադիր կեցվածքներով, շեշտակի նայվածքներով [14, էջ 124-133]: Որոշ իրարանցում ու լարվածություն կա այդտեղ: Լարվածություն կա և՛ գույների, և՛ մարդկանց կերպարների մեջ: Շատ շեշտակի է այդ պատկերների ռիթմը կամ ռիթմերը: Այս գյուղերը մտնելով ու այսքան մարդկանց հանդիպելով՝ նկարիչն ուսումնասիրում է շրջապատի աշխարհը ու նրա մարդկանց, ծանոթանում, բարեկամանում նրանց հետ: Անշուշտ, բոլոր մարդիկ չէ, որ նույն ձևով են ընկալում նրան և ըմբռնում նրա գործը: Երբեմն այդ հանդիպումների ժամանակ պատահել են նաև զավեշտական դեպքեր: Տեր-Կյուրեղյանը պատմում էր, թե ինչպես մի գյուղում գեղջկուհիներից մեկն իրեն բժշկի տեղ է դրել, ներկերն էլ դեղ կարծել և եկել խնդրելու, որ իր երեխային քսի այդ «դեղերից»:

Հայ գրականության մեջ Խաչատուր Աբովյանից մինչև Րաֆֆի ու Պերճ Պոռչյան շատերն են բազմիցս և ավել կամ պակաս վարպետությամբ մարմնավորել հայ գավառական կյանքը և գյուղն իր մարդկանցով ու առօրյայով: Սակայն միայն Համաստեղին, Ակսել Բակունցին ու Հակոբ Մնձուրիին է հաջողվել ստեղծել այդ կյանքի ամենանուրբ գեղարվեստական պատկերներն ու ամենավճիտ կերպարները: Հայ գեղանկարչության պարագայում այսպիսի ընտրու-

թյուն անցկացնել հնարավոր չէ: Վրձնի հայ վարպետներից շատ քչերն են, որ չեն անդրադարձել հայ գյուղաշխարհին, սակայն Սմբատ Տեր-Կյուրեղյանի օրինակը բացառիկ է: Նա բոլորից ավելի է խորացել այդ մթնոլորտի մեջ և այն դարձրել էր իր արվեստի հիմնական թեման:

Եզրակացություն

Սմբատ Տեր-Կյուրեղյանի աշխատանքներն այսօր զարդարում են բազմաթիվ իրանահայերի տները, և ծննդավայրերից հեռացած մարդիկ նայում են այդ պատկերներին ու առնում հեռավոր երկրի կարոտը: Տեր-Կյուրեղյանի ստեղծագործությունները հանգրվանել են նաև Պարսկաստանի հետ առնչություն չունեցող հայերի, օրինակ լիբանանահայերի կամ Ամերիկայում ծնված երկրորդ սերնդի հայերի բնակարաններում ու աշխատանոցներում: Վերջիններիս համար այդ գործերն առհասարակ նահապետական հայ հին կյանքի պատկերներն ու խորհրդանիշներն են հանդիսանում: Դժվար է գտնել որևէ նկարչի, որ Տեր-Կյուրեղյանի նման կարևորություն տված լինի հայրենի եզերք դարձած ծննդավայրի անհետացող երևույթներին, սեփական ժողովրդի պատմական փորձին ու հիշողությանը: Տեր-Կյուրեղյանի աշխատանքների կարևորությունը դուրս է գալիս հայկական արվեստի շրջանակներից: Հայ նկարչի ստեղծագործություններն անգին վավերագրերն են նաև պարսից պատմության, մշակույթի ու գավառական աշխարհի: Սմբատ Տեր-Կյուրեղյանի արվեստը հայ ու պարսիկ ժողովուրդների միացյալ պատմական հիշողությունը փրկող իրողություն է և ունի միջազգային հնչեղություն: Ժամանակի հոլովույթի մեջ զանազան ազգերի մարդկանց գործատեղիներում ու բնակարաններում հայ նկարչի ստեղծագործությունները էկզոտիկ արժեք են ներկայացնելու որպես բիբլիական մի հինավուրց ժողովրդի անհետացած կյանքի տեսարաններ կամ արևելյան մի նկարչի վրձնած պատկերներ:

Գրականություն

1. Անստորագիր, Սարգիս Խաչատուրյան, Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 2. Երևան, 1995, էջ 489:
2. Անստորագիր, Սարգիս Խաչատուրյան, Ով ով է, Հայեր, Կենսագրական Հանրագիտարան, հ. 1. Երևան, 2005, էջ 508:
3. Դզնունի Դ. Հայ կերպարվեստագետներ /համառոտ բառարան/. Երևան, 1977:
4. Իրանահայոց հանրագիտարան, Կազմող ժ.Տ. Լազարյան. Երևան, 2012:
5. Կուրդինյան Կ. Սարգիս Խաչատուրյան, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 5. Երևան, 1979, էջ 24:
6. Շիշմանյան Ռ. Բնանկարն ու հայ նկարիչները. Երևան, 1958:
7. Չուգասյան Լ. Մեծ Եղեռնի արտացոլումը արվեստում: «Հայկական Հարց», Հանրագիտարան. Երևան, 1996, էջ 309-313:
8. Չուգասյան Լ. Սարգիս Խաչատուրյան, «Հայկական Հարց», Հանրագիտարան. Երևան, 1996, էջ 165-166:
9. Չուգասյան Լ. Սմբատ Տեր-Կյուրեղյանի կյանքի համառոտ ուրվագիծն և արվեստը: «Գիրք Ծննդոց», Հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին. Երևան, 2015, էջ 532-551:

10. Кипшидзе Д.А. Пещеры Ани (Материалы XIV анийской археологической кампании 1915 года), Обработка материала, чертежи, предисловие и комментарии Н.М. Токарского (в серии «Анийские древности» IV). Ереван, 1972.
11. Avedissian O. Peintres et Sculpteurs Armeniens. Le Caire, 1959.
12. Navasargian A. Iran-Armenia, Golden bridges, 20-th century Iranian-Armenian painters. Glendale, USA, 1997.
13. Selected Paintings of Sombat Derkiverqian, Text by Manuchehr Mughari. Tehran, 2005 (In English and Persian).
14. The Life and Art of Sumbat, Foreword by Levon Abrahamian, Text, compilation and translation by A. Der Kiureghian. San Francisco-Yerevan, 2009.

References

1. Not signed, Sargis Khatchaturian. Armenian Abridged Encyclopedia, Vol. 2. Yerevan, 1995, p. 489 (In Armenian).
2. Not signed, Sargis Khatchaturian. Who is who, Armenians. Biographic Encyclopedia, Vol. 1. Yerevan, 2005, p. 508 (In Armenian).
3. Dznuni D. Armenian Artists (Abridged dictionary). Yerevan, 1977 (In Armenian).
4. Encyclopedia of the Iranian Armenians, Compiled by J.T. Lazarian. Yerevan, 2012 (In Armenian).
5. Kurghinian K. Sargis Khatchaturian. Armenian Soviet Encyclopedia, Vol. 5. Yerevan, 1979, p. 24 (In Armenian).
6. Shishmanian R. The Landscape and Armenian Painters. Yerevan, 1958 (In Armenian).
7. Chookaszian L. (The Reflexion of the Genocide of the Armenians in the Art. "The Armenian Question", Encyclopedia. Yerevan, 1996, p. 309-313 (In Armenian).
8. Chookaszian L. Sargis Khatchaturian. "The Armenian Question", Encyclopedia. Yerevan, 1996, p. 165-166 (In Armenian).
9. Chookaszian L. The short outline of life and art of Smbat Ter-Kiureghian. "Genesis Forest", Collection of the articles in memory of F.Ter-Martirosov. Yerevan, 2015, p. 532-551 (In Armenian).
10. Kipshidze D.A. The Caves of Ani (The Materials of the XIV Ani archaeological campaign of 1915). Processing of material, drawings, foreword and comments by N.M. To-karski (in the series "Antiquities of Ani" IV). Yerevan, 1972 (In Russian).
11. Avedissian O. Peintres et Sculpteurs Armeniens. Le Caire, 1959.
12. Navasargian A. Iran-Armenia, Golden bridges, 20-th century Iranian-Armenian painters. Glendale, USA, 1997.
13. Selected Paintings of Sombat Derkiverqian, Text by Manuchehr Mughari. Tehran, 2005 (In English and Persian).
14. The Life and Art of Sumbat, Foreword by Levon Abrahamian, Text, compilation and translation by A. Der Kiureghian, San Francisco-Yerevan, 2009.

О ДОКУМЕНТАЛЬНОМ ЗНАЧЕНИИ КАРТИН СМБАТА ТЕР-КЮРЕГЯНА

ЛЕВОН ЧУГАСЗЯН*

Для цитирования: Чугасзян, Левон. “О документальном значении картин Смбата Тер-Кюрегяна”. *Искусствоведческий журнал*, N 2 (2023): 215-234. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-215

Искусство армян Ирана изучено недостаточно, притом что армяне строили в этой стране дворцы, особняки, гражданские постройки, создавали прекрасные образцы живописи, ювелирного искусства. Дошедшие до нас наиболее ранние сведения о деятельности армянских художников относятся к началу XIV века. Представление об этом дают сохранившиеся рукописи, иллюстрированные армянскими миниатюристами Киракосом Тавризечи, Мхитаром Анеци и Авагом.

Расцвет искусства армян Ирана относится к началу XX века. В созвездии армянских художников этого времени особое место занимает Смбат Тер-Кюрегян (1913-1999 гг.). Его живописное наследие состоит из многочисленных произведений, изображающих красоту природы Ирана, в частности, Исфахан с его дворцами, мечетями, улицами, жизнью горожан, занятых повседневными делами, а также среди сохранившихся патриархальные нравы армянских деревень Ирана с домами и улочками, обычаями, костюмами, уголками природы и т.д. Художник дал автору этих строк объяснения к написанным им картинам прошлого, давно забытым нашими современниками. Благодаря созданным Тер-Кюрегяном замечательным женским портретам, до наших дней дошли изображения национальных костюмов армянок отдельных регионов Ирана. Произведения художника также знакомят с далекой и близкой историей Ирана, дают бесценные знания о древнем восточном мире и традициях, идущих из глубины веков, которым ни один армянский художник не уделял должного внимания.

Картины Смбата Тер-Кюрегяна представляют историческую, археологическую и этнографическую ценность, спасают от забвения и утраты бесценные подробности, связанные с жизнью и бытом армянского и персидского народов.

Ключевые слова: Смбат Тер-Кюрегян, Исфахан, Новая Джуга, Саргис Хачатурян, Перия, Чармагал, Сангибаран.

* Заведующий кафедрой истории и теории искусств ЕГУ, Заслуженный деятель культуры РА, действительный член Миланской академии Амброзиан (Италия), член-корреспондент Академии Монпелье (Франция), доктор искусствоведения, профессор, levonch@yahoo.com, статья представлена 26.07.2023, рецензирована 11.08.2023, принята к публикации 01.12.2023.

ON THE DOCUMENTARY SIGNIFICANCE OF SMBAT TER-KYUREGHYAN'S PICTURES

LEVON CHOOKASZIAN*

For citation: Chookaszian, Levon. "On the documentary significance of Smbat Ter-Kyureghyan's pictures", *Journal of Art Studies*, N 2 (2023): 215-234. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-215

The art of the Armenians of Iran is not studied enough despite the fact that in this country, Armenians built palaces, mansions, civil buildings, created beautiful examples of painting, jewelry, etc. The earliest information about the activities of Armenian artists, that has come down to us, dates back to the beginning of the XIV century. This is evidenced by the extant manuscripts illustrated by the Armenian miniaturists Kirakos Tavrizetsi, Mkhitar Anetsi and Avag.

The heyday of the art of the Armenians of Iran came in the beginning of the XX century. Smbat Ter-Kyureghyan (1913-1999) occupies a special place in the constellation of Armenian artists of that time. His artistic legacy embraces numerous works representing the beauty of landscapes of Iran, mostly – the city of Isfahan with its palaces, mosques, streets, the life of citizens, their daily routine, as well as the environment of the inhabitants of Armenian villages of Iran, who preserved patriarchal customs, their houses and backstreets, customs and costumes, and the like. The artist gave the present writer explanations for these pictures of the past that has long been forgotten by our contemporaries. Thanks to the wonderful portraits of women, created by Ter-Kyureghyan, the types of traditional Armenian women's clothing from certain regions of Iran have reached us. S. Ter-Kyureghyan's works also acquaint us with the distant and recent history of Iran, provide invaluable knowledge about the ancient Eastern world and traditions coming from the depths of centuries, which no other Armenian artist has paid due attention to.

The oeuvre of Smbat Ter-Kyureghyan is of historical, archaeological and ethnographic value, as it saves from oblivion and loss the priceless details related to the life of the Armenian and Persian peoples.


Key words: Smbat Ter-Kyureghyan, Isfahan, Nor Jugha, Sargis Khachaturian, Peria, Charmagal, Sangibaran.

* Head of the Chair of Art History and Theory of Yerevan State University, Honored Worker of Culture of RA, Member of the Ambrosian Academy of Milan (Italy), corresponding-member of the Academy of Montpellier (France), Doctor of Sciences (Arts), professor, levonch@yahoo.com. The article was submitted on 26.07.2023, reviewed on 11.08.2023, accepted for publication on 01.12.2023.



Նկ. 1. «Գյուղի փողոց», 1971 թ.,
Հայաստանի ազգային
պատկերասրահ

Նկ. 2. «Հայրական տան ջրհորը»,
1950??? թ. (աղբյուրը՝ «The Life and
Art of Sumbat», Text Compilation and
Translation A. Der Kiureghian, San
Francisco-Yerevan, 2009)



Նկ. 3. «Մեդրեսե Չահարբաղը», 1947 թ.
(աղբյուրը՝ «The Life and Art of Sumbat», Text
Compilation and Translation A. Der Kiureghian,
San Francisco-Yerevan, 2009)




Նկ. 4. «Նորջուղայեցի կին», 1948 թ. (աղբյուրը՝ “Selected Paintings of Sombat Derkiverqian”, Text by Manuchehr Mughari, Tehran, 2005)

Նկ. 5. «Կուժն ուսին դրած կինը», 1982 թ. (աղբյուրը՝ “The Life and Art of Sumbat”, Text Compilation and Translation A. Der Kiureghian, San Francisco-Yerevan, 2009)



Նկ. 6. «Աշնանային մի տեսարան Զայանդերուղ գետի մոտ», 1951 թ. (աղբյուրը՝ “The Life and Art of Sumbat”, Text Compilation and Translation A. Der Kiureghian, San Francisco-Yerevan, 2009)

Նկ. 7. «Հաց թխող գյուղացի կանայք», 1983 թ. (աղբյուրը՝ “The Life and Art of Sumbat”, Text Compilation and Translation A. Der Kiureghian, San Francisco-Yerevan, 2009)





Նկ. 8. «Գիշերով աղավնատան կողքին խարույկի շուրջ նստած մարդիկ» (աղբյուրը՝ “Selected Paintings of Sombat Derkiverqian”, Text by Manuchehr Mughari, Tehran, 2005)

Նկ. 9. «Հարսանիքը Նամակերտում», 1991 թ., Էջմիածին, Մայր Աթոռի հավաքածու



Նկ. 10. «Դրախտակի հայ գյուղապետ Սամսոնի աղջիկը» (աղբյուրը՝ “The Life and Art of Sumbat”, Text Compilation and Translation A. Der Kiureghian, San Francisco-Yerevan, 2009)

Նկ. 11. «Գյուղի տեսարան», 1971 թ., Հայաստանի ազգային պատկերասրահ



THE HASANLU GOLD BOWL AN ICONOGRAPHIC INTERPRETATION OF THE DECORATION AND PARALLELS IN THE ARMENIAN HIGHLANDS

GAYANE POGHOSYAN*

For citation: Poghosyan, Gayane. “The Hasanlu gold bowl: an iconographic interpretation of the decoration and parallels in the Armenian Highlands”. *Journal of Art Studies*, N 2 (2023): 235-242. DOI: 10.54503/2579-2830-2023.2(10)-235

The article is devoted to the examination of some aspects of the artistic decoration of the gold bowl found at the ancient site of Hasanlu-tepe (Iran). Although the bowl has been studied by many scholars, such as E. Porada and I. Winter and others, the need for conducting an iconographic analysis still persists. The present paper attempts to analyze the iconography and symbolism of the artistic elements of the Hasanlu gold bowl in the context of culture and religion interactions. The comparison of the Hasanlu gold bowl and some excavated artifacts from the Armenian Highlands suggests that the artistic composition of the bowl is a reflection of certain astrological and mythological ideas associated with constellations.

Key words: Hasanlu gold bowl, Armenian Highlands, decoration, astronomy, constellation, iconography.

Introduction

In the framework of the article, the vessel known as the “**Hasanlu Gold Bowl**” from the Tehran Museum of Archaeology is analyzed. The artifact was uncovered by R.H. Dyson Jr. in the debris of Burned Building 1 from the IV period on the high citadel mound at Hasanlu in the southwest of Lake Urmia [Kaputan] [1, p. 93]. The flattened bowl was found along with the remains of three men, close to the fingerbones of one of them, assumed to be the bearer (**fig. 1**). The bowl is a unique specimen of ancient decorative-applied art displaying a high level of technical and artistic mastery. The bowl is allegedly made in the period corresponding to the exposed archaeological layer (1000-800 BC) or earlier. According to Assyrian cuneiform inscriptions, in the IX century BC the area around Lake Urmia was under the rule of Urartian kings. The Boston University archaeologist M. Dante in the “Antiquity” magazine proposed the idea that the three men might be invading Urartian soldiers attempting to grab the golden bowl as a trophy [2, p. 791-804]. Another assumption holds that the soldiers tried to save something important or sacred to them. The analysis of the artistic decoration of the Hasanlu bowl provides some insight into the religious and aesthetic views in pre-Urartian and Urartian artistic thought.

* Researcher at the Department of Fine Arts of NAS RA Institute of Arts, Doctor of Arts, gayanepoghosyan8787@gmail.com. The article was submitted on 05.04.2023, reviewed on 01.09.2023, accepted for publication on 01.12.2023.

Basic Material

The Hasanlu gold bowl was found flattened. It is about 20 cm in height, with a base about 15 cm and a rim about 18 cm in diameter. The bowl is decorated with a low relief hammered from the inside. Following the iconographic principles of the Ancient Near East, the decorative field is structured in a hierarchical arrangement of the main and secondary plots. Some scholars, I. Winter among them, found similarities between Hurrian and Urartian arts. Thus, he identified Hurrian pottery with that from Kura-Araxes culture. As regards parallel comparisons, it would be relevant to mention that the Armenian Highlands were the birthplace of the so-called Hurro-Urartian tribes [3]. In the upper field, depicted are three deities in chariots moving from left to right, and a delegation of three men moving in the opposite direction, facing left (**fig. 2**). The lead deity driving a chariot drawn by a pair of bulls is identified as the storm god [1, p. 93]. The other two chariots are drawn by mules or onagers. The second deity, judging by the solar-disc headdress, is the sun god, and the third one with the horned headgear reminding of a crescent may be identified as the moon god [1, p. 93]. Cult objects with images of horses are quite a common occurrence among archaeological finds in different cultural levels. It is worth to note that, in the mythology of Indo-European peoples, the horse was associated with solar deities [4, p. 666]. In this context, pertinent is Xenophon's mention of horse sacrifices to the sun god in Ancient Armenia [6]. As explained by the renowned orientalist and archaeologist N. Marr, horses were deemed to be creatures of a dual nature signifying life and death, similar to the rising and setting sun [7, p. 133-134]. The images of horses were very popular in the Armenian Highlands in both the Bronze Age and later Urartian period [8, p. 82-96]. Numerous bronze belts best reflect the worship of horses in this area [5, p. 239-248].

The mystery of the images in the Hasanlu gold bowl decoration still waits to be unraveled. This requires a systematic research, including stylistic and iconographic analyses with concurrent comparative study. The ancient Hittite texts and monuments, as well as the Urartian cuneiform inscription on the "Door of Mher" (near Lake Van, present-day Turkey) can serve as helpful written sources for such analysis. The animal sacrifice scene in the upper field of the bowl is of interest in the context of animal sacrifices in the Kingdom of Van as stated in the inscription on the "Door of Mher". The artistic composition of the bowl is deemed to be based on the principle of hierarchical arrangement of the three main deities of the pantheon. Incidentally, most of the cups and bowls known from the Ancient Near East are decorated with scenes of donation or sacrifice and were most likely intended for a sacred drink. In order to be able to identify the divine figures of the Hasanlu bowl, it is essential to understand the features and ideology of the plots depicted in the composition. The latter is obviously arranged from bottom to top and from left to right in the narrative order of the religious images, with the ideological culmination at the top. Yet another assumption is that this ancient iconographic system describes a victorious hero on his way up to deification. The iconography is apparently based

